

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՉԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ  
ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ  
ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծնողներիս՝ Աղալար եւ Արեւիատ  
Խանյանների պայծառ հիշատակին

Մտեվանակերտ  
«Դիզակ պլուս» իրատարակչություն  
2009

ՀՏԴ 891.981-1 Խանյան  
ԳՄԴ 843 – 5  
Խ 256

Կազմեց՝ Սոկրատ Խանյանը  
Խմբագրեց՝ Յովիկ Մուսայելյանը

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ 80-ամյակի  
կապացությամբ հատորները տպագրվում  
են ԼՂՀ Գրողների միության վարչության  
եւ Արցախի պետական համալսարանի  
գիտական խորհրդի երաշխավորությամբ:

ԽԱՆՅԱՆ Ս.  
Խ 256 Ընտիր Երևեր: Հատոր I: Բանաստեղծ. / Սոկրատ  
Խանյան.- Ստեփանակերտ, 2009, 512 էջ:

Հատորում տեղ են գտել Սոկրատ Խանյանի ընտիր բա-  
նաստեղծությունները 1950-1991 թթ. ժողովածուներից:

ԳՄԴ 843 – 5

ISBN 978-9939-800-84-4

© Ս. Խանյան, 2009թ.

## ԽՆՔՆԱՎԱՇԽԱՎՈՐՄԹՅՈՒՆ

Ծնվել եմ 1930 թ. հունիսի 22-ին, Քեռևային Դպրաբաղի Հակոբացիության Հադրութի շրջանի Աղբուղզ (այժմ Աղբաղջուռ) գյուղում, կողքին կենածականի ընկածիքում։ 1944 թ. ավարտել եմ հայրենի գյուղի յոթամասի դպրոցը, 1947-ին՝ հարեւան Էղբլու (այժմ Ախուրաձոր) գյուղի միջևարձի՝ գերազանց գևահարականներով։ Երկու տարի (1947-1949) աշխատել եմ գյուղում, որտես մշակույթի տան վարիչ եւ գեղարվեստական համույթի ղեկավար։ 1949 թ. ընդունվել եմ Վախի Ա. Ռենիկի անվան պետրական մանկավարժական ինստիտուտի բակասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության բաժինը եւ ավարտել 1953-ին։

Քոնի ավարտելոց հետո աշխատել եմ Վախիում հրապարակով «Ընմուկիստ» (հայերեն) հակառապետական թերթում, որտես գրական աշխատող։ 1962-1965 թթ. ուսումն շարունակել եմ իմ ավարտած բուհի ասպիրանտուրայում, 1965-ին ՀՀ ԳԱԱ Արեգակնայքի անդամ գրականության ինստիտուտում պաշտպանել եմ թեկ՝ «Նախրի Զարյանի դրամագործքներ» թեմայով, սպասել բակասիրական գիրությունների թեմանմանի գրական ասդիճան, աշխատանքս շարունակել ենուն բուհում, արժանացել դոցենտի կոչման։ 1969-ին դրամագործքներ եմ Արեգակնայքի շարունակել դասախոսի իմ պաշտոնը Արցանի պետրական համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում։

2002 թ. ՀՀ ԳԱԱ Արեգակնայքի անդամ գրականության ինստիտուտում «Հայրենիքի ճակարտագիրը հայ պոեզիայում (1950-1990-ական թթ.)» թեմայով պաշտպանել եմ արենախոսություն, սպասել բակասիրական գիրությունների դոկտորի գիրական ասդիճան։ 1984-2007 թթ. ղե-

## ՄԻ ՔԱՆԻ ԻՆԻՄՔ ԻՄ ԱՎԱՐԱՆ

Կաղաքել եմ ԱրԴՀ և նախ Հայոց լեզվի եւ գրականության, ասպա Գրականության եւ լրագրության ամբողությունը: 2007-ից աշխատում եմ ամբողություն՝ պրոֆեսորի պաշտոնում:

1958 թվականից ԽՄՀԱՄ Գրողերի միության, 1954-ից՝ ՀՀԴՀ Գրողերի միության, իսկ 2002 թվականից՝ Հայաստանի Գրողերի միության անդամ եմ:

Քանակությունների իմ առաջին ժողովածուն հրապարակել է 1959 թ. «Սարկաչ» խորագրով: Այսուհետեւ լուս են դնեսել «Վարեկամություն» (1963), «Միրս չեց հետ է» (1966), «Արևատր» (1968), «Հեռների երգը» (1972), «Խմ և երը» (1973), «Ապասում ենք դեռ» (1975), «Հեռնային ղողակներ» (1978), «Բո անուկ» (1980), «Սանաչ ծիսնեք» (1981), «Սարուիր կրակներ» (1991), «Արցախան ղողակներ» (1991), «Արցախի արձիվը» (1995), «Մհեր» (1995), «Խմ ծիսածներ» (2000), «Նահապահ լուս» (2005), «Ամարսափ կանքեր» (2005), «Խեռացնոր իմ կյանք» (2006), «Միրոն ճամփա» (2007) գրքերը:

Որպես գրականագետ-մանկավարժ, հրադարակել եմ հետեւյալ աշխատությունները. «Պոեմիայի ոմն ու հմայքը» (Եւ. Չարենցի մասին) - (1987), «Թարուու Հովհանի սիրանիքը» (1991), «Տայի եւ սիրո պոեմիա» (Ա. Հակոբյանի սրեղծագործությունը) - (1991), «Վոգդան Ծանչանի պոեմիան» (1997), «Գ. Գարբիելյանի աշխարհը» (1997), «Արցախան պարերազմը եւ հայ պոեմիան» (1998), «Տաղանդի լուսը - Ժան Անդրյան» (1998), «Նևարդ Ավագյանի պոեմիան» (2000), «Քեարական Ավագների հմայքը - Ա. Թովմանյանի պոեմիան» (2000), «Հայրենիքի ճակարագիրը հայ պոեմիայում» (1950-1990-ական թթ.) -

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՒՔ ԿՄ ՄԱՍԻՆ

Մ (2001), «Ազգային ճակարտագիրը եւ հայ պուեյիս» (2003), «Հրացան Վեղարյանի խևարերգությունը» (2004), «Պետեղիսի զարգացման մի- պուլիտերի Արցախում» (1950-1990-ական թթ.) - (2005), «Հրանոր Մաթեռովանի գրական հայացքները» (2006), «Հանճարեղ բա- և ասպեկտները ու աշխարհական գործադրությունները» (2007), «Հարդեկի եղերքի եւ սիրո ծարավը» (Ա. Հովհաննեսիսի խևարերգությունը) - (2007), «Մախիմ Հովհաննեսիսի. Քեռևաղբյուրի վիպաշխարհը» (2007), «Կրանք բնիքի վրա - ծովովրդական գերասանելեր Մամիկոն Միքայելյանի եւ Նովարդ Ասարյանի մասին» (2008), «Դորերդ Եսայա- նի պուեյիս» (2008), «Հայ իրեն եւ միջևադարյան գրականության պատ- մությունը» - ուսումնամեթոդական ցուցանություն (2009):

«Աղյախի արձիվին» պուտի համար 1992 թ. արժակացել եւ ՀՀ Ն և Արմարարելերի խորհրդի Եղիշեի անվան մրցանակի, իսկ «Աղյախյան պատրիարքի եւ հայ պուտի» ուսումնասիրությունն 1998 թ. շնորհ է ՀՀ Գրողների մրության Մուրացյան անվան մրցանակը:

Աղեղծագործական եւ զիրամնեկապարժական բեղով աշխարհակիր շնորհի պարգևատրվել եմ ԽՍՀՄ Գերազույն խորհրդի «Աշխարհականիցին» գերազանցության համար» (1978), ԽՍՀՄ բարձրագույն դպրոցի «Աշխարհականիցին գերազանցությունների համար» (1990) մեդալներով։ Արցախան ազգային-ազարագրական պայքարին ակցիոնորդն մասնակցելու համար 2001-ին արժանացել եմ «Աշազան Պարեկաչը», 2003-ին՝ «Մայրական երախտագիրություն հաջ քաղորդիներին» մեդալներով։ Պարգևատրվել եմ ևսեւ բազմաթիվ պարփոքերով։ 2005 թ. ար-

ՀԵՂ Գրողակին միության վարչության, Արտիհանսելերին և Փա-

**ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԻՄ ԱՎԱՐԱՆ**

Վասչակի անվան դրամագիւղական թարրունի գեղարվեստական խորհրդի անդամ եմ, ԱրԴՀ «Գիրական ցեղակագիր» հանդեսի գրական խրապուղարև եմ: Տարիներ շարունակ, ակնկալու և վիրումով մասնակցել եմ համապետության հասարակական կյանքին:

Այս ամենից հետո կյանկանայի դիմել իմ կյանքի առաջիկա դարձներին.

Ասրերն ի վեր դարձներս  
 Ռեսի ասդուր պաշան,  
 Չագաթներին արեմ հետ  
 Համբուրզեցին հրացաց,  
 Հիմա դեպի չորերը խոր  
 Ասր են հոսում իւնեթացած,  
 Աղաչում եմ, դարձներս,  
 Մի քիչ դանդաղ իգեֆ ցած:

*Արմեն*



Անդրադակ ԽՎԱՆՅԱՆ

Վահասպեղ, թարգմանիչ հասարակական գործիչ,  
 բանահրական գիրությունների դոկտոր, պրոֆեսոր,  
 ՀԴՀ Գիրության վաստակավոր գործիչ

01.10.2009 թ.

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱԹԱՆ

**ՔԱՅ Է, ԱՐՎ ԿՐԳՆ Է ԿԱՌԱՎՉՈՒՄ**



Եւ կարդում.

Զրի պես անցիր քո երգի ծամփան,  
 Ի՞նչ փուլք, թե վարար գետ չես դու կյամքում,  
 Կարկաչիր զուլալ աղբյուրի նման,  
 Միայն թե կոտրես ծարավը մարդու:

Վատ չէ, վատ չէ, նախ, որպես ցանկություն եւ, ապա, տրամադրության տեսակետից: Անկասկած, պարտադիր չէ, որ բոլորն էլ մեծագործություններ կատարեն, բայց պարտադիր է, որ կատարածդ քիչն էլ օգտակար լինի, ծառայի մարդուն, լավին: Այստեղ հենց համաձայնվելով երիտասարդ հեղինակի հետ, շարունակում ես թերթել գիրքը... Այն ավարտելուց հետո ամենից շատ մնում է այն տպավորությունը, որ Սոկրատ Խանյանը հայրենասեր բանաստեղծ է, օրվա հուզող հարցերով ապրող բանաստեղծ: Դա զգացվում է ոչ միայն «Երախտիք» բաժնում, այլև նույնիսկ սիրային բանաստեղծություններում:

«Կարկաչը» թույլ է տալիս ասելու, որ Խանյանը ստեղծագործելու հնարավորություն ունի, եւ դա առանձնապես երեւում է գյու-

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Դական թեմաներով գրած նրա բանաստեղծություններում՝ «Հայրենի կանաչ արտեր» բաժնում: Այստեղ բանաստեղծը հիմնականում կարողանում է իր տրամադրությամբ վարակել ընթերցողին, զգում ես, որ գյուղական պատկերները նրան ավելի են հաջողվում, քան քաղաքային թեմաները: Վատ չեն «Տրակտորիստը», «Սիրտս այնտեղ է» եւ սիրային կտորները:

Խանյանը իրեն լավ է զգում, երբ դաշտում է, հողի աշխատավորի մոտ: Բնության գրկում նա կաշկանդված չէ: Գյուղական պատկերները նրան նոր շունչ են տալիս, եւ ընթերցողի առաջ կանգնում է մի նոր խանյան, որը եւ զգում է, եւ զգացնել տալիս: Բայց ցավով պետք է նշել, որ այդ թեման ավելի քիչ է արժանացել «Կարկաչի» հեղինակի ուշադրությանը, մինչդեռ մեզ թվում է, որ դա պետք է դառնար նրա ստեղծագործությունների լեյտմոտիվը:

Մենք ասացինք, որ խանյանը տոգորված է Հայրենիքը, նրա առօյյան երգելու տենչով, ինչպես ասում են, իր գրիչը ի սպաս է դրել սովետական մեծագործ ժողովրդի փառաբաննանը: Դա խրախուսելի հատկանիշ է բանաստեղծի, առանձնապես երիտասարդ բանաստեղծի համար: Կնշանակի նա գտել է ստեղծագործական իր ճիշտ ճանապարհը եւ ամեն կերպ ձգտում է, ինչպես ինքն է ասում, իր քրտինքով հայրենիքի ճամփին աճեցնել «գոնե մի ծաղկի»:

«Բաղծանք» բանաստեղծության մեջ հեղինակն ասում է, որ մեր հաղթ երթով ու կյանքով հմայված՝ իրեն նետել է օրերի մեջ, զգում է, որ ուղին դժվար է, «քրտինքը ծով կդառնա», եւ երդվում է մաքառել.

Կքայլեմ դեպի բարձունք, կհասնեմ լուսե գագաթ,  
Ու ճակտիս կշողշողա բաղծալի մի ճառագայթ:

Լավ բաղծանք է. ցանկանք, որ բարին կատարվի:

**Ժամ ԱՆԴՐՅԱՆ**  
Գրականագետ  
«Գրական Աղբքեցան», 1959, N 6

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈՒԱՐԱՆ

*ՔԱՐԵԽՆԱՏԱՄՈՒՄ ՔՈԴՔՈՑՆԵՐ*

«Ղարաբաղը իր բարձրաբերձ լեռներով եւ անդմախոր ծորերով, իր փարթամ անտառներով եւ արագավազ գետերով, իր քաջարի-ազատաբաղդ, ազատասեր եւ միաժամանակ ավանդապահ ժողովրդով միշտ էլ եղել է հայ բանաստեղծների ոգեւորության աղբյուրը: Ղարաբաղն իր բարձրագահ աթոռն ունի նաև երիտասարդ բանաստեղծների սրտում: Ես կուգենայի ընթերցողի ուշադրությանը հանձնել Ս. Խանյանի «Կարկաչ» գրքից հետեւյալ քայլը, միանգամայն ճշմարտացի եւ հուզիչ:

*Ղարաբաղ իմ, փոքր ես, սակայն  
Մոր փոքրությանն ո՞վ է նայում,  
Ո՞ր հերոսներ ծնող մայրն է,  
Որ աշխարհին չի հմայում:*

Մեր երիտասարդ բանաստեղծները ոգեւորվում են, խանդակառ տողեր են նվիրում մեր ազգային կուլտուրայի անցյալ գործիչներին, բարձր են գնահատում այն ժառանգությունը, որ նրանք թողել են մեզ: Կոնկրետ բնութագրական արժեք ունի Ս. Խանյանի «Գաղելը»՝ նվիրված Եղիշե Զարենցին.

*Որպես գարնամ առավոտ՝ դու շողացիր ու անցար,  
Սարգարիտներ ցանելով՝ դու շողացիր ու անցար,  
Յոկտեմբերով ջերմացած, որպես անմահ մի երգիչ,  
Նոր օրերին ձուլվելով՝ դու շողացիր ու անցար:*

Անկեղծ հիացմունքի գեղում է սա, որ չի հիշեցնում արձակ եւ չափած աղմուկը... Ինչպես իր գրչակից ընկերների, Ս. Խանյանի թեմատիկան եւս հարուստ է եւ բազմակողմանի: Նրան հուզում է սերը, ինքնությունը, ընտանիքը եւ գոյության ուրիշ հարցեր: Այդ երգերը բարեխսոստում բողըոջներ են:

***Նաիրի ԶԱՐՅԱՆ**  
«Գրական Աղրբեջան», 1961, N 2*

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

ՔԱՌԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՀՈՒՅԱՆ



Ո՞րն է Սոկրատ Խանյանի բանաստեղծությունների դրականը եւ գրավականը... Յեղինակը ցուցաբերել է անսեթեւեր, պարզ ու անկեղծ գրելու անժևտելի կարողություն: Երբ ասելիք կա, նա կարողանում է գտնել արտահայտչական դիպուկ ծեւեր եւ ցանկացած տրամադրությամբ վարակել ընթեղողին: Դաջող բանաստեղծությունների քանակը քիչ չէ՝ «Սիրտ», «Իմ սերնդի խոսքը», «Մորս տենչը», «Իմ ընկերները», «Թե հարցնեք», «Այնքան, այնքան եմ հիմա քեզ սիրում» եւ այլն: Որքան լավ է բնութագրվում ազնիվ, անխարդախ ստեղծագործող մարդու սիրտը:

«Թե չերագեիր, չըխիզախեիր,  
Սնայիր քո մեջ ամփոփիված ու թիրտ,  
Չկամրջեիր երկիրն աստղերին,  
Արդյոք այնժամ էլ կկոչվեիր սիրտ»:

Ազնիվ ընկերոջն ու ընկերասիրությունն է դրվատում հեղինակը «Իմ ընկերները» բանաստեղծության մեջ.

«Իմչ լավ է, երբ քո լավ ըմկերմերին  
Չես հաշվում երթեք մատների վրա»:

Սոկրատ Խանյանը բանաստեղծական մի լավ սովորության է հետեւում. աշխատում է իր բանաստեղծությունն ավարտել աֆորիստիկ, հակիրճ ու ավարտուն մտքով.


«Սիրելու մեջ է մարդու բերկրանքը  
Զերմ սիրելով է կյանքը քաղցրանում»:

... Սոկրատ Խանյանը սյուժետային երկեր ստեղծելու ձիրքով է օժտված եւ այդ ժամրի մեջ պետք է շարունակի իր որոնումները...

**Մկրտիչ ԿՈՐՅՈՒՆ**  
«Գրական Աղբբեջան», 1963, N 6

## Ա Պ Ա Զ Ա Մ Ա Ն Ի Փ Ո Խ Ա Ր Ա Ն

### Դ Ա Շ Ի Հ Ա Ս Ի Ւ Ն Ի Ւ Թ Յ Ո Ւ Ն



Սոկրատ Խանյանը երիտասարդ բանաստեղծ է, եւ դա ոչ թե միայն տարիքային առաւմով, այլեւ, առաջին հերթին, նրա բանաստեղծությունների ծեւով եւ բովանդակությամբ: Դրանք եւ երիտասարդավարության հուզական են ու անմիջական, եւ երիտասարդավարի թարմ ու տպավորիչ:

... Սոկրատի մոտ պայծառ են ոչ միայն տրամադրությունները, այլեւ բնության կողմերն ու երեւույթները, պայծառ են բառերը...

Մի առու եմ, սարի լամջից բխած առու,  
Ուսած բույրը ծաղիկների,  
Ճյուսած բույլը շաղիկների,  
Երգը շրթիս հոսում եմ հար դեպի հեռում:

Յաճելի է կարդալ Սոկրատին, որի մոտ արեւ կա եւ լավատեսություն հակառակ մի քանի երիտասարդ եւ ոչ երիտասարդ բանաստեղծների, որոնց մոտ ոչ միայն մռայլ է ընդհանուր տրամադրությունը, այլեւ, դրա հետ սերտորեն կապված, համեմատություններն ու բառային մատերիալը:

Բանաստեղծությունը չի կարելի պատմել: Եվ ես չեմ էլ պատրաստվում պատմել: Բանաստեղծությունը կարելի է միայն երգել: Ընթերցողին հղում եմ կարդալու Սոկրատի լավատեսական բանաստեղծությունները:


Մինչեւ իսկ այնտեղ, որտեղ Սոկրատը գործ ունի այնպիսի տիսուր բարի հետ, ինչպիսին «արցունքն» է, նրա մոտ չի ստեղծվում մռայլություն, որովհետեւ բնորոշիչն «արցունք» բառը չէ, այլ դրա հետ կապված լավատեսական, մարդասիրական բովանդակությունը:

Սոկրատի բանաստեղծությունների մի այլ արժեքավոր կողմը դրանց հուզականությունն է: Իհարկե, առանց հուզականության ընդհանրապես չի կարող լինել պոեզիա: Սոկրատի մոտ գերազանցապես ուժեղ է հուզականությունը»:

**Մկրտիչ Արմեն**  
«Գրական Աղրբեջան», 1966, N 5

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈՒԱՐԱՆ

### ԱՐԵՎԱՍՏԻ ՔՐԻՑՆԸ



«Հայրենի ին տուն», «ճանապարհին», «Երեւի մի օր», «Մայրամուտ», «Մեր գյուղը» լիրիկական բանաստեղծություններում եւ «Ուխտաձոր» լեզենդում խանյանը հովաթաթավ գունեղ պատկերել է հայրենի բնաշխարհի բովիչ գեղեցկությունները, նրա մարդկանց հերոսական գործերը՝ օտար բռնակալների դեմ մահու կենաց գոտենմարտում՝ օջախի ծովածք, մանկան օրորոցը, գիրն ու դպությունը պաշտպանելու համար: Այդ ամենի նկատմամբ բանաստեղծի անհուն սերն ու նվիրվածությունն արտահայտվել պատկերվել է մերը որպես ժայռից-ժայռ զահավիժող փրփրաբաշ գետ, խոսկան առու, մերը ճամփի եզրին թեքված ուրի, շնկշնկան քամուց հազար անուն, հազար բույր ու նեցող ծաղիկ, որ Շիրազի վարդաստանուն չկա, մերը գյուղ-քաղաքով, մարդկանց սրտով ալիք-ալիք բարձրացած, մինչեւ Արեւսար հասած կոմիտասյան երգի ղողաճը: Հայրենի տան ու հայրենիքի ընդհանրական պատկերն է գեղարվեստորեն տվել խանյանը:


... Իր հայրենի լեռնաշխարհին՝ արծիվների բուն Ղարաբաղին շատ անգամ է անդրադարձել խանյանը... Նա որդիական սիրով, խոսք է բացել «հավերժ դալարուն Ուխտաձորի, զմրուխտ հազար Արեւսարի», «Կռունկ», «Երազ» երգող քաղցրալուր աղբյուրների մասին»:

... Ինչն է օգմել պոետին՝ լավին հասնելու: Ամենից առաջ հեղինակը երգել է իր սրտին շատ մոտ ու ծանոթ, այդ սրտի միջով անցած հույզը, հոգին պարուրած գաղափարը: Դրանցում կա եւ խոր հայրենասիրություն, եւ այդ հայրենիքի պատվի, փառքի համար ընկածների նկատմամբ անհուն սերը եւ որդու կորուստ, եւ մայրական վշտի, ցավի, մորմորի, մարդուն թեւավորող սիրո նկարագիրը՝ ասված ներքին քննչությանը, լիրիզմով, մշակված բառ ու պատկերով...

**Յարություն ՍԵՐՈԲՅԱՆ**  
Բանասիրական գիտությունների դոկտոր  
«Գրական Աղբբեջան», 1970, N 1

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

*Հ Ե Ռ Ա Ռ Ի Ռ Ի Ռ Վ Վ*



«Լեռների երգը», - այսպես է խորագրել իր բանաստեղծությունների նոր գիրքը Սոկրատ Խանյանը:

... Խանյանը իր այս գրքում ձգտում է հասնել արվեստի պարզության, եւ ես լեռնային երգ որոնելուց առաջ այդ պարզությունը զգացի գրքում, անկեղծությունը, որը նույնպես արվեստի անկեղծությունն է:

Կան խարող պարզություններ, խարող անկեղծություններ, որոնք արվեստի հետ կապ չունեն, միամիտ ընթերցողներին թակարդ գցող ոստայնների պես նրանք ժպտում են այս ու այն գրքի էջերից: Խանյանի լավագույն գործերը պարզ ու անկեղծ են.

*Նստում եմ հաճախ ու խորհում լոին,  
իմ խոհերի մեջ երեկն ու ներկան,  
Դեմս փոշում է իմ անցած ուղին՝  
Երազմերով լի ու անապական:*

Ահա այս պարզության անկեղծությունն է, որ պոետը վերցնելով մեր դասական պոեզիայից (Չարենց, Տերյան), իր մոր ձայնի հետ, ներ կածամով պիտի հասնի լայն ճանապարհ, ինչպես այդ մասին սահուն գրել է հեղինակը.

*Դոգուս մեջ մորս օրորի ձայնը,  
Ես բակ եմ ելնում ելնում մի աշխարհ,  
Եվ դպրոց տանող մեղլիկ կածանը  
Դեռվում, դառնում է մի լայն ճանապարհ...*

Այն բոլոր բանաստեղծությունների մեջ, ուր Սոկրատ Խանյանը խոսք է ուղղում իր աշխարհին, այդ աշխարհը դառնում է մեր աշխարհը:

*Վահագմ ԿԱՐԵՆՑ  
Բանաստեղծ  
«Գրական Աղրբեջան», 1979, N 9*

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈՒԱՐԱՆ

ՀԱՅՐԱՆԻՔԻ ՆՎ ՔՆԱՄՐԱԿԱՆ ՀԵՐՈԱՆ  
 ՄԻԱԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
 (Ա. Խակոսի «Հեռների երգ»)

Ս. Խանյանի պոեզիայում հայրենիքը եւ բնարական հերոսը հանդես են զալիս միաձույլ, ոչ իրարից մեկուսացված:

Ես հունդ եմ՝ նետված քո հերկերի մեջ,  
 Թե քո հերկերը թոշնեն երաշտից,  
 Կչորանամ ես:  
 Ես շող եմ՝  
 Զուլված արեւածագի պայծառ վարսերին,  
 Թե սեւ ամպերը հայացքդ ծածկեն,  
 Կմթնեմ եւ ես:  
 Իմ էությունը էությունն է քո,  
 Դայրենիք իմ մեծ...

Բանաստեղծի մոտ հայրենիք հասկացությունը հաճախ բացահայտված է հայրենի եղերքի նկարագրով: Բնանկարն այս դեպքում դառնում է հայրենասիրական մղումների գրանցման, դրանց պատկերման հիմնական միջոց: Նա փորձում է ստեղծել հարազատ ու կենդանի պատկերների զուգորդություններ եւ դրանց միջոցով բացել իրեն:


Ս. Խանյանը երգում է նաև հայրենիքը շենացնող մարդկանց: Ս. Խանյանի գրքում կա առանձին մի շարք՝ «Մորմոքներ» վերնագրով, ուր նա վերհուցի ձեւով ներկայացնում է պատերազմական ծանր տարիների իրադարձություններ ու իրավիճակներ: Բնարական հերոսի կյանքը դադարում է սոսկ ներկա, խաղաղ ու հանգիստ պահը լինելուց, այն ընդարձակվում է, իր մեջ առնում գրկանքներով լի անցյալը:

Ներգործման տեսակետից նրա սիրո երգերին բնորոշ են առաջին սիրո վերհուցի, կարոտի տրամադրությունները:

**Դավիթ ԳԱՄՊԱՐՅԱՆ**  
 Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
 «Գրական թերթ», 1973, 24 օգոստոսի

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈՒԱՐԱՆ

ԱՊԱՍԻԴԻՄ ՇՆՔ ԴԵՌ



Սոկրատ Խանյանի արծարծած թեմաները հաճանարդկային են եւ իր ժողովողի, հայրենիքի սպասումներին համահնչուն: Կարդում ենք ժողովոծուի «Սպասում», «Զրույց սրտիս հետո», «Սիրո տողեր» բաժինները եւ նկատում, որ նա առանձին ջերմությանք է արտահայտում աշխատավոր մարդու ակնկալումները, իղձերը, ցանկությունները: Պետք է ասել, որ հեղինակը թեման գեղարվեստականացնում է պատշաճ մակարդակով, «ներքին խոսքին» տալով երաժշտականություն, հնչեղություն, զգացմունքայնություն:

«Սպասում» բանաստեղծությունների շարքը Մեծ հայրենականի գեղարվեստական արտացոլումն է, սակայն հեղինակի ուշադրության կենտրոնում են ոչ թե ռազմաճակատային իրադարձությունները, այլ մարդկային հոգեվիճակներն ու ճակատագրերը: Ասելիքն այնքան սրտաբուխ է, հոգեհարազատ, որ կարծես բանաստեղծը ընթերցողի ակնկալումների վկան է: Սա վերաբերում է «Աշխարհի խիղճը», «Դիմ զինվորների զրույցը», «Մորմոր» եւ այլ երգերի: Գաղափարական հագեցվածությունից զատ, այս բանաստեղծությունները արհեստականությունից հեռու են, իմաստով պարզ, լեզվով անպաճույն:

... Ո՞րն է հեղինակի հաջողության գրավականը: Ս. Խանյանը խելացիորեն օգտագործում է ժողովրդական իմաստությունները, առածները, թեւավոր խոսքերը, դարձվածքները: Ահավասակի «Յոթ տեղից սիրտս դաղվեց», «Եկ ծուռ նստենք, շիտակ խոսենք», «Մարդ ինչ ցանում է, այն էլ հնձում է» արտահայտությունները:

Բանաստեղծի լեզուն սահուն է, պատկերավոր, հյութալի: Սա գալիս է նույնանու ժողովրդական բառ ու բանը հիմնալիորեն օգտագործելու, հարուստ բառապաշար ունենալու եւ բառը տեղին գործածելու պարագաներից...

**Մմբատ ԱՎԱԳՅԱՆ**  
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
«Գրական Աղորեջան», 1975, N 4

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈՒԱՐԱՆ

ՀԱՅԹԱՆԻ ՔՆԴՆԵՐԻ ԿԱՆՉԱ



«Լեռնային դրամանջներ» գիրքը բաղկացած է «Ղողանջ հավատի», «Ղողանջ հոգու» եւ «Ղողանջ սիրո» բաժիններից: Ընդհանրապես Ս. Խանյանին հատուկ է բանաստեղծական շարքերով հանդես գալը: Դա հնարավորություն է տալիս նրան ամբողջությամբ բացվելու, թեման խորքով բացահայտելու: Քնարական ներքին սյուժեն զարգանում է աստիճանաբար եւ բանաստեղծը ներկայացնում է հերոսի հոգու բոլոր թրթիրները՝ կապված երեւոյթի, մարդկային ապրումի, աշխարհնկալման եւ ինքնադրսեւորման հետ:

Բանաստեղծը ընդգծում է այն ճշնարտությունը, որ երգը ծնվում է, օջախից, ջանքից, կարոտից:

Ոչ մի անկյուն աշխարհում  
Երազիս մեջ, արթմնի,  
Այնպես կարոտ չի ծնում,  
Ինչպես գյուղն իմ հայրենի:

Կարոտի եւ իմաստության այս ճանապարհով էլ Ս. Խանյանը քայլում է հայրենի լեռնաշխարհով եւ շող առ շող փնջում իր երգերը: Քայլում է եւ առաջին հարցը տալիս հողին.

Այս ի՞նչ ուժ է տրված քեզ, հող,  
Ի՞նչ զաղտնիք ես պահում դարեր,  
Որ քեզ սրտանց, ջերմ սիրողը  
Մնում է միշտ առույգ, ջահել:

Խանյանի այս եւ նման երգերը քնարական հերոսի եւ հայրենի հողի անխախտ դաշնության ոգու ընդգծումներ են:

**Անահիտ ԱթԱՅԱՆ**  
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
«Կարոտի եւ սիրո կրակմեր» գրքից (2000 թ.)

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈՒԱՐԱՆ

### ԵՐԱԿԱՆ ՆՎԱՆ




Ստեղծագործողի ճանապարհին լինում են պահեր, երբ նրա երգերը ուղղակի, առանց ճիգ ու ջանքի, սրտից հոսում են զուլալ աղբյուրի պես, հնչում որպես հոգու թրիխներ, եւ որովհետեւ սրտարուխ են, ապա հեշտությամբ էլ գտնում են սրտեր տանող ճանապարհը: Տեղն է հիշել «Սրտից բխած խոսքը սիրտ կնտնի» ժողովրդական իմաստությունը: Յենց այս գլխից ասենք, որ Սոլորատ խանյանի «Քո անունից» եւ «Կանաչ ծփանք» ժողովածուները սրտառու երգերի փնջեր են՝ առինքնող ու ջերմացնող, կենսահաստատ ու թեւավորող: Երկու գրքերն էլ լույս են տեսել վերջերս, միաժամանակ: Յերթականությանք դրանք բանաստեղի 9-րդ եւ 10-րդ հանդիպումներն են ընթերցողների հետ: Քիսնամյա բանաստեղի այս նոր ժողովածուները կրկին անգամ գալիս են արդարացնելու խստապահանջ ընթերցողների այն ակնկալությունները, որոնք ընդգծվել էին նախորդ գրքերի քննարկումների ժամանակ եւ գրախոսականների մեջ:

Ս. Խանյանի երգերը հոդարույր են, քաղաքացիական պարտի լիրիկական արտահայտություններ...

«Քո անունից» ժողովածուի առաջին երգից մինչեւ վերջին քայլակը հեղինակը ընթերցողի հետ մի այնպիսի մտերմություն է ստեղծել, որ հնարավորություն է տվել նրան իր աշխարհընկալումը, ակտիվ կենսադիրքը, կյանքին ու մարդկանց պետք լինելու օգացումը, կարոտի ու սպասելիքների երազանքը արտահայտել նրա անունից: Նույն միտումը մենք տեսնում ենք նաև «Կանաչ ծփանքի» մեջ:

Եվ լավ է, որ բանաստեղի Ս. Խանյանի ապրումներն ունեն կոնկրետ իրենց



## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈՒԱՐԱՆ

ակունքներն ու հասցեները, որ նա ուրախանալիս գիտե հանում ինչի է ուրախանում, թախծելիս մատը դնում է ցավող սրտի վրա:

«Քո անունից» եւ «Կանաչ ծփանք» ժողովածուներում բանաստեղծը առաջին պլան է մղում հայրենասիրության մոտիվը: Իսկ հայրենիքը նրա մոտ սկսում է հայրական օջախից, Ղարաբաղ լեռնաշխարհից...

«Քո անունից» գիրքը բացվում է «Իմ Արեւադր» երգով, որտեղ բանաստեղծը հայրենի Արեւադրի ուսերին իր առավոտներն է տեսնում, նրան համարում «Զորս լանջերով լույսին փարված» իր «վիզ ու սատարը»: Յեռու մնալով անհարկի պաթետիզմից, բանաստեղծը հայրենիք եւ մոր գիրկ հասկացությունները, քաղաքացու եւ երկրի ճակատագրի անբաժանելիությունը արտահայտում է ինքնատիպ ու թարմ պատկերով.

*...Թանի՝ անզամ մեծացար ու  
Մանկացար ինձ հետ,  
Մոր հրճկանք ու համբերություն,  
Արեւադր իմ սեգ:*

Հայրենասիրական անկեղծ ու վարակիչ զգացումների բանաստեղծական կատարյալ արտահայտություններ են «Խսադ», «Այց», «Պեղում», «Երկրիս», «Գարունը», «Ղարաբաղյան նվազներ» շարքը՝ («Քո անունից» գրքում), «Քո գրկում», «Պարտք», «Կաղնի», «Գյուղ իմ», «Ղարաբաղի բնություն», «Ճողի կարոտով», («Կանաչ ծփանք» ժողովածուում): Հաճելին այն է, որ Ս. Խանյանը հայրենասիրական իր խոհերը արտահայտելու թարմ ու նուրբ երանգներ է գտել, բանաստեղծական պատկերն ու ենթատեքստը ինքնարուիս են, եւ հավատում ես, որ դու ինքը էլ այլ կերպ չես մտածի ու չես արտահայտվի: Որպես որդի («Որդիհական»), դիմելով հայրենի երկրին, բանաստեղծը համեմատությունների ավանդական ծեւկց հեռանում է, հակադրության հետաքրքիր հնարանքով հաստատում որդիհական սիրո անսպառ ու անհատնում ծփանքը հայրենի հողի՝ մարդուն մարդ պահողի հանդեպ.

*Իմ արմատները սրտիդ խորքումն եմ,  
Բայց ոչ կաղնու պես, կաղնին ի՞նչ է որ,-  
Ես որդին եմ քո:*

## Ա Պ Ա Զ Ա Վ Ա Ն Ի Փ Ո Ւ Ա Ր Ա Ն

Իմ թեւերը քեզ փայում եմ, շոյում,  
Բայց ոչ ճյուղի պես, ճյուղը ի՞նչ է որ,-  
Ես ոգին եմ քո:

Յայրենիքին դիմելիս բանաստեղծն ասես գրուցում է իր ամենամտերիմ, ամենանվիրյալ հարազատի հետ: Այդպես միայն որդին կարող է խոսել մոր հետ: «Քո գրկում» («Կանաչ ծփանք») բանաստեղծության կիզակետը հայրենի հողին անկեղծորեն ու աննացորդ ծառայելու գաղափարն է.

Տառապանքիդ պատկերն եմ ես,  
Գարուններիդ հյուսվածքը ջինջ,  
Դու առանց ինձ կապրես հավետ,  
Ես առանց քեզ ի՞նչ եմ-ոչի՞նչ:


Ղարաբաղը վաղուց է մտել պոեզիայի մեջ: Ղարաբաղի հողից ծնված, նրանով շնչող ու թեւավորվող շատ երգիչներ իրենց որդի-ական սերը արտահայտել են բանաստեղծական հիանալի շարքերով, պոեմներով: Ս. Խանյանի «Քո անունից» գրքի «Ղարաբաղյան նվազներ» շարքը գալիս է լրացնելու այդ թեման ինքնատիպությամբ եւ գույների բազմազանությամբ: Բանաստեղծի համար «Երանգների մի աշխարհ է Ղարաբաղի առավոտը» («Առավոտը»), թթենին «Չի պահանջում, նվիրում է ու գոհ ծփում արածով, միայն մայրն է ցնծում այդպես որդիներին տվածով» («Թթենին»), ամպը «Ամպ չէ, ճերմակ հարս է, ջուր է տանում արտերին» («Ամպը»), «Արտերը սարից կախված փեշեր են կանաչ-կանաչ» («Արտերը»): Սիա ղարաբաղյան ամառը. «Զորը կանաչ, լանջը՝ դեղին, սառերը ծլած, արտի կեսը արդեն հեղի, կեսը նոր չլած» («Ամառը»): Բերենք մի ուրիշ պատկեր. «Մենք չունենք հորդահոս գետեր, անձրւն է մեր հողը սնում, ձորերից բարձրացող անձրեւը մեր սրտի խորքից է ծնվում» («Ամձրեւը»)...

Ս. Խանյանի «Քո անունից» եւ «Կանաչ ծփանք» գրքերը վերջին տարիների՝ մեր լեռնաշխարհի գրական օջախում ստեղծված հաջող ժողովածուներից են, որոնք բանաստեղծի ստեղծագործական հասունության եւ պատասխանատվության զգացումի վկայություններ են, երկու հաճելի նվեր ընթերցողներին:

Գուրգեն ԳԱԲՐԻԵԼՅԱՆ  
«Սովետական Ղարաբաղ», 1981, 29 հուլիսի

## Ա Պ Ա Զ Ա Մ Ա Ն Ի Փ Ո Խ Ա Ր Ա Ն

### Ա Ա Տ Ռ Ա Հ Ո Ւ Յ Ա Ի Կ Ա Ր Ա Տ Ո Վ



Յայրենաբաղծությունը հայ բանաստեղծի խաչն է եղել ի սկզբանե՝ ո՞ր աստղի տակ էլ ապրել է: Յայրենաբաղծությունը հայ բանաստեղծի ճակատագիրն է անգամ իր հայրենիքում, որովհետեւ պատմության ահեղ քնահաճուքով մեր արյան մեջ հավիտենապես նվում է կորուստների, կործանումների անողոք ցավը: Ու եթե ինչ-որ մեկը, թեկուզ հանճարեղ դիմադրձով, փորձել է կտրել ցավի երակը, ապա անդառնալիորեն վրիպել է, եթե անգամ նա Չարենց էր ու կարող էր գրել «Աճբոխները խելագարված»: Զգիտեմ, գուցե դա թերություն է: Բայց այդ պարագայում ինչպես ընկալել Պարույր Սեւակի «Առաջադրանք...»-ը, ուր, որտեղից՝ որտեղ, հանկարծ քննկվում է Յատուցման իղձը: Երեւի կա նաեւ սիրելի թերություն, որ մեզ համար սկիզբ է առնում խորենացու «Ողբից»:

... Գրական ու քաղաքական խիզախում է Սոկրատ Խանյանի «Կարոտի կրակներ» («Արցախ», «Ստեփանակերտ», 1990թ.) ժողովածուն, որն ամփոփում է հեղինակի ավելի քան քառասունամյա ստեղծագործական մաքառումների լույսն ու ստվերը:

Ասում եմ՝ լույսն ու ստվերը, եւ գրիչը մի պահ սառում է, երկմտում. արժե՞ այդպես «թեթևամտորեն» խոսել մի ողիսականի մասին, որ մերն է նաեւ, մեր մտածողության, աշխարհնկալման, կեցության ու գոյության կերպը, մի դրամա, որի սկիզբն արյունոտ է այնքան, որքան վախճանն է (վկա՝ բգկտվող Արցախը), իսկ միջնարարը՝ անհաջող ֆարս՝ «Եղբայրություն», «Ժողովուրդների բարեկամություն» ճակատային, ամպագորգոր կոչերով: Ս. Խանյանի «Կարոտի կրակներ»-ում այդ դրաման է: Ու նաեւ՝ զարմանալիորեն մաքուր մի նորմոք: Չարմանալիորեն մաքուր, որովհետեւ երբ արյուն է հեղվում, այն էլ՝ հարազատ, ու բանաստեղծն իր մեջ ուժ է գտնում աստղային ոլորտներով հմայվելու, ուրեմն «աստծու քարտուղարն» է նա եւ ոչ թե պատահարար գրչին ընկերացած

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈՒԽԱՐԱՆ

Վաչկատուն, որ դեռևս ազատագրված չէ արյան վրեժի բարբարոսական նախաքաղաքակիրթ բնագոներից:

20-րդ դարի ռուսական փիլիսոփայական մտքի կարկառուն դեմքերից Ն. Բերդյաեւն ասում է. «Բռնությունը թուլության նշան է». բայց հայերս երեւի կարիք չունենք դիմելու նրա օգնությանը, որովհետեւ մեր ամբողջ պատմությունն այդ պարադոքսալ ճշմարտության արտահայտությունն է, մեր գրականությունն՝ առավել եւս: Եվ ինչքան հաճելի է գիտակցել, որ Ս. Խանյանի «Կարոտի կրակներ» ժողովածուն շատ ներդաշնակ է հայ բանաստեղծության հոլովույթին: Ես այս միտքն ուզում եմ երկրորդել մի փոքր ավելի մանրամասն: Մեծ գաղտնիք բացած չեմ լինի, եթե ասեմ, որ տասնամյակներ շարունակ արցախահայ գրականությունը գոյատեւել է Բաքվի պաշտոնական գաղափարախոսության մեքենայի ճնշման տակ եւ բնական է, պիտի լիներ հայատառ աղրբեջանական մշակույթ, ինչպես ի սկզբանե կանխատեսված էր: Մեր հեղինակները ստեղծագործական, անձնական, պաշտոնական բազմաթիվ առնչություններ են ունեցել աղրբեջանական մշակույթի հետ եւ զգիտեմ՝ ինչ-որ չափով հարստացրել են այն, բայց որ չեն «Հարստացել»՝ փաստ է: Մնացել են հայ հեղինակ, հայ մշակույթի զինվոր: Սա մեր պատիվն է: Ես, իհարկե, դրանով չեմ հակադրում երկու ժողովուրդներին: Ես գիտեմ, որ պատմության վճռով մենք հարեւաններ ենք, բայց պաշտպանում են ազգային դիմագծի այն առանձքը, որ արցախահայ գրականությունը կարողացել է բոլոր փորձություններից անաղարտ պահել: Ս. Խանյանի «Կարոտի կրակներ»-ի հիմքը դա է.

Արեւը ելնում է Արաքսից,  
 Լվացվում Թարթառի ջրերում,  
 Մտրակ է հյուսում իր Վարսից,  
 Չափ գցում իր ծին սարերում:  
 Սարեր են, զիգզագ են ճամփերը,  
 Ճամփերը՝ կախված երկնքից...

Զգիտեմ՝ ով՝ ի՞նչ, բայց այս տողերում ես զգում եմ հեթանոսական-վահագնային պաշտամունքի հեռավոր արձագանքները, «Յուրիեր, բոցնորութ, վիշապաքաղ» դյուցազնի հայտնության

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Կարոտը, որ հայոց բնաշխարհի սրբությունների դիպուկ խորհրդանշմամբ ավելի է բյուրեղամում, երբ բանաստեղծն ընդհանրացնում է.

...Թե պատռեք սարերի սրտերը,  
Արեւներ կտեսնեք անթեղված:

Արցախ աշխարհի գոյության առասպելի խտածոն է «Աստղեր» բանաստեղծությունը:

Աստղերը սարերի թագերն են՝  
Յյուսված հաղթական մարտերում,  
Աստղերի շողերի ակունքը  
Եռում է սարերի սրտերում:

Ասում են՝ աշխարհատեղծման ժամին սարերն իրար էին բախվում: Արդյո՞ք այդ առասպելի արձագանքը չեն այս տողերը.

Սարերը ուղիներն իրենց  
Աստղերի լույսով են գտնում,-

Եւ մեր գոյության՝ արդեն հիշատակված դրամայի միջնարարի տագնապներից չեն, մի՞թե, այս կոփածո քառատողը.

Եվ երբ իջնում է խավարը,  
Կանչում են ահել ու ջահել.  
-Ինչու՞ են քնել աստղերը,  
Աստղերին ի՞նչ է պատահել:

Գրքի «Ղարաբաղյան նվազներ» շարքում այսօրինակ ընդհանրացումների կարելի է հանդիպել համարյա բոլոր բանաստեղծություններում: Մենք գիտեինք, որ Ս. Խանյանը լավ քնարերգու է, ժողովածուից-ժողովածու մի նոր երգ էինք ավելացնում մեր իմացածին, բայց, խստովանեմ, տաղանդի ուժին անծանոթ էինք: Գոնե՝ ես, որ իր ուսանողն եմ եղել նաեւ ու թեթևամտորեն չեմ հասկացել, որ Ս. Խանյանի ժամեկազարդ տողերում այսպես իրար են գալիս Յայաստան աշխարհի փառքն ու կորուստը, դառնությունն ու երազը.

Այս հողի վրա հավասարվում եմ բարձր սարերին...  
Այս հողի վրա ձեռքս հասնում է հեռու աստղերին...

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՊԵՏԻՆ

Երբ մոլորվում եմ, երբ նեղն եմ ընկնում այս հողի վրա  
Սարերն իմ կողքին կանգնում են հոր պես:

Դե եկ ու մի ասա, որ «Հայաստան» վերնագրված այս բանաստեղծության մեջ արյաց Ծապուիի առջեւ չխոնարհվող Վրշակ թագավորի հպարտությունից մի կայծ է բոցկլտում, դավադրաբար զնդան նետված՝ մեր զորության մռունչն է լսվում: Ես այդպես եմ հասկանում:

Ինձ համար հաճելի հայտնություն է «Իմ խոհերի աշխարհում» շարքը, ուր ճանաչում ենք մի յուրօրինակ կենսափիլխոփայություն, նվիրումի երգը: Իմ կարծիքով այստեղ բանաստեղծը եղբարեկ է հայտնության հրաշքն ու կորուստների ցավը. մի հակադրույթ, որ վաղեմի է այնքան, որքան աշխարհը եւ նոր, ինչպես նորածին մանկան առաջին ծիչը, կիրծելով պատասխան գտնել «Ի՞նչ է կյանքը» հարցին.

*Կյանքը երազ է... չես հասցնում լսել,  
Թե ինչ են երգում գարնան լորերը,  
Գարունդ հանկարծ աշում է դառնում,  
Այս ի՞նչ արագ են թռչում օրերը:*

Ս. Խանյանի «Խոհերի աշխարհում» այս հարցականը եզակի չէ, որովհետեւ բանաստեղծը իմաստումի, առաջյալի կեցվածք չունի: Այս շարքի առավելությունն այն է, որ հեղինակը կարողանում է միշտ զգալ երգի ու իմաստասիրության վտանգավոր սահմանը, ժամանակին կանգ առնել առեղծվածի որոնման ճանապարհին, որովհետեւ իրոք բանաստեղծը հասկացել է, որ՝

*Նոր հու՞ն է բացվում իմ առաջ,  
Թե՞ կյանքը դեռ նոր են ճանաչում,-*

այլընտրանքը հավիտենապես տրված է մարդուն, որպեսզի ադամական իր բնույթով դատապարտված մնա հավերժության կարոտին ու երբեք չհագենա, այլապես տիեզերքը կկորցնի նախաստեղծ իր հրապույրը եւ օգտապաշտության պղտոր սահմանը ներում կմեռնի «քաղցր տառապանք» սերը: Ես պատահաբար չեմ կողք-կողքի դնում «Իմ խոհերի աշխարհում» եւ «Քաղցր տառապանք» շարքերը, դրանք այս գրքում, իրոք ներհյուսված են մինյանց, երկուսի առանցքն էլ նվիրումն է, որ «քաղցր տառապանք» է. ինչպես կյանքը: Եվ բոլորովին էլ չեմ զարմանում, երբ խոհերի ու

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԱՆ

Մառապանքի համդիպադրման միջնօդակներում դարձյալ տեսնում են աշխարհաստեղծ ու աշխարհապահ բարությունը.

Ես քաղցրահամ պտուղ էի,-  
 Ինձ կեղեւը մնաց.  
 Մի ծառ էի մրգով առատ,-  
 Ինձ տերեւը մնաց:  
 Կյանքը ասաց.-Ով բանաստեղծ,  
 Երջանիկ ես դու,  
 Քեզմից հետո կասեն երգչի  
 Սեր-Արեւը մնաց:

Այս Սեր-բարությունն էլ Ս. Խանյանի բանաստեղծական դիմանկարի ամենաբանձր գույնն է: Եվ իր սիրո երգը՝ նախնականորեն անբասիր, մի տաքուկ անկյուն, ուր կարելի է մեր դաժան դարից պատսպարվել: Ոգեկոչման ու հավատի ջերմ արցունքներով մաքրվել օրերի ժամփից եւ քեզ զգալ որպես մի նոր Ադամ-բոլորանվեր ու լիաբուռն՝ իր Լիլիթի տանջանքներին հլու, անքինախնդիր ու անանձնական.

... Ճեռացար ինձմից ու սրտիս խորքում  
 Սիրո տեղ թողիր ուրացման վշեր,  
 Ասա, սիրելիս, քնելուց առաջ  
 Ու՞ն պիտի ասեն ես «քարի գիշեր»:

Ես կանգ առա «Կարոտի կրակներ» ժողովածուի հայտնությունների վրա: Գրքի առաքելությունն, իհարկե, դրանցով չի սպառվում: Չի կարելի նաեւ միանշանակ պնդել, թե բանաստեղծությունների այս ընտրանին առանց բացառության գոհարներից է կազմված: Մի բան, սակայն, պարզ է: «Կարոտի կրակներ» ընթերցվող, նստվածք տվող գիրք է: Ին համոզմամբ, այն խորհրդահայ պոեզիայի ապագա ուսումնասիրողին նտորումների առատ նյութ է տալու: Եվ վերջինը. գրքի շատ բանաստեղծություններ հիշեցնում են, որ Ս. Խանյանը բանաստեղծական «երկրորդ շնչառություն» էլ ունի, ուստի «մրգահասն», իմ կարծիքով, դեռևս առջեւում է:

**Վահրամ ԱթաևնեսՅան**  
 Բանասեր-հրապարակախոս  
 «Խորհրդային Ղարաբաղ», 1990, 18 հուլիսի

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՊԵՆ

**ՔՆԱՐԵԹԳԱԿԻ ԷՊԻԿԱՎԱՆ ՀԱՒՆՁՔԻ**

(«Արցախյան ռողանքներ» ընտրանին)



Այսօր փորձառական-մարտական, հայրենաշունչ երգեր են գրվում, ուր անկեղծությունը, հաղթական հատու շեշտերը, տաք անմիջականությունը ստեղծագործական հաջողության նախապայման են դառնում Վարդան Չակոբյանի, Գուրգեն Գաբրիելյանի, Յրաչյա Բեգլարյանի, Նվարդ Ավագյանի, Արկադի Թովմանյանի, Անրելից՝ Անահիտ Քոչարյանի, Ռոբերտ Եսայանի, Նորեկ Գասպարյանի եւ մնացածների համար:

Վերջին տասնամյակի մեջ առաջին բնագծերը պահպանողներից է նաեւ ավագ սերնդի ներկայացուցիչ Սոկրատ Խանյանը: Նրա գրական ճակատագիրը քիչ ավելի ուրիշ է: Դժվարությունը քնարերգակի համար նույն քնարական շնչի զորացումն է՝ նոր օրերի թելադրանքով: Այս առօնուվ նա ինչ-որ մի տեղ շարունակում է Գեղամ Սարյանի ավանդույթը՝ զորացումը քնարականության խորացման մեջ է:

Այժմ, նկատենք, Սոկրատ Խանյանը յուրովի հորելյան է նշում՝ հասել է գրական գործունեության իհսնամյա հանգրվանին: Մեծագույն նվաճումը բանաստեղծական ժողովածուներն են եւ մեկ էլ՝ նվիրվածությունը հայրենի եզերքին: Քչերը կանգուն մնացին Արցախ աշխարհում, ուր տասնամյակներ շարունակ.

Գետերը դուրս եկան ափերից,  
 Զրածածկ հույզերս եղան,  
 Անտառներ խարվեցին ծափերից,  
 Յողածածկ հույսերս եղան:  
 Աշխարհը կրծքիս տակ առել,  
 Դարձել եմ եռացող տիեզերք...

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱԹԵՆ

Ավյունս կարող է քնել,  
Արյունս չի քնում երբեք:

Յրաշալի է ասված: Կարճառոտ՝ սա Ս. Խանյանի ոգու կենսագործությունն է: Իսկ ահա 65 տարեկան բանաստեղծի երկրային կեռանձները հար եւ հար ննան են ժողովրդի տարեգրությանը:

Կենսագրական լավագույն էջերը գրվեցին Շարժման տարիներին: Իր խիզախն, արի կեցվածքով Սոկրատ Խանյանը մտավորականների այն փաղանգում էր, որը քաջ գիտեր իր դերը, որը պարզապես նվիրումի մեջ օրինակ էր երիտասարդ սերնդի բանաստեղծների համար: Նա ծառանալ գիտեր ոչ միայն տողերի մեջ, այլև՝ կյանքում, իսկ դա քիչ է որակել «ապրած» արտահայտությամբ, կենսական վարքագիծն է դա, բարձր նկարագրի վկայություն, ուր տողը հաստվում է դավանանքի կայունությամբ, կեցության բաց պարզությամբ: Մենք, որ սովոր ենք բարձրադադար, շոայլ գնահատությունների, այժմ զուսպ ու անաղմուկ բավարարվում ենք իր իսկ տված ինքնագնահատանքով.

Ոտքերս շատ են կպել  
Սրակող քարի,  
Բայց երբեք չի խաթարվել  
Զայնն իմ քնարի:  
Կանչերի ետեւից ընկած  
Հեռուն գնացի,  
Պղտորված ջրերի մեջ  
Չուլալ մնացի:

Եվ այժմ եկել է բանաստեղծը, որ մաքրությունը, ինչպես ինքն է ասում, չափենք հայրենիքի խորությամբ: Եկել է սիրով, եկել է՝ կյանքը տալու: Բայց չմոռանաք գլխավորը՝ եկել է հրդեհելու:

Իսկ բանաստեղծական կենսագրության դարձակետերը ժողովածուներն են:

Ավելացնենք նրա մենագրական աշխատանքները Ն. Զարյանի,

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՊԵՆ

Թ. Յուրյանի եւ հայ գրական այլ մշակների մասին, արդյունքում կունենանք անդադրում տրոփող սիրտ, հայ բանաստեղծին միշտ անմար պահող սիրտ:

Ս. Խանյանը բանաստեղծներ Գ. Սարյանի, Յովի, Շիրազի, Յ. Սահյանի, Վ. Դավթյանի զարմից է: Նույնիսկ թվում է, թե Արցախյան հողի վրա քնարական չկինել հնարավոր չէ: «Գանձ» բանաստեղծության մեջ, մասնավորապես, Սոկրատ Խանյանը մատնանշում է վիպապաշտ գեղարվեստական իր ընկալումները՝ կարուտ, «կանաչ-կարմիր» առօրյա, երազայնություն, սիրտը շոշափելու «սովորություն», եւ այսպես շարունակ դեպի բանաստեղծի սիրտը տանող կածաններ... Բերենք ընդամենը երկու տուն այդ քերթվածքից, որը հեղինակի «Արցախյան ղողաճներ» ժողովածուից է.

Անց են կենում օրերս  
 Կանաչ-կարմիր շորերում,  
 Թռվորում են լորերս  
 Իմ կարոտի ծորերում...  
 Յետ բերելու հույս չկա,  
 Զեռք մեկմելու ի՞նչ իմաստ,  
 Շոշափում եմ իմ սիրտը,  
 Երազներն իմ արեւկա...

Եվ անգամ այս տարիքում բանաստեղծի լուսավոր հայացքը շարունակում է հնայել՝

Լույսի թելեր եմ մանում,  
 Յիմնում եմ նոր մի կամար...

Ունանտիկական-գեղագիտական կայուն կառույցը նրան, ի վերջո, հանգեցրեց բանաստեղծական նոր ենթաժանրի բնագծի նվաճման՝ 1995-ին լույս տեսավ Ս. Խանյանի «Արցախի արծիվը» պատմական պոեմը, ուր իններորդ դարի հերոսամարտերի շնոր-

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈՒԱՐԱՆ

Իիվ պատկերվում է հին ու նոր Արցախի ազատաբաղծ ոգին: Պոեմի գործողությունները ծավալվում են հրաշակերտ Դիզակ աշխարհում, Գտչավանքի բարձրաբերձ տեղանքներում:

«Արցախի արծիվը» պոեմի ծնունդը հենց այս միջոցին խիստ խորհրդանշական է. այն տոգորում է անվեհեր արցախցում՝ իր այսօրվա պայքարում, իմաստավորում հին ու նոր կրիվները՝ հավերժի տեսանկյունից: Նորագույն ժամանակներում ի հայտ են գալիս նոր Եսայներ, թեև փոփոխական է թշնամին ու նրա պայքարի ձեւերի ընտրությունը: Անփոփոխ է միայն պայքարի ոգին, մեկ էլ՝ Եսայի, այսինքն՝ քաջության զարմն է անվախճան.

*Բայց նրա ոգին թեւարախում է Արցախի վիա.*

*Սեգ Տողասարին Գտիշն ու ոգին փարվում են իրար:*  
*Սարը՝ պատվանդան, վանքը՝ սուրբ գիրը, իսկ ոգին՝ ճրագ,*  
*Սեկը՝ թանկ օջախ, մեկը՝ մագաղաթ, իսկ մեկը՝ կրակ:*  
*Սարը կանգուն է, գիրը հողովածող, կրակն անմարում,*  
*Եվ այդ կրակով Եսայն ապրում է Յայոց աշխարհում:*  
*Տեսել են նրան՝ դարերի անթեք ճամփեքը մտած,*  
*Արցախի գրկում իր վրնջացող նժույզին նստած*  
*Տեսել են նրան, նրան տեսնում են ու կտեսնեն դեռ՝*  
*Թուրն ու խաչն առած՝ որպես Արցախի հավերժական տեր:*

Խոսքը կապում է ժամանակները, Եսային դարձնում ազատության խորհրդանիշ: Այն տարողունակ է, հետապնդած իմաստը՝ ավելի քան պարզ. քանի կա Տեսանողը՝ Բանաստեղծի աչքը, անպարտ է Արցախը՝ հայատրով ու հայաշունք: Նոր ժամանակի մեջ այդպիսի Տեսանող է ավագ սերնդի բանաստեղծներից՝ Սոկրատ Խանյանը, իսկ դա արդեն մատնանշում է յուրովի հոբելյան նշող բանաստեղծի թերեւս գլխավոր առանձնահատկությունը:

*Սուրեն ՂԱՆԻԵԼՅԱՆ*  
*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*  
*«ԼՂ Յանրապետություն», 1996, 24 հունվարի*

## ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱԹԱՆ

**ԳՐՁԵՂՄԱՅՆԱՆԻ ԽՈԽԱՐԵՄԸՑ**

Սոկրատ Խանյանը բանաստեղծական բազմաթիվ գրքերի հեղինակ է: Ընթերցողները ջերմորեն են ընդունում նրա ժողովածուները, ելույթները: Բանաստեղծի գործերում նրա առաջին իսկ քայլերից մինչեւ այսօր, հիմնական եւ առանցքային տեղ է գրավում Հայրենական մեծ պատերազմի թեման:

Սոկրատ Խանյան բանաստեղծին հոգեհարազատ է մանուկների աշխարհը: Նրա առահավատը յան է նրա «Իմ նվերը» գրքով: Լինելով միաժամանակ գրականագետ, նա շնորհակալ գործ է կատարում եւ այս ասպարեզում: «Արցախի արծիվը» պոեմը ընդհանության մեջ ընկալվում է որպես հին ու նոր ժամանակների խորքից ելած տաղանդավոր մի գրչի հիշատակարան:

**Կարդան ԴԱԿՈՐՅԱՆ**

\* \* \*

Սոկրատ Խանյանը Ղարաբաղի գրական օջախի խաչազարդ այուներից մեկն է: Նա բանաստեղծ է, գրականագետ, մանկավարդ ու նաև լավ դարաբաղցի: Խանյանի երգերը հյուսված են արցախյան բնության խայտարդես նախշերով, շնչավորված են լեռնաշխարհի ծաղիկների բույրերով:


Սոկրատ Խանյանը իր երկարատեւ աշխատանքի վաստակով հարստացրել է մեր պոեզիան, գրականագիտական միտքը եւ մանկավարժական գործը: Նա իրավունք ունի հպարտանալու այդ վաստակով:

**Դրաշյա ԲԵԳԼԱՐՅԱՆ**

\* \* \*

Սոկրատ Խանյանը բանաստեղծ, Սոկրատ Խանյանը գրականագետ, Սոկրատ Խանյանը դասախոս եւ մանկավարժ եւ, ի վերջո, Սոկրատ Խանյանը իր մարդկային նկարագրով ուրույն տեղ ունի մեր ժողովորդի արցախյան հատվածում ստեղծվող մշակույթի անդաստանում: Նրա լավագույն բանաստեղծությունները ներշնչանքի գեղեցիկ դրսեւորումներ են... Այսօր էլ նա շարունակում է արդյունավետ ու բեղմնավոր աշխատել բանաստեղծության մեջ՝ դրսեւորելով ջահել տրոփյուն, գիտական աշխատանքում՝ ներհում միտք:

**Մաքսի ԴՈՎՃԱՆՆԻՍՅԱՆ**



Զրի պես անցիր քո լուսեն ծամփան,  
Փույթ չէ, թե վարար գետ չես դու կյանքում,  
Կարկաչիր զուլալ աղբյուրի նման,  
Միայն թե կոտրես ծարավը մարդու:

Կ Ա Ր Կ Ա Վ Զ

**Ե Ր Ա Խ Տ Ի Ք**

**Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ս**

Ին սեգ Յայրենիք, իմն են սարերդ,  
Իմն են գետերդ, աղբյուրներդ սառ,  
Քեզնով են հնչում հոգուս լարերը,  
Սերն իմ քեզնով է այսքան ջերմ ու վառ:  
Ամեն քայլիդ հետ ցնծում եմ սրտանց,  
Ամեն թռիչքդ ինձ խինդ է բերում,  
Դու իմ բերկրանքն ես, կարոտը անանց,  
Դու կաս իմ սրտի ամեն ծալքերում,  
Դու իմն ես... սակայն հանգիստ չեմ հոգով,  
Այնժամ կհաշվեմ ես ինձ երջանիկ,  
Երբ զգամ, որ իմ արդար քրտինքով  
ճամփիդ աճել է գոնե մի ծաղիկ:

1950 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Ծաղկած ակացին այնքա՞ն բուրավետ,  
Եղեւնին նազուն, սլացիկ բարդին,  
Երբ շշնչում են մեղմ հովերի հետ,  
Գիտե՞ս, թե ինչ են երգում այդ ժամին:

Ասում են. մայր հող, գրկիդ մեջ աճում  
Ու փայփայանքդ ենք զգում հոգեթով,  
Քեզնով ենք այսպես հավերժ կանաչում,  
Քեզ ենք պարտական մեր դալար կյանքով:

1950 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Խնդրությունը մեր անսահման  
Ու տենչերը վսեմ,  
Այս աշխարհում դու ես միայն,  
Դայրենիք ին լուսե:

Ազատության հուրը անմար,  
Դորդ աղբյուրը կյանքի,  
Զեռք ենք բերել կամքով համառ,  
Դասել ենք այս փառքին:

Չո հողմաշունչ ճանապարհին  
Բյուր վերքեր ենք կրել,  
Ելած անդուլ մի պայքարի՝  
Մեր ներկան ենք կռել:

Ինչե՞ր ասես, որ չենք տեսել՝  
Սորմոքներ ու արցունք,  
Բայց ձգտել ենք՝ մեր ոտքի տակ  
Ունենալ լույս բարձունք:

Մենք քո սիրով միշտ զրահվել  
Ու հաղթել ենք մահին,  
Չո անունը բարձր ենք պահել  
Ամեն դժվար պահի:

Դու մեր տենչը, արեւն ես կեզ,  
Քեզնով ենք մենք անպարտ,  
Ես չգիտեմ, թե առանց քեզ  
Ինչ են սեր ու բերկրանք:

## ՀԱՅՐԵՆԻ ԼԵՌՆԵՐ

Հոգուս խորքերում կրում եմ միշտ ձեզ,  
Ներշնչվում ձեզնով, հայրենի լեռներ,  
Սիրտս դարձնում են ջերմ ու սիրակեզ,  
Ձեր ամեն քարը, ամեն թուփը ձեր:

Բայց ամենից շատ, հայրենի լեռներ,  
Ես գագաթներն եմ սիրում ձեր հպարտ,  
Եվ այն պահը թեժ, երբ անթիվ հողմեր  
Գալիս, պարտվում են ձեր ոտքերի տակ:

1955 թ., գ. Ակնաղբյուր

## ԳԱԶԵԼ ԵՂԻԾԵ ՉԱՐԵՆՑԻՆ

Որպես գարնան առավոտ - դու շողացիր ու անցար,  
Մարգարիտներ ցանելով - դու շողացիր ու անցար,

Հոկտեմբերով ջերմացած, որպես անմահ մի երգիչ,  
Նոր օրերին ձուլվելով - դու շողացիր ու անցար:

Սայաթ-Նովի, Քուչակի հազարամյա հանճարով  
Մեծ քնարդ լարելով - դու շողացիր ու անցար:

Հասավ նետդ գալիքին երգիդ թեւով վեհապանձ,  
Եվ հավերժին ձուլվելեվ - դու շողացիր ու անցար:

Վառված Մասսի կարոտով, բարձր որպես մի Մասիս,  
Քո արձանը կերտելով - դու շողացիր ու անցար:

1957 թ., 13 մարտի, Բաքու

Կ Ա Ր Կ Ա Զ

## Ո Ո Ւ Ս Ա Կ Ա Ն Ս Տ Ե Պ

Մանկուց, մանկուց եմ լսել անունը քո,  
Քեզնով բախտս գտել, քեզնով հպարտացել,  
Հազար անգամ հեռվից փարվել եմ քեզ հոգով,  
Հազար անգամ քեզնով սիրտս է խնդացել:

Արդ եկել եմ ահա գիրկդ մայրական,  
Այնքան մոտ ես դու ինձ, այնքան հարազատ,  
Որ թեւեր եմ առել սիրով որդիական  
Ու ճախրում եմ ասես քո եթերում ազատ:

Սիրում եմ ես անչափ քո կանաչը թափ,  
Քո երկինքը պարզ ու ծիլերը հերկի,  
Քանզի լազուրում քո ջինջ ու պայծառ  
Աստղերն են շողում գիտության, երգի:

Փայփայում ես դու ինձ քնքշասիրտ մոր պես,  
Քո հովերով այնպես համբուրում ճակատն իմ,  
Որ գրկիդ մեջ կրկին կարոտում է քեզ  
Խինդի օվկիան դառած իմ ջահել հոգին:

Ու քեզնով արբած, քեզնով դարձած հզոր,  
Խոնարհում են գլուխս այսօր քո հանդեա,  
Չէ՞ որ խաղաղության գարունները բոլոր  
Քեզնից են սերվել, ռուսական ստեա:

1957 թ., հուլիս, ք. Կուզմեցկ  
Սովետական բանակում  
Ժառայելու ժամանակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Մեր հայկական լեռներում գագաթներ կան երկնահաս, Անտառներ կան կուսական եւ աղբյուրներ կարկաչուն, Հազարամյա պատմության կնճիռներ կան ճակատին, Ժայռներ կան մեր լեռներում, գետեր-գետեր շառաչուն: Հին խոփեր կան ու մածեր մեր նահրյան լեռներում, Ոլոր-մոլոր կածաններ, ոտնահետքեր մարդկային, Ու բերդեր կան մամոապատ մեր երկնաքեր լեռներում, Մեսրոպածին գրեր կան այդ բերդերի ճակատին; Մեր լեռների լանջերին ցորմի արտեր կան ծփուն, Ամեն կիրճում, գետափի մեր հույսի պես վառ լույսեր, Մեր լեռներում՝ նոր աստղեր երկինք նետող գիտություն, Ժողովրդիս պայքարով վերածնված կյանք ու սեր: Խաչմերուկներ կան անթիվ ու ճամփաներ քարքարոտ, Արեւներ կան վառվուն, հորիզոններ այնքան լուրթ, Այնտեղ գալիք մի չքնաղ, այնտեղ ծգտում ու կարոտ, Իր լեռների պես անմահ մի բուռ, մի մեծ ժողովուրո:

1955 թ., Բաքու

## ՂԱՐԱԲԱԴ

Բարձրագագաթ սարերը քո  
Ու դաշտերը բուրումնավետ,  
Մարդ մի օրում կանցնի ոտքով՝  
Զրուցելով դարերի հետ:

Ղարաբաղ իմ, փոքր ես, սակայն  
Մոր փոքրությանն ո՞վ է նայում,  
Ո՞ր հերոսներ ծնող մայրն է,  
Որ աշխարհին չի հմայում:

1955 թ., Հադրութ

## ՅՈՒԾԵՐ ԵՎ ՑԱՍՈՒՄ

### ԿԱՐՈՍ

Յայրենական մեծ պատերազմում հերոսաբար  
գոհված, տաղանդավոր բանաստեղծ  
**Թարուլ ՅՈՒՐՅԱՆԻ հիշատակին**

Գարնան օր էր... Ես խոհերով փոթորկված,  
Շրջում էի փողոցով լայն, նորակերտ,  
Յուզաքարավ երգը շրթին իմ ոիմաց  
Կանգ է առնում մի թրվուն աշակերտ:

Թուխ մազեր նրա քնքույշ ու գանգուր  
Եվ հայացքը ինձ հարազատ թվացին,  
Սիրտս զգաց կարոտանքի մի մրնուր,  
Աչքերիցս արտասուլքներ տեղացին:

ճանաչեցի... մեր Թաթուլի տղան էր...  
Էր հոր զոհված օրն է ծնվել՝ հունիսին,  
Մի պահ թվաց, թե պոետն անվեհեր  
Զրուցում է ծեռքը դրած իմ ուսին:

Զրուցում է... ծեռքը դրած իմ ուսին,  
Որ իր մահով կյանք է բերել իր որդուն,  
Որ ինքը կա ու ժպտում է ամենքին,  
Որպես նահվան սուրը խլող քաջություն:

Նրա որդուն շոյում են հոր կարոտով,  
Թեևածելով վար հուշերիս օվկիանուն,  
Մի նոր հուր է վառվուն կարոտ սրտիս մեջ,  
Ու խորքերից ցասման մի խոսք են լսում.

- Եթե նորից հողմեր շաչեն երկրիս դեմ,  
Կնարտնչեն օրինակով պոետի,  
Որ գանգրահեր այս պատանին ժպտադեմ,  
Իր անմահ հոր փառքի գործն ավարտի:

## ԱՎԱԳ ԵՂԲԱՅՐ

Մեծ հայրենականի նահատակ,  
ավագ եղբորս՝ բանաստեղծ  
**Սուլեյման ԽԱՆՅԱՆԻ** հիշատակին

Կարոտը կրկին ինձ գյուղ է բերել,  
Ու ես քայլում եմ ճամփեքով ծանոթ,  
Մեր տան օջախի ծուխսը ոլորվել  
Եվ ինձ է կանչում դարձած լույս մորմոք:  
Հույզերս խառնած վարդերի բույրին,  
Մերթ սարից ելնող արեւին փայլուն,  
Ու մերթ գյուղի մոտ ջինջ հուշադրյուրին,  
Դեպի հայրական օջախն եմ քայլում:  
Ահա մեր բակից մայրս ալեհեր  
Դեպի ինձ է գալիս քայլերով դողդոջ,  
Թեւերն այնպես է նա իր տարածել,  
Ասես գրկում է աշխարհը ամբողջ:  
Արցունքն աչքերին փայփայում է ինձ,  
(Այդպես գուրգուրել լոկ մայրն է կարող),  
Նա գրկում է ինձ, բայց շփոթմունքից  
Անունն է տալիս իմ ավագ եղբոր:  
Գրկախառնվում ենք ու մի պահ տրտում  
Նրա արցունքն եմ սրբում ես ծեռքով,  
Ու քո կարոտը վառած իմ սրտում,  
Եղբայր իմ, քեզ եմ որոնում մտքով...  
...Ետ արի նորից միասին նստենք  
Ու ջերմ գրուցենք մեր կանաչ բակում,  
Ետ արի նորից մեր այգին նտնենք,  
Քո տնկած ծառից մրգերն են կաթում:

Ահա բլուրն այն մեր գյուղի ռիմաց,  
 Որից քեզ մարտի ճամփեցինք մի օր,  
 Որտեղ հայրիկը քեզ գրկեց հուզված,  
 Բարի երթ մաղթեց կարոսով մի խոր:  
 - Կոչիվ է, կռվում չամիչ չեն տալիս,  
 Բալա ջան, զգույշ ու միշտ քաջ եղիր:-  
 Այդժամ արցունքի երկու ջինջ կաթիլ  
 Դանդաղ սահեցին եւ ընկան բեղին:  
 Այդ ցաման ժամին դու որդիաբար,  
 Ախ, այնպես էիր հայրիկին գրկել,  
 Քո հայացքի մեջ մի լուռ երդում կար.  
 - Պատիվդ, հայրիկ, չեմ լքի երբեք:  
 Եվ դու գնացիր... ու քո ետեւից  
 Մեր հայացքները հոսեցին ասես,  
 Զինջ աղբյուրների կարկաչների հետ  
 Մեր լուռ սրտերը խոսեցին ասես:  
 Գնացիր, դարձած ցասում ու վրեժ,  
 Քո գարուն կյանքով գարուն փրկելու,  
 Գնացիր ցամանք պայքարներուն թեժ  
 Մայր Հայրենիքին քո պարտքը տալու:

Գնացիր... ահա Դնեպրի ափին  
 Դու ծաղիկներ ես տեսնում արյունոտ,  
 Դեռ չի ճառագել գարնան ջինջ արփին,  
 Բարձունքն է գերել թշնամին թունոտ:  
 Դու քո մարտական ընկերների հետ  
 Պետք է մարտնչես բարձունքի համար,  
 Դարան է մտել ոսոխը դաժան,

Ու կրակում է, կրակում հանառ:  
 Բարձունքի վրա ոսդիմ է այդժամ,  
 Իսկ դու ցածում ես, խրամատի մեջ,  
 Նա մահ է, մահ է սփռում տարաժամ,  
 Դու հաղթանակի լույսերը անշեց:  
 Նրա ոտքի տակ բարձունքն է օտար,  
 Իսկ քո ոտքի տակ Յայրենիքը մեր,  
 Պիտի գլորվի նա բարձունքն ի վար,  
 Դու պիտի ելնես լույս բարձունքն ի վեր:  
 Ու կրակում եք, կրակում անվերջ,  
 Մոտ է հաղթական ժամը բերկրալի,  
 Օ՛, ինչքան տենչ կա ջահել սրտիդ մեջ,  
 Ինչքան կորուստներ, հուշեր բաղծալի:  
 Բարձունք եք հասել, ու ծածանվում է  
 Չեր հաղթանակի դրոշը կարմիր,  
 Բայց ընկերներդ չեն խոսում, լուր են  
 Ու տխուր քեզ են նայում, եղբայր ին...  
 Դնեպրի ափին քաջաբար ընկար,  
 Գարնան ամպերն էլ քեզ համար լացին,  
 Բարձունքին հասած հավերժ քուն մտար  
 Դու հաղթանակի ջինջ լուսաբացին:

Մեր թթենու տակ ինձ դաս ես պատմել  
 Քաջության մասին ու Յայրենիքի,  
 Ամեն անգամ քեզ բերկրանքն է պատել.  
 Երբ խոսել ես դու քաջերի կյանքից:  
 Խիզախ Դանկոյին սիրել ես, եղբայր,  
 Զգտել ես քայլել նրա օրինակով,  
 Ասել ես՝ հազար երանի նրան,

Ով ճամփան կանցնի միշտ հաղթանակով:  
 Ետ արի, նորից միասին նստենք  
 Ու ջերմ զրուցենք մեր կանաչ բակում,  
 Ետ արի, նորից մեր այգին մտնենք,  
 Քո տնկած ծառից մրգերն են կաթում:  
 Ետ արի, կրկին մեր թթենու տակ  
 Քո անցած ուղու մասին ինձ պատմիր,  
 Դու ազատության անմահ նահատակ,  
 Ին ավագ եղբայր, ո՞ւր ես, ետ արի:

1958 թ., գ. Ակնաղբյուր

### ԿԻՍԱՏ ԵՐԳԸ

Այսօր ես կրկին սիրով կարդացի  
 Ին զոհված եղբոր երգերը կիսատ,  
 Սրտիս օվկիանը անհուն կարոտի  
 Փոթորկվեց նրա տողերից հստակ:

«Յոգ չէ մեռնելը վտանգի ժամին,  
 Յանուն մեր երկրի եւ ազատության,  
 Երբ հաստատ գիտես, որ քո սերնդին  
 Պիտի շողշողա չքնաղ ապագան»:

Այդպես է գրել նա խաղաղ ժամին,  
 Սրտաբուխ երգը իր հայրենական,  
 Կիսատ թողնելով, ընդդեմ ոսոխի-  
 Ռազմի ճակատ է նետվել անվարան:

**Կ Ա Ր Կ Ա Վ Զ**

Յերսաբար է ընկել նա մարտուն,  
Ես նրա շիրմի տեղը չգիտեմ,  
Սակայն արձանն է հավերժի գրկում.  
Յաղթական կրծքով կանգնել ժպտադեմ:

Ու իմ սրտի մեջ զայրույթն է եռուն  
Յրձիգների դեմ նոր պատերազմի,  
Եղբորս կիսատ տողերն եմ հիշուն  
Եվ հպարտորեն դիմուն ամենքին.

- Յոզ չէ մեռնելը վտանգի ժամին,  
Յանուն մեր երկրի եւ ազատության,  
Երբ հաստատ գիտես, որ քո սերնդին  
Պիտի շողշողա չքնաղ ապազան:

1950 թ., գ. Ակնաղրյուր

**Բ Ա Լ Լ Ա Դ**

Ասուն եմ՝ ահեղ մարտերի բոցուն  
Յերս մարտիկն է քաջաբար ընկել,  
Քնքուշ վարդերն են բնության ծոցուն  
Յարազատ մոր պես նրա դին գրկել:

Եվ այդ վարդերը այնքան են թախծել,  
Մինչեւ բացվել է առավոտը վառ,  
Մինչ հաղթանակի արեւն է բացվել  
Այնպես ջերմորեն, այնպես հրավառ:

Եվ այն օրվանից, երբ լույսն է բացվուն,  
Վարդերն են թացվուն ցողերով վճիս,  
Զոհվածի համար՝ աչքերուն արցունք,  
Յաղթության համար՝ թերթերին ժախտ:

1954 թ., Բարու

## ՀԱՐԱՉԱՏՆԵՐԻՍ ԴԵՏ

## ՀԱՅՐԻԿԻՍ

Հայր իմ սիրելի, հայր իմ հարազատ,  
Քեզ չեմ գովերգել ին ոչ մի երգում,  
Բայց քո անունը միշտ էլ ինձ համար  
Հնչել է որպես մի քաղցր երդում...

Գիտեմ, քո ուժը ու եռանդը քո  
Դու սերմանել ես իմ դժվար ճամփին,  
Քո խնդրությունը դու ինձ ես տվել,  
Որ պայծառ լինի իմ կյանքի արփին

Դու եւ քրտնել ես ամռան շոգերին,  
Որ մանկությունս անցնի հովերում,  
Դու եւ մրսել ես ծմրան բրերին,  
Որ ես ցուրտ չզգամ ու լինեմ խնդրւա:

Եղել է նաեւ՝ կարգին չես ճաշել,  
Ինձ ես սնել, որ քաղցած չմնամ,  
Այս, քանի՝, քանի՝ օրեր ես հաշվել,  
Որ հասակ առնեն, որ շուտ մեծանամ:

Այդպես մաս առ մաս դու ինձ ես տվել  
Մազերիդ թուխը, ժախտն աչքերիդ,  
Մաս առ մաս սիրով ինձ ես նվիրել  
Թրթիւներն անգամ ջահել շրթերիդ:

Ու երբ ես այսօր քայլում եմ խրոխտ,  
Մի խրախճանք է տիրում քո հոգուն,  
Փայլում են խինդից աչքերդ արցունքոտ,  
Գալիս փարվել ես քո սիրած որդուն:

Օ՛, հայր իմ, հայր իմ, քո սիրո առաջ,  
Երդվուն են ահա իմ ջահել կյանքով  
Սիրտս փոռում եմ քո հոտքերի տակ,  
Թող ծերությունդ անցնի բերկրանքով:

1957 թ., գ. Ակմաղբյուր

\* \* \*

Ուր է գնամ, ուր էլ լինեմ իմ կյանքում,  
Չեմ մոռանա քնքուշ դեմքը մայրիկին,  
Նրա անհուն սերն են զգում իմ սրտուն,  
Երբ գրկում են փոքրիկ, անուշ բալիկիս:

Կարոտ դառած միշտ շրջում է նա ինձ հետ,  
Արեւի պես յույս է տալիս իմ ճամփին,  
Որ ծաղկանց լինի կյանքս բուրավետ,  
Փոշի չիջնի խնդությանս գետափին:

Չմռան բքին, թե գարունքին լուսապերճ,  
Չեմ մոռանա իմ սիրասուն մայրիկին,  
Մորս սերը քնար դառել սրտիս մեջ,  
Ճնշում է նեղմ կյանքիս դժվար ճամփեքին:

1955 թ., գ. Ակմաղբյուր

\* \* \*

Կյանքի երկար ճամփան անցել  
Ու տեսել ես չարն ու բարին,  
Մերթ աչքերդ ցողով թացվել,  
Անպ է իջել հոգուդ սարին,  
Մերթ արեւի նման վառվել,  
Ժայտացել ես ողջ աշխարհին...  
Այժմ, երբ քո վարսերի մեջ  
Իջել է մի ճերմակ ծնեռ,  
Քո մայրական, նուրբ սրտի մեջ  
Այդ բոլորը ասես կան դեռ,  
Դրանից է, որ մերթ տխրում  
Ու թախծում ես անպի նման,  
Մերթ շոյում ես ու մերթ ժայտում  
Արեգակի շողի նման:

1957 թ., գ. Ակմաղբյուր

Կ Ա Ր Կ Ա Զ

## ԵՐԳՍ ԴՈՒ ԵՍ

Բալիկիս՝ Յամետին

Նստած, ես մի երգ եմ գրում,  
Խոհերիս մեջ խորասուզված,  
Դու մեր բակում երգեր ասում,  
Թռչկոտում ես խաղով տարված:  
Դեսո փոթրիկ մի շյուղ վերցնում,  
Ծառ ես տնկում նուրբ թաթերով,  
Ինձ կանչում ես, հպարտանում  
Քո առաջին հաղթանակով:  
Փոթորկվում է հոգիս մի պահ,  
Նայում եմ քեզ սիրով անհուն,  
Ի՞նչ փույթ երգս կիսատ մնաց,  
Երգս դու ես, իմ խնդություն:

1954 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Կրկին տուն դարձա ես աշխատանքից,  
Ծիծեռնակի պես իմ դեմք ելար,  
Իմ գիրկը թռար ու քո բերկրանքից  
Հույզիս աղբյուրը խոխոչեց վարար:

Խաղա, ծիծաղիր, իմ գարնան ծաղիկ,  
Բուրիր աշխարհին ու քո հայրիկին,  
Քեզնով եմ այսքան կյանքում երջանիկ,  
Քեզնով եմ այսպես մանկանում կրկին:

1954 թ., Բաքու

## ԱՌԱՋԻՆ ՍԵՐ Մրբուհուն

Խոհերով տարված անցնում եմ դաշտով,  
Յիշում առաջին հանդիպումը մեր,  
Մի պահ քո մոտ եմ թռչում կարոտով,  
Նայում աչքերիդ, առաջին իմ սեր...  
Շրջում եմ մենակ, ու թաց խոտերում  
Ոտնահետքերդ տեսնում եմ կարծես,  
Թվում է՝ գալուան այդ պաղ ցողերում  
Ես ջերմանում եմ քո սիրուց հրկեզ:  
Սրտիս մեջ պահած ե՛ւ սեր, ե՛ւ ձգտում,  
Վառ կակաչին եմ նայում ես տրտում,  
Այստեղ էլ նրա թերթերի միջից  
Քո նուրբ շրթերով դու ես ինձ ժպտում:  
Եվ մոտենում եմ կարկաչուն առվին,  
Տարվում ափերով այնպես բուրավետ,  
Սակայն այստեղ էլ առուն է մեղմիկ  
Քո անուշ ձայնով շշնջում ինձ հետ:  
Խորհում եմ լրին եւ շուրջս նայում,  
Նայում կարոտով ու չեմ հասկանում,  
Բնությո՞ւնն է ինձ քեզնով հմայում,  
Թե՞ դու ես նրանով այդքան քաղցրանում:

1957 թ., գ. Ակմաղբյուր

## Ա Դ Զ Կ Ա Ե Ր Գ Ը

Ըստ Ռ. Տագորի

Դու եկար լռին, դեմս կանգնեցիր,  
Շիկնած հայացքդ հառեցիր վրաս,  
Ասացի, - Այդպես մի՛ նայիր դու ինձ,  
Գնա, այսուհետ մեր այգին չգաս:

Դու ձեռքս առար ջերմ ափերիդ մեջ,  
Եվ իմ աչքերին նայեցիր երկար,  
Թեկուզ հոգուս մեջ վառվում էր մի տենչ,  
Ասացի, - Ինչո՞ւ մեր այգին եկար:

Դու իմ վարսերին վարդեր ցանեցիր  
Եվ ինձ խնդրեցիր, որ այդպես մնան,  
Անուշ թախիծով ես շշնջացի.  
- Իզո՞ւ է, իզո՞ւ, մեր այգուց գնա...

Ձերմին շրթերդ այտիս հպվեցին,  
Քեզ նախատեցի ու լուռ հեռացա,  
Դու իմ ետեւից մեղմիկ կանչեցիր.  
- Ետ դա՞ռ, սիրելիս, ինչո՞ւ նեղացար:

Շատ օրեր անցան այն պահից հետո,  
Սպասում էի ժամերով երկար...  
Երբ չէիր գալիս, անհուն կարոտով  
Ես թախծում էի, «Ա՞ն, ինչու չեկար»:

1955 թ., Բարու

\* \* \*

Գարնան հովը խաղաց թերեւ,  
 Երգի փոխվեց նուրբ ակացին,  
 Շառ ու ծաղիկ, վարդ ու թերթեր  
 Մի թուչչական համերգ բացին:  
 Սիրող մի զույգ եկավ հետքով  
 Ու կանգ առավ եղեւնու տակ,  
 Եղեւնին էլ գարնան երգով  
 Նրանց առավ իր թեւի տակ:  
 Ու վարսերին աստղերի շող,  
 Մեղմ օրորվեց բարակ սոսին,  
 Թեքվեց դիմացն իր՝ սոսափող  
 Արմավենու փարթամ ուսին  
 Եվ շշնջաց հովի լեզվով  
 Այդ երջանիկ սիրո մասին:

1956 թ., գ. Ակնաղբյուր



Բամաստեղծը կմոջ՝ Արքունու հետ

Կ Ա Ր Կ Ա Զ Զ

**ՀԱՅՐԵՆԻ ԿԱՆԱՉ ԱՐՏԵՐ...**

**ՍԻՐՏՍ ԱՅՆՏԵՂ Է**

Իմ սիրտսն այնտեղ է - հայրենի հզոր  
Լեռմերի գըլխիմ, արծիվների մոտ...  
Ավ. Խսահակյան

Սիրտս այնտեղ է՝ սարերի գրկում,  
Ուր ճամփաներ կան ձգված անհամար,  
Ուր մանկությունն է անցել անտրտում,  
Եվ ամեն մի թուփ հուշ է ինձ համար:

Սիրտս այնտեղ է՝ ուր ջրվեժներին  
Չուլված մանկական ին երգն է հնչում,  
Ուր հավերժահոս աղբյուրի եզրին  
Ին ձեռքով տնկած բարդին է ածում:

Սիրտս այնտեղ է՝ սարերի գրկում,  
Թռչում է ասես արծիվների հետ,  
Եղնիկի ետքից մի ակնթարթում  
Անցնում է անթիվ կածան, արահետ:

Սիրտս այնտեղ է՝ ծուլված մայր հողին,  
Ուր ցորնի ոսկե հասկերն են խշշում,  
Որոնք ասես թե անցնող-դարձողին  
Սիրածիս տված երդումս են հուշում:

Ամպերից ել վեր՝ սարերի գրկում,  
Ուր գալիք տանող ճամփան անշեղ է,  
Ուր մանկությունն է անցել անտրտում,  
Ամեն ակնթարթ սիրտս այնտեղ է:

1958 թ., Բաքու

## ՀՐԱՎԵՐ

Մոռվ սարի գագաթին, երբ ժպտում է վառ արփին,  
Ես քո հայացքն եմ հիշում այնքան պայծառ ու քնքուշ,  
Երբ առուն է խոխոջում եւ օրորվում մեր բարդին,  
Քո ջերմ ծիծաղն եմ լսում, տեսնում հասակդ, անուշ:

Մոռվ սարի փեշերից, երբ մեղմ հովերն են գալիս,  
Իմ ականջին ասես քո սիրո խոսքերն են շրջում,  
Երբ արտերն են ցողաքաց օվկիանի պես ծափ տալիս,  
Մեր հանրիպումն առաջին ու ծով բերկրանքն եմ հիշում:

Ու մեր գյուղի չորս բոլոր ամեն մի ծառ ու ծաղիկ,  
Ինձ հետ ճամփառ են պահում սրտով ջերմ ու սիրակեզ,  
Գյուղատնտես ես դարձել, արի, սիրած իմ աղջիկ,  
Առատության նոր ուղին սպասում է նաեւ մեզ:

1958 թ., գ. Հարերք

## ՀԱՅՐԵՆԻ ԿԱՆԱՉ ԱՐՏԵՐ

Ես կրկին ձեզ մոտ եկա իմ հոգու խոր կարոտով,  
Քնքշորեն փարվեցի ձեզ, սրտիս մեջ հազար խոհեր,  
Մանկուց եմ ձեզ սիրահար, հասակ եմ առել ձեզնով,  
Իմ երգի զուլալ աղբյուր, հայրենի կանաչ արտեր:

Երկինքը շիկնել է վառ այս գարնան արշալույսին,  
Բերկրանքի իր աղոցնքով նա է ձեզ այսպես ցողել,  
Արեւը ելել սարից, նայում է ձեր ծիանքին,  
Նա իր ջերմ համբույրները ձեզնից է սիրով առել:

Մանկության իմ խաղընկեր արտույտն ահա ձեր մեջ  
Երգում է թելին տալով, հայրենի կանաչ արտեր,  
Կուզեի արտույտի պես ես լինել ձեր գրկում պերճ,  
Սիրառատ միշտ գուրգուրել ամեն մի ցողունը ձեր:

Սիրառատ միշտ գուրգուրել ձեր ամեն մի ցողունը,  
Եվ իմ ջերմ համբույրներով ոսկեվարս հասկը բացվեր,  
Որ առատ ձեր բերքի հետ իմ սրտի խնդությունը  
Տարածվեր աշխարհով մեկ, հայրենի կանաչ արտեր:

1954 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Ի՞նչ հաճելի է բուրում այս վարդը,  
Վարդն այս տնկողին հազար երանի,  
Ի՞նչ լավ է շրջում այս ցորնի արտը,  
Արտն այս ցանողին հազար երանի:

Ի՞նչ լավ է ժպտում ծաղկած այս ծառը,  
Ծառն այս տնկողին հազար երանի,  
Ո՞նց է կարկաչում աղբյուրն այս սառը,  
Աղբյուր բացողին հազար երանի:

Լույսի են փոխվել վարար գետերը,  
Հազար երանի լույսեր վառողին,  
Այո՛, նրան են հիշում դարերը,  
Ով գարուններ է բերում մայր հողին:

1955 թ., գ. Ուխտաձոր

Կ Ա Ր Կ Ա Ջ Զ

\* \* \*

Գարուն է... դուրս գամ, հայրենի հողի  
Ելնող գոլորշու թարն բույրը զգամ,  
Ողջունեն պայծառ արեւի շողին  
Ու ծիլ ու ծաղկին իմ համբույրը տամ:

Մեղմ հովերի հետ մեր այգիների  
Անեն մի բացվող բողբոջը շոյեն,  
Ու ձուլված ճերմակ, ճերմակ ամպերին,  
Մեր հայրենական արտերը ցողեն:

Ծիծեռնակի հետ ամեն հարկի տակ,  
Գարնան զալուստը նարդկանց ավետեմ,  
ճախրեն հայրենի երկնում կապուտակ  
Ու երկրիս ամեն վայրերը շրջեն;

Շրջեմ ու դաշտում աշխատող մարդու  
Չեռքերը սեղմեն խոր ակնածանքով,  
Որ ծառին, ծաղկին, արտին ու այգուն,  
Ինաստ է տալիս բեղուն վաստակով:

1956 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Բարձր սարից է զալիս այն առուն,  
Գնամ ու թերվեն այն առվի վրա,  
Նա ամեն թփից մի բույր է բերում,  
Ես կարոտել եմ խոխոջին նրա:

Այն մանուշակը ժպտուն է թովիչ,  
Այնքան բուրավետ եւ այնքան խոհուն,  
Այս, ոնց է բացել թերթերն հմայիչ,  
Գնամ փայփայեն սիրով մի անհուն:

Կ Ա Ր Կ Ա Զ

Ծիրանի ծառը ծաղկել է կրկին,  
Սիրածս է ասես ծաղկաշոր հազել,  
Վառվել է նրա տեսքից իմ հոգին,  
Նա ինձ վաղուց է այսպես հմայել:

Գարունն է փռվել մեր սարի լանջին,  
Ելնեմ հայրենի սարերը վսեմ,  
Ուսերիս գցած հովվի յափնջին,  
Գարների անուշ մայունը լսեմ:

Չուլված բնության հզոր զարթոնքին,  
Ծաղկանց հետ փռեմ հովզերս վարար,  
Որ նրանց բույրում ծիա իմ հոգին,  
Արբած իմ երկրի տեսքով հուսավառ:

1959 թ., գ. Ուխտաձոր

\* \* \*

Ժպիտդ իմ մոր ժպտին է նման,  
Գարուն, քո ժպտով դու գերում ես ինձ,  
Ձերմ գիրկդ իմ մոր գրկին է նման,  
Գարուն, քո գրկով դու գերում ես ինձ:

Յովդ՝ համբույրն է թանկագին իմ մոր,  
Յողդ՝ խնդության արցունքը նրա,  
Սոսափյունը քո այնքան մեղմօրոր,  
Մորս ջերմ երգն է իմ ճամփի վրա:

Յայրենի գարուն, չեմ թողնի երբեք,  
Քո դեմքը խանձեն հողմերը դաժան,  
Որ միշտ շողշողաս ճամփին իմ անթեք,  
Մորս ժպտի պես ինձնից անբաժան:

1955 թ., գ. Ակնաղբյուր

## Խ Ո Յ

Պուրակի մեջ ակացիներ, եղեւնիներ ծիգ ու բարակ,  
Հովի թեւին օրորվելով շշնջում են մի քաղցր երգ,  
Թվում է, թե երջանկալից իմ մանկության ժամփի վրա,  
Ինձ իր մոտ է կանչում կրկին այնքան ժամո՞թ, ժամո՞թ  
մի ձեռք:

Ու խոհերիս գիրկը ընկած, ճամփաներով ոլոր-մոլոր,  
Ես թռչում եմ գիրկը նրա ու տենչում եմ մանուկ  
դաշնալ,

Զգալ մորս համբույրները, լսել քաղցր, քաղցր օրոր,  
Թիթեռներին, ծաղիկներին մանուկ սիրով  
բանալ:

Եվ այդ պահին, սակայն, մեկ էլ սթափվում եմ իմ  
խոհերից,

Ո՛չ, ասում եմ, թռչել առաջ, դեպի կյանքիս ամառը շոգ,  
Բերք ու բարիք բերել առատ, նայել կյանքի  
բարձունքներից,

Ու չքողնել կիսատ ձգտում, կիսատ իղձեր, կիսատ  
կարոտ:

Եվ նայում եմ դեպի հեռուն, դեպ սարերը  
ձյունագագաթ,

Խորհում, օ՝, ո՝չ, ո՝չ, չշտապել դեպի գիրկը խոր  
ծերության,

Կյանքում մնալ հավետ ջահել, լինել լույսի մի  
ճառագայթ,

Ու վայելել բույրը սիրո - բանկ նվերը մայր բնության:  
Ու նայում եմ շուրջս կրկին, ուրախ կանչեր, ծիծաղ ու սեր,

Կ Ա Ր Կ Ա Վ Զ

Ասես նրանք կանչում են ինձ՝ մի՛ մտորիր, օ՛, խենք  
ջահել,  
Միեւնույն է, առանց քեզ էլ ժամանակը որպես հաղթ  
ծեռք,  
Բերելու է եւ ամառդ, եւ ձմեռդ ճերմակահեր:  
Միայն այնպես ապրիր կյանքում, այնպես վառվիր դու<sup>ք</sup> ճամփին,  
Որ գարնան պես ծաղկունք բերես, ամռան նման տաս  
լիություն,  
Որ թե մի օր դու ծերանաս ու դալկանա պայծառ  
արփիդ,  
Ասեն. այո՛, անցավ մի կյանք, թողած բարիք ու  
բերկրություն:

1959 թ. Դադրութ

ՀԱՐԱՉԱՏ ԴՊՐՈՑ

Որպես ուսուցիչ քո գիրկը եկա,  
Փոթորկվեց մի պահ իմ ջահել հոգին,  
Եվ տարիները իմ պատանեկան,  
Եկան հայացքիս առաջ փուլեցին:

Կանչեր լսեցի կենսուրախ ու զիւ,  
Ես հուզաբաթավ երգեր լսեցի,  
Ականջս նրանց կարկաչուն ձայնին՝  
Մանկության անդառձ օրերս հիշեցի:

Յիշեցի, թե ոնց աշնան մի ջինջ օր  
Մորս հետ հուզված դասարան մտա,  
Ուսուցիչը ինձ գուրգուրեց սիրով,  
Ողջունեց իմ նոր ճամփան արեւկա:

Ես իմ առաջին քննությունն ահա  
Ընկերներիս հետ այստեղ եմ հանձնել,  
Երջանիկ կյանքիս անմոռաց պահն այդ  
Իմ հուշերի մեջ վառ է մնացել:

Մի օր էլ ծանոթ այս դասարանում  
Կանգնել եմ հպարտ, հույզերով վառված,  
Սեղմել ձեռքերը ուսուցիչներիս,  
Իմ հասունության ատեստատն առած:

Եվ ամեն անգամ ընկերներիս հետ,  
Երբ գիրկդ եմ գալիս, դպրոց իմ անգին,  
Յուշերիս ծովն է փոփոխ իմ առաջ  
Ու շշնջում եմ երգն այս թանկագին.

- Ողջույն քեզ, դպրոց, դու իմ սիրելի,  
Իմ մատադ հոգու լուսե գանձարան,  
Ինչ տվել ես ինձ, այսօր կրկնակի  
Ես քեզ եմ հանձնում հույզերով վառման:

1954 թ., գ. Ուխտաձոր

## ԿՅԱՆՔՆ ԻՆՉ ԺՊՏՈՒՄ Է

Կյանքն ինձ ժպտում է ամեն առավոտ,  
ժպտում է նա ինձ հարազատ մոր պես,  
Արբում եմ նրա տեսքով արեւոտ,  
Դաշնում եռանդուն, դաշնում սիրակեց:

Նայում եմ դյութված ու չեմ հագենում,  
Շուրջս կառուցում, շուրջս թռիչքներ,  
Ամեն տեղ նորն է ճախրանքով ելնում  
Եվ բաց ճակատով տիրում բարձունքներ:

Այդ եռուգերին ձուլվում է հոգիս,  
Խինոս հոսում է աղբյուրի նման,  
Ամեն վայրկյան ինձ հաշիվ եմ տալիս.  
- Պետք է այս երթից ես հետ չմնամ:

1959 թ., Երեւան

## ԲԱԴԱՍՔ

Դմայված կյանքի իրով ու երթով մեր նորօրյա,  
Կանգնել եմ ճամփի եզրին, որ դեպի վեր կհառնի,  
Օրերի տենդով վառված նետվում եմ գիրկը նրա,  
Եվ գիտեմ, որ կյանքում ինձ միշտ դեպի վեր

կտանի:


Քարոտ է իմ այս ճամփան, դժվար է իմ այս ուղին,  
Եվ գիտեմ, որ քայլելիս քրտինքս ծով կդառնա,  
Մերթ կընկնեմ ու մերթ կելնեմ կուռ կամքով  
մարտնչողի,

Բայց միշտ էլ երգը շրթիս կքայլեմ ես անդադար:  
Կքայլեմ, իմ Յայաստան, վառ սերդ իմ սրտի մեջ,  
Կքայլեմ ժողովրդիս հույսերով լուսապայծառ,  
Քո շնչին շունչս խառնած կքայլեմ հազարատենչ,  
Կարոտդ հոգուս խորքում, ժպիտդ շրթիս վրա:  
Յմայված մեր նոր երթով, օրերի տենդով վառված,  
Ամենուր կմաքառեմ՝ քրտինքս օվկիան արած,  
Կքայլեմ դեպի բարձունք, կհասնեմ լուսե գագաթ,  
Ճակատիս կշողշողա բաղձալի մի ճառագայթ:

1959 թ., Երևան



Աջից՝ Ս. Խանյանը Ս. Գրիգորյանի հետ



Իմ նորատունկ վարդի թփեր  
Ու կոկոններ իմ լուսանուն,  
Դեռ չգրված իմ նոր երգեր,  
Անուրջների ծով իմ անհուն...  
Ինչպե՞ս քննեմ ես առանց ձեզ  
Եվ հանգիստս ինչպե՞ս գտնեմ,  
Ես առանց ձեզ, դատարկածեռ,  
Կյանքի դռնով ինչպե՞ս մտնեմ:

ԻՄ ՍԵՐՆԴԻ ԽՈՍՔԸ

\* \* \*

Իմ նորատունկ վարդի թփեր  
 Ու կոկոններ իմ լուսանուն,  
 Դեռ չգրված իմ նոր երգեր,  
 Անուրջների ծով իմ անհուն...  
 Ինչպէ՞ս քննեմ ես առանց ձեզ  
 Եվ հանգիստս ինչպէ՞ս գտնեմ,  
 Ես առանց ձեզ, դատարկածեռ,  
 Կյանքի դռնով ինչպէ՞ս մտնեմ:  
 Մինչ չծլեք ու չբացվեք  
 Եվ չբուրեք մարդկանց համար,  
 Գարնան ցողով մինչ չբացվեք  
 Ու չճախրեք սիրով անմար,  
 Մինչ ձեզ չտամ իմ շունչը տաք,  
 Մինչ չհուզեք սիրտը մարդու,  
 Չբոցկլտաք որպես կրակ,  
 Ես հանգիստ չեմ ապրի կյանքում:  
 Իմ նորատունկ վարդի թփեր  
 Ու կոկոններ իմ լուսանուն,  
 Դեռ չգրված իմ նոր երգեր,  
 Անուրջների ծով իմ անհուն:

1960 թ., գ. Ակնաղբյուր

## ՔԱՐՏԱԿԱՄԱԴԻԹՅՈՑՈՒՆ

### ԿԱՐՍԻՐ ՃՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Հոգու թրթիռներով, մի խենթ պատամու պես,  
Մարդկանց հոսանքի հետ իրապարակ մտա,  
Մանկուց ինչ երազներ, տենչեր ունեի ես,  
Այս ջինջ աստղերի տակ միանգամից գտա:  
Դարեր, հողմեր տեսած ու դարձած թանկ մի հուշ,  
Ամեն մի քար այստեղ լեզու առավ, խոսեց,  
Խսկ երբ կուրանտները դողանջնեցին անուշ,  
Յուզերի ջինջ առուն ին կրծքի տակ հոսեց:  
Այնպես հապատ էի քայլում ես այդ պահին,  
Սիրտս ծով թերկրանքից թև էր առնում, թռչում,  
Երբ որ տարբեր գույնի մարդկանց շրթունքներին  
Ոռիհա, Մոսկվա բառերն էին հնչում:  
Անհուն մի կարոտով իրապարակ մտա,  
Թվաց գրկեց նա ինձ շոյանքներով ին նոր,  
Այնտեղ խաղաղության ճամփաները գտա,  
Այնտեղ կյանքը ժպտաց ինձ իմաստով մի նոր:

1960 թ., հունիս, Մոսկվա

### ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ

Քո նորօրյա հաղթարշավում  
Մի տենչով է սիրտս վառվում.  
Շենքեր կերտեն ես քեզ համար,  
Գետեր թերեն կամքով համառ,  
Քո լանջերին ին շունչը տամ,  
Որ արտերդ անվերջ ծփան,  
Խոր հանքերից ոսկի հանեմ,  
Վառած լույսս ճամփիդ ցանեմ,  
Ու թե քո դեմ ամպրոպ ճայթի,  
Փուշը թե մի տեղդ խայթի,  
Ցասունս թեծ հեղեղ դարձնեմ,  
Ամեն մի չար կրակ հանգընեմ,  
Ու բարձունքիդ փարված անպարտ,  
Քո անունից խոսեմ հպարտ:

1962 թ., Երեւան

## ՔԱՐԱԿԱՄՈՒԴԻՑՈՒՆ

### ԸՆԹԵՐՑՈՂ ԲԱՐԵԿԱՍԻՍ

Թոփչքի մասին դեպի Տիեզերք  
Ես քեզ եմ հանձնում սրտաբուխ մի երգ:  
Զգիտեմ, գուցե, երբ դու այն կարդաս,  
Գլուխսդ օրորես ու թեթեւ ժպտաս,  
Ասես. «Պոետը հետ է մնում շատ,  
Դեպի Լուսին է արդեն թռչում նարդ»:  
Մի նոր Գագարին գուցե այդ պահին,  
Գտնվի Մարսի Մեծ ճանապարհին,  
Գուցե աշխարհը ցնծա հրճվանքով  
Վեներա հասած նոր հերոս մարդով:  
Մեր կյանքն այնպես է առաջ ընթանում,  
Նրանից հաճախ մենք հետ ենք մնում:  
Փույթ չէ, որ երգը չի հասնում երթին,  
Թող չասեն՝ երթը չի հասնում երգին:

*1963 թ., Բաքու*

\* \* \*

Ունեցել եմ ես տենչեր անհամար...  
Եվ այդ տենչերին հասնելու համար  
Այնպես եմ ձգտել, այնպես՝ վրազել,  
Մեկին չհասած, նորն եմ երազել:  
Մանուկ եմ եղել,  
Շտապել եմ, որ պատանի դառնամ,  
Պատանի դարձել,  
Շտապել եմ՝ գան օրերս ամռան,

**ՔԱՐԱԿԱՄՈՒԹԻՑՆԵՐՆ**

Ու երբ ինձ ամռան արեւն է վառել,  
Խենթացել եմ ես, սիրահար դառել,  
Օրերս, ասել եմ, շուտ գան, շուտ անցնեն,  
Խորհել եմ՝ սերըս իմ աստղը դարձնեմ:  
Մի ծառ եմ տնկել, շտապել եմ, որ  
Մեր առվի ափին խշշա մեղմօրոր,  
Ասել եմ շուտ գան օրերը, անցնեն,  
Որ տնկած ծառիս մրգերը հասնեն:  
Չեմ հասկացել, որ կյանքն ինձ պարզեւած  
Օրերը առնում, տանում է անդարձ:  
Երբ կյանքիս կեսը անցել է շտապ,  
Երբ նոր տենչեր են ծնվում կրծքիս տակ,  
Թե ինչ եմ ուզում . - ինձանից հարցնեն, -  
Կասեմ օրերը շուտ գան, ուշ անցնեն:

1961 թ., Բարու

**ՍԻՐԾ**

Դու բնությունից ծնունդ ես առել,  
Բնությունից էլ դարձել նուրբ ու մեծ,  
Խինդի, կարուի խարույկն ես վառել  
Ու տիեզերքներ ընդգրկել քո մեջ:  
Դարեր ապրել ես տենչերով հորդուն  
Ու երազներիդ շունչ տվել, ոգի,  
Դեռ դադար չառած մի հաղթանակում,  
Զգտել ես հասնել մի նոր բարձունքի:  
Թե չերազեիր, չխիզախեիր,  
Մնայիր քո մեջ ամփոփված ու բիրտ,  
Չկամրջեիր երկիրն աստղերին,  
Արդյոք այնժա՞մ էլ կկոչվեիր սիրտ:

1959 թ., Բարու

## ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Սեզ լեռներում փովել ես դու, իմ Հայաստան,  
 Արմատներով հին ու խորին,  
 Բողբոջել ու միրգ է տալիս քո ամեն ծառ  
 Ու դալարում օրը-օրին:  
 Հորդ գետերդ փոխել ես դու առատ լուսի  
 Եվ գցել քո այգին հրաշք,  
 Ու դարձել ես մի օրորան երգի, հույզի,  
 Գինու հնձան, ցորենի դաշտ:  
 Տարածել ես քո թեւերը նոր ու հզոր,  
 Այդքան փոքր ես եւ այդքան մեծ,  
 Ուրախ եմ ես, որ արեւներ ունես բռոտը  
 Ու գագաթներ աստեղնամերձ:  
 Դու բարձր ես նրա համար, որ քո որդին  
 Մարտերի մեջ վաստակել է քաջի անուն,  
 Որ ժայռակուռ քո լեռներում երգը շրթին,  
 Առատության լուս է քանում:  
 Դու բարձր ես նրա համար,  
 Որ քո սերը որդուդ արյան մեջ է հոսում,  
 Որ նա այսօր քո հնամյա իմաստությամբ  
 Զինջ աստղերի հետ է խոսում:  
 Տարածել ես քո թեւերը նոր ու հզոր,  
 Այդքան փոքր ես եւ այդքան մեծ,  
 Հպարտ եմ ես, որ արեւներ ունես բռոտը  
 Ու գագաթներ աստեղնամերձ:

1962 թ., Երևան

## ՔԱՐԱԿԱՄՈՒԴԻՑՈՒՆ

### ԻՄ ՍԵՐՆԴԻ ԽՈՍՔԸ

Թե ասեմ կյանքում խնդրությունն է միշտ  
Հորդել կրծքիս տակ,  
Թե ասեմ կյանքում ես չեմ տեսել վիշտ,  
Ինձ չհավատաք:  
ճամփիս շատ անգամ ես խնդացել եմ,  
Բայց շատ անգամ էլ թախծել, լացել եմ.  
Թախծել եմ, երբ որ ահեղ մարտերից  
Մի ոտանի է քեռիս տուն դարձել,  
Լացել եմ, երբ որ իմ քսանամյա  
Եղբայրը կրվից չի վերադարձել:  
Եվ վշտացել է սիրտս կրկնակի,  
Երբ որ հերոսի վեհ անուն հանած,  
Ամենուր սիրված ու փառաբանված  
Հայրն իմ ընկերոջ  
Զոհվել է օրը Մեծ Հաղթանակի:  
Բայց լացն այդ երբեք ինձ չի թեւատել,  
Ես եռակի եմ ոսոխին ատել,  
Բռունցքել եմ իմ ուժն ու ցասումը.  
Եվ վստահ նայել դեպի ապագան,  
Դեպի այսօրը մեր հերոսական:  
Եվ երբ իղձերն են մեր ծաղկում, բուրում,  
Երբ աստղերն անգամ  
Մեր հաղթանակով  
Հիացել են եւ իրար համբուրում,  
Երբ նահանջում է աշխարհում հինը,  
Ես նոր եմ զգում իմ լացի գինը:

1959 թ., գ. Ակնաղբյուր

## ԶԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ

Ով, ջահելություն,  
 Դու ծիածանված մեր հասակ պարթեւ,  
 Դու մեզ ընծայված լավագույն պարզեւ,  
 Գիտեմ, կփայլես մեր ճանապարհին  
 Որպես ակնթարթ,  
 Մեր տենչն է, որ դու խոյանաս հպարտ,  
 Անվերջ երազես բարձունքներ անհաս,  
 Այնպիսի պայծառ մի զագաթ դառնաս,  
 Որ գալիք բոլոր դարերի վրա  
 Քո սեզ հասակը հավետ երեւա:  
 Մեր իղձն է, որ վառ հույզերից հյուսված  
 Ծաղկեփունջ դառնաս ալվան, բուրավետ,  
 Եվ մարմին առած տենչերը մեր բյուր  
 Հավերժության մեջ միշտ պահես քեզ հետ:  
 Մենք կզարդարենք քեզ լույսերով պերճ,  
 Որ մեր գալիքը լույսով համբուրես,  
 Որ մեր հուսալի հերկերից ծնված  
 Ցորեն հացի հետ հավիտյան բուրես:  
 Նոր դոմնաներ են երկինք հառնելու,  
 Նրանց ցոլքերում պիտի փողփողաս,  
 Մեր սրտի հուրը մենք քեզ ենք տալու,  
 Մեր սրտի հրով պիտի շողշողաս:  
 Որպես այգեպան  
 Մենք քանի՛-քանի՛  
 Ծառ ենք տնկելու,  
 Այգի գցելու իղձերով անշեց,  
 Այո՛, դու պիտի եւ հավերժանաս

## ՔԱՐԱԿԱՄԱԴԻԹՅՈՑՈՒՆ

Մեր այդ ծառերի բողբոջների մեջ:  
 Որպես շինարար  
 Մենք քանի՝-քանի՝  
 Շենք ենք կերտելու,  
 Քանի՝ երգիչներ  
 Մեր մուլճի ձայնն են դեռ գովերգելու,  
 Նրանց շրթերով մի նոր ցնծությամբ  
 Դու պիտի նշվես,  
 Դու պիտի հիշվես:  
 Գալիք սերունդը  
 Գիտության անհուն խորքն է մտնելու,  
 Ամեն մի քայլու  
 Նա գաղտնիքներ է անթիվ գտնելու,  
 Եվ չափելու է անցած դարերի  
 Իմաստը խորին,  
 Նա ակնածանքով պիտի հիշի քեզ,  
 Որպես մարմնացում գիտության, նորի:

Յեռու չէ օրն այն,  
 Երբ մարդը պիտի հյուր գնա Մարսին,  
 Այդ ճամփին պիտի մի բարձունք դառնաս,  
 Որ երախտիքով խոսեն քո մասին,  
 Որ սերունդները գալիք դարերի,  
 Երբ մեր ներկայով չափեն ապագան,  
 Բարախյունի մեջ ժամանակների  
 Մեր ջերմ սրտերի զարկերը զգան:

1963 թ., Երևան

## ՔԱՐԱԿԱՄՈՒԹԻՑՈՒՆ

### ՄՈՐՍ ՏԵՆՉԸ

Ամառ էր, մայրս այդ օրը դաշտից  
Հոգնած, քրտնաթոր վերադարձավ տուն,  
Ամեն օրվա պես չփայփայեց ինձ,  
Ու ես չիմացա ինչու էր տրտում:

Դետո իմ ավագ եղբայրը եկավ,  
Նա էլ հուզված էր մորս պես բարի,  
Իմ մանուկ հոգին, ա՞յս, ի՞նչ հասկանար  
Աշխարհի չարը, բարին աշխարհի:

Կոիվ է... բառն այդ ականջիս հասավ,  
Վտանգի տակ էր հայրենիքը մեր,  
- Դեհ, մնաք բարով, - Եղբայրս ասաց, -  
Ու ճամփա ընկավ ընկերների հետ:

Այդ օրից հետո տարիներ անցան,  
Մորս մազերին կյանքը ծյուն մաղեց,  
Եղբայրս մարտից չվերադարձավ,  
Մայրս լաց եղավ, մայրս նվաղեց:

Դադթանակ եկավ, մորս աչքերում  
Արցունքի միջից ժպիտը փայլեց,  
Կարոտն ու հույսը հոգու խորքերում  
Մի նոր ջերմությամբ նա ինձ փայփայեց...

Ու կրվի մասին, երբ խոսք է բացվում,  
Ասես խոցում են նուրբ սիրտը իմ մոր,  
Նրա աչքերն են մշուշվում, թացվում,  
Կորած ճամփան է հիշում իմ եղբոր:

Նրա աչքերում, շրթերի վրա,  
Խաղաղություն են ես միայն կարդում,  
Մորս այդ տենչն եմ ես տեսնում իինա  
Բոլոր մայրերի կարոտած սրտում:

1961 թ., գ. Ակնաղբյուր

**ՔԱՐԱԿԱՄՈՒԴԻՑՈՒՆ**

**ԻՍ ԸՆԿԵՐՆԵՐԸ**

Ընկերներ շատ են ունեցել կյանքում,  
Եվ մեկնեկու վիշտն ու խինդն ենք կիսել,  
Նահանջի ժամին ու թե վերելքում,  
Նույն նպատակն է մեր սիրտը կիզել:

Թե քանի ընկեր ունեմ մտերին,  
Ասել չեմ կարող, անթիվ են նրանք,  
Ինչ լավ է, երբ քո լավ ընկերներին  
Չես հաշվում երբեք մատների վրա:

1960 թ., Յաղորութ

\* \* \*

Թե հարցնեք, ես խիղճ տեսե՞լ եմ, արդյոք,  
Կպատասխանեմ, տեսել եմ, այո.  
Օրոր ասող մոր անքուն աչքերում,  
Յոր՝ կոշտուկներով պատած ափերում,  
Տեսել եմ ցորեն հացի բույրի մեջ,  
Յավերժ կարկաչող հուշաղբյուրի մեջ,  
Լույսերի ծովում՝ մեր ծեռքով վառած,  
Անունների մեջ՝ արդեն երգ դառած:  
Տեսել եմ խիղճը հայրենի հողում  
Եվ մեր տենչերի ամեն մի շողում,  
Խիղճը տեսել եմ դաժան մարտերում  
Ցասման, կրակի փոխված սրտերում:  
Տեսել եմ խիղճը՝ բարձունքի վրա,  
Աստղերին ժատող ծաղկունքի մեջ նուրբ,  
Որ զարդարում են զալիքի համար  
Զոհված մարտիկի գերեզմանը սուրբ:  
Տեսել եմ խիղճը՝ խիղճ մուրող ճամփի,  
Տեսել եմ խիղճը խիղճ փնտրող կյանքի:

1960 թ., Բաքու

## ՔԱՐԱԿԱՄՈՒԹԻՑՈՒՆ

### ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ

Գիշեր ու ցերեկ անվերջ կարկաչում,  
Ասա, հուշաղբյուր, այդ ում ես կանչում,  
Ո՞ւմ ես սպասում այդպես կարոտով,  
Ո՞վ պիտի օք տուն քո կանաչ ճամփով:  
Թանկ անուններ եմ կարդում ճակատիդ,  
Ծանոթ ձայններ եմ լսում քո երգում,  
Որոնք ասես թե հանուն մեր կյանքի  
Հնչում են որպես սրբազն երդում:  
Աղբյուր, հոսում ես մոր կարոտի պես,  
Ոնց զոհվածի հուշ վերջինը լինես,  
Թող էլ աշխարհում չերեւա սեւ ամպ,  
Թող խաղաղություն լինի ու բերկրանք,  
Արցունք չերեւա ոչ ոքի աչքին,  
Ու թե հուշաղբյուր կերտենք մեր ճամփին,  
Թող այն կառուցենք մի ողջ դար ապրած  
Ծինարար մարդու լուս հիշատակին:

1962 թ., Դիլիջան

### ՈՉ, ԶԻ ՄՈՌԱՑՎԻ

Ոչ, չի մոռացվի մեր ճանապարհը,  
Մեր ճանապարհը՝ սխրանքներով լի,  
Ակնածանքով է նայում աշխարհը  
Մեր ծեռքով վառած աստղերի փայլին:

Ոչ, չեն՝ մոռացվի մարտերն այն դաժան,  
Ուր պսակվել ենք միշտ հաղթանակով,  
Եվ բարձունքներից հավետ անբաժան  
Շարունակել ենք մեր ուղին փառքով:

Մերունդները մեզ, ո'չ, չեն մոռանա,  
Մենք կամրջում ենք ներկան գալիքին,  
Եվ մեր սրտերը մենք նրանց համար  
Աղբյուր ենք դարձնում լուսառատ կյանքի:

1960 թ., Մուկվա

## ՔԱՅՐԱԿԱՆ

Որդուս՝ Կարենին

Անուշ-անուշ, երբ քնում ես,  
 Ձերմ կարոտս ծով է դառնում,  
 Իմ բալիկս, երբ զարթնում ես,  
 Խնդությունից թեւ եմ առնում:  
 Ես իմ անցած ճանապարհին  
 Կյանքը այսքան խոր չեմ սիրել,  
 Ե'վ քեզ համար, ե'ւ աշխարհի,  
 Խաղաղ կյանքն է սիրու գերել:  
 Քո երջանիկ բախտի համար  
 Գարուն դարձած ես կրուրեմ,  
 Կմաքառեմ կամքով համառ,  
 Աստղերն անգամ ցած կրերեմ:  
 Գիշերները քո սնարին  
 ճրագ դառած կվառվեմ ես,  
 Որ երբ ժպտաս դու աշխարհին,  
 Սիրով ժպտա աշխարհը քեզ:  
 Անուշ - անուշ, երբ քնում ես,  
 Ձերմ կարոտս ծով է դառնում,  
 Իմ բալիկս, երբ զարթնում ես,  
 Խնդությունից թեւ եմ առնում:  
 Բախտավոր եմ, որ սրտիս մեջ  
 Բոցկլտում է մի արեգակ,  
 Դա հայրական սերն է անշեղ,  
 Որ վառվում է իմ կրծքի տակ:

1961 թ., Բաքու

## ՔԱՐԱԿԱՄՈՒԴԻՑՈՒՆ

### ՑՆԾՈՒԹՅՈՒՆ

Երբ մի նոր շենք է հառնում,  
Գեղեցկանում ես դու երբ,  
Ցնծություն եմ ես դառնում,  
Երեվան իմ նորակերտ:

Սիրտս ամեն-ամեն տեղ  
Քո սիրով է բարախում,  
Զերմությունը իմ սրտի  
Լույսերիդ եմ շաղախում,

Որ ավելի վառ փայլես  
ճանապարհին իմ որդու,  
Որ գալիքին ընծայես  
Թրթիռները իմ հոգու:

1959 թ., Երեւան

### ՈՐՄՆԱԴԻՐ

Ամեն նոր շենքի մի քար դնելիս  
Թրթռացել է սիրտը քո ջահել,  
Եվ մուրճիդ ամեն զարկը հնչելիս,  
Դու քանի՛-քանի՛ սրտեր ես շահել:  
Գուցե անունդ ոչ ոք չգիտե,  
Սակայն փույթ չէ դա, չէ որ մեր կյանքում  
Հավերժացել են այս շենքերի հետ  
Քո ձգտումները, տենչերը մաքուր:

1959 թ., Երեւան

## ՔԱՐԱԿԱՄԱԴԻԹՅՈՑՆԻՆ

### ԲԱԼԻԿԻՍ

Կրկին տուն դարձա ես աշխատանքից,  
Դու ծիծառի պես իմ դեմը ելար,  
Իմ գիրկը թռար ու քո բերկրանքից  
Ճույզիս աղբյուրը խոխոչեց վարար:

Խաղա, ծիծաղիր, իմ գաղնան ծաղիկ,  
Բուրիր քո հորը, բուրիր աշխարհին,  
Քեզնով եմ այսքան կյանքում երջանիկ,  
Քեզնով է այսքան կարոտս խորին:

1962 թ., Բաքու

### ՂԱՐԱԲԱԴԻ ԵՐԳԸ

Դարերից է ծնունդ առել,  
Սրտերից է սնունդ առել,  
Ջավերժական անուն դառել  
Երգը Ղարաբադի:

Թարթառի պես փոքր է եղել,  
ճանապարհն իր բայց չի շեղել,  
Սեր եւ կարոտ է հեղեղել  
Երգը Ղարաբադի:

Սիրող սրտին եղել է հուր,  
Պապակ շրթին՝ լեռնային ջուր,  
Սալեղանի վերքերին բյուր՝  
Երգը Ղարաբադի:

**ՔԱՐԱԿԱՄՈՒԹԻՑՈՒՆ**

Չի խոնարհվել Նադիր շահին,  
Արյունարբու Կաջար խանին,  
Յամիդի սեւ յաթաղանին.  
Երգը Ղարաբաղի:

Կարկաչել է, չի խոնարհվել,  
Պայքարի է մարդկանց տարել,  
Յայաստանով թեւավորվել  
Երգը Ղարաբաղի:

Արդ, իր փոքրիկ լեռնաշխարհում,  
Կիսաարդար մեր այս դարում,  
Պայքարի նոր հուրն է վառում  
Երգը Ղարաբաղի:

1961 թ., Յադրութ

\* \* \*

Մարդուց շատ բան չի պահանջում կյանքը երբեք,  
Չի պահանջում իր տվածի կեսը անգամ.  
Մեկից՝ մի ծառ կամ մի ծաղիկ, մեկից՝ մի երգ,  
Մեկից կամուրջ, իսկ մեկից էլ տաշած մի քար:  
Որ մեզ թեւեր տվող կյանքը հավետ ժպտա,  
Եկեք նրան անմնացորդ մեր պարտքը տանք:

1959 թ., Բաքու

## ՔԱՐԴԱԿԱՄՈՒԴԻՑՈՒՆ

### ՎԱՐՊԵՏԻ ՀԵՏ

*Ավետիք Խսահակյանի հիշատակին*

Յարազատներս նստել են շուրջս,  
Ու ես կարդում եմ գիրքը Վարպետի,  
Ալեհեր մայրս պահած իր շունչը,  
«Մոր սիրտն» է լսում, արցունքը այտին:  
Սիրածիս սիրո երգերն են հուզում,  
Որդուս՝ մանկական երգերը նրա,  
Յայրս ղարիբի մրմուռն է զգում  
Իր սպիացած վերքերի վրա:  
Ու ես կարդում եմ, կարդում հմայքով,  
Մի հպարտություն իմ սիրտն է պատում.  
- Մեր ժողովուրդն է Վարպետի շրթով  
Իր անցած կյանքի լեզենդը պատմում:

1963 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Այո՛, ինձ կյանքը գերում է, թովում,  
Սակայն հաճախ եմ նաեւ վրդովվում.  
Վրդովվում եմ ես, երբ մեկը պարապ  
Թանկ ժամանակն է անտեղի մաշում,  
Եվ առանց խղճի մի խայթ զգալու,  
Միշտ առաջինն է նստում ու ճաշում:  
Երբ մեկն անցնում է սառն ու անտարբեր՝  
Ցեխի մեջ ընկած թույլ նամկան մոտով,  
Մեկը փոխանակ ծաղիկ ցանելու,  
Կոկոն վարդերն է տրորում ոտով:

## ՔԱՐԱԿԱՄՈՒԹԻՑՆԵՐՆ

Երբ մեկը իրուն դողդոց ծերունուն,  
Ինքն է սանդուղքով բարձրանում առաջ,  
Երբ մեկը թեթեւ ճամփա է գնում,  
Սոտը պառավ կին՝ ծանրոցը առած,  
Բայց ամենից շատ ես վրորվկում եմ,  
Երբ մեկն անցնում է լուր նրանց կողքով,  
Երբ մեկն անտարբեր նրանց նայում է,  
Չի խարազանում իր այրող խոսքով:

1960 թ., Բաքու

### ԱՆՈՒՆ

Որդուս՝ Սուրենին...

Մանուկս ծնվեց. խնդության մի շող  
ճառագեց ասես իմ նոր սենյակում,  
Եվ ջահելացավ մայրիկս հոգով,  
Փայլեց բերկրանքի ժայռն աչքերում:  
Բարեկամներս երկար վիճեցին՝  
Ի՞նչ անուն տանք մեր նորածին մանկան,  
Մենք ի՞նչ անուն տանք, որը ամենքին  
Սրտամոտ լինի, լինի դուրեկան:  
Սայրիկս, որի աչքերում այն վառ  
Տխրության աղոտ մի նշույլ կա դեռ,  
Որի վարսերին, քունքերին, ավա՞ն,  
Իջել է ճերմակ, ճերմակ մի ձմեռ,  
Դիմեց ինձ. «Որդիս, արի մեր մանկան  
Քո ավագ եղբոր թանկ անունը տանք»:  
Ու ես նայեցի դիմացի պատին՝

## ՔԱՐԱԿԱՄԱԴԻԹՅՈՑՈՒՆ

Այնտեղ նկարից եղբայրս էր ժպտում,  
Նա, որ ընկել է բոցերում մարտի՝  
Բյուր երազ ու տենչ պահած իր սրտում:  
Այո՛, եղբայր իմ, պարծաճքն ես դու մեր  
Եվ մարմնացումը մեր նոր սիրանքի,  
Այդպես անունդ կհնչի անմեռ  
Ամեն նոր եկող սերնդի շրթին:

1952 թ., Ակնաղբյուր

### ԵՐԿՈՒ ԵՐԳ ԹԲԻԼԻՍԻՒԹԻ

#### 1. ՎՐԱՑ ԲԱՐԵԿԱՍՏԵՐԻՍ

Սիրտս լեցուն ողջույններով բարեկամի,  
Ես այցի եմ եկել չքնաղ քաղաքը ձեր,  
Ու իրձվում եմ եղբայրական սիրով ջերմին,  
Իմ վրացի, իմ դրացի հարազատներ:

Եղբայրական սիրո մասին շատ չեն խոսում,  
Բարեկամից, հարազատից թանկ էլ ի՞նչ կա,  
Թե ինչպես ենք իրար սիրել ծեր Կովկասում,  
Ուսւթավելու, Սայաթ-Նովի երգն է վկա:

Ճրճվում եմ ես ձեր ոստանով եւ իին, եւ նոր,  
Զեր վաստակով ու ձեր անթեք, պայծառ երթով,  
Եվ ամենից հնամենի, թանկ ու հզոր  
Եղբայրական քաղցր երգով:

1961 թ., ԹԲԻԼԻՍԻ

## ՔԱՐԱԿԱՄՈՒԴԻՑՈՒՆ

### 2. ԻԼՅԱ ճԱՎԵՎԱԶԵՒ ԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

Չեն չի գալիս ոչ մի կողմից,  
Վրաստանը մութն ու լուր,  
Վրացին է հաղթված քնից  
Տնքում տանջված ու տխուր:

Ի. ՃԱՎԵՎԱԶԵՒ

Երեկոն իջավ երգով ու հույզով,  
Կապույտ լեռները շողացին հեռվում,  
Թթիլիսին մեկեն ողողվեց լույսով,  
Ու հորձանք տվեց կյանքը նոր, եռուն:  
Երգն ու ծիծաղը հնչեցին անվերջ,  
Ամբողջ քաղաքը թնդաց բերկրանքից,  
Երջանիկ սրտում բյուր երազ ու տեսչ,  
Վրացին ժպտաց՝ գոհ իր վաստակից:  
Եվ լույսերի տակ, քո պատվանդանին,  
Ասես կարոտով դու էլ ժպտացիր,  
Օ՛, մեծ բանաստեղծ, քո ժողովրոյի  
Նոր կյանքի հետքը, արդյոք, զգացի՞՞ր:

1961 թ., Թթիլիսի

### ՍԻՐՈ ՏՈՂԵՐ

\* \* \*

ԿԱՂՋԱ՝ ՍՐՅՈՒԻՆՈՒԹ

Դու պատանության իմ ճամփի վրա  
Ծաղիկների մեջ ծաղիկս դարձար,  
Սիրուս արեւը դարձար հուրիրան,  
Ես քո կրակով հավերժ ջերմացա:

**ՔԱՐԱԿԱՄՈՒԹԻՑՈՒՆ**

Իմ լուսե բախտը կապեցի քեզ հետ,  
Ինձ համար դարձար ե՛ւ արեւ, ե՛ւ կին,  
Քո մասին, սակայն, արժանի մի երգ,  
Չկարողացա հորինել, անզին:  
Եվ հետո, երբ դու անուշ մայր դարձար,  
Սերս թե մեկն էր, երկուսը դարձավ:  
Երբ ճանփիս այսքան վարդեր ես ցանել,  
Ասա, այդ սերը ո՞նց փառաբանել:

1962 թ., Բաքու

\* \* \*

Այնքա՞ն, այնքա՞ն եմ հիմա քեզ սիրում,  
Որքան չեմ սիրել իմ կյանքում երեք,  
Դու ես ամենուր իմ սիրտը գերում՝  
Շրերիս վրա դարձած քաղցր երգ:  
Երբ ես զույգեր եմ տեսնում ջերմ սիրող,  
Հայացքիս առաջ կանգնում ես ժպտուն,  
Հազարապատիկ ջերմացած սրտով,  
Կյանքին ժպտալով ես դառնում եմ տուն:  
Դու ինձ ես տալիս հոգուդ կրակը,  
Եվ ավելի ես աչքիս բարձրանում,  
Սիրելու մեջ է մարդու բերկրանքը,  
Ջերմ սիրելով է կյանքը քաղցրանում:

1962 թ., Բաքու

**ՔԱՐԱԿԱՄՈՒԹԻՑՈՒՆ**

\* \* \*

Սիրո անհուն ծովս եմ ընկել,  
ճամփաս դեպի քեզ է տանում,  
ինչ է սերը, ինչ է սիրել,  
Այս, ես նոր եմ դեռ հասկանում:

Քեզ եմ տենչում ես խենթի պես,  
Տերեկն անվերջ, գիշերն անքուն,  
Ու թվում է, թե առանց քեզ,  
Ես չեմ կարող ապրել կյանքում:

1962 թ., Բարու

\* \* \*

Քեզ հանդիպեցի շրթերով տոչոր,  
Դարձար անձրեւի մի կաթիլ խոշոր,  
Իսկ հետո զուլալ մի առու դարձար,  
Եկար ու սրտիս խորքում ծովացար:  
Դու հորդանում ես անվերջ, ամրանում,  
Դրա համար եմ քեզ սեր անվանում:

1962 թ., Բարու

\* \* \*

Ներիր ինձ, սեր իմ,  
Երբ նախատում եմ ուշացման համար,  
Երբ սպասում եմ,  
Մի ակնթարթը թվում է մի դար:  
Երբ ուշանում ես, դողում է սիրտս...

**ՔԱՐԱԿԱՄՈՒԹԻՑՈՒՆ**

Այդպես դողում է պողպատ ձուլողի  
Սիրտը այն պահին,  
Երբ ուշ է իջնում հզոր դոմնայից  
Դալոցքը կարմիր:  
Այդպես դողում է  
Սիրտը փորձառու այն սերմնացանի,  
Երբ ուշ է ծլում հատիկը հողում,  
Այդպես դողում է սիրտն այգեպանի,  
Երբ տնկած ծառը ուշ է բողբօջում:  
Երբ ուշանում ես,  
Խոհերն ինձ դեպի հեռուն են տանում,  
Ինչո՞ւ, ա՞խ, ինչո՞ւ ինձ չես հասկանում:

1962 թ., Բաքու

\* \* \*

Դու հաճախ ես ինձ նախատում,  
Որ անչափ շատ եմ աշխատում  
Գիշերները ես,  
Որ երգերով շատ տարվում եմ,  
Անտես, անծուխ ես վառվում եմ,  
Մոռանում եմ քեզ:

Մարդ իրենով թե լոկ տարվի,  
Ոչ ոքի սիրտ թե չվառվի  
Մեր կյանքի համար,  
Ել որտեղի՞ց այսքան հույզեր,  
Ել որտեղի՞ց այսքան հույսեր  
Եվ լույսեր անմար:

1962 թ., Բաքու

## ՔԱՐԱԿԱՄԱՆԻԹՑՈՒՆ

\* \* \*

*Լիոյա Միհայլովմային*

Ամեն անգամ, երբ հանդիպում եմ քեզ,  
Կարոտով նայում կապույտ աչքերիդ,  
Խոր հիացմունքով նայում եմ ասես  
Ռուսական ժպտուն ու ջինջ եթերին:

Դու այնքան մոտ ես իմ սրտին, հոգուն,  
Ասես իմ ճամփան քեզ հետ եմ անցել,  
Ասես իմ վերքը փաթաթել ես դու,  
Ինձ համար գթոտ փրկարար դարձել:

Ասես ինձ հետ ես եղել ամենուր,  
Դժվարին պահին, ուրախության մեջ,  
Ասես վառվել է հուրը իմ հոգու  
Քո մաքուր սրտի կրակով անշեջ:

Գիտե՞ս, թե սիրտս ինչպես է խնդում,  
Երբ ինչում է քո անունը բարի,  
Դարի շնչով ես հասակ առել դու,  
Դու մարմնացումն ես լավի, պայքարի:

Երբ հանդիպում եմ քեզ ամեն անգամ,  
Այս խոհերով է իմ սիրտը զարկում.  
Թե բոլոր կանայք քո սիրտն ունենան,  
Աշխարհը պարտեզ կդառնա ծաղկուն:

1961 թ., Բարու

## ՔԱՐԱԿԱՄՈՒԹԻՑՈՒՆ

### ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՀՈՂՈՒՄ

#### 1. ՏԻՍՍԱ

Ինչ լավ է, որ դու խաղաղ ես այդքան,  
Որ կրակների միջով չես հոսում,  
Եվ որպես սահման երկու տերության,  
Լոկ բարեկամի լեզվով ես խոսում:

Ահա կանգնել եմ կանաչ ափին քո,  
Թվում է՝ ոչ թե մի գետ ես հսկա,  
Այլ երկու սրտեր իրար հետ կապող  
Մի հավերժական, ջերմ սիրո վկա:

1960 թ., Բուղապեշտ

#### 2. ՀՈՒՆԳԱՐԻԱ

Ողջո՞յն քեզ, Հունգարիա, քո լույսերին պայծառ,  
Մեծ Պետեֆու երազ, հույզեր նրա հորդուն,  
Ինչքա՞ն վարդեր ունես բուրունալից ու վառ,  
Ինչքա՞ն լավ ես ժայռում քեզ հյուր եկած մարդուն:  
Այդպես ժայռում է նա, ով ազատ է կյանքում,  
Ում կրծքի տակ չկա ոչ դավ, ոչ էլ նախանձ,  
Ով գիտե իր ուղին եւ տեղը գալիքում,  
Հավերժի մեջ ունի դրոշն իր փառապանծ:  
Առաջին անգամ եմ ես ոտք դնում քո հողը,  
Ինչքա՞ն ջերմություն եմ զգում ես իմ սրտում,  
Ասես քո լույսերի ամեն-ամեն շողը,

## ՔԱՐԱԿԱՄՈՒԴԻՑՈՒՆ

Գալիս խառնվում է հույզերին իմ անհուն:  
 Հազարամյա ու նոր քաղաքների եմ շրջում,  
 Ծանոթ են ինձ ասես ամեն մի շենք, արձան,  
 Ցնծում եմ ես անվերջ, երբ նոր կյանքով շնչում  
 Եվ լույսերդ ես սփոռում որպես մի սերմնացան:  
 Քաջ եղբայներ ունես, ժպտա այդպես բարի,  
 Կրծքիդ վրա բուրող վարդը խաղաղության,  
 Քո ամեն մի կոկոն թող բացվի ու բուրի,  
 Հազար անգամ պայծառ լինի քո ապագան:

1960 թ., հունիս, Բուղապեշտ

### 3. ՊԵՏԵՖՈՒ ՍԻՐՏԸ

*(Տուն-քանգարանում)*

Եկավ բանվորը, օյուղացին եկավ,  
 Ով եկավ, կարդաց երգը Պետեֆու,  
 Ամեն ոք այնտեղ իր սիրտը գտավ,  
 Տենչերն իր գտավ, թրթիռն իր հոգու:

Եվ ո՞ւմ չի տարել դեպի ջինջ բարձունք,  
 Եվ ո՞ւմ չի մղել դեպի թեժ պայքար,  
 Պետեֆու սիրտը՝ հույզերի ակունք,  
 Պետեֆու սիրտը՝ մի ամբողջ աշխարհ:

1960 թ., հունիս, Բուղապեշտ

## ՔԱՐԱԿԱՄՈՒԹԻՑՆԵՐՆ

### 4. ԳԵԼԼԵՐՏ ԲԱՐՁՈՒՆՔԻ ՎՐԱ

*Սովետական Միության հերոս  
Ազամյամի հիշատակին*

Դանուք գետն ի վար թեթեւ հովը եկավ,  
Եկավ, գերեզմանիդ նուրբ վարդերին փարվեց,  
Հուշարձանին գրված անունդ աչքիս ընկավ,  
Եվ այդ պահին ասես ջահել սիրտս հալվեց:  
Դու զոհվել ես, հերոս, այս բարձունքի վրա,  
Բուդապեշտին տվել սիրտը քո հուրիրող,  
Արդ Դանուքն ու Զանգուն ձեռք են մեկնել իրար  
Ու մեր ճամփին դարձել լույսի հեղեղ ու շող:  
Քեզ ողջույն եմ բերել քո հայրենի գյուղից,  
Համբույրներ եմ բերել ու կարոտներ անմար,  
Քո ձեռքերով տնկած փշատենու ճյուղից  
ճոճք են զցում արդեն մանուկների համար:  
Օրորոցին նրանց խաղաղ երգն է ծորում,  
Երգ, որ փրկվել է քո նահատակված կյանքով,  
Մի երգ, որով այսօր մարդկությունն է ապրում,  
Մի երգ, որը դարեր կարկաչի փառքով:

1960 թ., հունիս, Բուդապեշտ

### 5. ԱՆՐԱՅԻ ԿՈՐԱԾ ԶԻՆՎՈՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄՈՏ

Որտեղի՞ց ես եկել արդյոք,  
Ո՞վ ունես դու աշխարհում,  
Տեսնես ո՞վ է սիրակարոտ՝  
Դարձի ճամփան քո պահում:

## ՔԱՐԱԿԱՄՈՒԴԻՑՈՒՆ

Այս, ապրում է մայրդ, տեսնես,  
Թե վառվել է ու մարել,  
Սպասում է սիրածդ քեզ,  
Թե մի ուրիշն է տարել:  
Որդի՝ ունես հասակ առած,  
Թե քույր՝ ձայնդ ականջին,  
Ո՞վ է արդյոք սրտով վառված  
Միշտ սպասում քո կանչին:  
Ով էլ լինես, սիրով անշեզ  
Քո շիրիմն եմ գուրգուրում,  
Չէ՞ որ մեր ծով լույսերի մեջ  
Քո սիրտն էլ է հուրիբում:

1960 թ., Խումիս, Բուղապեշտ

### 6. ՂԱՆՈՒԲ

Դանուբ, դու իմ Արաքսի քույր,  
Քեզ շատ եմ երգել,  
Խնդրում եմ քեզ, պատասխան տուր,  
Ճեռվից եմ եկել:

Իմ եղբորը դու չե՞ս տեսել՝  
Զահել, զանգրահեր,  
Մինչեւ հիմա տուն չի հասել,  
Սպասում ենք դեռ:

Վերջին անգամ գրել էր նա,  
Որ փրկվել ես դու,  
Գովերգում էր սիրով անմար,  
Աչքերդ կապուտ:

## ՔԱՐԱԿԱՄԱԴԻԹՅՈՑՈՒՆ

Նրա վերքը սրտիդ վրա,  
Ասա ինձ՝ չկա՞,  
Լուր տուր, Դանուր, տանեմ նրա  
Սիրած աղջկան:

Իմ եղբորը դու չե՞ս տեսել՝  
Զահել, գանգրահեր,  
Մինչեւ իինա տուն չի հասել,  
Սպասում ենք դեռ:

1960 թ., Խումիս, Բուղապեշտ

### 7. ՅՈՒՆԳԱՐ ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ

Յունգար սիրուն աղջիկ, Ագնես, օ՛, դու Ագնես,  
Չեմ մոռանա երբեք ժախտներդ բարի,  
Քո նվիրած վարդը փայփայում եմ դեռ ես,  
Երկա՞ր, երկա՞ր նա իմ սիրտը պիտի վառի:  
Դու ինձ մի վարդ տվիր, բուրումնավետ մի վարդ,  
Իսկ ես ընծայեցի մի լույս կրծքանշան.  
- Սասի՞ս, շշնջացիր այնպես երախտապարտ,  
Ու նազեցիր դեմս ոնց լեռնային շուշան:  
Թեեւ չգիտեինք մենք մեկ-մեկու լեզու,  
Սակայն իրար այնպես հասկացանք այդ պահին,  
Եղբայրության երգն է մեր սրտերը հուզում,  
Եվ նույն խոսքն ենք ասում այսօր ողջ աշխարհին:  
Մենք մի սիրտ ենք դարձել ու կամք մի աներեր,  
Որդեգրվել հավետ եղբայրության ճամփին,  
Եվ այդ ճամփան է մեզ տանում դեպի արեւ,

## ՔԱՐԱԿԱՄՈՒԹԻՑՆԵՐՆ

Ինձ հորդ Զանգուի մոտ, քեզ՝ Դանուբի ափին:  
Յունգար սիրուն աղջիկ, Ագնես, օ՛, դու Ագնես,  
Չեմ մոռանա երբեք ժպիտներդ բարի,  
Զո նվիրած վարդը փայփայում եմ դեռ ես,  
Երկա՞ր, Երկա՞ր նա իմ սիրտը պիտի վառի:

1960 թ., Բուղապեշտ

### 8. ՎԱՐԴԵՐ

Քայլում եմ ես կապտակոհակ Դանուբի ափով,  
Ուր վարդեր կան, ակացիներ, ինչպես մեր հողում,  
Նայում եմ ես շուրջս լոին, մի խոր հուզմունքով,  
Ու չգիտեմ ինչու թախծից իմ սիրտն է դողում:  
Գուցե նրա համար, որ այս ալ վարդերի մոտ  
Մարտից առաջ իմ եղբայրն է նստել ու խորհել,  
Որ սիրածին նամակ գրի սրտի մեջ կարոտ,  
Դարան մտած նենգ ֆաշիստն է հանկարծ գրոհել:  
Գուցե նրա համար, որ հենց այս ակացու տակ  
Քնած է նա հավերժ քնով մայր հողից հեռու,  
Ահա նրա իղձերն են վառ, տենչերը շիտակ,  
Ծաղկի փոխված ճամփորդների սրտերը գերում:  
Եվ այդ պահին մանուկների ուրախ երգն է հնչում,  
Խաղաղության երգն են երգում եւ ազատ կյանքի,  
Թռչկոտելով գալիս են ու վարդերը փնջում.  
Եվ իմ սրտի դողն է փոխվում անհուն բերկրանքի:

1960 թ., Բուղապեշտ

## ՔԱՐԱԿԱՄՈՒԴԻՑՈՒՆ

### 9. ՅԱՆՈԾ

Զահոն քաղաքի երկաթուղային  
բանվոր **Վ. Յանշին**

Սեղմեցիր իմ ծեռը իրճվանքով  
Ու սեղան բացեցիր ինձ համար,  
Յուզմունքից խնդում էր սիրտը քո,  
Շրթերիդ ժախտ կար մի անմար:  
Մանկիկդ փարվել էր ինձ անուշ,  
Անծանոթ բառեր էր թռթովում,  
Դարկիդ տակ, եղբայր իմ, Յանոշ,  
Ամեն ինչ այնպես էր ինձ թովում:  
Թվում էր՝ տքնել եմ ես քեզ հետ  
Ու քեզ հետ կառուցման մուրճն առել,  
Ասես ձեր քաղաքում նորակերտ,  
Մեկտեղ ենք լույսերը այս վառել:  
Թե մեկը խեթ աչքով նայի քեզ,  
Անդորրը քո խախտի, բարեկամ,  
Կանչիր ինձ, կանչիր ինձ եղբոր պես,  
Որտեղ էլ լինեմ ես, շուտ կգամ:  
Չէ՞ որ մի տենչով ենք մենք ապրում,  
Միասին երազում ապագան,  
Թող լսեն, իմանան աշխարհում,  
Որ հավերժ անխախտ է մեր ճամփան:

1960 թ., Բուդապեշտ, հունիս

«Առոջան Ձեռք Հաճ Հ» - (1963-1966)



Կյանք է, թե հանկարծ թախիծը մի օր  
Սեւ ամպի նման պատի ձեր ճամփան,  
Պետք չէ՝ ինձ կանչեք, իմ բարեկամներ,  
Զեր տիսրությունը կիսելու համար  
Ես ի՞նքս կզամ:

## ՍԻՐՏՍ ՉԵԶ ՐԵՏ Է

Խաչներուկներում ժամանակների  
Մարդուն ստեղծեց մայր բնությունը,  
Եվ նրա համար՝ անբաժանելի  
Ուրախությունը եւ տխրությունը:  
Իմ բարեկամներ...

Երբ ձեր շրթերին երգն է կարկաչում,  
Երբ ցնջությունն է արեւում ձեր տան,  
Սիրտս ձեզ հետ է, ինձ էլ կանչեցեք,  
Որտեղ էլ լինեմ, կիասնեմ, կգամ:  
Վերելքը եթե ձեզ բարձունք տանի,  
Թե ձեր իղձերը ծաղկեն ու ժպտան,  
Ինձ երբեք, երբեք մտքից միք հանի,  
Սիրտս ձեզ հետ է, կանչեցեք, կգամ:  
Կգամ, կիսառնեն ձեր ծով բերկրանքին  
Ուրախությունը իմ անմնացորդ,  
Որ ավելի ջերմ ժպտա ձեր բախտի  
Արեւը բոսոր:

Ու, բան է, հանկարծ թախիծը եթե  
Սեւ ամայի նման պատի ձեր ճանփան,  
Պետք չէ, որ կանչեք, իմ բարեկամներ,  
Ձեր տխրությունը կիսելու համար  
Ես ի՞նքս կգամ:

1964 թ., Երեւան

\* \* \*

Մեկին սրտիդ հույզն ես տվել,  
Սյուսին՝ բազկիդ թափն ու ուժը,  
Մեկին աչքիդ լույսն ես տվել,  
ճանփից ցրել մութն ու մուժը:

Մեկի ոտքի փուշն ես հանել,  
Չեռքից բոնած տարել բարձունք,  
Եկ ամենուր չարն ես վանել,  
Որ չլինի կյանքում արցունք...

Դրանով ես այդքան հզոր  
Ու սրբացած, ոնց սիրող մայր,  
Դու Շայենիք իմ իին ու նոր,  
Դու իմ կյանքի Արեւ անմար:

1963 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Իմ ժողովուրդը իր ծնված օրից  
Ուրիշի օջախ չի քանդել երբեք,  
Շրթին կարոտի ու կառուցման երգ,  
Մեծ սիրտը լեցուն հույսի հերկերով,  
Միայն կերտել է,  
Աշխարհի չարն ու վատը հերքելով:  
Բայց քանդում է նա,  
Այսօր քանդում է,  
Լեռներին թառած խարխուլ խրճիթը,  
Յինը, խավարը,  
Որոնց ծաղրում է մեր լուսե դարը:  
Քանդում է հինը  
Ու նորը կերտում՝  
Չեռքը կարկառած գալիքի լույսին...  
Ես ողջունում եմ քանդելն այդպիսի:

1964 թ., Երեւան

\* \* \*

Մի փայփայած կարոտանքով  
 Ու մի չասված սիրով խորին,  
 Դպարտությամբ ու հրճվանքով  
 Շրջեցի ես ամբողջ Լոռին:  
 Թումանյանի սրտի նման  
 Ժպտաց այգը ինձ գեղանի,  
 Իսկ Ղերեղը ճամփիս հնչեց  
 Որպես երգը Թումանյանի:  
 Աղբյուրներում կարկաչահոս,  
 Անմահական ծաղիկներում,  
 Բարձունքներում աստեղնահաս  
 Եվ աստղաթաց շաղիկներում,  
 Ժայռերի մեջ լեզենդացած,  
 Խորախորհուրդ այրերի մեջ,  
 Թումանյանով հավերժացած  
 Լոռեցու բյուր տենչերի մեջ  
 Թումանյանին տեսնում էի,  
 Լսում էի Թումանյանին:  
 Եվ ամեն մի քայլափոխի  
 Ինձ հուզում էր այս խորհուրդը.  
 Թե ինչպես է  
 Մայրը որդուն վեհացնում,  
 Թե ինչպես է  
 Վեհացնում որդին մորը:

1964 թ., Վանաձոր

## Ա Խ Թ Տ Ա Զ Ա Զ Հ Ա Ց

Ո՞ՒՐ ԵՍ, ԻՄ ԸՆԿԵՐ

Դայրենական պատերազմում գոհված  
զարմիկիս՝ Սերյոժա Խանյանի հիշատակին

Դու ծաղկունք շատ էիր սիրում.  
Ծաղկել են արդեն ծառերը,  
Դու ծաղկունք շատ էիր սիրում.  
Ծաղկել են արդեն սարերը,  
Քեզ ջրի կարկաչն էր գերում.  
Ջրերն են էլի կարկաչում,-  
Դայրենի ծաղկած հանդերում  
Կարոտով քեզ են տուն կանչում...

1962 թ., գ. Ակնաղբյուր

## ՄԱՆԿԱՆ ԾԻԾԱՂՅ

Մենք նստել էինք ծառի ստվերում  
Ու լոին սուզվել մեր խոհերի մեջ...  
Սեր շուրջը միայն անդորրն էր տիրում.  
Անդորրն էր շոյում ծաղիկներին պերճ:  
Այդ պահին դեմից մի փոքրիկ մանուկ  
Ուրախ ճչալով վազեց հելիհեր,  
Եկավ, մի թիթեռ բռնեց ոսկեթեր,  
Եկավ, խանգարեց մեր լուսթյունը,  
Աշխույժով լցրեց ողջ բնությունը:  
Դմայված այդ ժիր փոքրիկի խաղով,  
Խորհեցի. - այդպես լիներ միշտ կյանքում,  
Եթե խանգարվեր անդորրը մարդու,  
Խանգարվեր միայն մանկան ծիծաղով:

1964 թ., Բաքու

## ՍԻՐՏԸ ՆՈՒՐԲ Է

Սիրտը նուրբ է, բարեկամներ,  
Զգույշ, սրտեր չկոտրեք...  
Նա լեռնային լիճ է վճիտ,  
Քար չնետեք, կհուզպի,  
Չփորփիրեք վերքը նրա,  
Դաշն հուշերում կսուզպի:  
Սիրտը ծառ չէ, որ ծյուղերը  
Հատես բնից՝ չիմանա,  
Սիրտը քար չէ, որ բնության  
Հարվածներին դիմանա:  
Սրտում կանչ կա, մոր քաղցր կանչ.  
Մերթ զրնգում, մերթ տրտում,  
Սիրո վերելք, սիրո նահանջ,  
Սիրո արցունք կա սրտում:  
Սրտում զոհված հոր կսկիծ կա  
Եվ անմուրազ եղբոր հուշ,  
Սրտում որդու ժախտներ կան,  
Քրոջ զգվանք կա անուշ:  
Աշխարհի չափ սիրտը լայն է,  
Աշխարհի չափ անեզերք,  
Բայց աշխարհն արդյոք ունի՝  
Այսքան կսկիծ, այսքան վերք:  
Սիրտը նուրբ է, բարեկամներ,  
Զգույշ, սրտեր չկոտրեք...

1964 թ., Բաքու

## Զ Ե Ռ Ո Ք Ը

Չեռքը քարին կպավ, ոգի առավ քարը,  
Թոշնած ծաղկին կպավ, նա շունչ առավ կրկին,  
Չեռքի մի հարվածով փլվեց հսկա սարը  
Ու գանձերը խորքի նա նվիրեց կյանքին:  
Չեռքը կպավ գետին, գետը փոխվեց լուսի,  
Կպավ տոշոր հողին, հողը ծաղկավորվեց,  
Փոխված հազարամյա բոցկլտացող հուսի -  
Չեռքը լուսնին հասավ եւ աստղերը շոյեց:  
Չեռքը դադար չառավ, կոշտուկներով պատվեց,  
Ցանեց ու փայփայեց առատության հերկը,  
Եկեք փառաբանենք ու համբուրենք սրտանց  
Արդար, աշխատավոր ու արարող ձեռքը:

1965 թ., Երևան

\* \* \*

Մոռացել է հայրը որդուն,  
Ասել են, թե սիրտը քար է,  
Մոռացել է որդին մորը  
Եվ ցավ դարձել նրա հոգում,  
Ասել են, թե սիրտը քար է:  
Մեկը անհոգ ծիծաղել է  
Բարեկամի Վշտի վրա,  
Նախատել են մարդիկ նրան  
Եվ ասել են՝ սիրտը քար է:  
Այդպես դաժան սրտերը միշտ  
Որակվել են որպես քարեր,  
Իսկ քարերը, իսկ քարերը,  
Ծառայել են մարդուն դարեր:  
Ոչ, ոչ, դաժան սիրտը երբեք  
Քար անվանել չենք կարող մենք...

1964 թ., Բարու

## ՄԻ ԱՌՈՒ ԵՄ

(Իմ ժողովրդին)

Մի առու եմ, սարի լանջից բխած առու,  
 Ուսած բույրը ծաղիկների,  
 Ղյուսած բույրը շաղիկների,  
 Երգը շրթիս հոսում եմ հար դեպի հեռուն:  
 Չեմ սպառվում ես իմ ճամփին, չեմ ցամաքում,  
 Ծարավներին միշտ ջուր տալով,  
 Դաշտ ու հանդին համբույր տալով,  
 Ճորդ գետերին խառնվելով ծով եմ հասնում:  
 Թե խաղաղ է լինում ծովը, օրը՝ խաղաղ,  
 Ես էլ հոգով խաղաղվում եմ,  
 Իմ ափերի հետ խաղում եմ  
 Ու ցողում եմ ծաղիկներին ջրերս պաղ:  
 Ու թե ծովի կուրծքն է շանթում կայծակը խենք,  
 Ես ունկնդիր նրա կանչին,  
 Մեր բարձրաբերձ սարի լանջին  
 Ծառս եմ լինում ու վիճում եմ ամպերի հետ:  
 Երակի պես կապված ծովին իմ հայրենի՝  
 Ծառաչում եմ նրա սիրով,  
 Ջառաչում եմ նրա սիրով.  
 Կարկաչում եմ նրա սիրով անմարելի:

1964 թ., Երեւան

\* \* \*

Երգողի հետ երգում եմ ես ստիս խորքից,  
 Սրտիս խորքից լաց եմ լինում լացողի հետ,  
 Չարն ու վատը հերցում եմ ես սրտիս խորքից,  
 ճամփա զնում ինձ հետ ճամփա բացողի հետ:  
 Սրտիս խորքից ժայթքած արեւն իմ հավատն է,  
 իմ հավատը չի մթազնում ամեն խոսքից,  
 թե ատում եմ, ատում եմ միշտ, ինչպես հարկն է,  
 թե սիրում եմ, սիրում եմ ես սրտիս խորքից:

1964 թ., գ. Ուխտաձոր

### ԳԱՐՆԱՆ ԳԱԼՈՒՍՅ

Ուր որ է, շուտով կգա գարունը,  
 Զգում եմ ես այդ հովի համբույրից,  
 Զգում եմ գարնան գալուստը բարի  
 Արեւի փայլից ու հողի բույրից:

Լեռնային գետը խենթացել է քիչ,  
 Ծիլն է երեւում ոնց մանկան ատամ,  
 Զնգում են արդեն առուները ջինջ,  
 Թափիշ են հագնում դաշտեր ու անտառ:

Սիրով, թախիծով, խնդությամբ լեցուն,  
 Սիրտս երգերի նոր հենքն է հինում,  
 Պատանությունն է արշավում մի պահ,  
 Գարնան գալուստը այդպես է լինում:

1965 թ., գ. Ակնաղբյուր

## ԳՈՐ ԵՍ ՔԵԶՆԻՑ...

Անչափ գոհ են քեզնից, իմ սիրտ,  
Որ քեզ բարի, նուրբ են ասուն,  
Որ ատում ես արարքը բիրտ  
Ու միշտ լավը գերադասում:  
Որ չես թողնում ինձ ամոթով  
Ընկերոջ մոտ, բարեկամի,  
Որ հիշում են ինձ կարոտով  
Ուրախության, թախծի ժամին:  
Գոհ են քեզնից, որ դու այդպես  
Ոգեւորվել, թեւ ես առել,  
Որ բարձունք ես միայն տենչում,  
Որ բողբոքուն հուր ես դառել:  
Բարախում ես դարի շնչով  
Եվ ունես բյուր երազ ու տենչ,  
Որ ապրում ես մաքուր խոճով,  
Դանգիստ գտնում պայքարի մեջ:

1966 թ., Բարու

## ԼԵԶԳՈՒՅԻՆ

Կանգնում է լոին ամեն առավոտ  
Նկարի դիմաց իր զոհված որդու,  
Թուխ աչքերի մեջ արցունք ու կարոտ  
Եվ կյանքի սերը մայրական հոգում:

Երբ խաղաղության մասին են խոսում,  
Արձագանքում է առաջինն ինքը,  
Արձագանքում է եւ դեռ սպասում,  
Որ տուն կգա իր միակ ջիգիթը:

Նրա աչքերում, կնճիռների մեջ  
Հույսն ու կարոտն են անդադար վառվում,  
Օ՛, մայրեյ անգին, սիրասուն մայրեր,  
Ինչքան նման եք իրար աշխարհում:

1965 թ., Կուսար

## ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐՅԱՆԻՆ

Նոր է բոլորել քո հիսուն տարին,  
 Այսօր պիտի մենք ողջունեինք քեզ,  
 Այսօր պիտի մենք քեզ համդիպեինք,  
 Չեռքդ սեղմեինք աշակերտի պես,  
 Ասեինք՝ վարպետ,  
 Դենց նոր կարողացինք գրած նոր երգը,  
 Ի՞նչ լավ ես գրել, ինչքա՞ն խորիմաստ,  
 Այնտեղ քո սիրտն ես դրել մաս առ մաս:  
 Պիտի նշեինք քո հիսուն տարին-  
 Որպես մարմնացում կամքի, պայքարի:  
 ... Բայց, ավա՞ղ, չկաս,  
 Մենք քսանամյա քո մահն ենք հիշում,  
 Ոչ, ի՞նչ ասացի,  
 Քո քսանամյա անմահությունն ենք  
 Այսօր մենք նշում:  
 Դու հիմա չկաս,  
 Մեր նախնիների ավանդական, հին  
 Քաջության վկա,  
 Դու նոր սերնդի սլացիկ ճամփին  
 Պոետ մարտիկի լույս վկայական:  
 Դու հիմա չկաս, սիրելի թարուլ,  
 Բայց քո երգերով մեզ հետ ես, արթուն,  
 Քո պոետական կրակ շրթերով  
 Մեր երգի մասին հաճախ ես հարցնում  
 Եվ անցնում բոլոր այն ուղիներով,  
 Որ մենք ենք անցնում:

1962 թ., Բարու

\* \* \*

Առաջին անգամ  
Բալիկս թուղթ ու մատիտ է առել,  
Նկարել մի մարդ  
Ու մոտն էլ արել:  
Ու ես ջերմացած իմ փոքրիկ մանկան  
Երազած պայծառ արեւի լույսով,  
Մի պահ թեւում եմ դեպի ապագան  
Ու հաստատում եմ հայրական հույսով՝  
Կզա ժամանակ,  
Որ հողագնդի բոլոր ծայրերում  
Մարդը ջերմացած մարդու ջերմ սիրով,  
Արեւի հրով,  
Իր ճանապարհին,  
Յար ու հարատեր,  
Կպատկերի լոկ մարդուն ժպտադեմ,  
Ու մոտն էլ... Արել:

1964 թ., Բարու

\* \* \*

Բարակ առուն խոխոջում է՝ երգ է ասում,  
Սառն աղբյուրը կարկաչում է՝ երգ է ասում,  
Որոտում է զմված գետը՝ երգ է ասում,  
Ոլորում է քամին մեջքը՝ երգ է ասում,  
Հսկա կաղնին սոսափում է՝ երգ է ասում,  
Աստղը հեռվից լուռ թարթում է՝ երգ է ասում,  
Բանաստեղծը երգ է լսում ամեն ինչում,  
Բնությունը արդյոք ե՞րգ չի արտաշնչում:

1964 թ., Յաղորութ

\* \* \*

Բնության մեջ շատ ամպեր կան,  
 Որոնք ասես ունեն արցունք,  
 Արտասվելով անցնում ճամփան,  
 Ցողում են դաշտ, ծոր ու բարձունք:  
 Նրանց ետքից մարդն է ժպտում,  
 Արտն է ծփում նրանց ետքից,  
 Ու դաշտերում ծիլ ու ծաղկունք  
 Արթնանում են նրանց երգից:  
 Անպեր էլ կան,  
 Անցող, անհույզ, սրտերը քար,  
 Ծարավ հողը թե շունչն էլ տա-  
 Ոչ վշտանալ գիտեն, ոչ լալ:  
 Անպեր էլ կան լեռնակուտակ,  
 Չարագուշակ եւ չարածին,  
 Մեկ էլ տեսար կայծակնացայտ  
 Ճոխորտացին,  
 Որոտացին,  
 Իրար խառնած հող ու երկինք,  
 Դաշտ ու հանդեր հեղեղեցին:  
 Անպեր էլ կան, չես հասկանում,  
 Թե ինչպես են աշխարհ գալիս,  
 Տեղից երբեք չեն բարձրանում,  
 Իրենց մի կերպ քարշ են տալիս  
 Ու ոտքերին փարվում սարի,,  
 Փարվում ծաղկին, փարվում ծառին,  
 Քսմսվում են բոլորի հետ,  
 Կորչում անհետ...  
 ... Չարմանում են բնությունից,  
 Չարմանում ու չեն հասկանում,  
 Թե ինչպես է ծնված օրից  
 Այդ անարդար խաղը տանում:

\* \* \*

Ծաղկունք հայրենի, ինչո՞ւ եք տրտում,  
Այդ ի՞նչ թախիծ է այսօր ձեր սրտում:

Գուցե հիշել եք դուք այն ձեռքերը,  
Որ ձեզ շոյել են, բայց հիմա չկամ,  
Գուցե հիշել եք դուք այն շրթերը,  
Որ ձեզ գերել են, բայց հիմա չկամ:

Փայփայում եմ ձեզ, ձեզ խնամում եմ,  
Իմ շունչն ու հոգին նվիրում եմ ձեզ,  
Երբ տխրում եք դուք, ես էլ տխրում եմ,  
Երբ ժպտում եք դուք, ժպտում եմ եւ ես:

Սերս խառնում եմ ձեր բույրին, սիրուն,  
Մի օր իմ սիրտն էլ պիտի ձուլվի ձեզ,  
Դուք իմ հայրենի ծաղիկներ սիրուն,  
Մի՛ տխրեք այդպես,  
Մի՛ տխրեք այդպես...

1964 թ., գ. Ակնաղբյուր

### ՉՆԱԽԱՏԵՔ ԻՆՉ, ՄԱՐԴԻԿ

Չնախատեք ինձ, մարդիկ, այն բանի համար,  
Ղարաբաղիս մասին որ ես շատ եմ խոսում,  
Ուր էլ տանեն ինձ կյանքում ճամփեքն անհամար.  
Էլի նրա սերն է իմ սրտի մեջ հոսում:  
Չէ՞ որ նրա թթենու ստվերի տակ եմ  
Իմ անուշ մոր օրորը լսել, մեծացել,  
Չէ՞ որ կյանքում ամենքիս մոր քաղցրությամբ են  
Յողագնդի մայրերը այսքան քաղցրացել:

1966 թ., Բաքու

\* \* \*

Ամեն անգամ, երբ ուզում եմ երազել,  
Մեր սարերի կանաչ գիրկն եմ բարձրանում,  
Մոր քնքշանքով փայփայում են նրանք ինձ  
Ու նորից-նոր մտնում սիրտս, քաղցրանում:

Եվ սիրով լի մենք գտնում ենք իրարու,  
Ես պատմում եմ երազներս աստղերին,  
Ինձ գետերն են արձագանքում վարարուն,  
Ինձ ծովերն են շոյում իրենց թեւերին:

Մի շշուկս հազար շշուկ է դառնում,  
Արձագանքով երգս է թռչում սարից-սար,  
Եվ այդ պահին մի նոր հասակ եմ առնում  
Ու դառնում եմ ասես նրանց հավասար:

Մեր սարերը ինձ այնպե՞ս են հասկանում,  
Դասկանում եմ մեր սարերին վիթխարի,  
Նրանցով են իմ աչքերին վեհանում  
Աստեղնամերձ սարերն ամբողջ աշխարհի:

1963 թ., գ. Ուխտաձոր

\* \* \*

- Չեմ տեսել իմ հոր հասակը ջահել,  
Բարդիներ, պատմեք ինձ նրա մասին:
- Նա սեզ հասակն իր մեզ է պարզեւել,-  
Բարդիներն ասին:
- Չեմ տեսել իմ հոր աչքերը ջահել,  
Ծաղիկներ, պատմեք ինձ նրանց մասին:
- Աչքերի փայլը մեզ է պարզեւել,-

Ծաղիկներն ասին:

- Չեմ լսել ես իմ հոր ծայնը ջահել,
- Աղբյուրներ, պատմեք ինձ նրա մասին:
- Կարկաչն իր ծայնի մեզ է պարգևել,-
- Աղբյուրներն ասին,
- ... Նրանց, այդ պահին,
- Յավիտյան ջահել
- Ողջ բնությունը
- Արձագանքում էր:

1964 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Ցուրտ ձմեռ է... մեր տանիքին  
Փաթիլ-փաթիլ ծյուն է մաղում,  
Սորս ճերմակ մազերի հետ,  
Յորս ճերմակ մազերի հետ,  
Իմ բալիկն է անհոգ խաղում:

Մանուկ է նա, չի հասկանում,  
Թե ոնց էին մի ժամանակ  
Այդ մազերը արեւի տակ  
Սեւ սաթի պես փայլում, շողում:

Մանուկ է նա, չի հասկանում,  
Թե ինչպես է նրանց համար  
Սիրտս դողում...  
Մանուկ է նա, չի հասկանում...

1963 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Եթե չլինես,  
Ծաղիկներն, արդյոք, արար-աշխարհի,  
Այսպէ՞ս կրուրեն իմ ճանապարհին:  
Աղբյուրներն այսքան սրտարո՞ւս կերգեն,  
Արշալույսները կժպտա՞ն բարի,

Եթե չլինես:  
Եթե չլինես,  
Աշխարհը այսպէ՞ս ինձ կիմայի,  
Մեր խաղաղ-խաղաղ երթին սպասող  
Լուսինն ինձ հեռվից այսպէ՞ս կնայի:  
Եթե չլինես.

Ե՛վ տանջանքները, Ե՛ւ թռիչքները՝  
Բարձունքներ տանող,  
Սայթարման պահին թափով ոստնելը՝  
Գագաթներ հանող,  
Խորին թախծելը, Խոհին փարվելը,  
Լուս տալու համար լրին վառվելը,  
Տեսնես կլինե՞ն այսքան սրտիս մոտ:  
Տեսնես կունենա՞ն երազ ու կարոտ,  
Եթե չլինես...

1965 թ., Երեւան

## ԲԱՅՑ ԱՐԴԵՆ ՈՒԾ Է...

Զահել հասակում,  
Կյանքի հմայող, բարդ ճանապարհին,  
Երբ չեմ հասկացել  
Ին չարն ու բարին,  
Զգտել եմ ես միշտ քեզնից հեռանալ  
Ու քեզ մոռանալ...

Եվ ես խոր ձորում առու եմ դարձել,  
Որ կյանքում տեղս երթեք չիմանաս,  
Դու կանաչավարս ուոհի ես դարձել  
Ու թեքվել վրաս...

Յետո էլ բաքուն,  
Դաշտում հեռավոր,  
Դարձել եմ մի թուփ  
Մեն ու մենավոր:  
Եվ լուսաբացին, երբ աչք եմ բացել,  
Ին թեւերի տակ ես քեզ եմ տեսել՝  
Թերթիկներդ թաց,  
Մանուշակ դարձած:  
Մի անգամ էլ քեզ թողել եմ դաշտում,  
Մենակ, հողմահար,  
Ու մի ժայռ դարձել,  
Քարասիրտ մի ժայռ:

Ու դարձյալ այգը, երբ ժպտացել է,  
Սարդիկ տեսել են իմ կրօքին թառած  
Մասրենու մի թուփ  
Ծաղիկներով նուրբ՝  
Սիրո, կարոտի խարույկն իր վառած:

Ու հետո, հետո,  
Մի սար եմ դարձել,  
Բարձրագահ մի սար, որ ինձ չիհասնես...  
Եվ այս անգամ էլ դու ամպի փոխված  
Ինձնից վեր, երկա՞ր թախծել ես, լացել,  
Եվ ձյուն են դարձել արցունքները քո

Ա Խ Թ Տ Ա Զ Ա Զ Հ Ա Ց

Ու մաղել գլխիս, քունքերիս վրա,  
Եղյամներ դրել ունքերիս վրա:  
Տարիներն այդպես եկել են, անցել,  
Ու տարիների շտապ երթերում  
Քեզ չեմ հասկացել, քեզ չեմ հասկացել:

Մեր ջահել կյանքը անդարձ մի հուշ է,  
Ափսոսում եմ ես... Բայց արդեն ուշ է:

1965 թ., Բաքու

\* \* \*

Մայրամուտ է...  
Սարին ասես փաթաթվել է արեւը հուր  
Ու հալվում է,  
Որ բուրավետ ծաղիկներին, քնից առաջ,  
Լողացնի իր շողերով արեւաբույր:

Կուզենայի,  
Իմ սիրելի,  
Որ մեր հրաժեշտի պահին,  
Թե հանդիպման,  
Արեւի պես փաթաթվեիր իմ ուսերին  
Ու հալվեիր արեւի պես,  
Ժախտ դառած, դառած համբույր,  
Գուրգուրեիր իմ աչքերը,  
Որ քնած էլ  
Տեսնեի քո վառ պատկերը:

1965 թ., գ. Ակնաղրյուր

## Ք Ո Ժ Պ Ի Տ Ն Ե Ր Ը

Պատուհանիս տակ նազանքով բուրող  
ծաղիկների մեջ,  
Մեր առվի ափին խշշացող բարդու  
ամեն բողբոջում,  
Իմ օճորքի տակ՝ լույսերում անշեջ,  
Քո ժափտներն են տեսնում շողշողուն:  
Ես տեսնում են քո ժափտները վառ՝  
Այգաբացին իմ տունը թափանցող  
Գարնան արեւի փնջերուն պայծառ,  
Իմ երգերի մեջ,  
Եվ անգամ, անգամ քո սիրուց խոցված  
Իմ վերքերի մեջ:  
Այնպէս-այնպէս ես իմ սիրտը մտել  
Եվ իմ կրծքի տակ քո տեղը գտել,  
Որ շաղախվել են իմ հույզերի հետ,  
Իմ հույսերի հետ  
Քո ժափտները,  
Քո ժափտները:

1963 թ., գ. Ակնաղյուր

\* \* \*

Թե քնած լինես,  
Դեմքդ կշոյեն հովերի նման,  
Թե քրտնած լինես,  
Քեզ կփայփայեմ զովերի նման,  
Թե ծարավ լինես,  
Շրթերիդ կիջնեն ցողերի նման,  
Ու եթե մրսես,  
Կրծքիդ կբեկվեմ շողերի նման,  
Միայն թե լսես սրտիս զարկերը,  
Միայն թե զգաս,  
Որ ես եմ միակ քո լավ ընկերը:

1964 թ., Բարու

## ԿՈՐԱԾ ԻՍ ՍԵՐ

(Տիկուրավան ժամհն)

Գիշեր է, դրսում սեւ ամպն է չոքել,  
 Եվ ասես անհուն իմ վիշտն է լալիս,  
 Կարոտդ կրկին իմ հոգին վառել  
 Ու ես իմ մտքով թեզ մոտ եմ գալիս:  
 Քեզ մոտ եմ գալիս, իմ կյանք ու իմ սեր,  
 Ո՞ւր ես, ինչո՞ւ չես հնձ արձագանքում,  
 Քեզ հետ կապել եմ ես քանի՛ հույսեր,  
 Քեզ որպես արեւ պահել իմ հոգում:  
 Ու սերս որպես մի թարմ ծաղկեփունջ,  
 Քեզ եմ ընծայել՝ ցողերը վրան,  
 Եվ դու նայել ես այնպես լուր ու մունջ,  
 Դպել քո կրծքին սիրով հուրիրան:  
 Ու ժպտացել են աչքերդ սիրուն,  
 Ես թափանցել եմ խորքերը նրանց,  
 Դենս բուրել ես որպես մի գարուն,  
 Կրծքիս տակ վառել մի կարոտ անանց:  
 Ասես արեւը իմ գիրկն է իջել,  
 Ասես մայիսն է թառել իմ կրծքին,  
 Երբ գրկել եմ քեզ, այնպես անրջել  
 Եվ շուրջս հանկ քո վարդե շրթին:  
 Բայց ո՞ւր են, ո՞ւր են շշունջները քո,  
 Ո՞ւր են շրթերիդ թրթիռները նուրբ,  
 Ո՞ւր են աչքերդ, որ խոր կարոտով  
 Ինձ էին նայում երկնքի պես լուրթ:  
 Ցնորք է դառել ամեն ինչ, երազ,  
 Թեթեւ ծխի պես երկինք վերացել,  
 Եվ արտասվարեր ամպերին ծուլված  
 Ին կորած սիրո արցունքը լացել:  
 Գիշեր է, դրսում սեւ ամպն է չոքել  
 Ու հոնգուր-հոնգուր մի վիշտ է լալիս,  
 Այնպես եմ թախծում այդ ցողերի հետ,  
 Ասես նրանք իմ սրտից են գալիս:

## ԿԱՐՈՍ

Իմ սիրելի, կրկին ամցա ձեր տան մոտով,  
Սիրտս վառվեց անմարելի մի կարոտով:

Ձեր պատի տակ նույն պարտեզն էր անուշ բուրում,  
Նույն բարդին էր նուրբ իրանը տարութերում:

Նույն մասրենին բռնկվել էր վարդի բոցով,  
Որի կողքին կանգնում էիր ալ գոզնոցով:

Նույն առուն էր պարտեզի մեջ ժիր կարկաչում,  
Նույն ուրին էր խոհերի մեջ նուրբ կանաչում:

Ողջ պարտեզը ժպտում էր ինձ քո քաղցրությամբ,  
Պարտեզի մոտ նույն բլուրն էր նույն բարձրությամբ:


Որից աշխույժ վազում էինք, այգի մտնում,  
Պահմտոցի խաղում, նորից իրար գտնում:

Զգում էի քո ծամերից ու կատակում,  
Կատակելով իմ սերն էի քեզ կտակում:

Քո գրանից քաշկինակդ էի հանում,  
Թվում էր, թե քո սիրտն էի ինձ հետ տանում:

... Նույն պարտեզն է, նույն առուն է եւ նույն բարդին,  
Պատանեկան մեր հասակը չկա, անգին:

Երեւի այն նվիրել ենք առվին, այգուն,  
Որ այսպես ժիր, այսպես ջերմ են միշտ համերգում:



Դուք էության պատկերն եք իմ,  
Որ դեռ պիտի փովեք այդպես,  
Չսարսելով հողմից, բքից:  
Զեզ բարի երթ, բարի հերկեր,  
Փովեք, փովեք աստղերի պես,  
Իմ նոր, գալիք ոտնահետքեր:

## Հ Ա Վ Ա Տ

\* \* \*

Սերմնացան դառնամ, գոգնոց կապեմ  
Եվ բերներերան լցնեմ աստղերով,  
Ծայրեծայր ամբողջ աշխարհը չափեմ,  
Յոդի մշակի հպարտ քայլերով:  
Մարդկանց իմ սրտի իղձերն ավետեմ,  
Բարի լույս մաղթեմ, մաղթեմ սեր, խնդում,  
Ամեն կրծքի տակ մի աստղ նետեմ  
Ու սեր վաստակած վերադառնամ տուն:

1965 թ., Բաքու

\* \* \*

Գարուն է, արեւ... գետը հոսում է,  
Ու մենք երերով քայլում ենք ափով,  
Թվում է, թե նա մեզ հետ խոսում է  
Իր ալիքների հմայիչ ծափով:  
Որդիս նայում է ջրերի պարին,  
Թռչկոտում ուրախ, ճշում, ծիծաղում,  
Նա իր մանկական խաղերն է տեսնում  
Ջրերի խաղում:  
Գետի անսպառ ուժն եմ տեսնում ես,  
Յորդանքը նրա ու վեհությունը,  
Իսկ հայրս ճերմակ ալիքների մեջ  
Տեսնում է ճերմակ իր ծերությունը:  
Գարուն է, ու մենք շրջում ենք հուզված,  
Անուշ ծփանքով ջրերն են խոսում,  
Թվում է՝ կյանքն է գետի փոխարկված  
Սեր առաջ հոսում...

1966 թ., Երևան

Ա Ր Ա Կ Ա Ա Ր

### ԸՆԿԵՐՆԵՐԻՍ

Վաղուց-վաղուց եմ սեղանս բացել,  
Ել մի ուշացեք, սպասում եմ ձեզ,  
Կրօքիս տակ մի լույս կարոտ ծովացել,  
Հորձանք է տալիս ալիքների պես:

Ինձ համար ամեն մեկդ մի աստղ է,  
Եկեք, աստղերով թռղ լցվի տունս,  
Եկեք, համեցեք, մինչեւ լույս նստենք,  
Եկ թռղ բերկրանքից խանգարվի քունս:

Եկեք, բաժանենք իղձեր ու տենչեր,  
Սրտից -սիրտ մտնենք, սփոփենք իրար,  
Տանենք սրտից-սիրտ երգեր ու կանչեր,  
Աշխարհի հոգսը ուսներիս վրա:

Վաղուց-վաղուց եմ սեղանս բացել,  
Սպասում եմ ձեզ, ընկերներ իմ լավ,  
Եկեք, թռղ տունս խնդությամբ լցվի,  
Թռղ սիրտս լցվի տենչերով ձեր վառ:

1966 թ., Բաքու

\* \* \*

Ես ձեզ համար երբեք, երբեք  
Չեմ կարմրելու ամոթանքից,  
Իմ բյուրավոր ոտնահետքեր:  
Երգերի պես լեզու առած,  
Խոսում եք իմ անցնող կյանքից,  
Իմ տենչերից հրավառված:

Թե մտել եք պարտեզ, այգի,  
Չեք տրորել ոչ մի կոկոն,  
Շունչ եք տվել ծառ ու ծաղկին:  
Չարի ճամփան միշտ փակել եք,  
Կամուրջ դարձել բարեկամին  
Եվ ուղեկցել դեպի վերելք:

Դուք էության պատկերն եք իմ,  
Որ դեռ պիտի փովեք այդպես,  
Չարսելով հողմից, բքից:  
Չեզ բարի երթ, բարի հերկեր,  
Փովեք, փովեք աստղերի պես,  
Իմ նոր, գալիք ոտնահետքեր:

1966 թ., Բաքու

### ՀԱՅՐԵՆԻ ԻՄ ՏՈՒՆ

Հայրենի իմ տուն, եթե չլինես,  
Երգիս ճրագը ինչով՝ կվառեմ,  
Սրտիս կարոտը, հոգուս մորմոքը  
Ինչո՞վ կմարեմ:  
Իմ երգերի մեջ սոսափող ծառին  
Ի՞նչ անուն կտամ,  
Ո՞ւր թեւին կտա երգիս ծիծառը,  
Ո՞ւմ օճորքի տակ:  
Ես ո՞ւմ անունից կխոսեմ հպարտ,  
Ես ո՞ւմ կիշեմ ամեն ակնթարթ,  
Ո՞ւմ կփայփայեմ իմ երազ հոգում,  
Ես ո՞ւմ կերազեմ գիշերներն անքուն,  
Եվ երբ հայրենիք բառը ես լսեմ,  
Նրա պատկերը ո՞ւմ մեջ կտեսնեմ...

1966 թ., գ. Ակմաղբյուր

Ա Ր Ա Կ Ա Ա Ր

## ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

### 1. ՀԱՆԴԻՊՈՒՄ

Անառ է: Յունիս...  
 Արեւը ոսկե շողեր է ցանում,  
 Դանուբի ափով վարդաշատ ուղին  
 Դեպի Վիեննայի կենտրոնն է տանում:  
 Ու մենք քայլում ենք ծաղկեփնջերով,  
 Մեզանից առաջ մեր սիրտն է թռչում,  
 Թվում է, թե այդ օտար ափերին  
 Մեր հարազատն է հեռվից մեզ կանչում:  
 Ոչ-ո՛չ, չի թվում, հենց այդպես էլ կա,  
 Մեր հարազատն է այնտեղ սպասում,  
 Բայց, ավա՞ղ, միայն հուշարձան դարձած,  
 Դարձած կանչ, դարձած գայրույթ ու ցասում:  
 Նա՝ սովետական խիզախ մարտիկն է  
 Վիեննան ֆաշիզմի զնդանից փրկել,  
 Եվ Յադրանակի աստծոն փոխարեն  
 Մեր քաջ զինվորի արձանն են կերտել...  
 Մի ձեռքում սուրը, մեկում՝ ծաղկեփունջ-  
 Նրա արձանն է կանգնել մարմարի,  
 Որ կարծես շուրջը վարդեր ցանելով,  
 Խաղաղությունն է հսկում աշխարհի:  
 Ահա կանգնել ենք արձանի դիմաց,  
 Կանգնել, նայում ենք ջերմ, կարոտագին,  
 Եվ ամեն մեկս հայացքում նրա  
 Տեսնում ենք զոհված մեր հարազատին:  
 Իսկ պատվանդանին թանկ անուններ կան,  
 Ասես շունչ առաջ խոսում են մեզ հետ,  
 Խոսում են մեզ հետ ջերմ ու մտերիմ  
 Ու մեր շրթերին դառնում քաղցր երգ:

1960 թ., հունիս, Վիեննա - 1966 թ., հունիս, Երևան

## 2. ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՉԵԶ

Սովետական Միության հերոս,  
գեներալ ԿԱՐԲԻՇԵՎԻ հիշատակին

Այցի ենք եկել քո գերեզմանին  
Ու խոնարհվում ենք որդիներիդ պես,  
Ի՞նչ խորն ես քնել, զարթնիր, զորավար,  
Հայրական տունդ սպասում է քեզ:

Մենք մի օր հյուր ենք եղել Դմեպրին,  
Նա խաղաղ երգով հմայել է մեզ,  
Նրա սփերին ամեն ակնթարթ  
Քո մանկությունը սպասում է քեզ:

Դմեպրից մինչեւ ափը Դանութի  
Դիմա բուրում են վարդերը պես-պես,  
Այդ ծաղիկներում հավետ ժամացող  
Զահելությունդ սպասում է քեզ:

Յուզված կանգնել եմ արձանիդ դիմաց,  
Գալիքի հումկու ձայնն եմ լսում ես,  
Այնտեղ ուկեւոր իր գահին բազմած  
Հավերժությունը սպասում է քեզ:

1960 թ., Խուճիս, Վիեննա  
1966 թ., Խուճիս, Երեւան

## 3. ԴԱՆՈՒԲԻ ԱՓԻՆ

Այնտեղ, ուր Դանուբ գետն է ծափ զարկում,  
 Եվ ուր ժայռեր կան տված մեջք-մեջքի,  
 Հաղթանակի մի բարձունք կա ծաղկուն,  
 Բարձունքի վրա՝ ռուսական կեչի:  
 Մի ռուս զինվոր է ննջում կեչու տակ,  
 Մարտերում զոհված ջահել մի զինվոր,  
 Ոչ ոք չգիտի անունը նրա,  
 Չգիտի հասցեն նրա հոր ու մոր:  
 Երբ ընկել է նա, եկել են մարդիկ  
 Ու հողին հանձնել մի ջինջ առավոտ,  
 Իսկ ավստրիացի մի մայր կաթոգին  
 Դառը լացել է նրա շիրմի մոտ:  
 Լացել է դառը... եւ նրա կյանքով  
 Փրկված իր որդուն տվել մի պատգամ,  
 Որ նա ռուսական մի կեչի բերի,  
 Տնկի շիրմի մոտ, քանի ինքը կա:  
 Տղան պատգամն է կատարել իր մոր...  
 Աճել է ծառը ու հասակ առել  
 Եվ նահատակված մարտիկի վրա  
 Սոր նման ճերմակ վարսերը փռել:  
 ... Դանուբի ափին բարձունք կա մի սեզ,  
 Ննջում է այնտեղ մի ջահել զինվոր,  
 Ու նրա շիրմին գիշեր ու ցերեկ  
 Կարոտ է լացում կեչին մեղմօրոր:

1960 թ., Խումիս, Վիեննա

1966 թ., Խումիս, Երեւան

## 4. ՄԱՌԻՏՅԱՆՈՒԶԵՆ

Մահվան ճամբար, մահվան ճամբար,  
 Ինչո՞ւ տեսա քո դեմքը սեւ,  
 Քանի՞ մարդու հյուծել ես դու,  
 Սոխիր դարձրել երազ ու սեր:  
 Դու պատմության այտի վրա  
 Կսկիծ բերող մի ուռուցք ես,  
 Դու ֆաշիզմի արնաշաղախ  
 Զեռքի հետքն ես ու բռունցքն ես:  
 Կրակ դարձան քանի՞ սրտեր,  
 Քանի՞ ձեռքեր կուռ միացան,  
 Որ ֆաշիզմի ձեռքը հատեն,  
 Մաքրեն խաղաղ կյանքի ճամփան:  
 Մահվան ճամբար, մահվան ճամբար,  
 Ես քո դիմաց կանգնել եմ լուռ  
 Ու տեսնում եմ քո զոհերին,  
 Տանջանքները նրանց անլուր:  
 Նրանց արդար ձայնն եմ լսում,  
 Նրանց կոչը տագնապալից.  
 Թող աշխարհի ամեն նասում  
 Ելնեն բոլոր ազնիվ մարդիկ,  
 Չար ձեռքերից հավետ մաքրեն  
 Սերունդների գալիք ճամփան,  
 Որ դու երբեք չկրկնվես.  
 Մահվան ճամբար, մահվան ճամբար:

1960 թ., հունիս, Մառլիկաուզեն

1966 թ., հունիս, Երևան

Ա Ր Ա Կ Ա Ա Ր

### ՐԱՅՐԵՆԻ ԴԱՇՏՈՒՄ

Դու զարմացած ծիծաղում ես, իմ բարեկամ,  
Որ հասարակ այս ծաղիկը ձեռքս առել,  
Ճեղեղում եմ կարոտներս նրա վրա  
Եվ փայփայում հավերժաբույր վարդին վայել:

Դու այստեղ ես, դու ամեն օր, ամեն վայրկյան  
Լուռ, անտարբեր անց ես կենում նրա մոտով,  
Դեռ չես այրվել բաժանումի հրով վառման,  
Դեռ ձգտում ես արբել ուրիշ ծաղկանց հոտով:

Ես Շիրազի վարդաստանն եմ մտել մի օր,  
Ճիացք դարձած ալայան ծաղիկներն եմ փնջել,  
Տարված ընտիր ծաղիկների քաղցր բույրով,  
Աշխարհի շատ պարտեզներ եմ մտել, շրջել:

Սակայն օտար ծաղիկների բույրերի մեջ  
Այդ հասարակ ծաղկի բույրն եմ միշտ զգացել,  
Ճեռվից-հեռու դարձած կարոտ ու դարձած տենչ,  
Ճոգուս խորթում նա է թերթիկներն իր բացել:

Ճայրենական այս հասարակ ծաղկի միջից  
Մանկությունս է ինձ կարոտած աչքով անում,  
Իսկ դու, իսկ դու, իմ պատանի, լավ բարեկամ,  
Բաժանումի մրմուռը դեռ չես հասկանում:

1966 թ., գ. Ակնաղրյուր

\* \* \*

Օրը բացվել է, ժպտում է այգը,  
 Լույսով են լցվել ճամփա, արահետ,  
 Նստել եմ կրկին ու մտերմական  
 Զրույց եմ բացել ես իմ սրտի հետ,  
 Զրույց եմ բացել օրվա հոգսերից,  
 Երազներ անթիվ, անթիվ ձգտումներ,  
 Զի պատասխանում, հոգնած է սիրտս,  
 Հէ՞ որ այս գիշեր մինչ լույս չի քնել:  
 Դեհ, արիացի՛ր, ասում եմ նրան,  
 Պայքարի մեջ ես կոփիվել ու աճել,  
 Օրը չպետք է ուղենկցել մի կերպ,  
 Այն հաղթանակով պիտի նվաճել:

1967 թ., Բաքու

\* \* \*

Զարմանալի սիրտ ունեմ ես,  
 Զի մոռանում նա ոչ մի պահ,  
 Որ մարդ միայն իր համար չի գալիս աշխարհ,  
 Որ հազար տեղ թե խնդում են այս աշխարհում,  
 Հազար տեղ էլ վիշտ են ապրում,  
 Դրա համար մեկ օրվա մեջ  
 Ես բերկում եմ հազար անգամ,  
 Հազար անգամ թախծում աշնան ամպերի պես:

1967 թ., Բաքու

\* \* \*

Մենք մի գետ ունենք, ալեծուկ մի գետ,  
 Որ շունչ է տալիս մեր դաշտ ու հանդին,  
 Ու նրա երգը լսելու համար  
 Հաճախ եմ շրջում նրա եզերքին:  
 Եվ նրա առաջ թե՛ ծառ, թե՛ ծաղիկ,  
 Խոնարհվում են միշտ, գովերգում նրան,  
 Իսկ նա հոսում է ծփանքով խաղաղ՝  
 Կյանքի ջերմ երգը շրթերի վրա:

1968 թ., Մարտակերտ

\* \* \*

Այս լուսաբացն էլ դիմավորեցի  
 Շոգնած ու անքուն,  
 Այս լուսաբացն էլ խաղաղ երգ դարձավ  
 Ին սրտի խորքուն,  
 Այս լուսաբացն էլ իմ երգի թեւով  
 Իր խաղաղ շունչը ավետեց մարդկանց:  
 Թող այսպես լինի, թող անքուն մնամ,  
 Թող ես մինչեւ լույս մաքառեմ համառ,  
 Միայն խաղաղ երգ գրելու համար:

1968 թ., Բաքու

**ԻՄ ԴԱՅՐԵՆԻ ԼԵՌՆԱՇԽԱՐՁՈՒՄ****1. ճԱՍԱՊԱՐՉԻՆ**

Այն Ուխտաձորն է հավերժ դալարում,  
Այն զմրուխտ հազած մեր Արեւսարն է,  
Այս էլ մանկության իմ ընկեր առուն,  
Խոնարհվեմ մի պահ, կարոտս առնեմ:  
ճամփի պօռնկին, առվի մոտ, ահա,  
Իմ պապի տնկած ընկուզենին է  
Սարի պես հառնել,

Թեքվեմ, նրա տակ կանգ առնեմ մի պահ,  
Կարոտս առնեմ:  
Ահա աղբյուրը, մեր Ցուրտ աղբյուրը,  
Նրա մոտ քանի՝ խարույկ եմ վառել,  
Խոնարհվեմ սիրով, ջուր խմեն մի բուռ,  
Կարոտս առնեմ:

Յայրս այգու մեջ էլ չի համբերում,  
Թացված աչքերը ճամփիս է հառել,  
Նետվեմ, քրտնաթոր ճակատն համբուրեմ,  
Կարոտս առնեմ:

Գալուստիս լուրը հասել է մորս,  
Նա արցունք, ժպիտ իրար է խառնել,  
Յասնեմ, համբուրեմ արցունքը նրա,  
Կարոտս առնեմ:

Շրջեմ թիզ առ թիզ գյուղն իմ հայրենի,  
Զրուցեմ նրա ծառ ու ծաղկի հետ,  
Մեծից ու փոքրից կարոտս առնեմ  
Ու կարոտներս տանեն երգից-երգ:

Ա Ր Ե Ա Վ Ա Ա Ր

## 2. ԵՐԵՎԻ ՄԻ ՕՐ

Արեւատը են բարձրացել՝ անտառ է շուրջս,  
Աղբյուրները երգում են քաղցրալուր, բարի,  
Որ համերգն այդ լավ լսեմ՝ պահում են շունչս  
Ու նստում են կածանից կախված մի քարի:  
Աղբյուրներից մեկն ասես «Երազ» է երգում,  
Մեկը երգում է «Կռունկ», մեկը՝ «Յար, արի»,  
Այս երգերից հմայված իրար են թեքվում  
Ու ծափ զարկում հիացքով ծառերն անտառի:  
Ես քարացած որսում են ծայները բոլոր,  
Ասես լինեմ կախարդիչ, հեքիաթ աշխարհում...  
Մինչեւ երգեր գրելը, երեւի մի օր  
Կոմիտասը եղել է մեր Արեւադում:

## 3. ՄԱՅՐԱՄՈՒՏ

Մայրամուտ է... արեւը թիկնել է սարին,  
Ուխտաձորում մի կանաչ խարույկ է վառվել,  
Արեւաբույր հովերը պոկվել անտառից  
Ու եկել են, մեր բակի թթենուն փարվել:  
Դայրս եկել է հանդից այնպես վաստակած,  
Ու մեր բակը լցվել է բուրմունքով դաշտի,  
Ու մանուկս՝ շուրթերին ժպիտը ծաղկած,  
Թառել է լայն ուսերին իր հոգնած պապի:  
Ինքնաեռը թշում է սեղանի վրա,

Ա Ր Ա Ա Ա Ա Ր

Բաժակները զնգում են մորս ձեռքի տակ,  
Հորս դեմքին շողում է գոհության մի փայլ,  
Որ դատարկված մեր տունը առել է նոր կյանք:  
Ես շրջում եմ մեր բակում, մեր փոքրիկ բակում,  
Ու թվում է, թե տերն եմ ողջ տիեզերքի,  
Իր շողերով երփներանգ, իր կախարդանքով,  
Մայրամուտը հոգուս մեջ փոխվում է երգի:

#### 4. ՄԵՐ ԳՅՈՒՂԸ

Արեւսարը մեր գյուղի թիկունքն է անպարտ,  
Ուխտաձորը՝ ծաղկավոր գոգնոցը նրա,  
Հորս վառած լույսերը ժայտներն են վառ,  
Ցուրտ սղբյուրը երգն է ջերմ՝ շրթերի վրա:  
Եթե նրա մոտ ընկնես, կընդունի սիրով,  
Կզրուցի մտերիմ, սեղան կբացի,  
Կզարդարի սեղանը հացով ու գինով,  
Հետո սրտի իր բոլոր խոսքերը կասի:  
Կպատմի, որ լավ այգի մշակել գիտե,  
Հացագործ է անվանի եւ անասնապահ,  
Կպատմի, որ մեր գետը իր ճամփից թեքել,  
Մի կայան է կառուցել՝ լույսի մի աշխարհ:  
Իր անցյալից կպատմի եւ իր գալիքից,  
Մրգով լիքը մառանը ցույց կտա նա քեզ,  
Հետո մի քիչ կլոի, կխորիի մի քիչ,  
Որդիներից կպատմի հարազատ հոր պես:

Նկարները ցույց կտա իր որդիների,  
 Կասի մեկը բժիշկ է, մեկը հացագործ,  
 Մեկը գիտե ընթերցել լեզուն աստղերի,  
 Ֆիզիկոս է այս մեկն էլ հմուտ, բազմափորձ:  
 Դետ նորից կլռի, կխորհի մի քիչ,  
 Քեզ նկարներ ցույց կտա, անգին նկարներ,  
 Աչքերը քիչ կթացվեն, ծայնը կխզվի,  
 Բայց հյուրի մոտ չի լացի, կսկսի պատմել:  
 Կասի մեկն այս զոհվել է Արաքսի ափին,  
 Իսկ այս մեկը մուտքի մոտ Մարտուրա վանքի,  
 Մեկն այս, կասի, ընկել է Վանա լճի մոտ,  
 Իսկ այս մեկը պայքարում Սարդարապատի:  
 Ֆաշիզմի դեմ, կռվի մեջ, հուզված կպատմի,  
 Քանի լույսեր մարեցին, օջախներ հանգան,  
 Ամեն մեկը մի սար էր, քաջ հերոս էր մի,  
 Ու թվում է, թե նրանք դեռ տուն կդառնան:  
 Դետո, հետո կկանչի իր թռոմիկներին,  
 Ամեն մեկին մի խնձոր կտա ժպտալով,  
 Կասի, երգեք, բալիկներ, թող լսի քեռին,  
 Քաղցր կերգեն քո առաջ՝ նրանք ծոր տալով,  
 Դու կլսես երգերն այդ ու կիհանաս,  
 Եվ կտեսնես նրանց մեծ, լուսավոր ուղին,  
 Դետո ուր էլ որ լինես, ուր էլ որ գնաս,  
 Չես մոռանա դու երբեք անունն իմ գյուղի:

## ՆՐԱ ԱՆՈՒՆԸ

Յեռվից չեմ լսել նրա անունը,  
Քարտեզներից չեմ սերտել մի օր,  
Նա իմ օջախն է, հայրենի տունը,  
Իմ օրորոցն է, շունչը իմ մոր:

Ինչ որ կորցրել եմ, նրա գրկումն է,  
Ինչ էլ որ գտնեմ՝ նրա հոգում...  
Նա իմ իղձերի ողջ ընդգրկումն է,  
Ամենուր նա է ինձ ամոքում:

Իմ ժիր մանկության ոտնահետքերը  
Առաջ լանջերին իր բարձրադիր,  
Նա պահպանում է մայրական սիրով,  
Ոնց ուրարտական հին սեպագիր:

Իսկ ժայտները իմ պատանության  
Նրա սարերին՝ ամպերից վեր,  
Դրոշմվել են ոնց հեթանոս հայի  
ճարտար ձեռքերով գծված արեւ:

Քնքուշ մոր նման ու հոր նման խիստ,  
Պատգամ է գրել նա իմ սրտին,  
Որ հորովելված պապիս երգը միշտ  
Անարատ պահեմ ես իմ շրթին:

Նա իմ հասակն է, իմ հոգու եռըն է,  
Քաղցրաբառ լեզուն իմ մայրենի,  
Իմ հանգրվանն է, հավերժող երգն է,  
Նա Ղարաբաղն է իմ հայրենի:

\* \* \*

Յովե՞ր, հովե՞ր, անուշ հովե՞ր,  
 Մի շշնջաք, լոեք մի պահ,  
 Մի սոսափեք, արտ ու անտառ,  
 Մի կարկաչեք, զուլալ ջրեր,  
 Լոեք մի պահ...  
 Թողեք, թողեք լռության մեջ,  
 Ին թախիծը երգի փոխսկի  
 Շիրմի վրա այն հերոսի,  
 Որը մի օր  
 Պիտի գնար ծաղկեփնջով  
 Սիրածի մոտ,  
 Բայց սլացավ դաշտը մարտի:  
 Նա, որ մի օր  
 Իր սիրածի թաշկինակը  
 Պիտի հաներ  
 Ու քրտինքը սրբեր ճակտի,  
 Բայց փաթաթեց վերքը արնոտ:  
 Նա, որ մի օր  
 Պիտի կանգներ այս բարձունքին,  
 Նայեր հերկած իր դաշտերին,  
 Ծով արտերին,  
 Այգիներին...  
 Սակայն, ավա՞ղ,  
 Յազար տենչեր ջահել սրտում  
 Ընկավ մի օր  
 Բեռլինի մոտ մղած մարտում:  
 Յովե՞ր, հովե՞ր, անուշ հովե՞ր,  
 Մի շշնջաք, լոեք մի պահ,  
 Մի սոսափեք, արտ ու անտառ,  
 Մի կարկաչեք, զուլալ ջրեր,  
 Լոեք մի պահ...  
 Թողեք, թողեք լռության մեջ  
 Ին թախիծը երգի փոխսկի  
 Այս հերոսի շիրմի վրա:

\* \* \*

Քանի սրբազան գաղտնիքներ ունեմ,  
 Միայն լուսերես Լուսինը գիտե...  
 Վաղուց-վաղուց ենք ես ու Լուսինը  
 Որպես մտերիմ մեկ-մեկու գտել:  
 Լուսնի լույսով եմ մեր կանաչ բակուն  
 Ընկերներիս հետ «Լո-լո» խաղացել,  
 Լուսնի լույսով եմ ընկերներիս հետ  
 Յոզնած ու քրտնած ջաղաց զնացել:  
 Լուսնի լույսով եմ ես թաքուն-թաքուն  
 Առաջին սիրո նամակը գրել,  
 Սիրածիս փոքրիկ եղբայրը մի օր  
 Լուսնի լույսով է պատասխան բերել:  
 Ու քանի անգամ մեր սարն եմ ելել,  
 Լուսնին տեսնելու, հասնելու համար,  
 Եվ երեք, երեք ինձ չի հաջողվել,  
 Միայն հեռվից ենք ժպտացել իրար:  
 Եվ իիմա, իիմա մեր մտքով, ջանքով,  
 Կամուրջ ենք կապել երկրից մինչ Լուսին,  
 Շուտով իմաստուն իմ եղբայրները  
 Կկանգնեն նրա գեղեցիկ ուսին,  
 Նրանք կկանգնեն ու կշշնջան  
 Բյուր սերունդների խոսքերը սրտանց.  
 - Յիշո՞ւմ ես, Լուսին, երբ իրար գտանք,  
 Ասացինք, անշուշտ,  
 Մի օր թեւ առած քեզ այցի կգանք:

1966 թ., Երեւան

\* \* \*

Ծանոթ ճամփան ոտքերիս տակ խուտուտ գալով,  
Չորից բարձունք, բարձունքից ծոր պտույտ տալով,  
Ուրախության ցող արցունքը աչքին, շրթին,  
Ինձ մեր գյուղն է տանում կրկին:

Գյուղ եմ մտնում. փշատենին փարվում է ինձ,  
Բարդին, վազը ու թթենին փարվում են ինձ,  
Ինձ փարվում են մեր աղբյուրի կարկաչները,  
Փարվում է ինձ փոքրիկ գյուղիս մեծ երկինքը,  
Ու թվում է՝ ինձ փարվում է աշխարհն-ինքը:

1966 թ., գ. Ակնաղբյուր

### ՍԱՍՈՒՑԻ ՂԱՎԹԻ ԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

Դարեր ու դարեր  
Ուսուցանել ես քո սերունդներին.  
Թշնամու հանրեալ միշտ բորբոք պահել  
Ցասումն ահագին...  
Այնպիսի ցասում,  
Որ մարտում դառնա թրերի շառաչ,  
Ահեղ կայծակի ոսոխի առաջ.  
Այնպիսի ցասում,  
Որ թի շառաչ դառնալուց հետո  
Ազատության ճիշ դառնա հոգեթով:  
Ուսուցանել ես...  
Եվ ամեն անգամ, երբ քո արձանին  
Այցի ենք գալիս,  
Թվում է՝ սասնա քո հուր շրթերով  
Նույն պատգամներն ես կրկին մեզ տալիս:

1966 թ., Երեւան

Ա Ր Ո Ւ Ն Ն Ա Ա Ա Ր

ԳԱՐՈՒՆՆ ԵՄ ՍԻՐԵԼ

Գարունն եմ սիրել, գարունը կյանքի,  
Նա իր բուրմունքն է ճամփիս հեղեղել,  
Տառապանքի մեջ ու թե բերկրանքի,  
Աչքերիս առաջ նա է միշտ եղել:  
Գարունն եմ սիրել,  
Եվ այդ ջերմ սերը իմ բազուկներին  
Յրաշքներ գործող ուժ է նվիրել.  
Փայփայել եմ ես մեր ծաղիկներին,  
Ժպիտներ տվել, ժպիտներ առել,  
Յասակս եմ տվել մեր բարդիներին,  
Նոր հասակ առել, այգեպան դառել:  
Մեր աղբյուրներին,  
Մեր առուներին  
Իմ երգն եմ խառնել, նոր երգեր առել,  
Եղել է նաև փուշ ու տատասկից  
Վերքեր եմ առել:  
Իմ հույսն եմ խառնել մեր ջինջ լույսերին,  
Առել հույս ու լույս,  
Ես ու գարունը ձուլվել ենք իրար  
Եվ իրար համար դարձել արշալույս:

1967 թ., Յաղորութ

\* \* \*

Բարձունքները հոգուս մեջ են,  
Իմ լուսավոր երազներում,  
Բարձունքներ եմ տեսնում անվերջ  
Իմ խոհերի երամներում:

Ա Ր Ա Կ Ա Ա Ր

Երգերիս մեջ բարձունքներին  
Ես նայում եմ բարձունքներից,  
Ես աստղերի թռիչքներով  
Դնայվում եմ բարձունքներից:

Բարձունքներ եմ տեսնում անգամ  
Աչքերիս ջինջ արցունքներում...  
Նրանից չեմ, որ օրորը  
Լսել եմ ես բարձունքներում:

1966 թ., գ. Ակնաղբյուր

### ՊԵՏՔ ՉԵ ՈՐՈՆԵԼ

Ուր գնացել եմ՝ ինձ հմայել է  
Բարիքներ բերող ուղին մարդու,  
Ուր էլ եղել եմ, ոչ ոք չի ասել.  
Այստեղ անելու բան չունես դու:

Սարերի լանջին ծամփա են բացել,  
Քլունգ են տվել՝ քար ջարդելու,  
Ամեն-ամեն տեղ ինձ էլ են կանչել՝  
Իրենց շարքերում աշխատելու:

Երբ էլեկտրական լույսեր են վառվել  
Լեռների լանջին թառած զյուղում,  
Բերկրանքս լույսի շողեր է դառել  
Ու փայլատակել ամեն հյուղում:

Ոչխարի հոտը սար բարձրանալիս  
Ճովիվներին եմ սիրով օգնել,  
Իսկ երբ արտերն են դեղնել ցորենի,  
Ճնձվոր եմ դառել ու չեմ հոգնել:

Երբ ամպն է չոքել մեր երկրի կրծքին,  
Երբ ոսխն է մեր հողը մտել,  
Ցասմանք, վրեժով լեցուն իմ հոգին  
Թեժ մարտերուն է հանգիստ գտել:

Եթե ուզում եք ինձ տեսնել կյանքում,  
Պետք չէ որոննեք հասցեն իմ տան,  
Շենքերին նայեք, արտերին ծփուն,  
Նրանցից սիրով ձեզ կժպտամ:

1968 թ., Երեւան

\* \* \*

Փովել ես դու ոտքերիս տակ,  
Ծաղկապսակ հայրենի հող,  
Ու նայում եմ սիրով անտակ  
Քո հայացքին արեւաշող:  
Ո՞վ իմանա, քանի՞ դարեր  
Շռայլել ես բարիքը քո,  
Ով մի բուռ է քեզ պարզեւել,  
Դու հազարն ես տվել փառքով:  
Նոր օրերի տենդով վառված,  
Ընթերցում եմ քո վեհ լեզուն,  
Ու պապերից իմ ժառանգած

Քո ջերմ սերմ է սիրտս հուզում:  
 Քո ծաղկումին սիրտս էլ կտամ,  
 Որ դու դառնաս մի վարդանց,  
 Դու քաղցր հող հայրենական,  
 Դու մայրական ին օրորոց:

1966 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Բալիկս ինձ հետ թռվառուն ու ժիր,  
 «Մանկական աշխարհ» խանութն է մտել,  
 Խաղալիքներին նայում ուշադիր,  
 Չի կարողանում ուզածը գտնել:  
 Ճետո շրջում է ու մատը դնում  
 Փոքրիկ խաղալիք-ատրճանակին:  
 -Պետք չէ, բալիկս,- ասում եմ նրան,-  
 Ամպի ստվեր է իջնում ճակատին:  
 Ու ես նայում եմ խռոված որդուս  
 Ու փայփայում եմ, որ հաշտվի ինձ հետ:  
 Այդ պահին ռադիոն բոքն է հաղորդում.  
 «Վիետնամում անգամ դպրոցի վրա  
 Ռումբեր են նետում...»:  
 Գանգրահեր որդուս շոյում եմ կրկին,  
 Թողնում եմ գնի, էլ չեն վարանում,  
 Թող ձեռքը վարժվի մեր արդար գենքին,  
 Քանի աշխարհում ոսոխներ դեռ կան,  
 Ատրճանակը մի օր պետք կգա:

1966 թ., Երեւան

\* \* \*

Իմ ծով քրտինքի ջինջ կաթիլները  
 Գարնան ցողեր են,  
 Իսկ ձգտումներն իմ, երազանքները,  
 Արեւի շողեր...  
 Արեւ ձգտումս, քրտինքս՝ ցողված,  
 Փարվում են իրար, ալիքվում բույրից,  
 Բախտի երփներանգ իմ ծիածանը  
 Կամար է կապում նրանց համբույրից...

1966 թ., գ. Ուխտաձոր

\* \* \*

Ամեն առիթով ընկեր, բարեկամ,  
 Ասում եմ՝ հորս ես շատ եմ ննան,  
 Գլուխ չեմ պահում, չգիտեմ ստել,  
 Արդարամիտ եմ եւ աշխատասեր:  
 Իմ որդուց միայն ես մի բան կուզեմ.  
 Ուր էլ որ գնա,  
 Ինչ ճանապարհով կյանքը ընթանա,  
 Ինչքա՞ն, ինչքա՞ն էլ աճի, բարձրանա,  
 Այնպիսին լինի,  
 Որ ամեն անգամ, ընկեր, բարեկամ,  
 Ասեն. իր հորը նա շատ է ննան.  
 Գլուխ չի պահում, չգիտե ստել,  
 Արդարամիտ է և աշխատասեր:

1967 թ., Բարու

Ա Ր Ա Կ Ա Ա Ր

ԵՍ ԱՅՆ ՍԻՐՈՒՆԴՆ ԵՄ

Պատանի էի, երբ քունն իմ անհոգ  
Պատերազմի սեւ բոթը խանգարեց,  
Հայրական խոսքի մնացի կարոտ,  
Մորս թախիծը խաղերիս խառնվեց:  
Արտեր հնձեցի մատներով իմ նուրբ,  
Աշխատանքի մեջ պարմանի դարձա,  
Մեծ հաղթանակի լուրը հասավ տուն,  
Բայց հայրս, հայրս չվերադարձավ:  
Դարն իմ ուսերին ծանր բեռ դրեց,  
Պարգևեց նաեւ անկոտրում մի կամք,  
Բախտն իմ ճակատին գրեց՝  
Արդար ջանք:  
Զանացի պատվով եւ հասակ առա,  
Զեռքս մեկնեցի, հասավ աստղերին,  
Աստղերից շողեր հնձեցի առատ,  
Ցանեցի մարդկանց ճանապարհներին:  
Տենչերս ծաղկունք դարձան, ժպտացին,  
Ուղիներ դարձան՝ բարձունքներ տանող,  
Դարձան լուս, արեւ ու բոցկլտացին,  
Ցզոր ուժ դարձան՝ կայծակներ վանող:  
Եվ հպարտորեն քայլում եմ իինա,  
Արեգակներ եմ գալիքին տանում.  
Ես այն սերունդն եմ,  
Որին մի ամբողջ դար է պատկանում:

\* \* \*

Մարդիկ, բացել եմ սիրտս ձեր առաջ  
 Եվ գարուններ եմ երազում անվերջ,  
 Կարոտի, սիրո ամեն-ամեն կանչ  
 Արձագանքում է իմ խոհերի մեջ:  
 Արձագանքում է, ծփում, դառնում երգ  
 Ու թեւեր առաջ փարվում աշխարհին,  
 Որ կյանքուն չարը վերանա հավետ,  
 Որ հողագնդում թեւածի բարին:

1967 թ., Բարու

\* \* \*

Բռունցքաչափ իմ սրտում  
 Իմ ժողովուրդն եմ դրել,  
 Եւ առաջին իմ երգը  
 Նրա մասին եմ գրել:  
 Նրա բախտն է ինձ վառել  
 Իմ բովանդակ երգերում,  
 Եվ իմ հույսն է ծվարել  
 Նրա հույսի հերկերում:  
 Իմ հավատը օծվել է  
 Նրա պայծառ հավատով,  
 Պարտական եմ ես նրան  
 Իմ երգերով, իմ բախտով:

1966 թ., Երեւան

\* \* \*

Ով իմ ժողովուրդ,  
 Քո որդին եմ ես,  
 Քո որդին եմ ես, քո հավատով եմ  
 Ապրում, ջերմանում,  
 Քո արդարադատ ձեռքի ափով եմ  
 Յույզերս ցանում:  
 Դու իմ ծնողն ես սարերի սովոր,  
 Բարձունքի սովոր դու իմ ծնողն ես,  
 Ուզում եմ կյանքը իմ այնպես ապրել,  
 Որ քո մատյանում անունս թողնեմ...  
 Ու եթե, եթե ես անհայտ մնամ՝  
 Թող անհայտ մնամ այն ջրերիդ պես,  
 Որ քո սարերից սրընթաց գալիս,  
 քո դաշտ ու հանդին համբույր են տալիս,  
 Կաթիլ առ կաթիլ լույսի փունջ դարնում  
 Ու ժպիտներով ուղիդ զարդարում:

1966 թ., Երեւան

## ԻՆՉՈ՞Ւ ԵՄ ՔԵԶ ԱՅՍՔԱՆ ՍԻՐՈՒՄ

Յայրենի գյուղ,  
 Ինչու՞ եմ քեզ այսքան սիրում.  
 Գուցե, գուցե նրա համար,  
 Որ քո գրկում ձմեռ-ամառ,  
 Դեռ մանկուց եմ քրտինք թափել.  
 Յունձ եմ արել, հասկ հավաքել,  
 Ընկերներով կալ եմ կալսել,

Ա Ր Ա Ա Ա Ա Ր

Մշակ դարձել, հողն ակոսել,  
Սերմ եմ ցանել-  
Յողի առաջ սիրտս բացել,  
Եվ իմ ցանած սերմերի հետ  
Ասես ծաղկել ու մեծացել:  
Սիրտս կրկին թեւեր առնում,  
Գալիս է ու կարոտներով  
Իմ երգերն է երգիդ խառնում  
Եվ անունդ քաղցր ու բարի  
Դպարտ պարզում ողջ աշխարհին...

1967 թ., գ. Ակմաղբյուր

ԿԱՐՈՏՍ ԽՈՐՆ Է

\* \* \*

Ժայռի հաղթական ուսերին թառած  
Մասրենու թուփը ծաղկել է նորից  
Եվ օրորվում է...  
Կարծես բալիկս է-խինդ ու թեւ առած  
Ելել, նստել է պապի ուսերին  
Եվ շորորվում է...

1966 թ., գ. Ակմաղբյուր

\* \* \*

Ես նստել ու երգ եմ գրում,  
Մայրս ծաղիկներ է ջրում,  
Ես իմ գրած երգն եմ կարդում,  
Մայրս լսում, աչք չի թարթում,  
Ես չգիտեմ, հասկանո՞ւմ է

Ա Ր Ա Կ Ա Ա Ր

Երգիս ոգին,  
Բայց զգում եմ, իմ սրտի հետ  
Թրթռում է եւ իր հոգին:  
Բակ եմ ելնում, զով է դրսում...  
Եվ տեսնում եմ,  
Թե ոնց մայրս մենակ ներսում,  
Իմ թղթերն է սիրով դարսում:  
Նայում եմ ես, խորհում լոին...  
Սոր կրծքի տակ  
Այս ի՞նչ սեր է վառվում անմար.  
Մինչեւ հիմա նա դողում էր լոկ ինձ համար՝  
Միշտ ունկնդիր սրտիս հելքին,  
Սակայն, հիմա նա դողում է  
Եվ ինձ համար, եւ իմ երգի...

1966 թ., գ. Ակնաղբյուր

ՈՐԴՈՒՄ

Ես հրթիռների ետքից եմ նայում,  
Դու կթեւածես հրթիռներով նոր,  
Աստղերին այսօր հեռվից եմ նայում,  
Դու հյուր կգնաս աստղերին մի օր:

Այսօր իմ բարի իղձերն եմ ցանում  
Մոլորակներին ծոնած երգերում,  
Իղձերն այդ, գիտեմ, վաղը կցանես  
Մոլորակների անծայր հերկերում:

1966 թ., Բարու

\* \* \*

Աշխարհ տեսած ու վայելած,  
 Կրկին գիրկդ եմ Եկել, մայրիկ,  
 ճերմակ-ճերմակ մազերին եմ Ես քո նայում  
 Եվ մազերին իմ ճերմակած,  
 Ու մանկացած քեզ եմ փարվում՝ քեզ, իմ մայրիկ:  
 Չեմ մոռացել քո մայրական քաղցր երգը,  
 Չեմ մոռացել սրտիդ հեւքը:  
 Երգիր, մայրիկ, երգիր նորից երգդ դյութիչ,  
 Թող մանկան պես քնեմ մի քիչ...

1966 թ., գ. Ակնաղբյուր

### ԿՈՄԻՏԱՍԻՆ

Տիրության ժամին քո երգերը նուրբ  
 Թախիծս այնպես խորին են դարձնում,  
 Բերկրանքի ժամին, ոնց քաղցր համբույր.  
 Քո թեժ երգերը ինձ խենթ են դարձնում:

Դու քո երգերով մեր սիրտն ես վառել,  
 Հայոց լեռների նման ծաղկազարդ,  
 Հավերժի գրկում հավերժ ես դառել,  
 Դու մեր անբիծ երգ, դու մեր երգ անպարտ:

1966 թ., Բարու

\* \* \*

Նկատե՞լ եք, հաճախ կյանքում  
Լինում են պահեր,  
Երբ մանկան պես ծգտումները  
Չես կարող պահել:  
Փողոցները կանչում են քեզ,  
Ելնում ես տնից,  
Աննպատակ թափառում ես,  
Զրկվելով քնից:  
Կես գիշերին տուն ես դառնում,  
Բացում ես դուռը,  
Ներս ես մտնում ու ոչ ոքի  
Չես նայում, լուռ ես:  
Եվ դու հանցանք կատարածի  
Նման ես վարվում,  
Քեզ քո վատնած ժամանակի  
Կորուստն է վառում:  
Բայց ի՞նչ արած, կյանք է, ելի,  
Լինում են պահեր,  
Երբ մանկան պես ծգտումները  
Չես կարող պահել:

1967 թ., Բարու

## ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավագ եղբայրս՝ քաջասիրտ զինվոր,  
Վոլգայի ափին զոհվոլ է մի օր:

Ու մինչև իհմա սգվոր է մայրս,  
Անհուն կարոտից հալվել է հայրս:

Ին սրտում էլ է վիշտը վերք բացել,  
Որ իմ եղբորից ավագ եմ դարձել...

1966 թ., ք. Բարու

\* \* \*

Մանկիկիս հետ թովուն  
Շրջում եմ մեր դաշտերում,  
ճամփիս երգում է առուն,  
Ճովն է շրշում արտերում:

Ես նայում եմ ծիլերին,  
Կոկոններին հմայուն,  
Գրկում եմ իմ բալիկին  
Եվ հիացած փայփայուն...

Գարնան համար նորաբաց  
Սիրտս արեւ կդարձնեմ,  
Միայն դաշտում՝ չբացված  
Ոչ մի կոկոն չտեսնեմ:

1966 թ., գ. Ակնաղբյուր

### ՄԱՆՈՒԾԱԿ

Նախանձում եմ ես քո բույրին,  
Նախանձում եմ քեզ, մանուշակ,  
Նախանձում եմ քո թերթերին՝  
Այդքան անբիջ եւ կապուտակ:  
Նախանձում եմ, որ թովում ես  
ճամփորդներին- բույրով անուշ,  
Սիրահարը փնջում է քեզ,  
Որպես նվեր, որպես վառ հուշ:  
Եվ որտեղ էլ ծաղկած լինես,  
Որ ծերպի մեջ, որ թփի տակ,  
Դարձյալ անուշ դու բուրում ես  
Մարդու ճամփին, սիրով անտակ:

Ա Ր Ա Վ Ա Ա Ր

Նախանձում եմ քո թերթերին,  
Նախանձում եմ քեզ, մանուշակ,  
Նախանձում եմ քո աչքերին-  
Բուրող, համեստ եւ անուշակ:

1967 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Կյանքը, որ ասքան ես խորն եմ սիրում,  
Քեզ եմ պարտական...  
Քեզ եմ պարտական,  
Որ բարձունքի եմ միշտ ձգտում, տիրում,  
Քեզ եմ պարտական,  
Որ սիրուս այսքան ջերմ է բարախում...  
Որ այսքան հպարտ ու բարձր եմ ճախրում,  
Քեզ եմ պարտական:  
Ուսուցանել ես մարդկանց աչքերին  
Միշտ ուղիղ նայել,  
Վատից հեռանալ, լավով հմայվել,  
Ծարավին ջուր տալ, ընկածին օգնել,  
Մարդկանց օգնելուց երբեք չհոգնել:  
Ուսուցանել ես իմ լավությունը  
Երեսով չտալ,  
Միշտ համեստ լինել եւ չհոխորտալ,  
Լինել հայրենի հողի պես ծաղկուն,  
Կյանք պարգևելով ապրել միշտ կյանքում:  
Ին դժվար ճամփան, իմ բարի ճամփան,  
Որ ծիածանված կամուրջ է դարձել,  
Ես դրա համար քեզ եմ պարտական:

1966 թ., Երեւան

\* \* \*

Ես մանկության երգն եմ երգում,  
 Տիրում է հայրս,  
 Պատանության երգն եմ երգում,  
 Տիրում է հայրս,  
 Զահելության ձին է դոփում,  
 Տիրում է հայրս,  
 Ծերությունն է թույլ տրոփում,  
 Տիրում է հայրս,  
 Ես, կսկիծով, ափսոսանքով  
 Նայում եմ նրան,  
 Եվ թախիծն է կաթ-կաթ ծորում  
 Ին սրտի վրա:

1966 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Տանիքի վրա իջել է ձյունը,  
 Եվ ջրհորդանից  
 Ոլորվել է ցած սառուցի սյունը...  
 Կարծես տատիկս կտուրին նստել,  
 Հարեւանի հետ զրույց է անում  
 Եվ ավանդական իլիկն իր մանում:

1967 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Խաղաղ գիշերն է արդեն կես դառել,  
 Քնած բալիկս տնքում է, ճչում,  
 Ցավող տե՞ղ ունի, խա՞ղն են խանգարել,  
 Եվ տեսնես ո՞ւմ է օգնության կանչում:

Ա Ր Ա Ա Ա Ա Ր

Խանգարվել է իմ աչքերի քունը,  
Յազար ու մի խոհ իջել է հոգուս,  
Երազում անգամ լիներ մի հնար,  
Օգնեի որդուս...

1967 թ., Բաքու

### ԿԱՆՉՈՒՄ ԵՄ ԶԵԶ

Կանչում եմ ձեզ, կանչում կրկին,  
Իմ մանկության ոսկե օրեր,  
Կանչում եմ ձեզ կարոտագին,  
Եկեք, հագած զմրուխտ շորեր:  
Եկեք, փարվեմ ձեզ հնայված,  
Անմեղության բույրը շնչեմ,  
Զեր վարդագույն, ձեր բյուրեղյա  
Զգտումները նորից փնջեմ:  
Պահնտողի խաղամ նորից,  
Նորից մորս գիրկը վազեմ,  
Յեթիաթ լսեմ ես իմ հորից  
Ու երազեմ... ու երազեմ...

1968 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Պատուհանիս տակ մի անմեղ մանուկ  
Խաղում էր անհոգ,  
Կարծես այցի էր եկել հուշ դարձած  
Իմ մանկությունը այդ ջինջ առավոտ:  
Յանկարծ մի պայթյուն...  
Մանուկն այդ ընկավ, ոնց զարկված մի լոր,

Ես տագնապալից դուրս թռա տնից,  
Բայց ուշ էր, ավաղ, ընկել էր նա լուռ...  
Հարազատ հոր պես գրկեցի նրան,  
Շունչս կտայի, թե հնար լիներ,  
Միայն թե բացեր աչքերն իր անմեղ  
Եվ առաջվա պես խաղերով տարվեր:  
Եվ տարիներ են գալիս - հեռանում,  
Անմեղ մանկան այն,  
Ես չեմ մոռանում...  
Ես չեմ մոռանում  
Շրթերին սառած ժպիտը նրա:  
Նա ամեն գիշեր երազներիս մեջ  
Պատուհանիս տակ, առաջվա նման  
Գալիս է, խաղում:

1966 թ., Բարու

### ԱՆՏԱՌՈՒՄ

Մեղմիկ հովերը սարից փչեցին,  
Անձայր անտառը սվավաց մի երգ,  
Հունիսյան վարդերն անուշ բուրեցին,  
Բույրն այդ փուեցին եզերքից-եզերը:  
Առուն խոխոչեց, խազալը խշշաց,  
Ուր մոշահավն էր քուջուջն իր անում,  
Խորքից դուրս ցատկեց եղնիկը խրտնած՝  
Կանաչ տերեւը փոքրիկ բերանում:  
Հեռվից եղջերուն կանչեց իր ուլին,  
Արձագանքեցին ձորերը իրար,  
Գետակի ափին թեքված հեզ ուրին

Փոեց վարսերը ջրերի վրա:  
Բնության դյութիչ տեսհիլքով արբած  
Գլխարկս ծռած, թեքվեցի առվին,  
Ծնկներս ցեխոտ, ծարակս առած,  
Փարվեցի հեքիաթ-անտառի խաղին:

1966 թ, գ. Ուխտաձոր

### ԿԱՐՈՏԻՑ ԵՄ ՀՅՈՒՍՎԱԾ ԿԱՐԾԵՍ

Կարոտից եմ հյուսված կարծես,  
Կարոտով եմ ապրում, շնչում,  
Մի ջերմ կարոտ մոր ձայնի պես  
Շոգուս մեջ է անվերջ հնչում:  
Այցելում եմ մեր սարերին,  
Փարվում նրանց ու կարոտում,  
Իմ կարոտն է ժպտում անգամ  
Մեր սարերի առավոտում:  
Սարից իջնում, տուն եմ գալիս,  
Շոյում է ինձ մայրն ին անուշ,  
Մորս թախծոտ շոյանքներում  
Զարթնում են բյուր երազ ու հուշ:  
Իմ արյան հետ, սրտիս միջով,  
Կարոտներ են գալիս - հոսում,  
Շազար տեղից, հազար ձայնով  
Կանչում են ինձ, ինձ հետ խոսում:  
Կարոտից եմ կարծես հյուսված,  
Կարոտով եմ ես շունչ առնում,  
Երեւի հենց կարոտից է  
Մարդն իր ճամփին արեւ դառնում:

1967 թ., Ջադրութ

Ա Ր Ա Ա Ա Ա Ր

**ԴՈՒՔ ԵՔ ՊԱՐԳԵՎԵԼ**

Յոգմած դուրս եկա ես աշխատանքից,  
Օրվա վաստակած գանձերն իմ հոգում,  
Ասացի՝ այսօր խույս տամ աղմուկից,  
Անտարբեր լինեմ եւ շուտ հասնեմ տուն:  
Ու քայլում էի... դիմացից, հանկարծ,  
Ինչպես կարկաչն է պոկվում ջրվեժից,  
Մի մանկան ծիծաղ թեւելով եկավ,  
Զարնվեց իմ կրծքին ու սիրտս խուժեց:  
Նրա ետեւից երիտասարդ մոր  
Լարված հայացքը թռթռաց, ծածանվեց,  
Գարնան հովի պես սահեց իմ մոտով,  
Կպավ իմ որդուն ու ծիծանվեց:  
Ու ես հեռացա,  
Կրծքիս տակ առած մի մանկան ծիծաղ  
Եվ մի մոր հայացք՝ ուրախ, տագնապող:  
Կրկին ինձ ձգեց շունչը քաղաքի,  
Քայլելը այնպես հաճելի դարձավ,  
Օվկիանում աղմուկ ու աղաղակի  
Յոգմածությունս ասես թե անցավ:  
Սիրող զույգերի տաք շշուկներից  
Յոգուս մեջ առա մի բուռ ճառագայթ,  
Ծերունիների խոհ-զորույցներից  
Երկու բուռ կարոտ, երկու բուռ իրճվանք,  
Ծքեղ շենքերի պատուհաններից  
Մի քանի խուլք լույս կրնատակեցի,  
Ծանոթ-անծանոթ բյուր հայացքներից  
Յույզիս շալակը կրկնապատկեցի...  
Տուն հասա, երգս սկսեց թեւել,  
Այս երգը, մարդիկ, դուք եք պարզեւել:

1967 թ., Երեւան

## ՔՈ ՄԱՍԻՆ ԵՄ ԵՍ ՄՏԱԾՈՒՄ

\* \* \*

Առաջվա պես ոգեւորված,  
 Առաջվա պես քեզնով տարված,  
 Սպասում եմ միշտ քո գալուն:  
 Առաջվա պես սրտով, հոգով,  
 Առաջվա պես ջերմ հաճույքով,  
 Սպասում եմ քո ժպտալուն:  
 Քո շոյանքին, փայփայանքին,  
 Ինձ քո տված ծով բերկրանքին,  
 Սպասում եմ առաջվա պես:  
 Սպասում եմ հուր-կարոտով,  
 Տարված, վառված քո կրակով,  
 Սպասում եմ առաջվա պես:  
 Եվ թեկուզ գաս, սիրտս վառես,  
 Անգամ, թե ինձ չնշմարես,  
 Սպասում եմ առաջվա պես:

1966 թ., Բաքու

\* \* \*

Ասում են իբրև ամուսինների  
 Աչքերը կյանքում նման են դաշնում.  
 Ես չեմ զարմանում,  
 Ո՞նց չնմանվեն,  
 Երբ նույն բախտով են մեկ-մեկու ժպտում  
 Եվ անցնում ճամփան նույն բարձունքներով,

Նույն վշտի համար մնում են անքուն,  
Սփոփում իրար նույն արցունքներով:  
Երբ կյանքը հնուտ նկարիչ դառած,  
Թախծի, բերկրանքի նույն գույներն առած,  
Միշտ նույն վրձինով, միեւնույն ժամին,  
Նույն գույնն է տալիս... ո՞նց չնմանվեն...

1966թ., Բաքու

\* \* \*

Առու դարձա, ոտքերիդ տակ կարկաչեցի,  
Դու չիմացար,  
Գարուն դարձա, ոտքերիդ տակ կանաչեցի,  
Դու չիմացար,  
Դու չիմացար, երբ աչքերիդ լույսը դարձա,  
Քո վառվուն հույսը դարձա, դու չիմացար,  
Դու ինձ կորցրիր, ինքդ անգամ չիմանալով՝  
Ուն ես կորցնում...  
Ճինա եկել ու կանգնել ես ճամփիս միջին,  
Ինձ ես հարցնում...  
Դու իմ սրտում անբուժելի վերք ես բացել,  
Մինչեւ իինա վերքն այդ դեռ չի սպիացել,  
Այս, ինչո՞ւ ես մոլոր կանգնել ճամփիս վրա,  
Մենք վաղուց ենք կորցրել իրար:

1966թ., Բաքու

Ա Ր Ա Կ Ա Ա Ր

### ԱՍԱ, ԻՆՉՊԵ՞Ս ՄՈՌԱՑԱՐ

Ճանդիպեցինք գարունքին,  
Երբ կապվել էր ծիածան,  
Անմեղ փայլը հրճվանքիդ,  
Ինչո՞ւ այդպես մոռացար:

Ասիր՝ կգաս մեր այգին,  
Եկա եւ դու հիացար...  
Ճիացմունքդ կաթոգին,  
Ինչո՞ւ այդպես մոռացար:

Լուսավորված ջերմ սիրով,  
Մեր ճամփեքը միացան...  
Ասա, ճամփան մեր սիրո,  
Ինչո՞ւ այդպես մոռացար:

Տարված ուրիշ հովերով,  
Թողիր մանկանդ, հեռացար,  
ԱՇ, կամուրջը մեր սիրո,  
Ասա, ինչպե՞ս մոռացար:

1968 թ., Բարու

\* \* \*

Սիրուս կսկիծն եմ քո առաջ լացում,  
Բայց դու ժպտում ես անտարբեր, անհոգ,  
Սրտիս վերթերն եմ քո առաջ բացում,  
Ելի ժպտում ես անտարբեր, անհոգ:

Շրջում ես դեմքդ,  
Երբ տեսնում ես ին աչքերի ցողը,  
Օ՛, ժողովուրդը, իմաստուն է նա,  
Իզուր չի ասել. «Վիշտ չունեցողը  
Ուրիշի վիշտը ո՞նց կհասկանա»:

1966 թ., Բարու

## ԵՍ ՔՈ ԿՅԱՆՔԻ ԴԱՄԱՐ

Ես քո կյանքի համար, քո գալիքի համար,  
Սիրտս ու հոգիս տվի, շունչս տվի, սեր իմ,  
Բյուլ ճամփաներ անցա, մաքառեցի համար,  
Մինչեւ մարմին առան պայծառ տենչերը իմ:

Ափերիս մեջ իիմա կոշտուկներ կան, գիտես,  
Գիտես, իմ սրտի մեջ կսկիծներ կան սիրո,  
Դրա համար գոհ եմ, գոհ եմ ես իմ բախտից,  
Որ տանջանքով հասա քո արեւին, սիրուն:

Գիտե՞ս, հաճախ նստում, միտք եմ անում լրին.  
Թե քեզ չսիրեի, ո՞նց կընթանար կյանքս,  
Ա՞խ, կլինե՞ր մեկը, որ հասկանար ինձ միշտ,  
Սպեղանի դառնար, գնահատեր ջանքս:

Կյանքի քանի՛-քանի՛ խութեր եմ ես անցել,  
ճանաչել եմ բարին, ճանաչել եմ չարը,  
Սակայն սիրտս միայն քո առաջ եմ բացել,  
Դու ես եղել սիրուս ամենանուրբ լարը:

Եվ այդ լարն է միայն ինձ հույզ ու տենչ տալիս,  
Այդ լարով եմ միայն սիրում կյանքն ու երգը,  
Գոհ եմ քեզնից, սեր իմ, անչափ գոհ եմ քեզնից,  
Քաղցր են ինձ քո տված խնդությունն ու վերքը:

1966 թ., Բարու

\* \* \*

Գարուն է, գարուն...  
 Յողը, ծառերը,  
 Յսկա սարերը,  
 Տիեզերքն անգամ զարդոնք են ապրում:  
 Սիրող զույգեր են  
 Սիրո պուրակում...  
 Մի տեղ երգում են,  
 Մի տեղ նվագում:  
 Այգին լցվել է ջերմ հայացքներով, երգերով հնչուն,  
 Զահելությունը օդի փոխարեն  
 Լոկ սեր է շնչում:  
 Նայում եմ նրանց,  
 Ու թվում է, թե բերկրանքն է միայն  
 Նրանց սրտերը, հոգին պարուրում:  
 Սակայն այդ մի պահ..  
 Աստված իմ, այս ի՞նչ, ի՞նչ է կատարվում.  
 Տեսնում եմ, թե ոնց մեկն շտապում է իր սիրածի մոտ,  
 Ժպտում են իրար որպես արշալույս, որպես առավոտ,  
 Իսկ մեկը մերժված, լուռ հեռանում է սիրածի մոտից,  
 Թախիծն է ծորում նրա աչք-ունքից:

Ես նայում եմ լուռ,  
 Եվ ափսոսանքի կայծակն է շանթում  
 Սիրտս բազմատենչ.  
 Ինչո՞ւ է կյանքը դարերով ձգտել  
 Իր դառնությունը խառնելու անգամ  
 Քաղցր սիրո մեջ:

1966 թ., Բարու

Ա Ր Ա Կ Ա Ա Ր

## ՄՏԵԼ ԵՍ ՍԻՐՏՍ

1

Ես պիտի գնամ ու կոպերիս տակ  
Պատկերդ տանեմ,  
Քո ժպիտները աստղերի նման  
Հոգուս ծալքերում պետք է սերմանեմ,  
Մրոիկն էլ շաչի, կայծակն էլ տեղա,  
Ես քեզ իմ սրտից չպետք է հանեմ...

2

Ասես ամեն օր տեսել եմ ես քեզ՝  
Ասես ամեն օր ինձ ժպտացել ես,  
Թող բարի լինի մեր հայացքների  
Համբույրն առաջին,  
Ու մեր սրտերի դողալն առաջին  
Թող բարի լինի...

3

Թե ձգտես կյանքում դու ինձ մոռանալ,  
Զգտիր մոռանալ աչքիդ լույսի պես,  
Որ թեկուզ մի պահ դու մոռանում ես,  
Բայց ինքը, ինքը քեզ լույս է տալիս...  
Թե ձգտես կյանքում դու ինձ մոռանալ,  
Մոռացիր, ինչպես քեզ ես մոռանում  
Հոգսերի պահին...  
Թե ձգտես կյանքում դու ինձ մոռանալ,  
Եվ հեշտ ստացվի,  
Ապա մոռացիր...

## 4

Մինչեւ լույս քունս չի տանելու, ոչ,  
Մտքով քեզ հետ եմ լինելու մինչ լույս,  
Ապրելու եմ ես  
Սոռացման տագնապ ու չմարող հույս...  
Մինչեւ լույս քունս չի տանելու, ոչ,  
Ես քո մասին եմ խորհելու, իմ լույս,  
Ա՞յս, ի՞նչ իմանամ,  
Գուցե այդ պահին դու քնելու ես՝  
Իմ տառապանքին անտարբեր ու սառ:

1967թ., Շամախի, գ. Մաղրաս

\* \* \*

Փաթաթվիր ուսերիս, փաթաթվիր, իմ արեւ,  
Թող սիրտս քո հրից նորից-նոր ջերմանա,  
Առանց քեզ դաշնում եմ աշնան չոր մի տերեւ,  
Առանց քեզ ես չունեմ ոչ գարուն, ոչ ամառ:

1966 թ., Երեւան

\* \* \*

ճամփան հեռու էր, ճամփան ոլորուն,  
Այդ ճամփի նման կարոտս՝ անվերջ,  
Սոսս նստած էր մի սիրուն աղջիկ,  
Սիրտս մխում էր կարոտների մեջ:

Գլխաշոր ուներ նա կանա՛չ-կանա՛չ,  
Եվ կանա՛չ-կանա՛չ ժպիտներ ուներ,  
Ու ձգտում էի նրա աչքերում  
Կարոտիս կանաչ հույսը որոնել:

Բայց ճամփի կեսին նա լուր հեռացավ,  
Մի կանաչ ժպիտ թողած իմ հոգում,  
Արդյոք ո՞ւր գնաց, արդյոք ո՞ւմ գտավ,  
Արդյոք իհմա՞ էլ կանաչ է ժպտում:

1966 թ., գ. Թաղասեռ

\* \* \*

Ամեն երեկո, շրթերի վրա  
Մի բարի ժպիտ, մի «բարի գալուստ»,  
Նա սպասում էր իմ վերադարձին,  
Ինձ համար դարձած եւ՛ երազ, եւ՛ հույս:

Ես լուր նայում եմ նրա աչքերին՝  
Մի քիչ կարոտած, մի քիչ ծիծաղկուն,  
Եվ պարզ տեսնում եմ-նրա կրծքի տակ  
Անուրջի, սիրո աշխարհն է ծաղկում:

Իսկ նա էլ, նա էլ աչքերիս միջով  
Յոգուս խորքերն է թափանցում, կարդում,  
Եվ մենք միասին ուզում ենք ճշալ.  
«Ինչ լավ է իրար գտել ենք կյանքում»:

1967 թ., Բարու

## ՔՈ ՄԱՍԻՆ ԵՄ ԵՍ ՄՏԱԾՈՒՄ

Ուր էլ լինեմ, ուր էլ գնամ,  
Դու ինձ հետ ես, իմ հոգու մեջ,  
Ես առանց քեզ ինչպե՞ս մնամ,  
Դու իմ կարոտ, իմ սեր, իմ տենչ:

Աստղը հեռվից ժպտում է ինձ.  
Քո մասին եմ ես մտածում,  
Վարդն է շրջում բուրումնալից,  
Քո մասին եմ ես մտածում:

Կարկաչում է զուլալ առուն,  
Գարնանային ամպն է լացում,  
Զյուն է իջնում մեր սարերում.  
Քո մասին եմ ես մտածում:

Եվ այն պահին, երբ ինձ հետ ես,  
Երբ քո առաջ սիրտս եմ բացում,  
Երբ զգում եմ քո շունչը տաք.  
Քո մասին եմ ես մտածում:

1968 թ., Բարու

«ՀԱՊՆԱԿՄԻ ԱՐԳՎ» - (1969-1973)



Թե աստղերի գիրկն էլ ուզեմք,  
Սեզ կտանեն մեր սարերը,  
Իրենց հոգով ու մեծ սրտով  
Սեզ նման են մեր սարերը:

ԱԾԽԱՐԴՆ ԻՄ ՃՈԳՈՒՄ

\* \* \*

Աստղերին հասած լեռների ծնունդ,  
Լեռներից առած մայրական սնունդ,  
Դարձած բարեբեր եւ առողջ մի հունդ՝  
Սիրտս քեզ լինի, հայրենի երկիր:

Լեռներից իշնող մի զուլալ աղբյուր,  
Լեռնային ծաղկի նման քաղցրաբույր,  
Աստղերից առած աստղային համբույր՝  
Սիրտս քեզ լինի, հայրենի երկիր:

Քո ճամփին դարձած երգերի ակունք,  
Անցած պատնեշներ, բարձունքից բարձունք,  
Տեսած եւ բերկուանք, տեսած եւ արցունք՝  
Սիրտս քեզ լինի, հայրենի երկիր:

Քեզնով եմ այսօր փարվել աշխարհին,  
Նվիրվել լուսե քո ճանապարհին...  
Սրտիս պես ծուլված քո մեծ պայքարին՝  
Երգս քեզ լինի, հայրենի երկիր:

\* \* \*

Ես հունդ եմ՝  
 Նետված քո հերկերի մեջ,  
 Թե քո հերկերը թոշնեն երաշտից,  
 Կչորանամ ես:  
 Ես շող եմ՝  
 Զուլված արեւածագիդ պայծառ վարսերին,  
 Թե սեւ ամպերը հայացքդ ծածկեն,  
 Կնքնեն եւ ես:  
 Ին էությունը էությունն է քո,  
 Յայրենիք իմ հին,  
 Շողերդ են քամվել ու կանթեղ դարձրել  
 Ին վառվող հոգին:  
 Ինչ էլ որ լինի,  
 Կանչիր ինձ, կզամ,  
 Ին ուժն ու կամքը  
 Սիրով քեզ կտամ,  
 Կզամ, քո ոտքի փուշը կիանեմ,  
 Թե որ հարկ լինի, քո ճանապարհին  
 Ես իմ աչքերի լույսը կքամեմ,  
 Միայն թե հասնես քո երազ-ափին,  
 Միայն թե այդպես շողերդ փուես  
 Մեր դժվար ճանփին...:

1971 թ., Ստեփանակերտ

\*\*\*

Ով հայրենիք, դու ինձ համար  
 Օրորոցն ես իմ մանկության,  
 իմ տենչերը ոսկեկամար,  
 Զգոռումները ջահելության:  
 Իմ երազած գարուններն ես,  
 իմ ամառը իրե հունով,  
 իմ տքնության աշուններն ես,  
 Որ պիտի գան քո անունով:  
 Արագածն ես իմ ծաղկավառ,  
 Կարոտավառ իմ Մասիսն ես,  
 Իմ Մռովն ես հոգեպարար,  
 Իմ Արեւսարն ու իմ Քիրսն ես:  
 Յրազդանն ես իմ ոսկեպար,  
 Դու Թարթառն ես իմ լայնահուն,  
 Խաչենն ես իմ՝ իսկը խաչպար,  
 Վարանդան ես՝ երազդ հուր:  
 Իմ մայրենի բարբառն ես դու,  
 Դու իմ երգն ես, դու իմ լեզուն,  
 Իմ պատվաբեր բերդն ես ամուր,  
 Արարումի երգով լեցուն:  
 Դու հավատն ու թռիչքն ես իմ  
 Եվ իմ հոգու երազանքը,  
 Քոնն է սիրտս, իմ հայրենիք,  
 Ես՝ քո շյուղը, դու՝ իմ կյանքը:

Հ Ա Խ Ա Տ Ի Ւ Թ Ա Գ Հ

\* \* \*

Ես դարաբառյան լեռների որդի,  
Տանս տանիքը խրված ամպերում,  
Աստղերն են ցոլում շուրջն ին տանիքի,  
Նրանք են հոգուս երազներ բերում:

Ես դարաբառյան լեռների որդի,  
Աղբյուրներն են ին բակը զարդարում,  
Նրանց կարկաչն է թառել շրթերիս,  
Նրանց նվազն է հոգուս ծալքերում:

1971 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Լանջերը կանաչ, փեշերը կանաչ,  
Թեւերը կանաչ մեր սարերի,  
Կանչերը կանաչ, հուշերը կանաչ,  
Թեւելը կանաչ մեր դարերի:

Շեւալը կանաչ, երգերը կանաչ,  
Ափերը կանաչ մեր գետերի,  
Զնհալը կանաչ, հերկերը կանաչ,  
Ծափերը կանաչ մեր դաշտերի:

Ժպտալը կանաչ, շիկնելը կանաչ,  
Փարվելը կանաչ մեր լուսայօի,  
Յողն այս վաղուց է աշխարհին ճանաչ,  
Ին օրբանն է նա, կանաչ այգին:

1971 թ., Ստեփանակերտ

Հ Ա Խ Ա Խ Ի Ի Գ Հ

### ՄԵՐ ՍԱՐԵՐԸ

Մեր սարերը հսկաներ են,  
Յոզի ունեն մեր սարերը,  
Մեր պատմության վկաներն են,  
Մեր ոգին են մեր սարերը:

Իրար թիկնած բազում դարեր  
Ու մեջք-մեջքի կանգնած արի,  
Առանց խոսքի, աչք ու ունքով  
Հասկացել են չարն ու բարին:

Թե աստղերի գիրկն էլ ուզենք,  
Մեզ կտանեն մեր սարերը,  
Իրենց հիզով ու մեծ սրտով  
Մեզ նման են մեր սարերը:

1971 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Լեռներ, օ՝ լեռներ իմ Ղարաբաղի,  
Մանկութ ընկերներ մեր փոքրիկ թաղի,  
Քանի՛ սարերում վրան զարկեցի,  
Նոր ընկերներով նոր կյանք վարեցի,  
Յոզուս մեջ դարձյալ դուք եք կանաչում,  
Դուք եք ինձ թովում,  
Դուք եք ինձ կանչում:

1969 թ., Մարտակերտ

Հ Ա Խ Ա Տ Ա Ր Ի Ռ Ա Ր Գ Հ

### ՀԱՅԱՍՏԱՆ

Այս հողի վրա հավասարվում եմ  
բարձր սարերին  
Եվ հպարտությամբ աշխարհին նայում,  
Այս հողի վրա ձեռքս հասնում է  
հեռու աստղերին,  
Աստղերն ինձ ուրիշ կերպ են հնայում:  
Այս հողի վրա գարնան հովերը  
նայրական փեշ են,  
Մոր քնքշությամբ են քրտինքս սրբում,  
Լճերն այս հողում անափ ծովեր են,  
եւ ամեն մի լիճ  
Դարերի խորհուրդ ունի իր խորքում:  
Այս հողի վրա պապերիս լեզվով  
քարերն են խոսում,  
Եվ ամեն մի բառ հասնում է հոգու,  
Այս շեկ ժայռերից իմ նախնիների  
կարոտն է հոսում  
Եվ սրտիս միջով անցնում իմ որդուն:  
Երբ սայթաքում են. երբ վայր են ընկնում  
այս հողի վրա,  
Դողն այս իմ ցավից տնքում է մոր պես,  
Երբ մոլորվում եմ, երբ նեղն եմ ընկնում  
այս հողի վրա,  
Սարերն իմ կողքին կանգնում են հոր պես:  
Այս հողն է ինձ թեւ-թռիչք տվողը,  
Ինչպե՞ս չսիրեմ այս քաղցր հողը:

1970 թ., Երևան

Հ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ

### ԵՂԻԾԵ ԶԱՐԵՆՑ

Երակներով էլ երգեր են խոսել  
Այս գանգրագիսակ, հանճարեղ մարդու,  
Մեր ժողովրդի երազն է խոսել  
Նրա հուր լեզվով, խելքով իմաստուն:  
Ժայռերի սիրտն է ընթերցել անգամ  
Ու ծառագայթել դարերի միջով,  
Զգել է նետը դեպի ապագան,  
Արվեստի դուռը բացել ծրինչով:  
Բարձրացել է նա եւ հասել Պառնաս  
Ու բազմել գահին ժամանակների,  
Եվ ինչ հողմեր էլ փորձեն սպառնալ՝  
Նրա կրակը երբեք չի մարի:

1969 թ., Բաքու

### ԿԱՂՆԻ

Դիմացար դաժան ու չար հողմերին,  
Մնացիր կանգուն արմատներով խոր,  
Յայացքդ հառած գալիք դարերին,  
Դու արձակեցիր շիվերը քո նոր:

Արագիլները գալիս են հեռվից,  
Քո նոր շյուղերով հյուսում բունը տաք,  
Իսկ մանուկները թռվառուն ու ժիր,  
Խաղուն են դարձյալ քո շվաքի տակ:

Եվ դու իրար ես բերում շիվերդ,  
Առաջվա նման դարձած հովանի,  
Այդ ի՞նչ ուժ է քեզ, ասա, շնորհվել,  
Ի՞նչ մեծ սիրտ ունես, կաղնի, ով կաղնի:

1969 թ., գ. Ուխտաձոր

Հ Ա Խ Ա Խ Ի Խ Ի Գ Խ

### ՄԱՇՈՒԿ ՍԱՐԸ

Մ. Յու. Լերմոնտովի հիշատակին

Մաշուկ սարը մերթ տիրում է,  
Մերթ ժպտում է Մաշուկ սարը,  
Սիրտը նրա մերթ փխորուն է,  
Մերթ անտարբեր ու մերթ սառը:

Բանաստեղծի երգը լսել,  
Դիացել է Մաշուկ սարը,  
Նրա դաժան մահը տեսել  
Ու լացել է Մաշուկ սարը:

Մեծ պոետի անվան հետ է  
Բախտն իր կապել Մաշուկ սարը,  
Սաշուկ սարը նրա ամեն  
Մի երգով է չափել դարը:

Տարիները կգան, կանցնեն,  
Չի մոռացվի Մաշուկ սարը,  
Նրան որպես մի սրբավայր  
Այցի կգա ողջ աշխարհը:

1969 թ., Պյատիգորսկ

### Յ Ր Ա Վ Ե Ր

Ելքրուս, այցի եմ եկել քեզ այսօր,  
Իմ լեռնաշխարհից քեզ հազար բարեւ,  
Ժպտում ես դու ինձ՝ փեշերիդ արեւ,  
Իսկ բարձունքներիդ՝ ծյունը դարավոր:  
Քեզ հյուր եմ կանչում մեր լեռնաշխարհը,  
Չմերժես, ելքրուս, վեր կաց ու գնանք,

Հ Ա Խ Ա Ռ Ի Ռ Ո Ւ Ջ Հ

Արագածը քեզ համբույրներ կտա,  
Կզան մեր թիրսը եւ Մռով սարը,  
Մենք աղ ու հացով կսպասենք ճամփիդ  
Ու քեզ թամադա կընտրենք մեր տանը,  
Կերգեն մինչեւ լույս, կերգեն քո պատվին  
Արաքսը, Թարթառը եւ Հրազդանը:

1969 թ., Էլբրուս սար

Ի Ս Փ Ո Ք Ր Ի Կ Ս Ա Ր Ը

Մեր սարը փոքրիկ, մեր սարն անանուն,  
Ինձ հետ այնպես է շշուկով խոսում,  
Իր նեղ ուսերին դարեր է տանուն  
Ղեպի գալիքը՝ լույսերով օժուն:  
Կրծքի տակ գանձեր, կարոտներ, կանչեր,  
Երբեք նա իրեն չի պահել սառը,  
Հսկաների հետ կարող է չափվել  
Իմ թեւ ու թիկունք, իմ փոքրիկ սարը:

1970 թ., գ. Տումի

Ի Ն Չ Ո Ւ Ե Ս Ա Յ Ս Պ Ե Ս

Ինչո՞ւ եմ այսպես...  
Արեւի հետ եւ ցերեկն եմ վառվուն,  
Ե՛վ իրկիզվուն եմ մայրամուտից ետ:  
Ցերեկն արեւը ում մոռանուն է,  
Գիշերն ապրուն եմ տենչերով նրա,

Հ Ա Խ Ա Ռ Ի Ռ Ո Ւ Թ Ա Գ Հ

Արեւը որտեղ մութ ճեղք է թողնում-  
Կսկիծ է դաշնում իմ սրտի վրա:  
Ի՞նչ է կատարվում, ինչո՞ւ եմ այսպես,  
Գուցե եղբայրն եմ վառվող աստղերի,  
Գուցե բնությունն ինձ արարել է,  
Որ լրացնեմ արեւի թերին:

1970 թ., գ. Տող

Ա Ծ Խ Ա Ր Ճ Ն Ի Ն Զ Դ Ա Մ Ա Ր

Աշխարհն ինձ համար երգի ակունք է,  
Խաղաղությունն եմ նրա օրիներգում,  
Ինձ թանկ են նրա ծիլն ու ծաղկունքը,  
Որտեղ էլ լինեն եւ որ եզերքում:  
Թող հավերժ դալար մնա այն ձեռքը,  
Որ փայփայում է բախտը աշխարհի,  
Չարի բազուկը ոլորում, ջարդուն,  
Յանուն գալիքի, հանուն արդարի:  
Խաղաղությունը երջանկություն է,  
Զինվորի պես եմ նրան օրիներգում,  
Բայց երգերիս մեջ սիրտս անքուն է,  
Այդ ասել է թե տագնաապ կա հեռվում:  
Ծլարձակում է գալիքի հերկը  
Պայքարների մեջ, իմ ծանապարհին,  
Թող հավերժ դալար մնա այն ձեռքը,  
Որ փայփայում է բախտը աշխարհի:

1969 թ., Բարու

\* \* \*

Առավոտի աչքի առաջ  
Ծփանք տվին տենչերս անթիվ,  
Մոր պես անուշ նա ինձ ժպտաց,  
Օրինանք դաձավ, լույս՝ իմ ճամփին:  
Ես դուրս ելա ոգեւորված  
Ու ցանեցի հովզերս վառ,  
Բոլորի հետ փոս փորեցի,  
Բոլորի հետ տնկեցի ծառ...  
Առավոտներ եկան, անցան,  
Բողբոջեցին ծառերն այգում,  
Ամեն բողբոջ մի երգ դարձավ  
Եվ կարկաչեց իմ ջերմ հոգում:

1970 թ., Դադրութ

\* \* \*

Երազներս պատանության  
Թողել եմ իմ լեռնաստանում,  
Եվ հուշերիս ոսկե շղթան  
Ինձ սարերի գիրկն է տանում,  
Բարձրանում եմ լեռներն ի վեր,  
Վեհանում է աշխարհն աչքիս,  
Իմ հայրենի սարերումն են  
Ակունքները երազանքիս:

1971 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Գիշեր-ցերեկ մենք քո սրտի  
 Տրոփյունն ենք լսում, ով կյանք,  
 Ամռան տապին, ձմռան ցրտին  
 Մեզ թեւեր ես տալիս, ճախրանք:  
 Մեզ թեւեր ես տալիս, այո՛,  
 Մեր եռանդը բորբոք պահում,  
 Բայց մենք ենք մեր սրտի հրով  
 Քեզ զարդարում:  
 Մենք մեր ուժը տալիս ենք քեզ,  
 Ճարթում ուղին քո վերընթաց,  
 Որ քո գրքում սիրով գրես,  
 «Մի լավ սերունդ եկավ-զնաց,  
 Բայց իր գործով հավերժ մնաց»:

1971 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Միշտ իպարտությամբ նայել աշխարհին,  
 Դեռաստանների ծալքերը տեսնել,  
 Ուժ առած շնչից ու հեռքից դարի,  
 Երազած բոլոր ափերին հասնել:  
 Սիրտը ջահ արած բարձունքում վառել,  
 Չհանգստանալ նոր հեռաստանում,  
 Անվերջ սլանալ, անվերջ մաքառել,-  
 Ահա այդպես եմ կյանքը հասկանում:

1970 թ., Երեւան

\* \* \*

Աշուն, քո ամեն, ամեն հունդի հետ  
Մի անուշ երգ է ծլում հոգուս մեջ,  
Երբ հոսում ես ոնց լիության մի գետ,  
Ես ծանրանում եմ խոհերով անշեջ:  
Դիանուն եմ քո մետաքս ծիլերով,  
Քո սրտով՝ այնքան եւ ջերմին, եւ պաղ,  
Երանի՝ կյանքիս աշունն էլ լիներ  
Քեզ նման շռայլ, քեզ նման խաղաղ:

1970 թ., գ. Գետաշեն

## Ի Մ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐ

Հաղորդի շրջանի «Դրուժքա» կոլտնտեսության  
այգեգործ Սերյոժա Զավադյանին

Քո փոշոտված, գանգուր մազերին եմ նայում  
Եվ զարմանում, թե ե՛րբ արձաթվեցին դրանք,  
Չէ՛ որ երեկ էր, երբ գառներ էինք պահում,  
Աստղերի մեջ փնտրում մեր աստղերը հրակ:  
Երեկ էր այն, երբ իմ քաջաբազուկ քերին՝  
Քո այգեգործ հայրը, մեզ փայփայեց սիրով,  
Գնաց, կտրեց ճամփան դաժան նրբիկների  
Ու մեր աստղը վառեց իր սրտի ջերմ հրով:  
Դու ուխտեցիր կյանքում նմանվել քո հորը,  
Թե վաստակով, եւ թե քո անունով բարի,  
(Եվ հասկանում էիր վազի դժվար լեզուն,  
Երբ դեռ չէր լրացել քո տասնինգ տարին):  
Ու ճամփել ես արդեն դու քառասուն գարուն,

Հ Ա Խ Ա Տ Ի Ւ Թ Ա Ր Գ Հ

Երեսնամյա քո հոր կարոտներով վառված,  
Ինչքա՞ն խորհուլդներ կան, ընկեր, այս աշխարհում,  
Ինչքա՞ն ճրագներ կան անժամանակ մարած:  
Քո նոր այգին հիմա առաջինն է գյուղում,  
Նրա տնկած վազին դու ես պատվաստ անում,  
Քո խնամած այգում բալիկներդ են խաղում,  
Քեռուս մեկ օջախը հիմա չորսն է դառնում:  
Չգիտես, թե հայրդ ո՞ր դաշտում է ընկել,  
Շիրմաքար չես գցել նրա գերեզմանին,  
Բայց խնամած այգիդ, ճիշտ ես ասում, ընկեր,  
Քո հոր հիշատակը թող դարերին տանի:

1971 թ., գ. Ակնաղբյուր

Ի Դ Զ

Ելնեմ, ամպերից ցողեր հավաքեմ,  
Լիաբուռ ջրեմ ծիլերն արտերի,  
Որ ամուլ ամպեր չլինեն երբեք,  
Ծովերից ջրեր տանեմ ամպերին:  
Պարտիզան դառնամ, ծաղիկներ ցանեմ  
Եվ ծաղիկներս ընծայեմ մարդկանց,  
Ամենուր սիրով մատնացույց անեն,  
Ասեն, նրա պես այգեպան չկա:  
Ուր էլ որ գնամ, վարդերով գնամ,  
Ժպիտներ տանեմ իմ վարդերի հետ,  
Ծաղիկների պես միշտ համեստ մնամ  
Ու ծաղիկների նման բուրավետ:

1971 թ., Դաղբուր

Հ Ա Խ Ա Ն Ա Խ Ի Ի Ա Խ Գ Հ

### ՆԱՄԱԿ

Ութսունամյա հայրս  
Ինձ նամակ է գրել  
Մեր լեռնային գյուղից,  
Եվ նամակը նրա  
Անուշ բույրն է բերել  
Հայրենական հողի:  
- Որդիս,- գրում է նա,-  
Ցուրտ է, քեզ լավ նայիր,  
Որ չմրսես հանկարծ,  
Մեկ էլ մի ծուլանա,  
Հաճախ նամակ գրիր,  
Որ ես հանգիստ մնամ:  
Մերոնք լավ են, որդի՛ս,  
Հորեղբայրդ, քերիդ,  
Բալիկները նրանց,  
Միշտ գալիս են ինձ մոտ,  
Զնուան գիշերներին  
Զրուցում ենք երկար:  
Գյուղի մասին, գիտես,  
Գյուղը լավ է հիմա,  
Ուրախ ու ապահով,  
Ե՞րբ է եղել այսպես,  
Լուսավոր ու առատ,  
Ասել ես չեմ կարող:  
Նորություններ շատ կան,  
Տեսնեմ ո՞րն եմ հիշում,  
Որ նամակում գրեմ...

Որդիս, շատ էր երաշտ  
Անցած մեր աշունը,  
Մի կաթ չընկավ վերից:  
Բայց լավ աշխատեցին,  
Կուռը դալար մնա  
Այգի մշակողի,  
Չսպասեցին նրանք,  
Ժամանակին սերմը  
Պահ տվեցին հողին:  
Յիմա առատ ծյուն է,  
Դա շատ լավ է, որդիս,  
Չյունը հաց է, գինի...  
Չյունը ծիլ կպահի,  
Չյունը առատ տարին  
Միրզը շատ կլինի:  
Մեր իին դպրոցի տեղ  
Կառուցել են նորը՝  
Չորս հարկանի մի շենք,  
Ակումբում էլ, որդիս,  
Աստծո ամեն օրը  
Կինո է կամ համերգ:  
Յա՛, մոռացա ասել,  
Բանակից տուն եկավ  
Մեր Վանոյի տղան,  
Նա տանկիստ է եղել,  
Տրակտորիստ է հիմա,  
Շուտով կամուսնանա:  
Մտածում եմ մեկ-մեկ,  
Տուն ու տեղս թողմեմ

Հ Ա Խ Ա Տ Ի Ւ Թ Ի Վ Գ Հ

Ու գամ քաղաք՝ ձեզ մոտ,  
Բայց չեմ կարողանում,  
Ինձ պահում է մի ձեռք,  
Մի չմարող կարոտ:  
Մայրու չկա, որդիս,  
Ախր ո՞նց հեռանամ  
Նրա թարմ շիրիմից,  
Ճողի տակ էլ անգամ  
Նրա հոգին կզգա,  
Կիսուովի ինձնից...  
Էլ ի՞նչ գրեմ, որդիս,  
Նամակն իմ երկարեց,  
Ներիր դրա համար,  
Ճամբուրում եմ նորից  
Եվ սպասում եմ քեզ  
Գյուղում - մինչեւ ամառ:

1971 թ., Բաքու

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Պատահական երջանկության  
Չեմ սպասել կյանքում երբեք,  
Ամենուրեք այն կապել եմ  
Իմ տքնության, վաստակի հետ:  
Երջանկությունն իմ տեսել եմ  
Իմ իսկ ցանած հունդերի մեջ,  
Իմ աստղավառ երազներում  
Եվ իմ վառած լույսերի մեջ:

Հ Ա Խ Ա Ն Ա Ր Ի Ռ Ա Ր Գ Հ

Ես իմ անցած ճանապարհին  
Ստեղծել եմ բարիք ու բերք,  
Պատահական երջանկության  
Չեմ սպասել կյանքում երբեք:

1971 թ., Դադրութ

\* \* \*

Իմ ջահելություն, անցնում ես դանդաղ,  
Անցնում ես, ահա, դու մեղմ ժպտալով,  
Անցնում ես, թողած հայացքդ պայծառ,  
Անցնում ես, կյանքին քո շունչը տալով:  
Անցնում ես... սակայն չեմ ծերանում ես,  
Զահելանում եմ երգիս մեջ կրկին,  
Բարիք եմ փոխում սերմնացանի պես  
Ու երկրիս սիրով կոփում իմ հոգին:  
Սրտից է գալիս իմ ամեն տողը,  
Ուն համար ցուրտ է, թող ձեռքը մեկնի,  
Զմռան բքին էլ, ոնց օջախի պող,  
Կարող է հուր տալ սրտաբուխ երգն իմ:  
Իմ ջահելություն, անցնում ես արդեն,  
Բայց թրթռում ես իմ երգերի մեջ,  
Քո ճամփան համառ ջանքով եմ հարթել,  
Պիտի ապրես ե՛ւ իմ երգերի հետ:

1971 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Նստում եմ հաճախ ու խորհում լռին՝  
Յայացքս հառած իմ ճանապարհին,  
Գիտեմ, ես մի օր պատասխան պիտ տամ  
Մարդկանց, աշխարհին:  
Ին կյանքի ճամփին՝ լույսերով շաղախ,  
Այնպես լինի, որ ծաղկեմ, կանաչեմ,  
Այնպես լինի, որ իմ երկրի առաջ  
Երբեք չամաչեմ:

1971 թ., Երեւան

## ՄՈՐՄՈՔՆԵՐ

## ԱՅՐՈՂ ՅՈՒՇ

Մեր տատիկի սիրտը բարի,  
Գրպանները մի մառան,  
Նրբությունը ողջ աշխարհի  
Ասես տրված էր նրան:  
Գալիս էինք հանդից, դասից,  
Փայփայում էր սիրով մեզ,  
Խնձոր, չիր ու թութ էր տալիս,  
Ասում. - Տատը մատադ ձեզ:  
Բայց մի սնդուկ ուներ տատս,  
Տնից երբեք չէր հանում,  
Միշտ էլ ամուր կողպեքի տակ,  
Խսկ բանալին՝ գրպանում:

Հ Ա Խ Ա Ռ Ի Ռ Ո Գ Հ

Ասում էինք՝ Սնդուկը բաց,  
Տեսնենք ինչ կա նրանում,  
Նա մերժում էր՝ աչքերը թաց  
Եվ լուռ մեզնից հեռանում:  
Ժամանակը անսիրտ դարձավ,  
Տարավ տատին մեր բարի,  
Մենք սնդուկին չնոտեցանք,  
Չքացեցինք մի տարի:  
Դաղթանակի օրը եկավ,  
Լացի միջից ժպտացինք,  
Դիշեցինք մեր քաղցր տատին  
Եվ սնդուկը բացեցինք:  
Երեք գլխարկ տեսանք այնտեղ,  
Երեք սեւ թուղթ - երեք ցավ,  
Երեք որդու կորուստն ահեղ  
Մեր սրտերին ծանրացավ:  
Մենք լաց եղանք հոնգուր-հոնգուր,  
Վշտի արցունք հեղեցինք,  
Նշխարները տատիս հոգու  
Կրկին տեղը դրեցինք:  
Օրերն ինչպես մարող մշուշ,  
Անց են կենում ու գնում,  
Սակայն որպես այրող մի հուշ,  
Տատիս սնդուկն է մնում:

1970 թ., գ. Ակնաղբյուր

Հ Ա Խ Ա Խ Ա Խ Ի Ի Գ Հ

### Կ Ա Ր Ո Տ Ի Ե Ր Գ

Յայրենական Մեծ պատերազմում գոհված  
ավագ Եղբորս՝ բանաստեղծ  
**Սուլեն Խանյանի հիշատակին**

Մի փոքրիկ կածան քո ոտքերի տակ  
Կրկին կանաչեր,  
Մայրիկը ձեռքը ճակատին դրած  
Դեռվից քեզ կանչեր,  
Դու վառված սրտով գայիր, փարվեիր  
Փեշերին նրա,  
Եկ ուրախության արցունքը ցողար  
Այտերիդ վրա,  
Մենք թթենու տակ սպասեինք քեզ,  
Դու գայիր մեզ մոտ,  
Գայիր, գրկեիր մեզ առաջվա պես,  
Դարձած հուր, կարոտ:  
Աղմուկով, ճիչով խաղայինք բակում  
Մինչեւ երեկո,  
Իսկ հետո հոգնած քնեինք մուշ-մուշ,  
Աստղերի ներքո:  
Ու քնած պահին մեզ օրոր ասեր  
Թթենին նազուն...  
Ամեն ինչ նորից, նորից սկսվեր,  
Ինչպես երազում:

1969 թ., գ. Ակմաղբյուր

Հ Ա Խ Ա Տ Ի Ռ Ի Ռ Ո Գ Հ

## ՍԵՐԸ ՆԱՐԱՏԱԿ

Պատանի էինք... մեր ուսուցիչը  
Ավագ եղբայրս էր,  
Նրա խոսքը միշտ ջերմ ու հուզիչ էր-  
Երազներով լի, խոհով ծանրաբեռ:  
Հունիսյան մի օր նա դասի չեկավ,  
Կովի դաշտ գնաց՝ կրծքի տակ ցասում,  
Նրա փոխարեն դասարան մտավ  
Մի սեւաչ աղջիկ՝ բարի ու նազուն:  
Մատյանում կարդաց իմ ազգանունը,  
Թացվեցին հանկարծ աչքերը նրա,  
Լոեց նա մի պահ, եւ արցունքները  
Կարծես թե ընկան իմ սրտի վրա:  
Մի խորին թախիծ իջավ իմ հոգուն,  
Եկա, պատմեցի մորս ճերմակած,  
Մայրս լաց եղավ, փարվեց ինձ տխուր.  
- Քո եղբոր սիրած աղջիկն է,- ասաց:  
Հիմա ճայր է նա, ուրիշն է տարել,  
(Եղբայրս կռվից չվերադարձավ),  
Բայց ամեն անգամ, երբ հանդիպում ենք,  
Վառվում է իմ մեջ մի կարոտ, մի ցավ:  
Շատ գարուններ են եկել ու անցել,  
Սոռացվել են բյուր տառապանք ու վերք,  
Բայց հերոսաբար զոհված իմ եղբոր  
Զոհված սերը չի մոռացվի երեք:

1970 թ., գ. Ակնաղբյուր

Հ Ա Խ Ա Ն Ա Խ Ի Ի Ա Խ Գ Հ

## ԱՅԴՊԵՍ ՄԵԾԱՑԱՆՔ

Մանուկներ էինք անհոգ ու անցավ,  
Դեռ փայփայանքի ու խաղի կարոտ,  
Երբ պատերազմի բոթը մեզ հասավ  
Մի ջինջ առավոտ:  
Սրտերի կանչով ու սիրով երկրի  
Ելան հայրերը մեր քաջ, աներեր,  
Գուրգուրեցին մեզ, հրաժեշտ տվին,  
Վստահելով մեզ տուն ու տեղը մեր:  
Երջանիկ ու ժիր  
Պատանությունը լրիվ մոռացանք,  
Յոթ տարվա ուղին  
Ինչպես հեքիաթում՝ մի տարում անցանք:  
Պարմանի դարձանք  
Երիտասարդի հոգսով, վաստակով,  
Մարտեր չտեսանք,  
Բայց անցանք վշտի ծանրության տակով:  
Ում հայրը ծեր էր - չեր մեկնել կովի,  
Նա թնդանոթի որոտն ականջում,  
Հայրերը կորցրած ընկերների մոտ  
Հայրիկ չեր կանչում:  
Մարտերում զոհված մեր եղբայրների  
Զգեստներն էինք հազնում՝  
Թեկուզ մեծ,  
Եվ ձգտում էինք նմանվել նրանց  
Ծանր գործերի ու հոգսերի մեջ,  
Գիշերն անտարից փայտ էինք բերում,  
Իսկ առավոտյան շտապում դասի,

Հ Ա Խ Ա Ռ Ի Ռ Ո Վ Զ Հ

Յունծ էինք անում, դաշտերը հերկում,  
Արդեն ուժ էինք դարձել միասին:  
Երեկոները ելնում էինք բեմ  
Ու «Վրեժ» էինք խաղում վրեժով,  
«Ծնկի էր գալիս» ոստիսը մեր դեմ,  
«Անցնում էինք» թեժ մարտերի միջով:  
Յոր, ավագ եղբոր եւ մեր սեփական  
Ուժն էր մեզ տանում մեծ ճանապարհով,-  
Մեր ուսին երեք սերնդի բեռ կար,  
Կոփկեցինք երեք սերնդի հրով:  
Մաքառեցինք ու մեծացանք այդպես,  
Գնահատեցինք պայքար, աղ ու հաց,  
Մենք դեռ պատանի, ինացանք ինչպես  
Դարերում մնալ վեհ, ճակատը բաց:

1970 թ., գ. Ակնաղբյուր

Մ Ո Ր Մ Ո Ք

Մայրեր, քույրեր մեր սիրասուն,  
Ճերմակել եք արդեն,  
Երեկ դեռ նուրբ, երեկ նազուն,  
Երեկ բուրող վարդեր:  
Ես ձեր անցած ճանփին նայում,  
Չարմանում եմ, իրավ,  
Ինչքա՞ն շատ եք, շատ եք ննան  
Դուք ձեր բախտով իրար:  
Դուք սիրո տեր, դուք մանկան տեր,  
Տարված ձեր լույս կյանքով,

Հ Ա Խ Ա Ռ Ի Ռ Ո Ւ Գ Հ

Դեռ նոր էիք օջախ վառել,  
Տուն կառուցել ջանքով:  
Երբ երկինքը լացեց, սգաց,  
Յողը տնքաց ցավից,  
Եվ աշխարհը սարսուռ զգաց  
ֆաշխտական ահից:  
Կտրիճներին ձեր քաջազուն  
ճանփու դրիք ցասմանք,  
Ամեն մեկը սրբած մի թուր,  
Ամեն մեկը՝ մի սար:  
Յողի մշակ դարձաք հանդում,  
Տանը՝ թե հայր, թե մայր,-  
Գիշեր-ցերեկ հոգնած, անքուն,  
Կարոտներով անմար:  
Լեռներ դարձաք դուք վիթխարի,  
Չով աղբյուր ու արեւ,  
Հաղթանակի ճանապարհին  
Դուք ինչե՞ր չեք արել:  
Չեր մազերի թուխը տվիք,  
Սրտի հուրը ձեր վառ,  
Չեր ձեռքերի ուժը տվիք,  
Չեր տենչերը պայծառ:  
Չեզ համար լոկ պահեցիք հույս,  
Սպասումի կրակ,  
Դուք վառվեցիք ու դարձաք լույս,  
Եվ դարձաք ճրագ:  
Հաղթանակի օրը բացվեց,  
Բերկրամք բերեց մարդկանց,  
Չեր մի աչքը թախծից թացվեց,

Իսկ մի աչքը ժպտաց:  
 Կարոտով լի տարիները  
 Եկան ու անց կացան,  
 Մեծացան ձեր որդիները  
 Ու քաջ հայրեր դարձան:  
 Զահելության վայելքները  
 Դուք մոռացած կյանքում,  
 Արդ, անձնվեր տատիկներ եք՝  
 Մորմոքը ձեր հոգում:  
 Ձեր որդիքը թող ողջ լինեն,  
 Խոնարհ՝ միշտ ձեր առաջ,  
 Չտրտնջան, որ դուք մեկ-մեկ  
 Քաշում եք խոր հառաչ...

1970 թ., Ստեփանակերտ

### ՄԱՅՐԵՐ

ճարտարյան խճանկար

Ձեր որդիները հուշարձան դարձած  
 Վերադարձել են ու կանգնել հպարտ  
 Եղիշե սարի կանաչ ուսերին  
 Եվ հեքիաթային հերոսների պես  
 Նայում են անվերջ  
 Դայրենի գյուղի պայծառ լուսերին:  
 Նրանք չեն խոսում, լռել են հավետ,  
 Նրանց անունից ճարտարն է խոսում,  
 Ու նրանց անվան ամեն մի տառից  
 Կարոտն է հոսում:

Հ Ա Խ Ա Ռ Ի Ռ Ա Ր Գ Հ

Ես տեսա, մայրեր,  
Թե ինչպես էիք մատների ծայրով  
Արձանի վրա  
Շոշափում նրանց անունները թանկ,  
Կարծես նոր էիք բարուրում նրանց,  
Այնպիսի զգույշ մի փայփայանքով,  
Կարծես նոր էիք խոնարհվել նրանց  
Օրորոցներին,  
Որպեսզի սնեք մայրական կաթով:  
Ու երբ դողդոջուն հեռանում էիք  
Դուք հուշարձանից,  
Կարծես թե նրանք արթնացել էին  
Զեր ոտնաձայնից  
Եվ ասում էին.

- Մի լացեք, մայրեր,  
Սեզ էիք տենչում, եկել ենք արդեն,  
Եկել ենք հեռվից,  
Որ ձեր մայրական համբուլյներն առնենք,  
Որ ընկերներով այս լանջին հառնենք,  
Զեր ձայնը լսենք  
Ու տեղյակ լինենք միշտ ձեր մորմոքին,  
Որ ձեր բերկրանքն ու թախիծը կհսենք  
Զեր աչքի առաջ  
Ու միշտ... ձեր կողքին:

1971 թ., գ. ճարտար

\* \* \*

Դիտում եմ բոլոր կինոֆիլմերը  
Մեծ պատերազմի օրերի մասին,  
Յաղթանակների բոլոր հիմները  
Ասես գրել են ինձ հետ միասին:

Եկրանի վրա զինվորի մահը  
Իմ սրտի կեսը պոկում է, տանում,  
Այնքան մեծ մահեր տեսած աշխարհը  
Այս, ինչո՞ւ, ինչո՞ւ չի հանգստանում:

1971 թ., Բաքու

### Ն Ր Ա Ն Ց Ա Ն Ո Ւ Ն Ը

(Նմանություն)

Յեռավոր, կապույտ Դանուբի ափին,  
Խոնավ հողի տակ քնած են հավետ,  
Յամոն՝ լեռնային մեր Ծաղկավանից,  
Կամոն՝ հարեւան գյուղից նորակերտ:

Բայց խաղաղունչ այս ջերմ օրերում,  
Երբ թեւածում է երազն անեզերք,  
Տունդարձի անմար հույսը սրտերում,  
Նրանց նայրերը չեն քնում երբեք:

Լույսն է վետվետում գյուղերի վրա,  
Յաշնել են քանի՝ քաղաք ու ավան,  
Արդ, մայրացել՝ են այն աղջիկները,  
Որ պահում էին քաջերի ճամփան:

Յեռավոր կապույտ Դանուբի ափից  
Մինչեւ լեռնային գյուղերը մեր նոր,  
Դարձած մարմնացում տենչի, կարոտի,  
Նրանց անունն է հնչում ամեն օր:

1969 թ., Պյատիգորսկ

Հ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ

### ՄՈՐ ՆԱՍԱԿՆ ՈՒ ՈՐԴՈՒ ՍԻՐՏԸ

Մայրը նամակ է գրել զինվոր իր որդուն,  
Որդին կարդացել է թեժ պայքարից առաջ,  
Սիրտն է վառվել կարոսից, հույզերից հորդուն,  
Իրենց սարերն է հիշել, դաշտերը կանաչ:

Մարտնչել է քաջաբար ոսղխների դեմ  
Ու որոշել պատասխան գրել դադարին,  
Սակայն այգը չբացված, ընկերների հետ,  
Չոհվել է նա հեռավոր լեռան կատարին:

Տարիները անցել են, սարերն են ծաղկել,  
Մանուկները թռվուն գտել են նրան՝  
Հավերժ քնած կիրճի մեջ, սարում բարձրաբերձ,  
Մոր նամակը պահած իր հաղթ կրծքի վրա:

Եվ թանգարան են բերել մոր նամակը թանկ,  
Մեկ էլ հերոս իր որդու սիրտը հուրիրան,  
Ու թվում է, թե հողը վերքն է զինվորի,  
Նամակը՝ մոր համբույրն է այդ վերքի վրա:

1969 թ., Պյատիգորսկ

### ՅՈՒՇԵՐԻՍ ԳԻՐՔԸ

Նստում եմ հաճախ ու խորհում լոին,  
Իմ խոհերի մեջ երեկն ու ներկան,  
Պեմս փուլում է իմ անցած ուղին՝  
Երազներով լի ու անապական:

Հ Ա Խ Ա Տ Ի Ւ Թ Ա Գ Հ

Յուշերս ասես Ես տեսնում Եմ պարզ,  
Յուշերս անթիվ, հուշերս անգին,-  
Ահա մեր բակը, թթենին ահա,  
ճյուղերը հենած մեր պատշգամբին:

Յոգուս մեջ մորս օրորի ձայնը,  
Ես բակ Եմ Ելնում՝ Ելնում մի աշխարհ,  
Եվ դպրոց տանող նեղլիկ կածանը  
Զգվում, դառնում է մի լայն ճանապարհ:

Լեռներից իջնող արահետն ահա  
Գալիս, հասնում է նոր երկաթուղուն,  
Ես մի պատանի, բեղս նոր ծլած,  
Իմ սերը թողած հայրենի գյուղում:

Քաղաքի եռքն ու բույրը լեռների  
խառնվում են հոգուս խորքում, թեւածում,  
Ու նոր հատորը իմ թանկ հուշերի  
Քաղաքի աննինջ ժխորն է բացում:

Յոգիս լեռներում, սիրտս քաղաքում,  
Իմ կյանքի գիրքն Եմ ստեղծում ահա -  
Բոլորին սրտիս սերն Եմ առաքում,  
Բոլորին ժպիտ, բոլորին բերկրանք:

Յուշերիս գիրքը գրում Եմ Ես դեռ,  
Սրտիս զարկերը տալով աշխարհին,  
Եվ գիտեմ, մի օր պիտի հեռանամ,  
Դարերին թողած անուն մի բարի:

\* \* \*

Այս կես գիշերին խոհերս դարձյալ  
Հանգիստ չեն տալիս,  
Իմ երազներից ու իմ հուշերից  
Մեկը գնում է ու մեկը գալիս:

Մեկը վառում է, մեկը՝ լուռ ժպտում,  
Մեկը ծեռքով է անում պարտեզից,  
Մեկը պատկերս տանում է սրտում,  
Մեկը՝ խռոված հեռանում ինձնից:

Զգտումներս շատ, իսկ կյանքս շտապ,  
Մեկը գտնում եմ, մյուսը կորցնում,  
Գտնելը՝ տագնապ, կորցնելը՝ կրակ,  
Ել ճերմակելս ինչո՞ւ եք հարցնում:

Այս կես գիշերին հուշերս նորից  
Չեն թողնում կորցրած հանգիստս գտնեմ՝  
Հուշեր իմ, հուշեր, հեռացեք ինձնից,  
Գոնե մի գիշեր թողեք ես քնեմ:

1971 թ., Դադրութ

\* \* \*

ճամփիս մի նուրբ թթենի ինձ ձեռքով է անում միշտ,  
Ինձ կանչում է անդադար գյուղի համեստ մի խրճիթ:

Մի աղբյուր է կարկաչում, խոխոջում է մի առու,  
Մի ողջ անտառ է խշշում իմ հուշերի աշխարհում:

Կիսականաչ մի կածան ձգվում, մեր բակն է մտնում,  
Կարոտի պես հալվում է ու կորցրածը չի գտնում:

Յազար սարով ու ձորով, թառած հովի թեւերին,  
Մորս շունչը գալիս է, շաղախվում իմ երգերին:

Իմ երգերի տողերում՝ պապենական մի աշխարհ,  
Քայլում եմ քո գրկի մեջ, կյանքի հեքիաթ ճանապարհ:

1971 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ես մեր գյուղն եմ եկել կրկին,  
Թրթռում է նրա գրկին  
Սիրտս հուզալից,  
Ծնողներս չեն համբերել,  
Դուրս են եկել իին կալը մեր,  
Շրջապատել ինձ:

Ողջունում են ինձ թթենին,  
Բուրունավետ փշատենին՝  
Տնկած իմ ձեռքով...  
Շորորվիւմ են մեր պարտեզում  
Բարդիները ձիգ ու նազուն՝  
Մանկության երգով:

Շոգ է իիմա, ամռան տապ է,  
Թութքն է հասել, թթաթափ է,  
Ի՞նչ լավ է, եկա,  
Կարոտներ են կաթում ծառից,  
Ծնողներիս ամեն բառից,  
Ծիծաղից անգամ:

Այստեղ գետն է մեր կարկաչում,  
Յեռվից հորիզոնն է կանչում՝

Օջախը իմ նոր...  
 Կարոտում ենք իրար անվերջ,  
 Մեր հին ու նոր օջախի մեջ  
 Որդի ու ծնող:

1969 թ., գ. Ակմաղբյուր

### ՄԱՅՐ ԻՍ ԱՆՈՒԾ

Ոտքդ զգույշ շարժիր, մայրիկ,  
 Կընկնես հանկարծ,  
 Ե՞րբ ձյում իջավ գանգուրներիդ,  
 Ե՞րբ ծերացար:  
 Երե՞կ չէր այն, երբ ինձ առած  
 Թեւերին քո,  
 Երգում էիր բերկրանք դառած,  
 Զահել հոգով:  
 Ժպիտներդ ո՞ւր գնացին,  
 Թեւեցին ո՞ւր,  
 Ասա, մայրիկ, ո՞ւր մնացին  
 Երգերդ հուր,  
 Նահատակված որդի՞ն տարավ,  
 Թե՞ եղբայրդ,  
 Կյանքի ծանրությո՞ւնը առավ,  
 Պանդուխտ հայրդ.  
 Իմ դպրոցի ճամփի՞ն թողիր,  
 Թե՞ իմ որդու,  
 Ախ, ո՞նց էիր մեզ փայփայուն  
 Սիրով հորդուն:  
 Ոտքդ զգույշ շարժիր, կընկնես,  
 Մայր իմ անուշ,  
 Սիրտս էլ կտամ, միայն փրկեմ  
 Արեւդ անուժ:

1969 թ., գ. Ակմաղբյուր

Հ Ա Խ Ա Ռ Ի Ռ Ո Ւ Թ Ա Գ Հ

## ՄՈՐՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մայրս՝ Արեւիատ Խամյանը, ծնվել է 1898 թ.,  
կյանքից հեռացել 1970թ. մայիսի 24-ին

1

Ին մանկությունը ես չեմ կորցրել,  
Նա ինձ կանչում էր հեռվից ամեն օր,  
Ես գնում էի գյուղն իմ հայրենի  
Եվ գտնում նրան գրկի մեջ իմ մոր:

Մայրիկս չկա, մարել է արդեն,  
Որբացել է իմ հայրական տունը,  
Ու երազ դարձած մորս գրկի հետ  
Կորցրել եմ նաեւ իմ մանկությունը:

1971 թ., 22 մայիսի,

2

Գյուղ եմ գնում, մայրս չկա,  
Էլ ո՞վ ծեռքով կանի կալից,  
Ո՞վ կարոտած համբույր կտա  
Հեռվից եկած «քաղցր բալին»:

Էլ ո՞ւմ թխած թոնրահացից  
Պիտի զգամ բույրը նրա,  
Էլ ո՞վ պիտի լուսաբացին  
Զեռքը դնի այտիս վրա:

Էլ ո՞ւմ պիտի շրջապատեն  
Մեր հարեւան մանուկները,  
Նրանց էլ ո՞վ կբաժանի  
Որդու տարած նվերները:

Որպես մի թանկ սիրտուզելիք,  
Ո՞վ չորացած ավլուկ կեփի,  
Ընկերներիս էլ ո՞վ կասի,  
Չղիպչեք իմ որդու քեֆին:

Եթե ուզեմ վերադառնալ,  
Էլ ո՞վ կասի՝ քիչ էլ մնա,  
Ո՞վ կարոտից կդալկանա,  
Էլ ո՞ւմ գրկում կմանկանամ:

1971 թ., 23 մայիսի

3

Օրորոց իմ, օրորոց իմ,  
Դու դատարկված մի աշխարհ,  
Անեացած իմ մոր սրտից  
Դու մեզ հասած մի նշխար:  
Ինչպես թափուր թռչունի բույն,  
Ինձ նայում ես անտարբեր,  
Մոռացե՞լ ես մորն իմ անքուն  
Եվ ճիշերս անհամբեր:  
Օրորոց իմ, օրորոց իմ,  
Ընկերն էիր դու իմ մոր,  
Ա՞խ ո՞ւր գնաց, ա՞խ, ո՞ւր թեւեց  
Նրա ձայնը մեղմօրոր:

Դու չե՞ս կարող, օրորոց իմ,  
Մանուկ դարձնել ինձ կրկին,  
Ա՞խ, չե՞ս կարող դու ես բերել  
Իմ մայր մտած մայրիկին...

1971 թ., 24 մայիսի

Ես գյուղ եմ եկել, բարձրացել տանիք,  
Եվ լուր շրջում եմ մորս հետքերով,  
Մի իր է ժպտում ամեն անկյունից՝  
Շունչ առած նրա քնքուշ ձեռքերով:

Խոտի մի կույտ է ինձ ձեռքով անում,  
Ես մոտենում եմ ու բացում զգույշ,  
Դանկարծ հուշերիս ծով գիրկն է տանում  
Վիզը ճաքճած, խունացած մի կուժ:

Կժում չոր թութ է ու մեկ էլ ընկույզ,  
Պահել է թռռան հարսանքի համար,  
Ասում էր՝ պիտի պարեմ մինչեւ լույս,  
Թութն ու ընկույզը բաժանեմ մարդկանց:

Կուժն այդ կպահեմ մեր տանիքի տակ,  
Կբացեմ միայն որդուս հարսանքին,  
Որ ամբողջ գիշեր ընկեր, բարեկամ,  
Զգան բուրմունքն ու շունչն իմ մայրիկի:

1971 թ., 25 մայիսի

5

Ես որոնում եմ, որոնում եմ քեզ,  
Սակայն դու չկաս մայրերի շարքում,  
Սիրտս լցվում է ամպոտ օրվա պես  
Եվ արտասվում եմ բոլորից թաքուն:

Թոռդ հարցնում է՝ տատիկս ո՞ւր է,  
Ասում եմ՝ գմաց, որ արեւ բերի...  
Ես քեզ դարձնում եմ հեքիաթի հերոս,  
Որ նա հավատա, որ նա համբերի:

Ես իմ հորինած հեքիաթի մեջ էլ  
Որոնում եմ քեզ, սակայն դու չկաս,  
Իսկ փոքրիկ թոռդ սպասում է դեռ,  
Որ արեւն ուսիդ շուտով պիտի գաս:

1971 թ., 26 մայիսի

6

Առաջին անգամ առանց մայրիկիս  
Նստել ենք բակի մեծ թթենու տակ,  
Խորհրդավոր են թվում բոլորիս  
Ե՛վ մեր թթենին, Ե՛ւ հունիսը տաք:

Դարյուր տարեկան մեր ինքնաեռը  
Շարականների կծիկն է բացել,  
Այնպես մոլոր է կախել թեւերը,  
Երգի հետ կարծես ուզում է լացել:

Հ Ա Խ Ա Տ Ի Ւ Թ Ա Գ Հ

Թախծի շվաք կա սեղանի վրա,  
Բաժակներն էլ են տիսուր հառաջում,  
Ու թվում է, թե սիրտ ունեն նրանք,  
Թվում է իրենց տիրոջն են կանչում:  
Ունքերն իրար է բերել թթենին,  
Մի տիսրություն է ողջ բակին տիրել,  
Այս, ինչքա՞ն լավ եք դուք ինձ հասկանում,  
Մորս քնքշանքին կարոտած իրեր:

1971 թ., 27 մայիսի,

7

Դիմա երազ ես դարձել, մայրիկ ջան,  
Երազիս մեջ ես միայն երեւում,  
Երազիս մեջ էլ առաջվա նման,  
Իմ ճանապարհին դու ես արեւում:

Գալիս ես, կանգնում իմ սնարի մոտ,  
Շոյում մազերս քնքույշ, կարոտած,  
Ապա ծածկում ես քնած թռոներիդ,  
Որ բաց չլինեն, չմրտեն հանկարծ:

Լցնում ես դարձյալ իմ սիրտն ու տունը,  
Քո խորհուրդներով խելոք ու բարի,  
Գնալիս դուռն էլ այնպես ես փակում,  
Որ չխանգարվի թռոներիդ քունը:

Դիմա երազ ես դարձել, մայրիկ ջան,  
Երազիս մեջ ես միայն երեւում,  
Երազիս մեջ էլ առաջվա նման,  
Իմ ճանապարհին դու ես արեւում:

1971 թ., 28 մայիսի

## 8

Մայրամուտի շողերի հետ  
 Մայրս կգար դաշտից,  
 Յոգնած կգար, հաց կվերցներ  
 Մեր խունացած տաշտից,  
 Կտաքացներ օջախի մեջ,  
 Զուր կցաներ վրան,  
 Մեզ կթվար, թե ջոի տեղ  
 Մեղը է, հյութ է նռան:  
 Դամեստ սեղան նա կբացեր,  
 Կնստեինք շուրջը,  
 Մեզ համար մի համեմունք էր  
 Նրա անուշ շունչը:  
 Մեկի բաժնից համտես կաներ,  
 Կասեր. «Քաղցր է, բալե՞ս»,  
 Մեկին կասեր. «Ես չեմ ուզում,  
 Ա՞ռ, բաժինը իմ քեզ»:  
 Այդպես, ահա, բաժին-բաժին  
 Կյանքը տվեց նա մեզ,  
 Եվ ապրում է մեր սրտերում  
 Անշեշ կրակի պես:

1971 թ., 29 մայիսի  
 գ. Ակնաղբյուր

Հ Ա Խ Ա Տ Ի Ր Ա Գ Հ

## ԽՈՍՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐՏՍ ԵՐԳՈՒՄ Է...

ԿԱՂՉԱ՝ ՍՊՐՈՒԼԻՈՒ

Սիրտս երգում է, երբ դու ինձ մոտ ես,  
Ամեն ժպիտդ մի առավոտ է,  
Երբ դու ինձ մոտ ես, ճանփաս աստղոտ է,  
Թեւերս՝ հզոր, ուժս՝ անսպառ:

Յոգուս տենչերը դու ես փայփայում,  
Երգիս կրակը դու ես վառ պահում,  
Ես քեզանով եմ շնչում աշխարհում,  
Դու՝ ին թիկունքին բուրավետ մի սար:

Դու ես լուսաստղը իմ երազանքի,  
Դու հուր երակն ես իմ սրտի, ջանքի,  
Դու ոսկե սյունն ես իմ տան, իմ կյանքի,  
Իմ առաջին սեր, երազ իմ պայծառ:

1970 թ., Բաքու

\* \* \*

Տարիների հետ հասունանում է  
մեր սերը, անգին,  
Տարիների հետ դու քաղցրանում ես  
կրկնակի անգամ,  
Տարիների հետ դու եւ անցյալն ես  
դառնում իմ կյանքի,

Հ Ա Խ Ա Ռ Ի Ռ Ո Գ Հ

Եվ ծիածանում իմ բախտի ներկան  
ու իմ ապագան:  
Օրերը մեզնից շատ բան են տարել  
եւ պիտի տանեն,  
Անցած օրերում շատ բան ենք կորցրել,  
որ պիտի գտնենք,  
Մանուշակներ ենք ցանել մեր ճամփին  
եւ ցանելու ենք,  
Գալիքի դռնով ծաղկեփնջերով  
մենք պիտի մտնենք:  
Սիրո տաճարում մենք պիտի շրջենք  
հպարտ հայացքով,  
Սիրո դիցուհին պիտի համբուրի  
ճակատները մեր,  
Տուր ձեռքդ, անգին, թող շարունակենք  
մեր ուղին երգով,  
Թող սերունդները սովորեն մեզնից  
սիրել ու սիրվել:

1970 թ., Բաքու

\* \* \*

Սեր հարսանիքին նվագ չինչեց,  
Ոչ քավոր եղավ, ոչ էլ խնամի,  
Առվի կարկաչ էր, թթենու խշշոց  
Սեր բողբոջ սիրո հանդիպման ժամին:  
Սեզ ծաղիկները կանգնեցին վկա,  
Սեզ օրինեց բարդին, ինվը համբուրեց,  
Օժանելիքի փոխարեն այնժամ

Հ Ա Խ Ա Ռ Ի Ռ Ո Գ Հ

Մեր ճամփին վայրի մասրենին բուրեց:  
 Թող օրհնվի այգին, թող օրհնվի առում,  
 Թող դալար մնան թթենին, բարդին,  
 Որ պսակեցին մեզ տասնութ տարում,  
 Իրենց տաք շունչը տալով մեր կյանքին:

1970 թ., Բաքու

\* \* \*

Ես չեմ երազել գանձերի մասին  
 Եվ չեմ իմացել, թե ինչ է փառքը,  
 Միայն ձգտել եմ լինենք միասին  
 Ու մեկտեղ անցնենք մեր ամբողջ կյանքը:  
 Սիրել ենք իրար, իրար հասկացել,  
 Դժվարին պահին դարձել ուժ ու կանք,  
 Միասին չարից միշտ էլ հեռացել,  
 Լավին դարձել ենք ընկեր, բարեկամ:  
 Գանձերի գանձ է մեր սերը հիմա,  
 Մեր երջանկության ակունքն է հավետ,  
 Մեր բախտի աստղը կժպտա միշտ մեզ,  
 Միայն թե հավերժ լինենք իրար հետ:

1970 թ., Բաքու

\* \* \*

Արեւը սարը ելավ,  
 Նրա մեջ ինձ ժպտացիր,  
 Առուն նոր երգն իր բերավ,  
 Ասես դու շշնջացիր:  
 Սարերից փչող հովում

Հ Ա Խ Ա Ռ Ի Ռ Ո Վ Զ Հ

Եկար, ինձ համբուրեցիր,  
Վարդերի ծփող ծովում  
Իմ ճամփին դու բուրեցիր:  
Իմ կյանքի ծաղկումնալից  
Գարունը ինքդ դարձար,  
Աշխարհը բացվեց քեզնով  
Ու սիրով քո քաղցրացավ:

1970 թ., Բաքու

\* \* \*

Սարեսար ընկած ես քեզ չեմ փնտրել  
Ու հող չեմ խնդրել ես ամեն տնից,  
Բնությունն է քեզ ինձ համար ընտրել,  
Իմ սիրտն ես մտել դու միանգամից:  
Դու վառ ես պահել օջախը իմ տան,  
Աստղերին հասցրել ծուխն այդ օջախի,  
Թե անմնացորդ իմ շունչն էլ քեզ տամ,  
Դարձյալ չեմ նվա եւ այս չեմ քաշի:  
Քեզ որոնելիս գանձեր չեմ բերել,  
Ճավատարմության ճառ չեմ ասել ես,  
Առաջին սիրո իմ երգն եմ գրել,  
Դրել սրտիս մեջ ու նվիրել քեզ:

1970 թ., Բաքու

\* \* \*

Երբ քայլում ես դու, ոտնահետքերդ  
Մայիսյան վարդի թերթեր են թվում,  
Երբ նազում ես դու, ճերմակ ձեռքերդ  
Կարապի ճերմակ թեւեր են թվում:  
Թվում է՝ ձայնդ կարկաչ է առվի,  
Դայացքդ՝ շոյանք, ժպիտդ՝ կրակ,  
Շունչդ թվում է բույրն է հարավի,  
Իսկ ամեն բառդ՝ տավկիդի նվագ:  
Թե ինչ է սերը - վիճում են անվերջ,  
Ու մի համոզիչ պատախան չկա,  
Ողջ աշխարհը տես քո սիրածի մեջ,  
Իսկական սերը հենց դա է, որ կա:

1970 թ., Բարու

\* \* \*

Իմ որոնածը դու ես աշխարհում,  
Քո մեջ եմ տեսնում իմ երազածին,  
Ոչ ոք, ոչ ոք իմ սրտի ծալքերում  
Դեռ ոտք չի դրել քեզանից բացի:  
Գեղեցկությունը քեզնով են չափում,  
Արեւի փայլը՝ ժպիտներիդ հետ,  
Իմ աստեղնալից հոգու պարտեզում  
Ծիր-Կաթինի պես դու ես թողել հետք:  
Ես երազների մի աշխարհ ունեմ,  
Ինքս թագավոր ու սահմանապահ,  
Միակ թագուհին հավիտյան դու ես,  
Առանց քեզ ես կյանք չունեմ ոչ մի պահ,

1970 թ., Բարու

\* \* \*

Եկել եմ ես հեռուներից,  
 Կարոտներս օվկիան արած,  
 Առաջինը դու ես նորից  
 Նետվում գիրկս թեատարած:  
 Դու ժպտում ես արցունքն աչքիդ  
 Ու փայփայում ինձ հրճվանքով,  
 Ին անունը քո շրթերին  
 Թրթռում է ուրիշ հանգով:  
 Քո կարոտը հույս է ու տես,  
 Որ բխում է սրտիդ խորքից,  
 Քո մի կաթիլ արցունքի մեջ  
 Ես միշտ քեզ եմ տեսնում եւ ինձ:  
 Տեսնում եմ իմ բախտի ուղին  
 Եվ քո շնչով վառվող լույսեր,  
 Դու աշխարհը ինձ հետ կապող,  
 Միակ իմ սեր:

1970 թ., Բաքու

\* \* \*

Քուն թե արթուն,  
 Ին արյան մեջ հոսում ես դու,  
 Ինչքան էլ որ հեռու լինես,  
 Խոհերիս հետ խոսում ես դու:  
 Ին տողերից նայում ես ինձ  
 Ու շնչում բառերիս հետ,  
 Ինձ թեւելու ուժ ես տալիս

Ու միշտ էլ ինձ մղում դեա վեր:  
 Իմ կրծքի տակ սիրո անմար  
 Կրակները դու ես վառել  
 Եվ դարձել իմ կյանքի համար  
 Լուսե երազ ու ջերմ արեւ:

1970 թ., Բաքու

\* \* \*

Սերը երեխ այն է, սիրելին,  
 Որ չեմ կարենում առանց քեզ մնալ,  
 Որ տխրությունը օվկիան է դառնում,  
 Երբ ցանկանում ես հեռուներ գնալ:

Սերը երեխ այն է, սիրելին,  
 Որ երբ տանը չես, կորցնում եմ ես ինձ,  
 Առանց քեզ խորթ են դառնում իրերը,  
 Ամեն ինչ ասես փոխվում է նորից:

Սերը երեխ այն է, սիրելին,  
 Որ քո կարոտից մանուկ եմ դառնում,  
 Որ թեկուզ կյանքում ես եմ հովանիդ,  
 Սակայն առանց քեզ  
 Ապրել ու շնչել չեմ կարողանում:

1970 թ., Բաքու

\* \* \*

Սարերը նույնն են, նույնն է կանաչը,  
Նույնն են գետերը, նրանց կարկաչը,  
Նույնն է դաշտերի ալվան կակաչը,  
Սակայն նույնը չէ սիրտըս առանց քեզ:

Իմ գլխի վերեւ նույն երկնի մովն է,  
Իմ դիմաց անվերջ շառաչող ծովն է,  
Սարերից փչող շնկշնկան հովն է,  
Սակայն նույնը չէ սիրտըս առանց քեզ:

Նույնն են աստղերը, ցողերի լացը,  
Նույն երեկոն է, նույն աղն ու հացը,  
Պայծառ լուսաստղը եւ լուսաբացը,  
Սակայն նույնը չէ սիրտըս առանց քեզ:

Այս ի՞նչ կրակ ես իմ հոգում վառել,-  
Ինչպե՞ս ես ուշքս ու միտքս տարել,  
Ասա, որու ինձ հետ այս ի՞նչ ես արել,  
Որ կյանքս իմաստ չունի առանց քեզ:

1969 թ., գ. Բեգում-Սարով

### ԴԱՇԻՆՔ

Երկուսով ենք ծառի տակ,  
Վկան երգն է կաքավի,  
Խոսք ենք բացել մենք սրտանց,  
Որ մեկ-մեկու չենք դավի:

**Հ Ա Խ Ա Տ Ա Ր Ի Ռ Ա Ր Գ Հ**

Դու ժպտում ես ու նազում,  
Ծաղիկներն են մեր վկան,  
Նրանք մեր խոսքն են ասում,  
Որ մի շունչ ենք ու մի կանք:  
Առուն պոչը ոլորել  
Իր օրինանքն է մեզ բերում,  
Յովը եկել հելիհել,  
Մեր ճակատն է համբուրում:  
Իջնում է լուռ երեկոն,  
Աստղերը շող են մաղում,  
Նրանք էլ են մեր սիրո  
Վկան դարձել հմայուն:  
Արի, մնանք, դու իմ լոր,  
Թող արեգակն էլ ծագի  
Եվ կնիքով իր կլոր  
Մեր դաշինքը հաստատի:

1969 թ., գ. Ակնաղբյուր

**ՍԻՐՈ ՊԱՏԱՍԽԱՆ**

Դու ինձ մի անգամ բարի ժպտացիր,  
Ես ծով բարություն դարձա քո ճամփին,  
Ինձ համար ճրագ դարձար, շողացիր,  
Քեզ համար դարձա գարնան հուր-արփի:

Շրթերիս իջար գարնան ցողի պես,  
Քեզ համար հորդուն մի աղբյուր դարձա,  
Սրտիդ մի փոքրիկ անկյունն ինձ տվիր,  
Քեզ համար դարձա տիեզերք անծայր:

Հ Ա Խ Ա Ռ Ի Ռ Ա Գ Հ

Քո մի շրջունը ես ծփանք դարձրի,  
Կարկաչդ դարձրի գետերի շառաչ,  
Թախիծդ սրտիս միջով անցկացրի,  
Դարձրի սեփական կսկիծ ու հառաչ:

Սերը այդպես եմ հասկացել կյանքում,  
Սիրո հնոցում կոփվել եմ այդպես,  
Սերը ժլատին չի ներում երբեք,  
Երնեկ, բոլորն էլ սիրեին ինձ պես:

1970 թ., Յաղորութ

ԻՄ ԽՈՐԵՐԻ ՄԵԶ

Իմ խոհերի մեջ, իմ վառ հուշերում,  
Մի աղջիկ է նա թխաչ՝ թխահեր,  
Օրերն ինձ անթիվ հոգսեր են բերում,  
Հոգսերիս միջից նա է ժպտում դեռ:

Իմ խոհերի մեջ, իմ հուշերում վառ,  
Նա իր կուժն առած աղբյուրն է զնում,  
Իսկ ես կարոտով, հույզերով վարար,  
Ծանփի եզերքին նրան են մնում:

Գալիս է անցնում թեթեւ ժպտալով,  
Ու թեթեւացած ես տուն եմ դառնում,  
Իմ խնդությունը շռայլ շաղ տալով,  
Թեւավորվում են ու հասակ առնում:

Նա մայր է աղոքեն, մայր է կաթողին,  
Ուրիշ երազ է հիմա ինձ բերում,  
Բայց նույն թխաչյա աղջիկն է ելի  
Ին խոհերի մեջ եւ ին հուշերում:

1969 թ., Բաքու

### ԵՐԲ ԴՈՒ ՏԱՆԸ ՉԵՍ

Երբ դու չես լինում, մեր տան իրերը  
Ամեն ակնթարթ խոսում են ինձ հետ,  
Խոսում են մեղմիկ, քո քաղցր լեզվով  
Եվ հորինում են կարոտի մի երգ:  
Թոշնում են ասես նրանք առանց քեզ,  
Ասես կարդում են անհանգիստ հոգիս,  
Ու նկարիդ հետ երբ խոսում եմ ես,  
Կարծես թե նրանք հասկանում են ինձ:  
Երբ գալիս ես դու, սիրտս հրճվում է,  
Հրճվում են նաեւ իրերը բոլոր,  
Նրանց ջերմ երգը զնզում, հնչում է,  
Գտնում է իրեն ին սիրտը մոլոր:  
Այս ի՞նչ փայփայանք, այս ի՞նչ ուժ ունես,  
Որ իրերն անգամ կարոտում են քեզ,  
Գուցե հայտնել ես նրանց մտերիմ,  
Որ դու պարզապես էությունն ես ին:

1969 թ., Բաքու

Հ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ

### ԹԵ ՀՆԱՐ ԼԻՆԵՐ

Թե հնար լիներ, քեզ կսպասեի  
Ես հազար տարի,  
Միայն թե գայիր եւ ինձ վառեիր  
Քո հրայրքներով, հայացքով բարի:  
Ես պատրաստ էի իմ ձգտումները,  
Իմ երազները քո ճամփին ցանել,  
Սակայն գնացիր, ասա, ի՞նչ անեմ:

Երբ քայլում էիր, ասես ելնում էր  
Գարնան արեւը,  
Քո ժպիտներով սիրտս եռում էր,  
Ինձ թեւ էր տալիս քո մի բարեւը:  
Ինչո՞ւ գնացիր, ինչո՞ւ քո տված  
Բերկրանքը առար,  
Գիտե՞ս, քո վառած կրակի հետ եւ  
Իմ սիրտը տարար:

Յաճախ խոհերս հելիհեւ թռչում  
Ու փարվում են քեզ.  
Յոգուս խորքերում քո ձայնն է ինչում,  
Քաղցր երգի պես:  
Արյոք, հիշո՞ւմ ես դու ինձ,  
Զգիտե՞մ,  
Սակայն իմացիր, ամեն ակնթարթ  
Մտքով քեզ հետ եմ:

Երբ ձյուն է իջնում,  
Ծածկում դաշտ ու սար,

Հ Ա Խ Ա Ռ Ի Ռ Ո Վ Հ Ա Ր Գ Հ


Խորհում եմ, իանկարծ չլինի՝ մրսես,  
իսկ երբ օպողունն է բացվում ու ժպտում,  
խորհում եմ անվերջ՝ լիներ մի հնար  
Ողջ ծաղիկները նվիրեի քեզ:

Քեզ չեմ մոռանում  
Ոչ մի ակնթարթ՝  
Արեւը ժպտա, թե ամպը չոքի...  
Մի անմար կրակ գցել ես սիրտս,  
Վառել իմ հոգին,  
Յեռացել ինձնից:  
Սակայն հավատա, իմ սիրո երգին  
Դարձյալ դու ինքդ ես պարզեւում հույզեր,  
Իմ առաջին սեր...

1969 թ., Բաքու



Ղեղուստալրագրող *Լիանա Աղամյանի* հետ



Գնամ երեսս լվանամ ծեզին  
Կերչի ջրերով,  
Եվ իմ պապերի հին սովորությամբ,  
Դավատով խորին ու միշտ բարեհույս,  
Ասեմ. «Բարի լույս»:  
Գիտեմ, ջրերի հորձանուտներից  
Դարագատներս խելոք ու արի,  
Կպատասխանեն.  
- Զեր լույսը բարի:

ՍՊԱՍՈՒՄ

## ԳՆԱՄ ՈՐՈՌԵՄ

Վեր կենամ գնամ,  
Գնամ որոնեն  
Իմ նահատակված  
Հարազատներին,  
Սեւ ծովի կապույտ ալիքների մեջ,  
Կերչի ափերին:  
Գնամ՝ մեր խաղաղ կյանքի լույսերը  
Հոգուս մեջ վառած,  
Կանաչ հույսերը  
Սրտիս մեջ առած...  
Գնամ երեսս լվանամ ծեզին  
Կերչի ջրերով,  
Եվ իմ պապերի հին սովորությամբ,  
Հավատով խորին ու միշտ բարեհույս,  
Ասեմ. «Բարի լույս»:  
Գիտեմ, ջրերի հորձանուտներից  
Հարազատներս խելոք ու արի,  
Կպատասխանեն.  
- Զեր լույսը բարի:

1974 թ., Պյատիգորսկ

## ԲԱՐՁՈՒՆՔԻ ՎՐԱ

Սեւ ծովի ափին, բարձունքի վրա,  
Անհայտ զինվորի արձանն է հառնում,  
Նրա հաղթ ձեռքին ոչ թե հրացան,  
Այլ հավերժական մի ջահ է վառվում:

**Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Դ Ա Ա**

Խոհերով լեցուն նայուն եմ նրան,  
Երազներս ինձ տանում են հեռուն,  
Քանի՞ վերք ուներ նա սրտի վրա,  
Ի՞նչ տենչեր էին հոգու մեջ եռում:  
Տեսմես գիտության ճամփո՞վ կօճար,  
Թե կընկերանար ոսկե արտերին,  
Նա հյո՞ւր կօճար աստղերին պայծառ,  
Թե երգ կընծայեր սիրող սրտերին:  
Ուր էլ որ գնար,  
Ինչ էլ որ դառնար,  
Պիտի հուր ցաներ ինչպես մի արեւ...  
Դրա համար էլ, զոհվելուց հետո,  
Նա հավերժական մի ջահ է դառել:

1974 թ., Պյատիգորսկ

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՓԱՌՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ**

Զահել զինվորի նկարի առաջ  
Ծերացած մի կին կանգնել էր տխուր,  
Նրա շրթերին դող կար ու հառաչ,  
Նրա աչքերում՝ մշուշված մի հուր:

Բոլոր մայրերի կարոտով տրտում  
Կրկին ու կրկին հոգիս վառեցի,  
Զինվորի ջահել հայացքն իմ սրտուն,  
Այդ սուրբ նոր առջեւ լուռ խոնարհվեցի:

1974 թ., Պյատիգորսկ

## ՄԵՎ ԾՈՎԻ ՎՐԱ

Զոհված նավաստիների հիշատակին

Նավդ քիչ կամաց վարիր, նավավա'ր,  
Թող ալիքների շուրջպարը դիտեմ,  
Նահատակների ժայթները վառ  
Ասես ջրերում ծփում են իմ դեմ:  
Անհայտ կորածներ ունեմ, նավավար,  
Անհայտ կորածներ, սակայն ոչ անհետք,  
Նրանց հետքերը այս ալիքներն են,  
Որ աշխարհներ են կապում իրար հետ:  
Նրանց հետքերը այս ալիքներն են,  
Որ ծփում են եւ կծփան անքուն,  
Թող եղբոր սրտով փայփայեմ նրանց,  
Կարոտի երգով վերադառնամ տուն:

1974 թ., Պյատիգորսկ

## ՀՈՒՅՍ

Նահատակված համազյուղացիներիս

Մեր լեռներից  
Մինչեւ Բեռլին  
Մրրիկներով դուք անցաք,  
Հողագնդի բախտով վառված  
Անմար աստղեր դուք դարձաք:

Ո՞վ իմանա, որ ծառի տակ,  
Որ սարում եք դուք ննջում,  
Ու ձեր մասին ինչ լեզվով է  
Երախտիքի խոսք ինչում...

**ԱՊԱՍԽԱՏՄ ԱՆՔ ԴԱՌ**

Թեկուզ թախծոտ տարիները  
Թեւին տվին ու անցամ,  
Թեկուզ եկել ու գյուղի մոտ  
Դարձել եք մի հուշարձան,  
Հաղթանակն է թեկուզ օծված  
Զեր արյունո՞վ, հավատո՞վ...  
Բայց էլի ձեր վերադարձին  
Սպասում ենք կարոտով:

1973 թ., գ. Ակնաղբյուր

**ՆԱՄԱԿ ՄՈՐԸ**

Մայրը իր որդուն սպասեց երկար,  
Անհուն կարոտի կրակով մարեց,  
Սպասում էր նա, որդին պիտի գար,  
Բայց որդին չեկավ, ճամփան երկարեց:  
Տարիներ անցան, մայրը հող դարձավ,  
Բայց մոր անունով նամակ եկավ գյուղ.  
«Կերչում կանգնեցվեց մի մոր հուշարձան,  
Ուր քանդակված է պատկերը որդուտ...»:  
Մայրը չկար, որ կարդային նրան,  
Սակայն գյուղացիք լուր հավաքվեցին,  
Նամակը տարան, մոր շիրմի վրա  
Արցունքի միջից տխուր կարդացին:  
Մոր գերեզմանից մի բուռ հող առան,  
Կերչ ուղարկեցին՝ հույզերով հորդուն,  
Սեւ ծովի ափին այդ հողը տարան  
Ցանեցին շիրմին սրբացած որդու:

1974 թ., Պյատիգորսկ



### ՊԱՊԻ ՅՈՒԾԱՐՁԱՆԸ

Զոհված պապի հուշարձանին  
Ծաղկեփունջ է դնում թոռը...  
Կյանքում պապին նա չի տեսել,  
Նրա մասին  
Իր տատից է միայն լսել:  
Սակայն ամեն-ամեն գարնան  
Այցելում է իր պապիկի հուշարձանին  
Ու զարդարում ծաղիկներով:  
Իսկ պապիկը կանգնած հպարտ,  
Հուշարձանի անխոս լեզվով,  
Իր թռանիկին հերոսության դաս է տալիս:

1974 թ., Պյատիգորսկ



Ս. Խանյանի նդրայրը՝  
Սուլթանը

\* \* \*

Եղբայրս զոհվեց Վոլգայի ափին,  
Մայրական սրտով արտասվեց Վոլգան,  
Հետո ծառս եղավ ուժով ահագին,  
Որ խաղաղ-խաղաղ այս օրերը գան:

Հիմա շրջում եմ Վոլգայի ափին,  
Զրերն են ինձ հետ մտերմիկ խոսում,  
Եղբորս մահով փոթորկված Վոլգան  
Կարծես թե սրտիս միջով է խոսում:

1974 թ., Վոլգոգրադ

### ԱԾԽԱՐԴԻ ԽԻՂԵԸ

Ահեղ մարտերից  
Տուն վերադարձավ  
Մեր քերի Ավոն,  
Գյուղը հառաչեց նրա քայլերից,  
Մեր քերի Ավոն՝ ինքը մի արեւ,  
Հավիտյան զրկված արեւի փայլից:

## Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Ռ Ա Ա

Ու կռվի մասին երբ խոսք է բացվում,  
Ցնցվում է տեղում մեր քերի Ավոն.

- Ես համոզված եմ,  
Որ չի կրկնվի կոհիվն ահավոր,  
Ել չի կրկնվի,- հաստատում է նա,-  
Ես իմ աչքերի լույսը տվել եմ  
Աշխարհի խղճին,  
Աշխարհի խիղճը էլ չի կուրանա...

1973 թ., Ստեփանակերտ

### Տ Ա Ս Ն Ո Ւ Թ Տ Ա Ր Ո Ւ Մ

Տասնութ տարում  
Տղան նոր է ժառանգում կյանքին...  
Սակայն տասնութ տարում, եղբա'յր,  
Քո ժայռը փոխվեց ցասման,  
Ու նետվեցիր մարտի:  
Տասնութ տարում  
Տաքանում են սիրո հրից,  
Իսկ դու, եղբա'յր, տաքացար լոկ  
Կռվի ահեղ կրակներից:  
Տասնութ տարում  
Սիրածին են  
Գրկում ջերմին,  
Սակայն երկու ձեռքդ պարզած,  
Քո արյունով փրկված հողին  
Դու փարվեցիր...

1974 թ., Պյատիգորսկ

**ԱՊԱՍԽԱՏՄ ԱՆՔ ԴԱՌ**

**ԿԱՆՉ**

Ին ավագ եղբայր, ին բարի եղբայր,  
Ի՞նչ է պատահել ջահել սրտիդ հետ,  
Ինչքա՞ն սպասենք, ինչո՞ւ չես գալիս,  
Ինչո՞ւ չես լսում աղաչանքը մեր:

Մայրիկը մարեց անունդ շրթին,  
Բայց վերջին շնչում պատվիրեց հույսով,  
Որ երբ տուն դառնաս դու հեռումերից,  
ճամփադ զարդարենք ծաղկով ու լույսով:

Ես էլ եմ հիմա վախենում, եղբա'յր,  
Դողում եմ սրտով, դողում եմ հոգով,  
Որ աչքս ճամփիդ ես էլ ծերանամ,  
Երբեք չտեսած ծերությունը քո:

1974 թ., Ստեփանակերտ

**ԻՆՉՈ՞Ւ ԶԵԿԱՐ**

*Մեծ հայրենականում զոհված քեռուս՝  
Արսեն Գրիգորյանի հիշատակին*

Խունացել են նամակներդ,  
Երազներդ չեն խունացել,  
Նա ուրիշի կին է այսօր,  
Սակայն սերդ չի հնացել:  
Ճամբուրվեցիք վերջին անգամ՝  
Ճրամեշտի ծանր պահին,  
Շշնջացիր.- սեր իմ, կգա՞մ...  
Սակայն ինչո՞ւ, ինչո՞ւ չեկար:  
Առաջնեկդ  
Քո անունն է հիմա կրում,

**Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Դ Ա Ռ**

Պատմել է քո կինը ջահել,  
Թե ինչու է  
Քո անունը պահում սիրով:  
Քեզնից մեծ է որդիդ արդեն,  
Եվ նա գիտե,  
Որ անիծված պատերազմը  
Քեզ խլելով մոր տենչերից,  
Խլել է եւ սրտի կեսը:  
Սրտի կեսը դու ես տարել,  
Ու ննջում է քեզ հետ, հեռվում,  
Սառ հողի տակ....  
Սպասել են նրանք երկա՞ր,  
Սակայն չեկար...  
Ինչո՞ւ չեկար...

1973 թ., գ. Ակմաղբյուր

**ՈՒՐ ԵՍ, ԻՍ ԸՆԿԵ՛Ր**  
Նահատակ ընկերմերիս

Դու ծաղկունք շատ էիր սիրում,  
Ծաղկել են արդեն ծառերը,  
Դու ծաղկունք շատ էիր սիրում,  
Ծաղկել են արդեն սարերը,  
Քեզ ջրի կարկաչն էր գերում,  
Ջրերն են էլի կարկաչում,  
Հայրենի ծաղկած հանդերը  
Կարոտով քեզ տուն են կանչում:

1973 թ., գ. Ակմաղբյուր

**ԱՊԱՍԻՆԴՄ ԱՆՔ ՌԱՌ**

**ԾԵՐԱՑԵԼ Է ԾՈՎԱԿԱԼԸ**

Ծերացել է ծովակալը,  
Յոզմնել է նա,  
Եկել է Սեւ ծովի ափին  
Յանգստանա:  
Ամեն քայլի  
Յիշում է նա  
Իր գորավար ընկերներին,  
Տարիները իր հողմահար...  
Անուններն է տալիս իր քաջ զինվորների,  
Որ եղել են,  
Յիմա չկան,  
Որ ննջում են ջրերի տակ,  
Դարձած անմեռ հուշ-հիշատակ,  
Որ ապրում են ծովակալի խոհերի մեջ՝  
Միշտ էլ ջահել,  
Ինչպես ջահեր...

1974 թ., Պյատիգորսկ

**ՊՈՒՐԱԿՈՒՄ**

Պուրակի ծայրին անհայտ զինվորի  
Արձանն է կանգնել ու նայում է լուռ.  
Նրա դեմ դիմաց, հինգթեւյան աստղից  
Բոցկլտում է մի հավերժական հուր:

Զույգերը խոնարհ գալիս են հերթով  
Ու կանգնում մի պահ դիմացն արձանի,  
Եվ ամեն մեկը ծգտում է այդտեղ  
Իր երախտիքի շողերը ցանի:

**Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Դ Ա Ա**

Մայիս է կրկին, գարունն է բուրում,  
Զահել զույգեր են անցնում պուրակով,  
Եվ սիրո ճամփին ասես ջերմանում  
Անհայտ զինվորի սրտի կրակով:

1974 թ., Կիսլովոդսկ

**Ե Ր Ա Յ Ր Ա Կ Ա Ն Գ Ե Ր Ե Զ Մ Ա Ն Ո Ց**

Եղբայրական գերեզմանոց,  
Քեզ այցի եմ Եկել կրկին,  
Եկել, առել մի բուռ սեւ հող  
Ու հաշվում եմ հատիկները...  
Ամեն հատիկ ինձ թվում է  
Մարած մի սիրտ,  
Որ, ուր որ է, լեզու առած պիտի խոսի,  
Պիտի ճչա,  
Որ խելքի գան մարդիկ մոլոր,  
Զգոն լինեն մարդիկ բոլոր,  
Որ ոչ մի տեղ էլ չլինեն  
Պատերազմի կրակ ու բոց,  
Ոչ մի հողում էլ չստղեծվի  
Եղբայրական գերեզմանոց:

1974 թ., Պյատիգորսկ

## ՀԱՐՑՄՈՒՆՔ

Մարտիրոս պապը մարմարյա քարին  
Գրուն էր զոհված որդու անունը,  
Սոտեցավ ծոռը թռվողուն ու ժիր  
Եվ հարցրեց,- պապիկ, այդ ի՞նչ ես անում:  
-Պապիդ անունն եմ գրում, բալիկս:  
-Պապիկս դու ես, այդ ի՞նչ ես ասում:  
-Բալաս, հայրիկն եմ ես քո պապիկի,  
Պապիկիդ տարան ջահել հասակում:  
-Ո՞վ տարավ, պապիկ, եւ ինչո՞ւ տարավ,-  
Հարցրեց ծոռնիկը խոր ափսոսանքով:  
-Չար պատերազմը տարավ, բալա ջան,-  
Ծննջաց պապը՝ աչքերն արցունքոտ:

1973 թ., գ. Ակնաղբյուր

## ՈՐԴԵԿՈՐՈՒՅԹ ՄԱՅՐԸ

Մայր է բոլոր մայրերի պես,  
Ինչ չհասցրեց տալ իր սիրած  
Որդիներին  
Ու թոռներին,  
Իր սրտի հետ,  
Բաժանում է ողջ աշխարհին,  
Որ աշխարհը  
Զգա կրվի թողած վերքը,  
Որ զորանան ու թեւածեն  
Խաղաղության շունչն ու երգը:

1973 թ., գ. Ակնաղբյուր

## ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ԴԵՌ

Այցելեցի մորս շիրմին,  
Մորս՝ սրտիս կարոտն անմեռ,  
Ասի. մայրիկ, որդիդ չեկավ,  
Սպասում ենք դեռ:

Խոնարհվեցի հորս շիրմին,  
Յորս՝ սրտիս այունն աներեր,  
Ասի՝ հայրիկ, որդիդ չեկավ,  
Սպասում ենք դեռ:

Լուր մոտեցա քրոջս շիրմին,  
Քրոջս՝ հոգուս լույսը հուրիեր,  
Ասի՝ քույրիկ, եղբայրդ չեկավ,  
Սպասում ենք դեռ:

Ու մոտեցա պապիս շիրմին,  
Տատիս շիրմին՝ սրբապատկեր,  
Ասի՝ ձեր քաջ թոռը չեկավ,  
Սպասում ենք դեռ:

Մենակ էի, մեկը չեղավ,  
Գար, արցունքս սրտանց սրբեր,  
Ասեր՝ եղբայր, մենք էլ քեզ հետ  
Սպասում ենք դեռ:

1975 թ., գ. Ակմաղբյուր

ԶՐՈՒՅՑ ՄՐՏԻՍ ՀԵՏ

\* \* \*

ԽԵՆԹԱՑԵԼ է սիրտս կարծես,  
Առաջվա պես չի բարախում,  
Մերթ զարկում է ուժգին այնպե՞ս,  
Մերթ էլ հոգնած թեւը կախում:

- Սիրտ իմ, ասա՝,  
Ի՞նչ մեծ գործ ես դու կատարել,  
Ի՞նչ մեծ բեռ ես կյանքում տարել,  
Ինչքա՞ն ես դու երկրին օգնել...  
Զո՞ւր ես հոգնել:

Ե՞կ ծուռ նստենք, շիտակ խոսենք,  
Ինքներս մեզ նորից հարցնենք,  
Քանի՞ կիսատ գործեր կան դեռ,  
Քանի՞ բարձունք կա մեր առջև:  
Արի՛, սիրտ իմ,  
Ոչ թե հանգիստ ահելանանք,  
Այլ պայքարում ջահելանանք:

\* \* \*

Իզուր, իզուր ես չարանում,  
Դու վատ լինել չես կարող, չէ՝,  
Վաստակել ես բարի անուն,  
Քո էջերից վատը ջնջել:  
Քեզ կոչում է տրված, իմ սիրտ,  
Որ միշտ փայլես քո մաքրությամբ,  
Որ չարությամբ քեզ խոցողին  
Պատժես միայն քո բարությամբ:

**ԱՊԱՍՆՈՒՄ ԱՆՔ ԴԱՌ**

**ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉԸ**

Ես հասակ եմ առել մեր հին,  
Փոքրիկ գյուղում...

Ուսուցիչս բնությունն է եղել միայն.

Երկինքը պարզ

Ու աստղալից,

Զրերն անուշ,

Գետերը հորդ,

Ծաղիկները նուրբ, նրբագեղ,

Բարդիները վեհ, սլացիկ,

Սարերը սեզ, երկնագնա...

Դրա համար

Ես նման եմ մայր բնության,

Սիրտս նուրբ է, ինչպես ծաղիկ,

Երգս հորդ է,

Ոնց անանուն գետերը մեր,

Զգտումներս վերսլացիկ,

Ոնց մեր դալար բարդիները,

Հոգիս լայն է ու աստղալից,

Ոնց երկինքը փոքրիկ գյուղիս:

Բնություն եմ ողջ էությանը,

Ոտից գլուխ

Բնություն եմ...

1973 թ., գ. Ակնաղբյուր

**ԻՄ ՅԻՆ ՅԱՅՐԵՆԻՔ**

Քո մասին ինչքան երգեր եմ գրում,  
Խոհերով սիրտս լցվում է կրկին,  
Պայծառ տենչերս դու ես օրորում,  
Իմ հին հայրենիք:

## Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Ռ Ա Ա

Ամեն օր քեզ հետ զրուցում եմ ես  
Եվ իմաստնանում, քեզնից թեւ առած,  
Ինձ փայփայում ես հարազատ մոր պես  
Ու հոր պես ասում. միշտ նայի՞ր առաջ:

Երդումներով չեմ ես քեզ հորդորել,  
Բարիք եմ քամել քարից ու հողից,  
Ճերոսմերիդ հետ գետեր եմ սանձել  
Ու միշտ ջերմացել օջախիդ պողից:

Ինչքան գերում ես դու ողջ աշխարհին,  
Հարստանում եմ այնքան հույզերով,  
Աստղեր ես վառում իմ ճանապարհին,  
Դու ես զարդարում ուղիս լույսերով:

Դրա համար էլ երգս քո երգն է՝  
Ձերմացած սրտիդ անմար կրակով,  
Թեւաբախումս օրերիդ հելքն է,  
Երջանկությունս՝ ժպիտները քո:

1974 թ., Երեւան

### ԱՌԱՎՈՏ ԻՄ

Առավո՛տս,  
Դու բացվում ես՝  
Կոպերիդ տակ  
Բարի մաղթանք,  
Հոգուդ խորքում՝

**ԱՊԱՍԽԱՏՄ ԱՆՔ ԴԱՌ**

Մոր քնքշանքներ,  
իսկ կոծքիդ տակ՝  
Երանգ-Երանց  
Անրջանքներ...

Ողջունում ես  
Բարեկամի  
Բարի լույսով,  
Բարի հույսով,  
Թեւավորող  
Երգ ու հույզով,  
Կարոտներով  
Սիրած մարդու...

Քո հայացքից ջերմանում է  
Արեւներով լեցուն հոգիս,  
Եվ տենչում եմ  
Քո միջօրեն...  
Տենչում՝ քեզ պես  
Լույս առաքել աշխարհներին  
Ու մայրամուտ  
Ապրել քեզ պես:

1973 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Բարեկամներ, բարու ճամփան  
Ծաղկով զուգեք,  
Ոչ նախանձով,  
Բարուն միշտ էլ դիմավորեք  
Աղ ու հացով:

**Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Դ Ա Ռ**

Որտեղ կանաչ ծիլ եք տեսնում,  
Փայփայեցեք,  
Որտեղ փարթամ շիվ եք տեսնում,  
Դուք հիացեք,  
Մեծ հոգսեր է բաժին ընկել  
Մեր Արցախին,  
Դեռ պատրաստ է մեզ կուլ տալու  
Ոսոխը հին:

1973 թ., Ստեփանակերտ  
ԵՐԳԻՄ, ԱՐԻ՝

Երգ իմ, արի՝,  
Կարոտել եմ շշունջներիդ,  
Կարոտել եմ  
Թևավորող կարոտներիդ:  
Երբ չես գալիս,  
Անիմաստ է դառնում կյանքս,  
Երգ իմ, արի՝,  
Քեզանով են ծլում, ծաղկում  
Երազներիս լույս ափերը,  
Ես առանց քեզ  
Ավսոսում եմ իմ ապրելը:

1973 թ., Ստեփանակերտ  
ՏՈՒՐ ԻՆՉ ՈԳԻ ՈՒ ԾՈՒՆՉ

Թեւաբախիր, ով կյանք,  
Առ ինձ քո գրկի մեջ,  
Թող որ շունչը քո տաք  
Ինձ պարգելի նոր տեսնչ:

**ԱՊԱՍԽԱՏՄ ԱՆՔ ԴԱՌ**

Ցուր ինձ ոգի, խայտանք,  
ճանապարհս հարթեմ,  
Ընկերանամ կյանքում  
Միայն արդարներին,  
Դասմեն երազներիս  
Լուսե կատարներին,  
Բարձունքների վրա  
Արելի պես վառվեն  
Եվ աստղերիդ ննան  
Գալիքներին փարվեմ:

1974 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ցանաքել է Ցուրտ աղբյուրը  
Մեր գյուղի մոտ,  
Ուզում է մեզ թողնել ծարավ...  
Մեր պարձանք ու հպարտություն  
Ցուրտ աղբյուրը այս ի՞նչ դառավ:  
Երկրաբաններն իհնա եկել,  
Արտեզյան են ուզում բացել...  
Իսկ թե հանկարծ ջուր չլինի՞...  
Երկրաբաննե՛ր,  
Արտեզյաններ խփեք սրտիս,  
Սրտիս միջից մի հորդ աղբյուր կկարկաչի  
Եվ այդ ջրով գյուղս անվերջ կկանաչի:

1973 թ., գ. Ակնաղբյուր

## ՀԱՅՐԵՆԻ ՀՈԴ

Հասակ եմ առել  
Լեռնային գյուղում,  
Ես հոգով, սրտով  
Կապված եմ նրան՝  
ճյուղ ու արմատով  
Չուլված եմ նրան...  
Եվ եթե հարցնեն,  
Թե ի՞նչն է, արդյոք,  
Ամենասուրբը  
Կյանքում ինձ համար,  
Կպատասխանեմ.  
-Ին անուշ տատի  
Զույգ գրպաններին  
Աշնանը առատ  
Միրզ պարգեւողը,  
Իմ մոր պաշտածը,  
Իմ հոր աստվածը՝  
Հայրենի հողը:

1974 թ., գ. Ակմաղբյուր

## ՀՈԴԸ ՍԻՐՏ ՈՒՆԻ

Այս ո՞վ է ասել՝ հողը սիրտ չունի.  
Եթե սիրտ չունի,  
Ապա ինչո՞ւ է կարոտում այնպե՞ս,  
Երբ հեռանում ենք...  
Եթե սիրտ չունի,

**Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Դ Ա Ա**

Ապա ինչո՞ւ է խռովում այնպե՞ս,  
Երբ մոռանում ենք...  
Եթե սիրտ չունի, ապա ինչպե՞ս է  
Մեր մի տվածին հազարը տալիս...  
Եթե սիրտ չունի,  
Երբ տուն ենք դառնում հեռու ափերից,  
Ուրախությունից ինչո՞ւ է լալիս...

1975 թ., գ. Ակնաղբյուր

**ԼԵՇԵՐ**

Լեռնե՛ր, դուք ինձ ծնող լեռնե՛ր,  
Լեռնե՛ր, դուք ինձ սնող լեռնե՛ր,  
Ճպարտ լեռնե՛ր,  
Անպարտ լեռնե՛ր,  
Դուք իմ հոգու լարերը պիրկ,  
Դուք իմ սիրտը շոյող մոր գիրկ,  
Իմ թեւ-թիկունք,  
Իմ բերկրանքի, սիրո ակունք...  
Թեւածումիս համար դուք ինձ  
Փայփայում եք մոր քնքշությամբ,  
Սայթաքումիս համար դուք ինձ  
Նախատում եք հոր խստությամբ,  
Տիեզերքի անհունները  
Չափող լեռնե՛ր,  
Չողագունդը իմ հոգու հետ  
Կապող լեռնե՛ր:

1975 թ., Ստեփանակերտ

**ԱՊԱՍԽԱՏՄ ԱՆՔ ԴԱՌ**

**ՍԱՐԵՐԻ ՀԵՏ**

Արեւը իջել է սարերին,  
Սարերը խոսում են իրար հետ,  
Արեւոտ սարերը դարերին  
Կարծես թե կանչում են դեպի ետ:  
Դարերը սարերին գրկել են,  
Պահում են ասես թե գլխից վեր,  
Սարերը դարերին փրկել են,  
Ուսերին տանում են դեպ արեւ:

1973 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Անձրեւը ամպերի արցունքն է,  
Մեր շաղոտ սարերը վկա,  
Սարերը մեր հոգու բարձունքն են,  
Բարձունքոտ սարերը վկա:  
Սարերի պարզեւն է անձրեւը,  
Կանաչող արտերը վկա,  
Նոր խոսք են ասում սարերը,  
Դարերի ծփանքը վկա:

1975 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Սարերում չվում են ամպերը,  
Ամպերը՝ ճերմակ թռչուններ,  
Ամպերը հակինթ ցողեր են  
Ու երգի փոխված հնչյուններ:

**ԱՊԱՍԽԱՏՄ ԱՆՔ ԴԱՌ**

Ամպերը անբիծ տենչեր են՝  
Ծնված պապերիս կամչերից,  
Ամպերը չեն գնա հեռու  
Սարերի կանաչ լանջերից:

1975 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Մուլճս մի օր թողի պատին  
Ու գրիչ առա,  
Ես որմնադիր էի կարգին,  
Բանաստեղծ դառա:

Բայց իհմա էլ, երբ շուրջը իմ  
Նոր շենք է հառնում,  
Երգերիս մեջ ասես նորից  
Վարպետ եմ դառնում:

1974 թ., Ստեփանակերտ

**ԱՓՍՈՍԱՆՔ**

Դու ճիշտ ասացիր, սիրելի Սեւակ,  
«Սեծությունները ուշ-ուշ են գալիս,  
Բայց ժամանակին»:  
Սակայն չուզեցիր ավելացնել.  
«Սեծությունները շատ շուտ են գնում,  
Ո'չ ժամանակին»:

1973 թ., Ստեփանակերտ

## ԼԵՇՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐ

Լեռան աղբյուր, երանի՝ քեզ,  
Ես վաղուց եմ գովքդ լսել,  
Բանաստեղծի երգերի բույր,  
Բանաստեղծի երազ ու սեր:  
Ո՞նց ես այդպես մեղմիկ հորդում  
Ու շղթայում դարձ դարին,  
Ասա, ո՞նց ես ուղիղ հարթում,  
Ո՞նց ես ճեղքում կուրծքը ժայռի:  
Քեզ չեն նեղում չար երաշտը,  
Ճեղեղը՝ խենթ ալիքներով,  
Զովացնում ես հանդն ու դաշտը  
Ու զարդարում ծաղիկներով:

Այս, իմ երգն էլ լիներ այդպե՞ս...  
Լեռան աղբյուր, երանի քեզ:

1974 թ., Յաղուռ

\* \* \*

Գարունն այս տարի  
Ուրիշ տեսքով է ինձ այցի գալիս,  
Նա խաղաղված է  
Եվ իմաստնացած,  
Խոհերով լիքն է ինձ ողջույն տալիս:  
Ճերկերը խորն են, սերմերը՝ առողջ,  
Բոլոր ծիլերը խոստումներով լի,  
Թեկուզ խաղաղված, բայց եռք է, հրայր,

Բերքի ակունքն է նա հրաշալի:  
 Գարունն այս տարի  
 Ուրիշ տեսքով է ինձ այցի գալիս,  
 Նա անդորրված է ինձ համբույր տալիս...  
 Ինչո՞ւ է այդպես,  
 Նա՝ նման իմ հոգուն ու սրտին,  
 Թե՝ այս գարնանը նմանվում եմ ես:

1975 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Վիրահատել են բալիկիս այսօր,  
 Նվուն են նրա խորունկ վերքերը,  
 Մոտը կանգնել եմ տիսուր ու անզոր,  
 Թախծից դողում են իմ հաղթ ձեռքերը:

Լոկ բառերով եմ սփոփում նրան,  
 Խիտ գանգուրները շոյում, համբուրում,  
 Որդուս ցավի դեմ, աշխ, անուժ դարձած՝  
 Մորս խոսքերն եմ ես մտաբերում.

«Երեւի աստված շտապ է եղել,  
 Ինչո՞ւ այնպես չի ստեղծել մարդուն,  
 Որ տառապանքի ու վշտի պահին,  
 Ծնողը տանի ցավերը որդու»:

1974 թ., Ստեփանակերտ

## ԻՄ ԱՐԵՎԱՍԱՐ

ճանապարհս ինձ տանում է  
Արեւարի լանջերն ի վար,  
Սրտիս խորքում արթնանում են  
Պատանեկան տենչերս վառ:  
Յուշ է դարձել մայրս արդեն,  
Առանց նրա՝ հայրս մի բուռ,  
Էլ պարտեզում չկան վարդեր,  
Յառաջում է միայն մի դուռ:  
Նստում են մեր թթենու տակ,  
Արցունքներով աչքերս լի,  
Մշուշվում են պարտեզ ու բակ,  
Այգիները իմ սիրելի:  
Ելնում եմ ես, շրջում կրկին,  
Ողջ գյուղն ասես փարվում է ինձ,  
Մանուկներն են շրջապատում,  
Ողջագուրզում ցնծումնալից.  
Ամեն մանուկ մի կանաչ շիվ,  
Մի նոր գարուն, մի նոր ծիծառ,  
Ամեն մանուկ մի նոր շավիղ,  
Մի նոր օջախ, մի նոր ծիծաղ:  
Յայացքներում այդ ժիր մանկանց  
Ինձ ժպտում է աշխարհն անծայր,  
Այդպես հավետ դալար մնաս,  
Իմ թանկագին, իմ Արեւար:

1975 թ., գ. Ակմաղբյուր

**Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Դ Ա Ա**

**Ե Ր Գ Ս**

Սարերը շնչում են ինձ հետ,  
Գետերը՝ խոսում մտերիմ,  
Աստղերը ծորում են մեկ-մեկ  
Ու ծովալվում սրտիս ծալքերին:

Աշխարհի ծայրերում բոլոր  
Երգերս թևեր են առնում  
Ու բարի մարդկանց կրծքի տակ  
Կարոտի կրակներ վառում:

1975 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Նորից եկել, կանգնել եմ ես  
Իմ հայրական օջախի մոտ,  
Ու կրծքիս տակ ալիքվում են  
Մի ջերմ հուզում ու մի կարոտ:  
Իմ մանկության ընկերներից  
Շատերն արդեն հուշ են դարձել,  
Իսկ շատերը հեռաւներում  
Բույն են դրել ու մնացել:  
Նորերն ունեն աշխարհն իրենց,  
Նրանց ինչպես սիրտս բանան,  
Ա՞յս, նրանք ինձ կիասկանա՞ն:  
Ու դիմում եմ ես ծառերին՝  
Վկաներին իմ մանկության,  
Ու դիմում եմ ես սարերին՝  
Ընկերներիս պատանության,  
Ծառերին եմ սիրտս բացում,  
Սարերին եմ սիրտս բացում,  
Նրանք լավ են ինձ հասկանում,  
Նրանք լավ են ինձ հասկանում:

1975 թ., գ. Ակնաղբյուր

**Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Դ Ա Ա**

**ԵՐԲ ՄԱՅՐՍ ԶԿԱ**

Մայրիկս չկա...  
 Պատի նկարից  
 Նրա թախծալից հայացքն է նայում,  
 Սեր իին թթենու սոսափի միջից  
 Մորս օրորի երգն է հմայում:  
 Երբ իմ իին ու նոր վերքերն են նվում,  
 Երազներիս մեջ նա է ինձ կանչում,  
 Երբ երազիս մեջ ծարավում եմ ես,  
 Զրի պես նա է ճամփիս կարկաչում:

1973 թ., գ.Ակնաղբյուր

**ՄԵՆՔ ԶԵՆՔ ԿԱՐՈՇ**

Առավոտը  
 Գիշերվա մեջ  
 Մեր տենչերից ծնված հենք է,  
 Երազների նուրբ թելերով  
 Մենք հյուսում ենք գորգը օրվա:  
 Երազները մեր ծփացող  
 Խայտանքներն են գալիքների,  
 Իսկ տենչերը՝ ժպիտներն են  
 Մեր սիրասուն բալիկների:  
 Այդպես օրվա գորգը հյուսում  
 Ու հանձնում ենք  
 Պատմությանը մեր լուսավառ,  
 Մեր երազն ու տենչը վրան:

1975 թ., Ստեփանակերտ

## ԶԱՅԵԼՆԵՐԸ

Մի նախատեք ջահելներին,  
Որ չեն լսում ահելներին.  
Նրանց մի օր  
Մանկան ծիչը տուն կկանչի,  
Կյանքի տենչը՝ դեպի վերելք,  
Նրանց ուժը կկարկաչի՝  
Դարձած բերքի ու հերկի երգ:  
Եվ կդողան, ո՞նց կդողան  
Իրենց մանկանց բախտի համար,  
Իրենց ցանած բերքի համար,  
Իրենց գրած երգի համար:  
Ահելը միշտ ախտի ների,  
Խենթությունը ջահելների...

1974 թ., Ստեփանակերտ

## ԻՄ ԱՅՍ ԵՐԳՈՒՄ

Իմ այս երգում գարնան շունչ կա,  
Ճողի զարթոնք ու հողի բույր,  
Կանաչ արտի ծփանք ու հելք,  
Ճովի շուրջպար, հովի համբույր,  
Մանուշակի կապույտ հայացք,  
Բողբոջների հրաշք ծնունդ,  
Գարնանային հերկերի մեջ  
Գալիքին բերք խոստացող հունդ:

1975 թ., Ստեփանակերտ

**Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Դ Ա Ա**

\* \* \*

Պատրաստ եմ սիրտս պարզել աշխարհին,  
Ասել՝ համեցեք,  
Այն ամբողջությամբ  
Ընծայում եմ ձեզ...

Այնտեղ կգտնեք դուք եւ' բարություն,  
Ե՛վ սրտերն իրար ծուլող անուրջներ,  
Ե՛վ հողագնդի բոլոր ծայրերը  
Իրար հետ կապող երգի կամուրջներ:

1975 թ., Ստեփանակերտ

**Զ Ե Զ Հ Ա Մ Ա Ր**

Ինձ ծնել եմ մեր ժայռերը,  
Ժայռերի պես կարծր եմ կամքով,  
Ինձ սնել են մեր ժայռերը,  
Ժայռերի պես բարձր եմ հոգով:  
Զինջ աստղերն են ինձ գուրգուրել,  
Նրանց պես եմ լույսն իմ սփռում,  
Ծաղիկներն են ինձ օրորել,  
Ծաղիկների պես եմ բուրում...

1974 թ., գ. Ուխտաձոր

\* \* \*

Անհանգիստ եմ, ասել է, թե  
Հողագնդում ինչ որ ալիք  
ճիշտ չի ծփում,  
Անհանգիստ եմ,  
Ասել է, թե սուր մի տագնաապ  
Մարդկանց զարկերակն է հպում:

**Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Դ Ա Ա**

Եթե այսպես անհանգիստ եմ,  
Ել մի հարցնեք՝ ինչից է դա...  
Ուրեմն ես կյանքի համար  
Ապրում եմ, կամ:

1973 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ծաղիկները մոր նման են,  
Ծաղիկները քնքուշ ու նուրբ,  
Զավակներ են ծնում, սնում,  
Սիրով մի սուրբ,  
Ճետո իրենց զավակներին  
Պահ են տախս ծառին, թփին,  
Եվ ավանդում իրենց հոգին,  
Զավատալով, որ թողեցին  
Այս երկնի տակ  
Բերք ու բարիք,  
Յուշ-հիշատակ՝  
Ե՛վ թանկ, ե՛ւ սուրբ,  
Ծաղիկները՝ քնքուշ ու նուրբ:

1974 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Չորը լցվել է սոխակի երգով,  
Թովչանք է ապրում նորից անտառը,  
Նահապետ կաղնին հաղթական ձեռքով  
Դիրիժորում է հովերի պարը:

**Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Դ Ա Ա**

Արեւը նստել դիմացի սարին,  
Յամերգն այդ լսում, ժպտում է կարծես,  
Երանելի պահ՝ արեւն արարիչ  
Հուզվել է ասես սիրող սրտի պես:

1973 թ., գ. Ուխտաձոր

**ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ**

Քո շունչը, իմ գյուղ, հեռվից չեմ լսում,  
Յեռուներից չեմ կարոտում տեսքիդ,  
Ամեն օր «բարի լույս» եմ քեզ ասում,  
Զգում շոյանքը մայրական ձեռքիդ:  
Ես քո որդին եմ, և իմ արյան մեջ  
Քո կաթի համն է, քո քաղցրությունը:  
Ինչ տվել ես ինձ, կրկին քեզ կտամ,  
Որ ծաղկես հավետ ու հասակ առնես,  
Ես այնպես կապրեմ քո արեւի տակ,  
Որ տված կաթդ ինձ հալալ անես:

1974 թ., գ. Ակնաղբյուր

\* \* \*

Յայրենի գյուղ, ինձ համար  
Օրորոց ես մայրական,  
Դպրոց տանող ճանապարհ  
Ու մաղթանք ես հայրական:

Պապի հերկ ես, հորովել,  
Տատի ձեռքի վառ ճրագ,

Որդու խինդ ես, նոր օրեր,  
Թոռան շուրջպար ու նվազ:

Քո վաստակով զորացած  
Ու լիացած ծով բերքով,  
Դու քայլում ես նորացած  
Դեպի գալիք՝ քո երգով:

1973 թ., գ. Ակմաղբյուր

### ԼԵՌԱՆ ԹԱՍՓԱ

Յեռո՞ւ-հեռո՞ւ աշխարհներին  
Ինձ կապողը դու ես եղել,  
Իմ լեռնային փոքրիկ ճամփա՛,  
Ինձ վերելքից դու չես շեղել:

Ապրել եմ ես միշտ քո սիրով,  
Յոգիս դարձրած մի տիեզերք,  
Կյանքում ուր էլ գնացել եմ,  
Զրուցել եմ մտքով քեզ հետ:

Քո կարոտն է կաթիլ-կաթիլ  
Սրտի խորքում իմ ծովացել...  
Իմ հեռավոր, իմ լուսավոր  
ճամփաները դու ես բացել:

1973 թ., Յաղբյուր

## ԻՐԻԿՆԱՍՈՒՏ

Չարքմում են, խորհում,  
խոկում են լեռները...

Յ. Սահյան

Արեւադին արեւն իջավ  
Իրիկնամուտին  
Եվ շողահյուս ձեռքը դրավ  
Մեր Կանաչ խութին:  
  
Կանաչ խութը շիկնեց մի պահ,  
Ստվերն օրորեց,  
Դաշտից դարձող հորթուկի պես  
Պոչը ոլորեց:

Իսկ երբ հոգնած արեւն անցավ  
Թիկունքը սարի,  
Կանաչ խութը մթնում չոքեց  
Ճեզ, հորթավարի:

Մուշ-մուշ քնեց, որ վեր կենա  
Արեւագալին  
Եվ ծփանքով ողջույնն իր տա  
Մայր Արեւադին:

1975 թ., գ. Ակմաղյուր

## ԱՄԱՌ

Արեւը փարվեց մայր հողի կրծքին,  
Մայր հողին անցավ շիկնանքը նրա.  
Շիկնանքն այդ ծաղկի փոխարկվեց կրկին,  
Բերքի հետ ծփաց աշխարհի վրա:  
Արտերով անցավ մի դեղին սարսուռ,

Դեղին սարսուռն այդ դարձավ ոսկե հասկ,  
Երգահան դարձավ արեգակը հուր՝  
Հյուսելով բերքի լուսարար մի Ասք:  
Արարման տենչը հոգիների մեջ  
Սարդն ու արեւը հասկացան իրար,  
Այդպես, հայրենի դաշտերում անծիր  
Սկսվեց նորից մի բեղուն ամառ:՝

1974 թ., գ. Ակմաղբյուր

### ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԸ

Վաղ գարնանը ելավ, շոյեց  
Դեմքը հողի,  
Հողը անուշ քնից զարթնեց  
Ու մեղմ ժատաց,  
Փարվեց հողին իրավունքով  
Կյանք տվողի  
Ու նրա թարմ ժախտներում  
Տենչն իր գտավ:  
Հունդերի հետ ակոսներում  
Նա շաղ տվեց իր հույզերը,  
Ու թխավարս ակոսները  
Կանաչեցին,  
Օրերի հետ կլորացան կոկոնները  
Եվ խնամած կնգուղների  
Թշիկներից  
Մարդիկ նրան ճանաչեցին:  
Նետո ցողեց կնգուղները  
Իր քրտինքով,

## ԱՊԱՍԽԱՏՄ ԱՆՔ ԴԱՌ

Յյուսեց նրան  
Իր ճեփի-ճերմակ  
Երազները,  
Կնգուղների միջից, ինչպես  
Յավքի ծվից,  
Աշխարհ ելան ճերմակ-ճուտիկ  
Քուլաները:  
Դաշտին իջավ մի ձյունաթույր  
Առատություն՝  
Սրտառուչ ու արեւածին,  
Ուրախության ջահը վառվեց  
Նրա հոգում,  
Երբ կարմրաթույր կոմբայնները  
Այդ փրփրադեզ օվկիանոսում  
Երեւացին:

1974 թ., Մարտակերտ

### ԱՅԳԵԳՈՐԾՄ

Ո՞վ է ասել հողն ու վազը լեզու չունեն...  
Արշալույսից մինչ մայրամուտ  
Զրուցում է նա նրանց հետ,  
Դաս է տալիս ու դաս առնում գորովագութ,  
Դարձած հմուտ ե'ւ ուսուցիչ, ե'ւ աշակերտ:  
Յողի նման բարի, շռայլ,  
Վազի նման սիրահարված լույս ու խորքի,  
Յողի նման մի քիչ փիսրուն, մի քիչ մռայլ,  
Վազի նման ծլարձակող ու ջերմ հոգի...  
Յողի հյութից ու իր քաղցր երազներից  
Նա խաղողի ողկույզներն է սիրով հյուսում,  
Բարիքներ է բերում մարդկանց սեղաններին,  
Իսկ սրտերին՝ երգ ու հուզում:

1974 թ., գ. Ակնաղբյուր

**ԱՊԱՍԻՆԴՄ ԱՆՔ ՌԱՌ**

**ԿՈՄԲԱՅՆԱՎԱՐԸ**

Ոսկե հասկեր, ոսկե ծփանք,  
Ոսկե տենչ,  
Ոսկե ձեռքեր, ոսկե բերկրանք  
Դաշտի մեջ...  
Արեւի պես կրակ մի սիրտ,  
Միշտ խնդուն,  
Զահել մի սեր, զահել երազ  
Այդ սրտում:  
Ճերոսացման, սիրո ծարավ,  
Սիրո ծով,  
Թեւաբախում՝ թեւավորված  
Սիրածով...  
Ամռան պարգել՝ Ոսկե աստղ,  
Հարսանիք,-  
Գյուղի ծայրին մի նորաստեղծ  
Ընտանիք:

1974 թ., գ. Ակնաղբյուր

**ԱՐՏԵՐԻ ճԱՍՓԱՆ**

Արտերի միջով ձգվել է ճամփան,  
Նա հասկանում է արտերի լեզուն,  
Նա կարող է մեզ շշնչալ անգամ,  
Թե ինչ են ուզում հասկերը լեցուն:

Ոտնատակ ընկած գոտի չէ ճամփան,  
Նա վկան է հաց քամող սրտերի,  
Եկեք միշտ բանուկ պահենք այս ճամփան,  
ճամփան երակն է ցորնի արտերի:

1974 թ., գ. Ակնաղբյուր

ԱԻՐՈ ՄՈՐՄՈՔՆԵՐ

## ԱՌԱՏՑ ՔՈ ԺՊԻՏՆԵՐԻ

Գնամ, շրջեմ աշխարհն արար  
Ու գամ ծնկի իջնեմ քո դեմ,  
Յավատա ինձ, որ առանց քեզ  
Երջանկություն ես չգիտեմ:  
Երբ առանց քեզ՝ հեռուներուն,  
Ծիծաղուն եմ ես լիաթոք,  
Թվում է, թե ասուն ես ինձ.

- Ե՞րբ ես եղել այդքան անհոգ:
- Երբ առանց քեզ, լանջերն ի վեր,  
Ելնուն եմ ես դեպի բարձունք,  
Ուր ամպերն են  
Խուլ որոտում,
- Ասես հեռվից կանչում ես ինձ.

- Դու ինձ Ե՞րբ ես թողել մենակ  
Ստորոտում:

Մենք պարզապես ձուլվել իրար  
Դարձել ենք մի սիրտ ու հոգի,  
Թող ծնկի գամ նորից քո դեմ  
Եվ շշնջամ աղոթքի պես.

- Յավատա ինձ, որ առանց քեզ  
Երջանկություն ես չգիտեմ:

1974 թ., Ստեփանակերտ

## Ի Ս Ս Ե Ր

Քեզ ծաղիկների բույրից եմ փնջել,  
Դրա համար էլ բույր ես արարում,  
Արշալույսների իրից եմ փնջել,  
Դրա համար էլ երբեք չես նարում:  
Քեզ իմ տենչերի երանգներից եմ  
Շող առ շող հյուսել,  
Դու բողբոջել ես իմ խոհերի մեջ,  
Դարձել հույզերիս հանգրվան ու սեր:  
Դու այն արեւն ես  
Եվ այն գարունը՝ թարմ ու ցողաքաց,  
Որ իմ հոգու մեջ ծիածան դարձել  
Եվ իմ սրտին ես փարվել թեւաքաց:

1974 թ., Ստեփանակերտ

\*\*\*

Բացել եմ սրտիս էջերը քո դեմ,  
Ընթերցիր, քոնն են բոլոր երգերը,  
Մարդ ինչ ցանում է, այն էլ հնձում է,  
Քեզ են սպասում սրտիս հերկերը:

Ստիր ու փնջիր վարդերդ ցանած,  
Մի պսակ կազմիր աստղերի շողից,  
Որպես իմ սիրո միակ դիցուիին,  
Սրտիդ թրթիոը առ սրտիս դողից:

Լողացիր այդպես հույզերիս ծովուն  
Ու թագաղրվիր դու կրկին անգամ,  
Ինացիր, դու ես աղբյուրն իմ երգի,  
Ինչքան աշխարհում ապրում եմ ու կամ:

1974 թ., Ստեփանակերտ

**Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Դ Ա Ա**

\* \* \*

Գարնան արեւը վարսերն է սանրում,  
ժպիտով օծում դաշտեր ու սարեր,  
Միտքս թեւ առած կրկին սավառնում  
Ու փարվում է քեզ, ին կյանք, ին արեւ:  
Այս քանի՞ օր է, հեռու եմ քեզնից,  
Ո՞նց եմ կարոտել, սեր ի՞ն, մի՛ հարցրու,  
Թվում է՝ հեռվից շոյուն ես դու ինձ,  
Ու քո բառերն եմ կրկնում ինչպես երգ.  
«Ոչինչ չեմ ուզում ես այս աշխարհից,  
Միայն, թե կյանքում դու լինես ինձ հետ»:

1974 թ., Ստեփանակերտ

ԱՍԱ, ԻՆՉՈՒ

(Երգ)

Յեռախոսը զրնգում է,  
Յանկարծ վեր եմ թռչում տեղից,  
Դուն զանգը ծլնգում է,  
Փշրվում եմ հազար տեղից.

Ինձ կենդանի խորովեցիր,  
Ասա, ինչո՞ւ խռովեցիր:  
Երեկ անցա ձեր տան մոտով,  
Այնպե՞ս դանդաղ, այնպե՞ս սահուն,  
Խաչմերուկում մինչ երեկո  
Ես քո ճամփան էի պահում:

Ինձ կենդանի խորովեցիր,  
Ասա, ինչո՞ւ խռովեցիր:

**Ա Պ Ա Ա Խ Մ Ա Ն Ք Դ Ա Ա**

Ժամանակն էլ մոլորվել է,  
Կանգ է առել ու չի խոսում,  
Սիրուց արբած ամբողջ օրը,  
Քո նկարի հետ եմ խոսում:

Ինձ կենուանի խորովեցիր,  
Ասա, ինչո՞ւ խռովեցիր:

1973 թ., ք. Ստեփանակերտ

\* \* \*


Կարոտս ծնվում է քեզանից,  
Թախիծս քեզանով մարում,  
Առանց քեզին սիրտը, սիրելի՝ ս,  
Ավերված մի բույն եմ համարում:

1973 թ., գ. Բեգում-Սարով

\* \* \*

Ինքնամոռացում եղավ իմ սերը,  
Իմ սերը եղավ սրտի սփոփանք,  
Յուր ու հիացում եղավ իմ սերը,  
Իմ սերը եղավ անհուն տառապանք:  
Լեռների ճամփա եղավ իմ սերը,  
Իմ սերը եղավ վերելք ու վայրէջք,  
Մի բարի համբավ եղավ իմ սերը,  
Իմ սերը եղավ նվացող մի վերք:  
Իմ սիրուց կյանքս հաճախ դառնացավ,  
Դարձյալ իմ սիրով սիրտս ջերմացավ:

1975 թ., Ստեփանակերտ



Մեր գյուղը՝ սարի լանջին,  
Լուսինը՝ օդ ականջին,  
Աղբյուրը՝ ձեռքին քնար,  
Առվակը զնգուն մի լար:  
Թե սիրտս էլ ուզի՝ կտամ,  
Մեր գյուղը՝ սարի լանջին,  
Նա իմ մոր շունչն է տաք  
Եվ սերը իմ առաջին:

## ՔԱՌԱՋՈՒՅԹ ԱՆՁՆԱՐ

### ՎԱՏԱՐԱԴՈՒՅԹ

*Կրեւելյան Հայաստանը Ռուսաստանին  
միավորելու 150-ամյակի առթիվ*

Ես՝ հայկաբազուկ, իրասիրտ, իրաչ,  
Արարվեցի սեգ Մասիսի առաջ,  
Լեռներ տեսա, երբ աչքս բացեցի,  
Ու լեռների հետ բախտս կապեցի:  
Կերտեցի շենքեր, գետեր թեքեցի,  
Շունչ տվի հողին, լանջեր հերկեցի,  
Բոլոր կողմերից հերկերս տեսան,  
Բոլոր կողմերին եղօերս հասան,  
Շենքերիս պատվին ինձ ասին՝ կերտող,  
Երգերիս պատվին՝ ինաստուն քերթող:  
Բայց ժամանակը իր խիդճը կերավ,  
Տարբեր կողմերից հողմերը բերավ,  
Բերավ՝ մոռացած ին աղն ու հացը,  
Երգերիս խառնեց թախիծն ու լացը:  
Խուժեց ոսկիը, խուժեց, որ առնի  
Յոզուս նշխարներ Գեղարդն ու Գառնին,  
Զեռքիցս խլի ին Սեւան սինին,  
Աղաջուր դարձնի ին բորբոք գինին,  
Պղտորի ջուրս՝ գլգլան ու զով,  
Ավերակ դարձնի Տաթեւ, Գլածոր,  
Որ հավերժական իր ճամփի կեսում  
Մոռացվի, մեռնի ին քաղցր լեզուն:  
Եվ խուժում էին մեկը մեկից չար՝  
Շեներս դարձնեն հողին հավասար,  
Շղթայեն հոգիս, ավերեն, գերեն -  
Ու պատմությունից անունս քերեն:  
Բայց ավիշ էի քամել քարերից,  
Կարծրություն էի առել ժայռերից,

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Խոփերիս կեսը ցասմամբ հալեցի,  
Մազաղաթներս ծալ-ծալ ծալեցի,  
Սի ձեռքիս գրիչ՝ մյուս ձեռքիս՝ սուր,  
Պաշտպանեցի ես օջախը իմ սուրբ...  
Իմ դեմ անդադար ոռնում էր քամին,  
Որոնում էի իմ բարեկամին:  
Դեմքս շրջեցի դեպի Արեւմուտք,  
Բայց Արեւմուտքը ինձ խարեց անգութ,  
Եվ իմ հույս բառը փոխի Յյուսիսով,  
Ապավինեցի ռուսին՝ բարու ծով:  
Սարդարապատում սուրս կռեցի,  
Չար թշնամու դեմ ելա, կռվեցի  
Եվ իմ քաջարի զավակների հետ  
Յատեցի չարի մոլուցքը հավետ:  
Արդ, մեր դժվարին դարի մատյանում  
Գալիքին ես իմ էջերն եմ տանում,  
Տանում եմ լույսի փոխված մի Սեւան,  
Յրաշք-Քաջարան, հեքիաթ-Երեւան,  
Սի նոր Բյուրական՝ ոտքը սարերում,  
Միտքը՝ աստղային հեռաստաններում:  
Իմ Արարատյան դաշտն են ես տանում -  
Լիության մառան իմ լեռնաստանում:  
Բուհերս եմ տանում ատոմներ ճեղքող,  
Տենչերս են տանում առանց ճեղք ու քող:  
Եվ թեւածում է հպարտ իմ հոգին,  
Որ մեսրոպաշունչ տառերով իմ հին,  
Իմաստումները պատմության գրքում  
Անունս սիրով այսպես են կնքում.  
Շենքերիս համար՝ հանճարեղ կերտող,  
Երգերիս համար՝ հանճարեղ քերթող:

1975 թ., Մովկա

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

### ՅԶՈՐ ՍԻՄՖՈՆԻԱՆ

*Դմիտրի Շոստակովիչի հիշատակին*

Սրտերից ժայթքող ձայներ հավաքեց,  
Ապա շաղախեց իր սրտի լույսով,  
Մարդկության սիրով լարեց քնարը  
Ու գրեց կյանքի սիմֆոնիան հզոր:  
Նա մնաս բարով ասաց աշխարհին,  
Թողած իր հոգու գանձերը հարուստ,  
Դավերժությունը փայփայեց նրան  
Ու մաղթեց սիրով՝ քեզ բարի՝ գալուստ:

*1975 թ., Մուկվա*

### ՄԱՅԱ ՊԼԻՍԵՑԿԱՅԱՅԻՆ

Անպի կտո՞ր է, թե՞ կարապի թեւ,  
Լեռան շուշա՞ն է, թե վարդ բուրավետ,  
Պարում է այնպես սահուն ու թեթեւ,  
Որ թռչկոտում է սիրտս նրա հետ:

*1975 թ., Մտեվանակերտ*

### ԾԱՌԸ

Ես մի ծառ տեսա Սեւաստոպոլում,  
Եյուղերը՝ խօհվ, բունը՝ վիրավոր,  
Գարնան հովերից խշշում էր, խորհում,  
Մի քիչ երազկոտ ու մի քիչ մոլոր:

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Բանուկ է եղել չորս կողմը նրա,  
Տներ են եղել ու մի աշխույժ բակ,  
Մանկանց երգեր է լսել անդադար,  
Օրոր է ասել նրանց շարունակ:  
Բայց հողն է ցնցվել հունիսյան մի օր,  
Ֆաշիստների դեմ եղել է մեծ մարտ,  
Մահու եւ կենաց պայքարի հրում  
Բակը դարձել է վառված անապատ:  
Յրաշքով միայն փրկվել է ծառը՝  
Բունը վիրավոր, ճյուղերը խռիվ,  
Ծրշյունների մեջ՝ մանկանց ծիծաղը,  
Իսկ հայացքի տակ՝ անմռոաց շիրիմ...  
Կանգնել եմ ահա հրաշք ծառի տակ,  
Նրա խաղաղված խշշոցն եմ լսում...  
Մեծ մահեր տեսած, արծաթված կեչի,  
Պատերազմի դեմ ցասումդ եմ կիսում:

1975 թ., Պյատիգորսկ

### ՊԱՏԳԱՄ

Գնա, որդի՛ս,  
Ու միացիր ջահելներին,  
Սրտիդ հուրը  
Խառնիր նրանց հրայրքներին,  
Յրազդանի շառաչներով  
Սիրտդ լցրու,  
Ելնող հզոր կամուրջները  
Անուրջները դարձրու հոգուդ,

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Զգտումներդ ձուլիր զարթնող  
Յայրեմիքի հեռաստամին,  
Թող քո շունչն էլ  
Միլիոնների ջերմ շնչի հետ  
Շաղախս դառնա,  
Օծի մեր մայր Յայաստանը:  
Օջախս չեն մի հասարակ,  
Ողջ հայության երազն է նա,  
Յավերժական ծիածան է,  
Որ ծնունդ է առնում իիմա...  
Քո հոգու բյուր երազները  
Յյուսիր նրա նուրբ գույներին,  
Որ վարդաբույր երազներում  
Այցի գնաս սերունդներին:  
Թող նաեւ քո շնչառությամբ  
Զարկերակվի Յայաստանը,  
Այս է, որդի՞ս,  
Երգի փոխված իմ պատգամը:

1975 թ., Ստեփանակերտ

### ԱՄԲՈՂՋ ԳԻՇԵՐ

Ամբողջ գիշերը, մինչեւ արշալույս,  
Խելքը թօցրել էր անհանգիստ քունս,  
Խսկ միտքս սրտիս հետեւից ընկած  
Աշխարհում ինչքան լավ երազներ կան,  
Փնջել, նրանցով լցրել էր տունս:  
Իմ հյուրերն էին Սփյուռքից եկած  
Սեր եղբայրները,

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Տարագիրների չխամրող հույսը,  
Ամբողջ աշխարհի հեռու ափերում  
Մեր հայ քույրերի սրտաբուխ հույզը,  
Աշխույժ կանչերը իմ փոքրիկ գյուղի  
Եվ շնչառությունն այս տարի տնկած  
Թթենու ճյուղի...  
Դարբել էր կարծես անհանգիստ քունս,  
Երազով, տենչով լցվել էր տունս:

1975 թ., Ստեփանակերտ

### ԵՐԳԻՍ ԱԿՈՒՆՔԸ

Առավոտից մինչ երեկո  
Քրքրեցի իմ խոհերը,  
Բայց չծնվեց երգը իմ նոր:  
Տանջվեցի ես ամբողջ օրը,  
Գլուխս առա ափերիս մեջ,  
Երազային աշխարհն ընկա,  
Բայց իմ ուզած երգը չեկավ:  
Ու ես փողոց ելա տնից,  
Կյանքի ծարավ,  
Քայլերս ինձ դաշտը տարան,  
Այգիները, արտերը ծով:  
Այգիների շրջունն առա,  
Ծով արտերի ծփանքները,  
Ծաղիկների բույրը վառման,  
Սեգ սարերի խոյանքները:  
Դացագործի ժայտները

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Շաղախեցի իմ հույզերին,  
Այգեպանի ճակտին թառած  
Քրտինքի ցող-կաթիլները  
Գումարեցի իմ հույսերին,  
Հողի ուժով հարստացած,  
Տուն սլաց ու մոտեցա  
Իմ սեղանին...  
Ուլունք-ուլունք  
Հոսեցին իմ երգերը նոր,  
Որպես սրտիս իրով անցած  
Էությունն իմ, սպեղանին...

1975 թ., Ստեփանակերտ

### ԳՅՈՒՂԻ ԹԱՆԱՊԱՐՅԻՆ

Իմ բանաստեղծ ընկերները ինձ ասացին՝  
Գյուղ ենք գնում՝ երգեր կարդանք,  
Գյուղ ենք գնում,  
Մարդկանց ճամփին  
Երգեր սփռենք, սեր ու հարգանք...  
Ու խորհեցի՝ ի՞նչ հորինել,  
Ինչպե՞ս կարդալ նրանց հոգին,  
Երգի փոխել նրանց ոգին...  
Ճամփա ընկանք ընկերներով,  
Ճանապարհին  
Խաղողի նոր այգիները մեզ ժպտացին,  
Մեզ գրկեցին ծով արտերը ալի՞ք-ալի՞ք,  
Նոր ջրանցքը, բերքը գալիք:

**ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ**

Թեւեր առանք մեր դաշտերի  
Յերոսների աշխատանքով,  
Նրանց անվանք,  
Նրանց փառքով,  
Այդ նրանք են բերքի փոխում այն հերկերը,  
Որոնց պիտի  
Սասունք-ճասունք մեր երգերի հենքը դարձնենք...  
Յողվորի հետ լուսաբացին  
Մտնենք արտը, այգին մտնենք,  
Որ հողաբույր մեր երգերով  
Յերոսների շարքերում մեր տեղը գտնենք:

1975 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ոչ մի անկյուն աշխարհում,  
Երազիս մեջ, արթմնի,  
Այնպես կարոտ չի ծնում,  
Ինչպես գյուղն իմ հայրենի:  
Փոքրիկ, կանաչ մեր բակը,  
ճամփան՝ բակից երակվող,  
Աշնանային գույներով  
Մեր անտառը կրակվող,  
Ցուրտ աղբյուրը բացատի,  
Այգամիջյան ջինջ առում,  
Ժայռուտները բազալտի  
Ու կածանը գալարուն,  
Մերք կարոտով, ծիծաղով,  
Մերք ցնձությամբ, թախծով մերք  
Լեզու առաջ խոսուն են  
Իմ հոգու հետ, սրտի հետ:

1975 թ., Ստեփանակերտ

## ՀԱՐՑՈՒՄ

Այս ի՞նչ ուժ է տրված քեզ, հոդ,  
Ի՞նչ գաղտնիք ես պահում դարեր,  
Որ քեզ սրտանց, ջերմ սիրողը  
Մնում է միշտ առույգ, ջահել:  
Նրանի՞ց չէ.  
Որ պապերը մեր քրտնաշան,  
Թե ձմեռվա բքերի մեջ,  
Թե ամառվա կրակներում,  
Զահելությունն իրենց լուսե  
Քամել են քո երակներում:  
Նրանի՞ց չէ,  
Որ հայրերը մեր քաջազուն  
Փրկել են քեզ իրենց ջահել  
Կամքով, արյամբ,  
Որ միշտ մնաս երիտասարդ,  
Որ քեզանով լինենք իպարտ,  
Որ ունենանք օջախ, անուն,  
Հայրենի հոդ, սեր իմ անհուն:

1975 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Աշունը կրկին գույներն իր վառել,  
Դրոշակակիր է կարծես թե դառել,  
Ելնում է ձորից նա դեպի բարձունք,  
Այտերի վրա բերկրանքի արցունք:  
Դժվար է ճամփան, վերընթաց ու ձիգ,  
Բայց մաքառուն է՝ ճակատին քրտինք,  
Տենչում է միայն գագաթը սարի,

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Թեկուզ բարձունքին սիրտը դադարի,  
Քանզի նա գիտե, որ մյուս գարնան  
Արթնացած, հագած կանաչն անննան,  
Թեւերին առած ջրերը վարար,  
Սարից կքայլի կածաններն ի վար,  
Կցանի հունդեր, նոր կյանք կարարի,  
Իր ճանապարհին...

1975 թ., Ստեփանակերտ

### ԻՄ ԼԵՌՆԱԾԽԱՐԴ

Որտեղ եղել եմ, սիրել եմ միշտ քեզ  
Ու մնացել եմ միշտ դարաբաղցի,  
Ընկերներիս հետ՝ ազնիվ եղբոր պես,  
Իսկ աշխատանքում՝ քաջ ու առնացի:  
Բոլոր գետերի շառաչների մեջ  
Թարթառի ձայնն եմ լսել ամենուր,  
Քո ջերմ կարոտից սիրտս շիկնել է  
Ինչպես քո նուռը:  
Ես երկինքների կապույտ գավաթով  
Քո աստղոտ երկնի հայացքն եմ խմել,  
Այգիների մեջ թվացել է, թե  
Ինձ օրորում են բարդիները մեր:  
Եղբ սար եմ տեսել,  
Բացականչել եմ.  
- Ախ, մեր լեռներում լինեի հիմա,  
Անտառ եմ տեսել,  
Քիչ է մնացել սիրտս ջուր դառնա:

## ՔԱՌԱՋԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Բայց ամենից շատ ճանաչել են ինձ  
Իմ մաքուր խղճով.  
Դեպի ազնիվը ու դեպի բարին  
Իմ հիացմունքի սրտաբուխ ծիչով,  
Բոլոր ազգերին հարգող իմ սրտով,  
Քո անվան առաջ իմ ծնկի գալով,  
Քո՝ ինձ ավանդած պատիվն ու սերը  
Բարձր պահելով:  
Իմ ուժ ու ավյուն,  
Իմ սիրտ ու արյուն,  
Դու իմ հաց ու աղ,  
Իմ մայր՝ Ղարաբաղ,

1975 թ., Ստեփանակերտ

### ՀԱՅՐԱԿԱՆ ՕԶԱԽ

Իմ օջախն ես, իմ լեռնաշխարհ,  
Քո գույները  
Իմ մոր կաթի հետ են մտել աշխարհն հոգուս,  
Երազներդ քո ամեն մի արշալույսի  
Աչքերից են շողարձակվել,  
Մտել սիրտս:  
Բարությունդ մեր տատերի  
Բարությամբ են իմ արյան մեջ քամվել հստակ,  
Վեհությունդ նախնիներիս  
Քաջությամբ են արմատ նետել իմ կրծքի տակ:  
Տիրությունդ,  
Հայրենիքի ազատության ճամփաներում

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Անմահացած քո զոհերի  
Կարոտով եմ իմը դարձրել:  
Քո հավատը, անրջանքը,  
Անցել են ինձ  
Մեր նորածին մանուկների  
Աչիկները համբուրելիս:  
Թույլ տուր որդու անհուն սիրով  
Երկրպագեմ ծիածանված երազներից,  
Քո բռորված հորիզոնից  
Գույներն առնեմ իմ երգերի,  
Հարստանամ  
Քո խոհերով, տենչերով վառ,  
Քո անունով, քո ջերմությամբ,  
Գրկե՞ն, սիրե՞ն աշխարհն-արար:

1975 թ., գ. Ակնաղբյուր

### Զ Ր Ո Ւ Յ Ց Ց

Իմ հայրական օջախ,  
Օրրան իմ մանկության,  
Հարազատ ու թանկ ես  
Դու ինձ համար այնքան,  
Որ կապվում է լեզուս քեզ հետ զրուցելիս,  
Եվ դողում է սիրտս կարոտներից անհուն,  
Իսկ հուշերն իմ անթիվ հեղեղի պես գալիս,  
Ուշքս ու միտքս մեկեն իրարու են խառնում:  
Դու ինձ համար մայր ես քնքուշ ու սիրասուն,  
Դու ինձ համար հայր ես միշտ հողի հետ կապված,

## ՀԱՌԱՎՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Քրոջ ժպիտ ես դու, եղբոր պայծառ մուրազ,  
 Դու պապիկ ես, տատիկ՝ քո ծխով միշտ արբած:  
 Բոլոր օրերիս մեջ սիրում էի ես քեզ,  
 Քո կայծերն ինձ՝ անմար աստղեր էին թվում,  
 Յածրիկ առաստաղդ մի երկինք էր ասես,  
 Ծղրիդներիդ երգը ինձ այնպես էր թովում:  
 Բայց գյուղից-գյուղ տանող ճամփան ինձ հմայեց,  
 Ճեռումերն ինձ տարան քո նայրական գրկից,  
 Մանուկներով իմ ժիր նոր օջախս փայլեց,  
 Եվ ունեցա կյանքում նոր հարեւան, դրկից:  
 Ժամանակը եղյամ դրեց իմ քունքերին,  
 Բայց քո հանդեպ սրտով միշտ մնացի մանուկ,  
 Աստղաբույլերն առած ուրիշ երկինքների,  
 Նորից գիրկդ եկա ճանապարհով բանուկ:  
 Չէի կարող ապրել ես առանց քեզ, օ՝, ոչ,  
 Քո գրկումն եմ լսել օրորը իմ մորից,  
 Ես եկել եմ հոգուդ ծուլեմ հոգին իմ ողջ,  
 Եկել եմ քո գրկում մանուկ դառնամ նորից:

1975 թ., Ստեփանակերտ

### ԹԱՐՏԱՐՈՒՄ

1

Օրիներգում եմ սիրով նրան,  
 Ով տնկել է այս ծառերը՝  
 Նրանց տալով սրտի հուրը,  
 Ով հերկել է այս լանջերը,  
 Որ մանկան պես ժպտա նուռը:

## ՀԱՌԱՎՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Օրիներգում եմ սիրով նրան,  
Ով հերկել է այս դաշտերը՝  
Պահ տալով իր իղձը հողին,  
Ով տվել է քաղցրությունն իր  
Դեղջին, նուշին ու խաղողին:

Օրիներգում եմ սիրով նրան,  
Ով կերտել է պալատներն այս,  
Որ երջանիկ սերունդը մեր  
Ապրի ուրախ՝ լի հույսերով...  
Ով տքնում է ամառ-ձմեռ,-  
Օրիներգում եմ նրան սիրով:

2

Դարավոր գահը՝ Եղիշե սարն է,  
Խաղողի այգին՝ զգեստն է կանաչ,  
Խնձորի այգին գոգնոցն է նրա,  
Յույսը երազն է՝ աշխարհին ճանաչ:  
Յորնի արտերը փեշերն են ծփուն,  
Թթենիները՝ նուրբ նարոտներն են,  
Նոնենիները՝ բերքի մեջ տոնին  
Արեւով օծված առավոտներ են:

1975 թ., գ. ճարտար

### ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Յողի մշակը կանգնել է դաշտում  
Եվ գոհ նայում է արեւածագին,  
Արեւը նրան քնքուշ ժպտում է,  
Ողջունում՝ ինչպես իր բարեկամին:

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Քանի՞ տարի է, զարթնում են մեկտեղ,  
Մեկտեղ լուս տալիս հողին ու մարդուն,  
Մեկը շողերն է սփռում իր շքեղ,  
Մյուսը՝ տենչերն իր լուսե, զվարթուն:  
Այսպես զարթնում են ամեն օր մեկտեղ,  
Որպես լիության ու գարնան գուշակ...  
Երանի՞ մարդիկ կյանք տային իրար,  
Ինչպես դուք մեզ մոտ, արեւ ու մշակ:

1975 թ., գ. ճարտար

### Յ Ո Ղ Ը

Դու քնել ես՝ ծյունի ճերմակ սավանի տակ,  
Բայց լսում եմ մեղմիկ շունչը քո ծիլերի,  
Լսում եմ ես ոնց է զարկում քո սիրտը տաք՝  
Ծաղիկները առաջ հղոր իր թեւերին:  
Մենք անհամբեր սպասում ենք քո զարթոնքին,  
Ապասում ենք քո ծփանքին կանաչ-կանաչ,  
Չէ՞ որ գիրկդ նետած առողջ ամեն մի հունդ:  
Մի արեւ է պահում իր մեջ ու մի աշխարհ:  
Ամեն ծիլդ ջերմացնում է խոհերը մեր,  
Ամեն հատիկ ժայտների ծով է դառնում,  
Ինչքան էլ որ մենք խորանանք գիտության մեջ,  
Ղեաի աստղեր քեզանից ենք թեւեր առնում:  
Քնիր խաղաղ ծյունի ճերմակ սավանի տակ  
Ու փայփայիր երազները մեր աստղաշող,  
Մեր դժվարին ճանապարհին ծաղկի՛ր, ժպտա՛,  
Առատության իմ ակնաղբյուր, հայրենի հող:

1975 թ., գ. Ակնաղբյուր

## ԿԹՎՈՐՈՒՅԻՆ

Երեկոն փռվեց Քիրսի լանջերին,  
Մարալ կովերը սարհց իջան ցած,  
Ականջը սովոր բառաչ-կանչերի,  
Կրվորուիին է սպասում նրանց:  
Գալիս են հերթով խաթուն-կովերը,  
Ծաղկաբույր կաթն է ծովանում կրկին,  
Նոր երգ են հյուսում սարի հովերը,  
Որոնց մեջ նրա սիրտն է ու հոգին:  
Քամում է կաթը՝ լույսի պես նաքուր,  
Մատներից յուղի բույրն է բարձրանում,  
Քնքուշ է, ասես կաթից է ծնված,  
Ժայռուն էլ կաթի շողեր է ցանում:  
Դեմքը լուսին է, աչքերն՝ արեւներ,  
Հոնքերը՝ կամար, մի նոր ջրահարս,  
Հեքիաթների մեջ հուրի-փերի էր,  
Կյանքում դարձել է հերոս կաթնահարս:

1975 թ., գ. Ակնաղբյուր

## ՅՈՎԻԿԸ

Նա ծնունդ առավ սարերի գրկում  
Ու սերտեց նրանց առնական հոգին,  
Այդ ոգին արյան փոխարկեց սրտում,  
Դարձավ սարերի հաղթական որդին:  
Նա Ծիրկաթինի վարսերը շոյեց  
Ու սիրահարվեց պայծառ աստղերին,

## ՔԱՌԱՋԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Իր աստղաշուկ հեքիաթը հյուսեց  
Եվ այդ հեքիաթով փարվեց սարերին:  
«Մերն են սարերը, աստղերը մերն են,  
Մերն է աստղաթիվ հոտը ոչխարի»-  
Հնչեց հովիվի կենարար հիմնը,  
Շոյելով սիրտը իր հին աշխարհի:  
Կրծքին շարվեցին աստղերը ոսկե,  
Հպարտությունից ջերմացավ հոգին,  
Ու թե սարերի զավակն էր միայն,  
նա դարձավ նաեւ աստղերի որդին:

1975 թ., գ. Ակմաղբյուր

### ՍԵՐ ԳՅՈՒՂԾ

(Ե Բ Գ)

Մեր գյուղը՝ սարի լանջին,  
Լուսինը՝ օղ ականջին,  
Աղբյուրը՝ ձեռքին քնար,  
Առվակը զնգուն մի լար:

Օրերը՝ կարմի՞ր-կարմի՞ր,  
Շորերը՝ կանա՞չ-կանա՞չ,  
Կրծքի տակ հազար երազ,  
Իմ հոգուն մոտ ու ճանաչ:

Թե սիրտս էլ ուզի՝ կտամ,  
Մեր գյուղը՝ սարի լանջին,  
Նա իմ մոր շունչն է տաք  
Եվ սերը իմ առաջին:

1975 թ., գ. Ակմաղբյուր

**ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ**

\* \* \*

Վառարանի ծուխը պապենական մեր տան  
Գալարվում է դանդաղ, թեւում դեպի երկինք,  
Այդ ասել է՝ այստեղ առույգ մի գերդաստան  
Հորինում է ոսկե հեքիաթը իր կյանքի:  
Վառարանի ծուխը պապենական մեր տան,  
Ոլունքներ է դառնում, որ աստղերից կախվի,  
Այդ ասել է՝ պապիս երազները պայծառ  
Դեռ ապրում են՝ դարձած շունչը մեր օջախի:  
Այդ ասել է՝ տատիս բարի խոսքն է ապրում,  
Հորս խիղճը մաքուր ու քնքշանքը իմ նոր,  
Այդ ասել է, որ մեր կյանքի ծառն է շրշում՝  
Արմատներով իր հին ու ճյուղերով իր նոր:

1975 թ., Ակնաղբյուր

\* \* \*

Ծիրկաթինի փեշերին  
Մեր գյուղը մոտ է,  
Նրա կանաչ ուսերին  
Միշտ աստղահոտ է:  
Երազներում իմ գյուղի  
Ու հաղթ կրծքի տակ,  
Աստղերն են շող արձակում  
Եվ արեւը տաք:  
Նա աստղերի ընկերն է՝  
Մոտ ու դրացի,  
Թե մարդն աստղի նման է՝

**ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ**

Դուռն իր կբացի,  
Պատիվ կտա ու հարգանք,  
Բարեսիրտ հյուրին,  
Եվ կպատմի իր հյուսած  
Հեքիաթն աստղերի:  
Հյուրը նրան կլսի՝  
Իրեն մոռացած,  
Զարմանալով՝ աստղերը  
Ե՞րբ են իջել ցած...

1975 թ., Ակնաղբյուր

\* \* \*

Ես ծնվեցի Ղարաբաղի  
Սեգ լեռներում,  
Ոլորվեցին ճամփաներս  
Հեռուներում...  
Ինձ ամենուր ընդունեցին  
Աղ ու հացով,  
Մի կաթիլ էր խնդրությունս,  
Ղարձավ մի ծով:  
Բայց իմ փոքրիկ լեռնաշխարհը  
Իմ սրտի պես  
Ունի մի ցավ,  
Որ հուզում է  
Հայոց ամեն գերդաստանի,  
Երազում է, որ միանա  
Իր սրբամայր Հայաստանին:

1976 թ., Ստեփանակերտ

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

### ԵՍ ԼԵՇՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴՆ ԵՄ

Ես Լեռնային Ղարաբաղն եմ...  
 Իմ հնաբույր արեւի տակ  
 Թեւավորված իմ պայքարով,  
 ճակատս բաց, հոգիս շիտակ,  
 Իմ տքնությամբ, իմ ինքնությամբ,  
 Քայլում եմ ես դեպի գալիք՝  
 Արարելով բերք ու բարիք:  
 Ուր դժվար գործ՝ ես այնտեղ եմ,  
 Ուր հարուստ փորձ՝ ես այնտեղ եմ,  
 Խաղաղության համար խմբված թե բանակ կա՝  
 Ես այնտեղ եմ,  
 Թե բարձունք ու հաղթանակ կա՝  
 Ես այնտեղ եմ...  
 Ես Լեռնային Ղարաբաղն եմ՝  
 Միշտ սիրահար հանդ ու հողի,  
 Քարից անգամ հաց եմ քամում,  
 Ջյութ եմ քամում ես խաղողի...  
 Ապա նայեք Արեւսարի  
 Փեշին փոված իմ Հաղորդին,  
 Նրա առատ այգեկութին,  
 Ծաղիկներին նրա հուռթի:  
 Իմ Մարտունուն նայեք ապա,  
 Միշտ ժպտադեմ, աղ ու հացով,  
 Սուրենաշեն իմ ճարտարին՝  
 Այգին զմրուխտ ու գինին ծով...  
 Ապա տեսեք աստղերի հետ

## ՀԱՌԱՎՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Ո՞նց է խոսում փրկված Շուշին...  
 Չեղին մոլորդը շինարարի,  
 Իր նորահյուս երգը շրթին,  
 Մի դրախտ է նա հոգեթով,  
 Սիրտ է բուժում անգամ օդով:  
 Ապա նայեք Քաշաթաղին՝  
 Վերածնված հայոց տաղին,  
 Քարվաճառին՝ փրկված հավերժ,  
 Հոգիներում երգ ու վրեժ:  
 Ապա լսեք՝ իմ լիւսանուն  
 Մարտակերտի գովքն եմ անուն,  
 Իր արտերով, այգիներով հոգեհմա,  
 Առատության աղբյուր է նա:  
 Ապա նայեք  
 Իմ լեռնային գեղեցկուհուն՝  
 Միշտ հարազատ ու միշտ անգին  
 Շահումյանի սուրբ անունը  
 Կրող իմ նոր, մայր քաղաքին...  
 Հայտնի է նա  
 Կառույցներով իր նորածին, երգով, լույսով,  
 Երազի պէս աստղոտ հույսով,-  
 Խելոք, արի զավակներով:  
 Նրանց ուժով, ավյունով եմ ես քարձրանուն,  
 Նրանց գործի վեհությամբ եմ ես քաղցրանուն,  
 Նրանցով եմ ազատության ջահը վառել,  
 Նրանցով եմ հպարտ քայլում դեպի դարեր:

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

### ՈՐԴՈՒՄ

*Կարեմին*

Յեծիր քո ձին ու սլացիր սարերն ի վեր,  
 Մի վախեցիր անդունդներից,  
 Լսիր, որդիս, ինչ են ասել պապերը մեր,  
 «Ժայռերն անգամ վախենում են խիզախներից»:  
 Արդար գործը արեւ դարձրու քո հոգու մեջ,  
 Ամենից շատ սիրիր հողը մեր հայրենի,  
 Լավ իմացիր՝ նա՛ է դժբախտ կյանքում անվերջ,  
 Ով չունի տուն ու հայրենիք:  
 Դե, խթանիր քո ձին, որդիս ու սլացիր,  
 Գնա՛, փնջիր բարձունքների աստղերը պերճ,  
 Աստղաբույլով մարդկանց գիրկը վերադարձիր,  
 Որ հար ապես սրտերի մեջ:

1975 թ., Ստեփանակերտ

### ԵՐԳԵՐԻՄ ԳԻՐՔԸ

Երգերիս գիրքը իմ հայրենիքն է,  
 Գրքիս էցերը՝ արտերը նրա,  
 Տողերս նրա ծիլն ու ծաղիկն են,  
 Բառերս՝ մրգեր ծառերի վրա:  
 Իմ գոքի գույնը՝ կանաչ ու կարմիր,  
 Կազմին նկարած ծով բարիք ու բերք,  
 Տպվելու թիվը՝ ներկա ու գալիք,  
 Իսկ վերնագիրը՝ Ազատության երգ:

## ԶԻՍՎՈՐՆ ՈՒ ՄԱՐԸ

Ուազմի դաշտում  
Հանդիպեց մահը խիզախս մարտիկին.  
- Ո՞ւր ես շտապում,  
Շուտով հունձ կանեն այստեղ անխնա,  
Սիրածիդ աչքը ճամփիդ է հիմա,  
Դեռացիր դու այս ահեղ պայքարից,  
Խույս տուր, մի մնա,  
Քեզ ընծայում եմ ես հարյուր տարի,  
Զահել ես, գնա:  
- Չեմ կարող ապրել առանց հավատի,  
Ասաց զինվորը ու նետվեց մարտի:

1975 թ., Ստեփանակերտ

## ԶՈՐԱՆՈՒՄ ԵՄ

Չեմ որոնել բախս ու բարիք,  
Անց եմ կացրել օր ու տարիք  
Աշխատանքի մեջ,  
Իմ վաստակի բեռը ուսած,  
Իմ երազի ճամփով ուզած  
Քայլում եմ անվերջ:

Ակնաղբյուրը իմ երգերի  
Վերելքն է իմ քաղցր երկրի,  
Թռիչքը նրա,  
Նա է ձեռքիս գրիչ դրել,  
Նրա մասին երգ եմ գրել  
Սրտիս, խղճիս վրա:

## ՀԱՌԱՋԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Իմ խոհերում նրա հետ եմ.  
Նրա ճամփին լուսի գետ եմ,  
Ծաղիկ եմ ու վարդ,  
Նրանով եմ թեւեր առել,  
Նոր օրերի երգիչ դառել՝  
Նրանով հպարտ:

1975 թ., Ստեփանակերտ

### ԴՈՂԱՆՁ ՃՈԳՈՒ

#### ԶԳՏՈՒՄ

Ելել եմ սարը, երկնքի հյուրն եմ,  
Արեւն իջել է ու չոքել կողքիս,  
Շուրջս ծաղկունքի ժիանք ու բույր է,  
Ալեկոծվում է խենթացած հոգիս:

Նայում եմ հեռում՝ դաշտերին կանաչ,  
Յորիզոնները ծալում ափիս մեջ,  
Այն թաթախում եմ արեւի հրում  
Ու նորից վիռում ոնց երազ ու տենչ:

Բայց չեմ հագենում, արածս քիչ է,  
Ուզում եմ առնել գունդը արեւի,  
Շողերով լցնել ձորեր ու կիրճեր,  
Շողերով ժպտալ մարդկանց բարեւին:

Բոլոր սրտերին արեւ պարզեւել,  
Արեւով թրծել հոգիներն արար,  
Որ հողագնդի բոլոր ծայրերում,  
Մարդիկ արեւով ողջունեն իրար:

1976 թ., գ. Ակնաղբյուր

## Խ Ո Յ

Անցածը ափսոսում են  
Ու նորին ձգտում ծարավ,  
Մեկ տխուր հետ եմ նայում,  
Մեկ թշչում դեպի առաջ:  
Չեմ հասնում երբեք գագաթ,  
Միշտ կարծես ուղիս թերի,  
Լավ է, որ մի լույս հավատ  
Նստած է իմ թեւերին:  
Չուլվում եմ մեր օրերին,  
Խոսելով դարերի հետ,  
Դարձել եմ ես անցյալից  
Գալիքին ձգված մի գետ:

\* \* \*

Եվ գարնան զարթոնքն է իմ մեջ,  
Եվ ամռան տորը մրգաբեր,  
Եվ աշնան խորհենը բերքի տակ,  
Եվ ձմռան շունչը բքաբեր:  
Եվ ջրի կարկաչն է իմ հոգում,  
Եվ ամպի որոտն ու շանթը,

Եվ բարու ծիլերն ու հունձքը,  
Եվ չարը շղթայող մեծ ջանքը:  
Անցյալ եմ, ներկա եմ, անուրջ եմ,  
Գալիքին ձգված կամուրջ եմ:

1976 թ., Ստեփանակերտ

## ՔԱՌԱՋԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

### ԱՌԱՋԻՆ ԵՐԳՍ

Երբ աչք եմ բացել,  
Սարեր եմ տեսել ու կանաչ անտառ,  
Հորս ծեռքերով  
Անտառի փեշից կախված ակոսներ՝  
Նրա ճակատի կնճիռների պես  
Հաց ու հավատի երանգներով լի:  
Առաջին երգս այդ ակոսներից  
Քամած թարմ հացի բույրի մասին էր,  
Մեր կյանքը սնող հորս վաստակի  
Ու երազների բույրի մասին էր...  
Այդ ակոսները տողերի փոխված  
Մտել են սիրտս  
Բանաստեղծական իմ լուսաբացին,  
Ու մինչեւ հիմա երգերիս շղթան  
Իմ հոր մասին է,  
Ակոսի,  
Հացի...

1977 թ., Ստեփանակերտ

### ՀԱՅՐՍ

Այգեգործ է հայրս,  
Գիտե վազի լեզուն,  
Նրա համար կյանքը խաղողի համ ունի,  
Նրա համար կյանքը աստղերով է լեցուն,  
Իսկ աստղերը նրա հոգու ծալքերի մեջ  
Անուշ հատիկներ են՝ աշնան սեւ խաղողի՝  
Առած քաղցրությունը հայրենական հողի:

**ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ**

Յորս շրթունքներին կենսաթրիո երգ է,  
Մի աշխարհ է սիրտը՝ հորովելով սնված,  
Նրա Էռլեյունը հողին փարված հեւք է,  
Պապենական մեր հին ավանդներից ծնված:

1977 թ., Ստեփանակերտ

**ԵՐԲ ԱՍՈՒՄ ԵՆ՝ ՀԱՅՐ**

Երբ ասում են՝ հայր,  
Ես հասկանում եմ քրտինք ու վաստակ,  
Տան հառնող պատեր  
Եկ ամուր տանիք,  
Աստղերով լեցուն  
Մի սուրբ ընտանիք,  
Տնից հանդ թեւող ապրուստի հավատ,  
Դանդից տուն եկող ապրուստ անարատ,  
Անտառին հասնող կացնի զրնգոց,  
Անտառից հորդող ջերմություն ու բոց,  
Կարասում եփվող հրաշունչ գինի,  
Անուշ մրգերով ծանրաբեռ սինի,  
Լավ ընկերների խնջույք ու սեղան,  
Խնջույքից հետո գերանդի, եղան,  
Թոռների համար հրճվանք ու հանգիստ,  
Մեծերի համար Նահապետ մի խիստ,  
Թե լինի անգամ հոգնած, գլխիկոր,  
Իր կնոջ համար՝ արեւի բեկոր:

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

### ՅՈՐՍ ՏԵՆՉԸ

Իրիկնամուտ էր,  
Յոզնած արեւը նստել էր սարին...  
Ակոսի եզրին հայրս կանգ առավ,  
Նայեց արեւին  
Եվ հեքիաթային իմաստումի պես  
Շշնջաց այսպես.  
- Մի հնար լիներ,  
Ամեն սար դարձնես արդարության զանգ,  
Գետերը՝ տաղեր,  
Սրտերը՝ աստղեր,  
Չորուկներն անգամ  
Կանաչ եղեւնի,  
Ավազը ցորեն,  
Կրակն՝ աղավնի...

1977 թ., Ստեփանակերտ

### ՅՈՐՍ ՆՎԵՐԸ

Ինչ տեսնում եք ին մեջ.  
Ին հորից է եկել՝  
Բարությունս, հույսս,  
Ծարավ ծիլի համար գարնան ցող դառնալս,  
Շող դառնալս՝ մրսող բողբոջների համար,  
Չար ու շարի հանդեա հոգով դառնանալս,  
Շքերթների գլխին ծածանվելս անմար...  
Մարդու սիրով մարդկանց  
Դպարտ շարք մտնելս,  
Արդար իմ վաստակով  
Կյանքում տեղ գտնելս:

1977 թ., Ստեփանակերտ

## ՀԱՌԱՋԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

### ՀՈՐՍ ԶՐՈՒՅՑՑԸ

Սիրտս ծիծառ է,  
Լեռնային ծիծառ,  
Նրա հուշերում  
Առվակը երգ է,  
Արեւը՝ ծնծղա:  
Նրա հուշերում  
Սարը պապիկ է,  
Իսկ ծառը՝ տատիկ...  
Ուր էլ թեւել է իմ ծիծառ սիրտը,  
Գարնանամուտի իր զարթոնքի մեջ  
Մեր սեգ սարերին,  
Թթենուն, առվին,  
Կարոտել է միշտ հազարապատիկ,  
Արդար մի տենչով  
Թռչել է, եկել,  
Պապի թեւի տակ իր բույնը դրել,  
Առվի կարկաչով սնել ձագերին,  
Մարդկության սիրով փայփայել նրանց,  
Բարի օրինանքով բաշխել աշխարհին...

1977 թ., Ստեփանակերտ

### ԹԵ ՄԵՐ ԳՅՈՒՂԸ ԳՆԱՔ ՄԻ ՕՐ

Թե մեր գյուղը գնաք մի օր  
Եվ հարցնեք տեղը իմ հոր,  
Սարի լանջից հոսող առուն,  
Շուրջը փռած կանաչ գաղուն,  
Կասի՝ այստեղ լուսածեգին,

## ՀԱՌԱՋԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Ծառ էր ջրում բահը ձեռքին:  
 Թե այդ պահին այգում չեղավ,  
 Ծառը կասի՝ ձեռքին եղան,  
 Արտի միջով, թեժ կեսօրին  
 Այցի գնաց հնձվորներին:  
 Դանդում նրան թե չգտնեք,  
 Ետ կգաք, մեր տուն կմտնեք,  
 Քեֆ կսարքեք տիրոջ ննան...  
 Դայրս կգա  
 Ու կընդունի ձեզ գրկաբաց,  
 Բաժակն առած, մինչ լուսաբաց,  
 Կմիանա ձեր թունդ երգին:  
 Չեք նկատի նրա դեմքին  
 Ոչ ափսոսանք, ոչ երկմտանք,  
 Թե որ նաեւ  
 Որդիների անունը տաք...

1977 թ., Ստեփանակերտ

### ՅՈՐՍ ԶԵՌՔԵՐԸ

Դորս ձեռքերը հողի գույն ունեն,  
 Դողի կնճիռներ ու հողի բույր,  
 Նրանք հողածեփ աղավնաբույն են,  
 Արարման թեւեր, խինդի աղբյուր:

Շոյել են նրանք հասկեր ոսկեվարս,  
 Վազերի բեռով թրթոացել,  
 Վտանգի պահին լարվել են ցասմանք,  
 Թշնամուն ջնջող հրթիռ դարձել:

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Յորս ձեռքերը արմատ ու ճյուղ են,  
Բերքի բանալի, բերկրանքի դուռ,  
Գալիքին պարզած օջախ ու հյուղ են,  
Մառանի սյուներ, բարության դուռ:

1977 թ., Ստեփանակերտ

### ԱՓՍՈՍԱՆՔ

Յորս ուժի ծանրությունից  
Ժայռը կփլվեր,  
Նրա կացնի մի հարվածից  
Կաղնին կփռվեր,  
Գործի ժամին եւ ոչ մեկը  
Չէր հասնի նրան,  
Ցրտին, տապին կոփված դեմքը  
Գույն ուներ նռան:  
Բայց դրդում են ձեռքերն իհմա,  
Ուժը հատել է,  
Ծերությունը շատ է անգութ,  
Նրան գետնել է...  
Երջանիկ է զավակներով  
Եվ կյանքից գոհ է,  
Սակայն դեմքի կնճիռներում  
Տիսրության խոհ է:  
Նա չի հաշտվում ծերության հետ,  
Պայքար է հոգում,  
Աշխ, հայրերի ճամփին ինչո՞ւ  
Զմեռն է չոքում:

1976 թ., Ստեփանակերտ

## «ՈՒԶՈՒՆԴԱՐԱ»

Յարսանիք է, երգ է, նվագ,  
Պտտվում է շուրջպարն անվերջ,  
Յրաբուխ է ասես ժայթքում  
Զահելների սրտերի մեջ:  
Քոչարի են պարում նրանք,  
Լեզվակմներ են  
Ասես հզոր մի խարույկի,  
Թռչկոտում են, գոչում այնպես,  
Որ աստղերն էլ շլանում են  
Այդ հաճույքից:  
- Յայրիկ, ի՞նչ ես նստել մի կողմ,  
Մեզ հետ պարել չե՞ս ցանկանում, -  
Եվ համարձակ, ե՛ւ խնդրելով,  
Տղաները ծգում են ու կալմեջ անում:  
Ու պարում է հայրը թափով,  
Սակայն մի պահ,  
Կանգ է առնում նա հեւալով,  
(Լավ է, որ կա պատ-հենակը),  
Ու խնդրում է,  
Որ շուտ փոխեն եղանակը:  
Եվ ծորում է «Ուզունդարան»,  
Ետ են կանգնում տղաները,  
Ասպարեզը հորը թողած:  
Տարածել է թեւերը նա,  
Յոզնած կռունկ լինի ասես,  
Եվ առաջին անգամ կյանքում  
Պարում է նա դանդաղ ու հեզ:

## ՀԱՌԱՋԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Զահելները քար են կտրել,  
Յարցականի նման խոհն է  
Թառել նրանց դեմքի վրա,  
«Դայր, «Քոչարի» էիր պարում,  
Այդ ե՞րբ դարձավ «Ուզունդարա»:

1976 թ., Ստեփանակերտ

### ՊԱՊԻՍ ԵՐԱԶԸ

Պապս գիշերը կը մեր մի ժամ,  
Մի ժամում տեսած իր երազները  
Դիմզ ժամ կպատմեր...  
Կոիվ էր,  
Տարին ծանր էր ու դաժան:  
Գյուղի աջ թեւն էր վաստակած պապս,  
Ու մեր օջախի հույսն ու հավատն էր:  
Աչքը կկպցներ թռուցիկ, շտապ,  
Կելներ առաջին աքլորականչին,  
Երազի տուտը կրացեր դանդաղ՝  
Դույսը սրտի մեջ, ականջը՝ կանչի:  
- Երազում տեսա  
Արար-աշխարհի պղտոր գետերը  
Զուլալված, խաղաղ, -  
Խաղաղությունը կհաղթանակի...  
Տեսա՝ անտառում չոր փայտ եմ դարսում, -  
Տարին կլինի լավ ու հացառատ...  
Տեսա՝ Նժդեհին կարմիր ծի նստած,  
Կռվի է տանում մեր Դայոց զորքը, -

## ՀԱՌԱՋԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Նժեկի զորքին պարտություն չկա...  
 Պատմում է պապս,  
 Մեր հաղթանակը կապում իր տեսած  
 Երազների հետ,  
 Իսկ երազները՝ Նժեկի արդար  
 Ու մեծ գործի հետ:

1976 թ., Ստեփանակերտ

### ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՍ

Քիրսի լանջերի բուրմունքը առած,  
 Դիզափայտի հին խարույկը վառած,  
 Արեւարի ջինջ շողերին փարված,  
 Ո՞ւր թեւին տվեց իմ մանկությունը:

Մեծ կռվի բոթից շուտ հասունացավ,  
 Բահ ու մանգաղի ընկերը դարձավ,  
 Պապիս ծերության հետ էլ հեռացավ  
 Մանկություն չապրած իմ մանկությունը:

1975 թ., Ստեփանակերտ

### ՊԱՏԱՆՈՒԹՅՈՒՆՍ

Պատանությունս անցավ անհանգիստ,  
 Անցավ հաշմանդամ, կռվից տուն դարձած  
 Քեռուս հետ, գյուղում:  
 Թեկուզ ջահել էր,  
 Բայց ի՞նչ կարող էր անել նա մենակ, -  
 Պատանությունս դարձել էր նրան

## ՔԱԽՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Օգնական, հենակ:  
 Պատանությունս անցավ սայլի մեջ,  
 Թեկուզ քեռիս էր ավագ սայլապան,  
 Պատանությունս էր նրան պահապան:  
 Պատանությունս անցավ իմ քեռու  
 Մանգաղի տակով,  
 Խրծերի շատը կալ էր բերում իմ  
 Պատանությունը, այն էլ՝ շալակով:  
 Պատանությունս անցավ ծյուներում,  
 Զմռանն անտառից նա ցախ էր բերում,  
 Նրանց համար, ում ճրագն էր հանգել,  
 Սեւ լուրջ եկել, խուժել էր տունը:  
 Պատանությունս խղճնտանք դարձել,  
 Շտապ ապրում էր հասունությունը:  
 Լամպի լույսի տակ գրքերին թեքված,  
 Մեսրոպյան խոսքը սրտի մեջ բեկված,  
 Յոգու թեւերով գալիք էր թռչում  
 Պատանությունս՝ դարձած մի թռչուն:  
 Պատանությունս կռվի օրերին  
 Կես մրսած ու կես ժպիտով անցավ,  
 Դրա համար էլ...  
 Բանաստեղծ դարձած:

1975 թ., Ստեփանակերտ

### ՅԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Յասունությունս  
 Աշխարհին իջած խաղաղության հետ  
 ճանապարհ մտավ,  
 Կյանքը ողջունեց սիրո թրթիռով

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Ուսերն իր գտավ...  
 Աշխարհը սիրո օրորոց էր մի  
 Նրա աչքերին,  
 Այդ սերը հոգուն երազ էր բերում,  
 Եվ ուժ՝ ծեռքերին:  
 Դասունությունս իր կոպերի տակ  
 Առավ արտերի թափիշ կանաչը,  
 Իսկ ականջների մեջ ձայնագրեց  
 Զինջ աղբյուրների անուշ կարկաչը,  
 Լեռներից առավ հպարտությունը,  
 Խիտ անտառներից՝ ծփանքը խաղաղ,  
 Գիտելիքների անհուն ծարավով  
 Եկավ մեծ քաղաք...  
 Դասունությունս կայուն էր, համառ,  
 Նա հերկեր հերկեց,  
 Նա հունդեր ցանեց  
 Բեղուն ու հարուստ ամառվա համար...

1975 թ., Ստեփանակերտ

### ԻՄ ԽՈՒՅԵՐՈՒՄ

Իմ խոհերում,  
 Գրոհներում,  
 Միշտ լավին եմ ես հետեւել,  
 Միայն լավին,  
 Որ ծնվել է՝ լեռներ հարթի ու հար թեւի,  
 Եվ թեւելով՝  
 Դարատեւի:  
 Իմ խոհերում,  
 Գրոհներում,

**ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ**

Նախանձել եմ փարոսներին,  
Որոնք մութ ու խավարի մեջ,  
Լույսով անշեց,  
Տուն են բերել հերոսներին:  
Իմ խոհերում,  
Գրոհներում,  
Նախանձում եմ փարոսներին  
Ու հետեւում հերոսներին:

1977 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Երբ ամպերը պար բռնեն  
Մռով սարի կատարին,  
Երբ արծիվը խենթացած  
Իր սխրանքը կատարի,  
Իմացիր, իմ բարեկամ,  
Որ այդ արծվի սխրանքը  
Ներշնչանքն է իմ երգի...

Երբ ամպերը որոտան,  
Գարնան անձրեւը մաղի,  
Հողը առնի ծարավն իր  
Ու ժպտա շող ու շաղին,  
Իմացիր, իմ բարեկամ,  
Որ անձրեւն այդ կենարար,  
Թարմությունն է իմ երգի:

**ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ**

Երբ խաղաղվի երկինքը,  
Ծիածանը կամարվի,  
Գալիք բերքի ծիլերով  
Մի նոր աշխարհ արարվի,  
Իմացիր, իմ բարեկամ,  
Որ ծիածանն այդ բարի,  
Հավերժումն է իմ երգի:

1977 թ., Ստեփանակերտ

**ԿԱՐԾՈՒՄ ԵՒ**

Ես քայլում էի թավուտ անտառով,  
Անվրդով, հանգիստ...  
Եվ հանկարծ տեսա,  
Որ փայտփորիկը կաղնու կատարից  
Շիֆր է հաղորդում,  
Իսկ մոշահավը թփի տակ կարծես  
Այդ հաղորդումը  
Տպում է արագ:  
Չկարողացա խոսքն այդ վերծանել,  
Անհուն կարո՞տ էր, թե՝ սիրո կրակ,  
Ու մինչեւ հիմա այդ հեռագիրն ինձ  
Հանգիստ չի տալիս,  
... իսկ կարծում էի, թե անգիր գիտեն  
Երգը անտառի:

1977 թ., Ստեփանակերտ

**ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ**

\* \* \*

Աշխարհը՝ մեծ, տենչերս՝ անթիվ,  
Երազներս՝ պայծառ ու կեզ.  
Փոթորկվում եմ գիշեր ու տիվ,  
Գարնանային անտառի պես:  
Փոթորկվում եմ ու պայքարում,  
Որ իղձերս առնեն մարմին,  
Որ սրընթաց մեր այս դարուն,  
Թեւաբախեն երգերը իմ:  
Սերունդներին բերկրանք տանեն,  
Տանեն ձգտում ու հիացում,  
Որ վաստակս գալիք հասնի,  
Ինչպես երազ ու լիացում:

1977 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ես այն մարդու ժառանգորդն եմ,  
Ում շուրթերին առաջինը երգը հնչեց,  
Ով որ քաղը խփեց քարին  
Եվ համաշափ զարկ զգալով,  
Ելավ պարի...  
Ով ավագին  
Ոտնահետքերն իր նշմարեց  
Եվ իր ննան մարդ նկարեց:  
Ով որ գծեց  
Կանաչ տերեւ,  
Գետ ու առու,  
Ծունչը քարու

## ՔԱԽՆԱՑԻՆ ՊՈՊԱՆՁՆԱՐ

Իր մեջ զգաց,  
Սիրով լսեց  
Կյանքի հիմնը,  
Ինչ ստեղծեց,  
Չասաց՝ իմն է,  
Գոչեց՝ Մերն է...  
Ով մեկն առավ,  
Տասն ընծայեց,  
Մարդու սիրով սիրտը վառեց,  
Եվ ոչ ոքի չնախանձեց,  
Չծանրացավ իր մեղքերով,  
Յարստացավ  
Յոգեպարար իր երգերով,  
Ժայտներով աշխարհն օժեց:  
Ու մի օր էլ արեգակի առաջ չոքեց,  
Ասաց՝ Արեւ,  
Քեզնից սերված շունչս վերցրու,  
Դու աշխարհից անբաժան ես,  
Զերմացնող շողերիդ հետ իմ հոգին էլ  
Սերունդներին կբաժանես...

1977 թ., Ստեփանակերտ

### ՀԱՎԱՏԻՍ ՄԵԶ

Պատանության տարիներին  
Ես փարվեցի իմ հավատին,  
Ընկերացանք իրար,  
Եվ սրտիս մեջ իմ տենչերի  
Բույլը դարձավ սխրանքի երգ,  
Անմարելի կրակ:

**ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ**

Մարտեր եղան աշխարհացունց,  
Միլինավոր սրտեր հանգան  
Հանուն իմ հավատի,  
Այդ սրտերը մեր դաշտերուն  
Արյունավառ վարոեր դարձան,  
Որ քույր բերեն կյանքին:

Որդեկորույս մեր մայրերի,  
Սիրո ծարավ մեր քույրերի  
Արցունքների միջից  
Հավատիս մեջ թախիծ ծորեց,  
Եվ հավատս կարծես օծվեց  
Այդ թախիծով անբիծ:

Ու ծալքերում իմ հավատի,  
Հայրենիքիս ուժն է եռում՝  
Միշտ անսասան ու վեհ,  
Մեկ էլ զոհված մարտիկների՝  
Մեր հայրերի, եղբայրների  
Հիշատակն անմեռ:

1977 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Մանուկները թռվալով  
Առավոտյան իշան բակ  
Ու փաղոցի մի անկյունուն  
Կառուցեցին մի «գյուղակ»:  
Եվ դիտեցին երկար-երկար՝  
Տե՞ղն է, արդյոք, ամեն ինչ,  
Ստուգեցին «կառույցները,

**ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ**

ճանապարհը, լույսը ջինջ»:  
Յավանեցին իրենց «գյուղը»,  
Ասին՝ լավ ենք կառուցել,  
Բայց այս ի՞նչ է... զոհվածների  
Հուշարձանն ենք մոռացել:

1977 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Սարի փեշերին  
Թերթերը թոշնած ու թեւերը կախ  
Մի ծաղիկ տեսա...  
Թախծոտ մի սարսուռ մարմինս դաղեց,  
Փշաքաղվեցի.  
Անցած-գնացած օրերիս ձայնը  
Հասավ իմ սրտին...

1977 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ամեն օր հսկա մի սար է փլվում  
Իմ հոգու խորքում,  
Եվ հսկա մի սար հառնում է նորից:  
Ամեն օր մի գետ  
Չորանում է իմ երազ-խոհերում,  
Եվ փոխարենը մի գետ է բխում  
Երազիս ձորից:  
  
Իմ հոգու խորքում աստղեր են խամրում,  
Ծնվում արեւներ,  
Դին կաղնիներ են մեռնում ամեն օր,

## ՔԱՌԱՋԻՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Եվ նոր անտառներ շրջում մեղմօրոր:  
 Ողջ բնությունն է կրկնվում իմ մեջ՝  
 Կարոտով, կանչով...  
 Ապրում եմ այսպես արարման տենչով:

1977 թ., Ստեփանակերտ

### ԿՅԱՆՔՍ ՎԿԱ

ճիշտ են ասել,  
 Կյանքս վկա,  
 Այս աշխարհի արարիչը  
 Կինն է, որ կա...  
 Կինն է հունցել արեւը վառ,  
 Երկինք նետել,  
 Դրա համար  
 Այնքան ջերմ է արեւն անմար:  
 Կինն է երկնել ջրվեժները,  
 Որոնք այնքան նմանվում են  
 Նրա ուսերն ի վար փուլած  
 Նուրբ վարսերին:  
 Կինն է երկնել ծաղկունքը բյուր,  
 Դրա համար նրանք ումեն  
 Կնոջ թուչանք ու կնոջ բույր:  
 Կնոջ ձեռքի շոյանքներն են  
 Բարդիները աշխարհ բերել,  
 Թե չէ նրանց  
 Նուրբ իրանն ու նազանքները  
 Չեն նմանվի երբեք կանանց:  
 Իսկ հովե՞րը...

## ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ

Երբ քրտնաթոր մարդու դեմքին  
Զով են բերում ամռան տորին,  
Թվում է, թե շոյում են քեզ  
Կնոջ սիրտը, կնոջ հոգին:  
Կինն է խորիել, որ մայրությամբ  
Քաղցրացնի աշխարհը ողջ,  
Դրա համար,  
Երբ որ կանայք մայրանում են,  
Գարնանային ցողերի պես  
Մեր բերկրանքն ու խինդն է ցանվում,  
Մեր դուստրերի, մեր ուստրերի  
Շրթունքներին մայր անունն է  
Ծիածանվում:  
Կյանքս վկա,  
Այս աշխարհի արարիչը  
Կինն է որ կա:

1977 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Կարոտներիս թերով կրկին գյուղ եմ հասել  
Ու շրջում եմ նորից փոքրիկ մեր բակում,  
Միտքս իր հուշերի հին կծիկն է բացել,  
Տիրությունն է շնչում իմ զարկերակում:

Մայրս չկա, որ գա փարվի ինձ քնքշանքով,  
Չկա տատս՝ հեքիաթն իմ կարճ մանկության,  
Բակ է իշնում մութը լուռ, ափսոսանքով,  
Ես պառկում եմ հողին մի խոր անձկությամբ:

## Ք Ա Խ Ա Յ Թ Ի Ն Պ Ո Ղ Ա Ն Ճ Ա Ր

Պառկում եմ, որ մորս անուշ ձայնը լսեմ,  
Լսեմ տատիս ձայնը՝ նուրբ, մելամաղձոտ,  
Ճետո իրիկունը կոպերիս տակ առաջ  
Երազներիս փարվեմ մինչեւ առավոտ...

### Մ Ե Ր Օ Զ Ա Խ Ի Մ Ո Տ

Սիրելիս, կաթսան բեր դիր կրակին,  
Փայտե շերեփով թող թանը խառնեմ,  
ճարճատող մեր հին օջախի կողքին  
Ճուշ դարձած իմ մոր կարոտը առնեմ:

Գազն այսօր փակիր, պետք չէ, սիրելիս,  
Թող փայտով վառեմ օջախը մեր հին,  
Ես իմ մոր եփած թանովն եմ հիշել,  
Պղնձեն կաթսան բեր դիր կրակին...

1975 թ., գ. Ակնաղբյուր


### Ո Վ Ս Ա Յ Ր Բ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ով մայր բնություն,  
Զորություն տուր ինձ՝ գույներդ բոլոր  
Ի մի հավաքեմ քո սեգ սարերից,  
Անդունդներից քո, դաշտերից ծաղկած,  
Քո հորդ գետերից, թերթերից ծաղկանց,  
Ի մի հավաքեմ, խառնեմ երգերիս  
Ու երգերիս հետ նվիրեմ մարդկանց:

**ՀԱՌՆԱՑԻՆ ՊՈՂԱՆՁՆԱՐ**

Ով մայր բնություն,  
 Զորություն տուր ինձ՝ քո երակների  
 Թելերից բոլոր ու երանգներից  
 Յյուսեմ տողերը իմ նոր երգերի,  
 Որ երգերս քո արյամբ բարախեն,  
 Ունենան շունչը քո գարունների  
 Ու հավերժության դռները բախեն:  
 Զորություն տուր ինձ՝ քո արմատները  
 Խրեն խորքերը իմ նոր երգերի,  
 Որ նրանք առնեն ուժի արարման,  
 Մոռանան՝ ինչ է հին ու հնություն,  
 Որ սրտերի մեջ բուրե՞ն ու ծփա՞ն  
 Քո նոր թարմությամբ,  
 Ով մայր բնություն:

1977 թ., գ. Ակմաղբյուր



Խաղողաքաղ



Քանի՝ անգամ մեծացար ու  
Մանկացար ինձ հետ,  
Սոր հրճվանք ու համբերություն,  
Արեւար իմ սեզ:

## ԱՅԱ...ՏԱՐԻՔՈՒՄ

## ԻՄ ԱՐԵՎԱԿԱՐ

Առավոտներս ուսին առած  
Իմ հույսի կատար,  
Չորս լանջերով լուսին փարված  
Իմ վիզ ու սատար:

Առուներս դոշին շարած  
Մայրական իմ գիրկ,  
Գարուններս փեշին կարած  
Իմ եռանդ ու կիրք:

Բարձունքներս պահած խորքում  
Իմ լեգենդ ու կյանք,  
Արցունքներս առած հոգում՝  
Իմ թախծոտ բերկրանք:

Քանի՛ անգամ մեծացար ու  
Մանկացար ինձ հետ,  
Մոր հրճվանք ու համբերություն,  
Արեւար իմ սեգ:

1979 թ., գ. Ակմաղբյուր

## ԽԱՂ

Ուխտաձորում կա մի գետ,  
Հավետ շող ու շաղում,  
Կարկաչում է նա կրծքիս տակ  
Ու սրտիս հետ խաղում:

Մեկ էլ տեսար քնով անցավ՝  
Մի խաղաղված խանդով,  
Մեկ էլ տեսար աշուղ դարձավ,  
Երգեց բազում հանգով:

Երգն ավարտեց, աչքով արավ,  
Պահմտոցի խաղաց,  
Թաքստոցից ձորը թռավ,  
Վազեց դեպի ջաղաց:

Շրթունքներին ալրափոշի,  
Զկների հետ պարեց,  
Լուսնի բաղարձն առած դոշին,  
Դաշտերն աճապարեց:

Աճապարեց եւ ինձ կանչեց՝  
Սիրտս ափերի մեջ,  
Այդպես՝ նա ինձ, ես էլ՝ նրան,  
Կարոտում ենք անվերջ:

1979թ., գ. Ակմաղբյուր

## ԱՐԴԱՎԻՐք

Ուխտաձորը լցվել էր  
Ամպ ու որոտով,  
Դասից Եկա Եւ անտառ  
Գնացի ոտով:  
Խելագարվեց անձրեւը  
Սարի ծմակում,  
Ես մեն-մենակ կուչ Եկա  
Կաղնու փչակում:

Գիշերն իջավ, ճամփեքը  
Կորան խավարում,  
Չոր ու կիրճեր խենթացած  
ճչացին վարում:  
Քիչ էր մնում՝ ժայռերը  
Գլխիվայր շուռ գան,  
Անդունդմերը անտառին  
Բռնեն ու կուլ տան:

Կաղնին կուրծքը դեմ արած  
Արհավիրքին խենթ,  
Մենամարտի էր մտել  
Թեժ շանթերի հետ:  
Սակայն կայծակը կաղնու  
Մի ճյուղը խլեց,  
Դեմի ժայռը ցնցվեց ու  
Զայռույթից փլվեց:

Աչքը բացեց լուսայգը՝  
Անդրդի ծարավ,  
Մայրս արցունքն աչքերին  
Եկավ ինձ տարավ:  
Տուն գնացի՝ ին հոգում  
ճյուղատված կաղնին...  
... Կռվից հայրս էր Եկել,  
Բայց մի կռնանի ...

1979 թ., գ. Ակնաղբյուր

## ԳԱՆԶ

Անց են կենում օրերս՝  
Կանաչ-կարմիր շորերում,  
Թռվոռում են լորերս  
Ին կարոտի ծորերում:

Չեռք մեկնելու ի՞նչ իմաստ,  
Ճետ թերելու հույս չկա,  
Շոշափում եմ իմ սիրտը,  
Երազներն իմ արեւկա:

Լույսի թելեր եմ մանում,  
Յիմնում եմ նոր մի կամար,  
Թեկուզ տեսել եմ կյանքում  
Յիսուն գարուն ու ամառ:

Նորից ծփանք է տալիս  
Դեմս ծնծղան արեւի ...  
Յոգիս խուտուտ է գալիս,  
Խորքում գանձ կա երեւի:

1980 թ., Ստեփանակերտ

## Ի Մ Ո Ւ Ս Ո Ւ Ց Չ Ո Ւ Ր Ի Ն

Իմ առաջին ուսուցչութուն՝  
Աշխեն Արայանին

Երախտիքի ձայնը երգ դարձրի այսօր,  
Ծաղիկմերի բույրով շաղախեցի,  
Ինչ որ ցանել էիր մատաղ մեր սրտերում,  
Հատիկ-հատիկ, շող-շող հավաքեցի,  
Զանգի դողանց դարձավ, այգաբացի ժպիտ,  
Մայրական մեղմ քնքշանք, արեւի բույր,  
Այբուբենի ծփանք, ծարավ հոգի ու սիրտ,  
Երազների խարույկ, աստղերի բույլ:

Հավաքեցի ծալ-ծալ, ալիք-ալիք, փունջ-փունջ,  
Քո անհատնում սիրո ծովը մտա ...  
Բաժանվելու օրից դու իմ հուշերի մեջ,  
Թուխ արեգակ էիր, ճերմակ գտա:  
Սիրտս ափիդ մեջ է,  
Առ, ջահելացիր,  
Նրանում քո տված  
Աշխարհին է անձիր:

1979 թ., գ. Ակնաղբյուր

## Ա Յ Ց

Աստղերի՝ միջո՞վ իջնեմ,  
Թե՞ սեզ սարերի,  
Խորհուրդն եմ բերել ինձ հետ  
Անցած դարերի:

Ոտքերս շատ են կպել  
Սրակող քարի,

Բայց երբեք չի խաթարվել  
Զայնն իմ քնարի:

Կանչերի ետքից ընկած  
Հեռուն գնացի,  
Պղտորված ջրերի մեջ  
Չուլալ մնացի:

Եկա, որ մաքրությունս  
Քեզանով չափեմ,  
Գտնեմ ինձ քո լույս գրկում,  
Քեզանով հարբեմ:

Ուխտի չեմ եկել խարված,  
Եկել եմ սիրով,  
Եկել եմ կյանքս քեզ տամ  
Իմ սրտի հրով:

1980 թ., գ. Ակնաղբյուր

### ՄԱՅՐՍ

Մայրս իիվանդ էր, ա՞խ,  
Նա մարում էր արդեն,  
Նստել էինք շուրջը  
Թախոնտ երազներով,  
Մենք սիրտ էինք տալիս,  
Խարում իրեն եւ մեզ  
Ու մեր հոգին լցնում

Անգո հրաշքներով:  
 Իրար աչքերի մեջ  
 Մշուշ էինք տեսնում.  
 Մայրս մի տեսիլք էր  
 Դաշնում կամաց-կամաց,  
 Ոչ թե մորս, ասես,  
 Մի հուշ էինք տեսնում,  
 Ինչպես հեքիաթի մեջ՝  
 Կարոտներով անանց:  
 Դայրս մղկտում էր՝  
 Զեռքը խղճին դրած,  
 (Կյանքում մորս երբեք  
 Մի ցուրտ խոսք չի ասել),  
 Նա հիշում էր մեկտեղ  
 Ծանրությունը կրած,  
 Դիսուն տարի ո՞նց են  
 Իրենց ուղին անցել:  
 Մեր տան առաստաղը  
 Քրտինքով էր պատել,  
 Իսկ թթենին տխուր  
 Շարական էր ասում՝  
 Գարնան շրշյուններում  
 Մի խոր թախիծ,  
 Մայրս որբ մնացող  
 Դորս շշնջում էր.  
 - Ինչպես պիտի ապրես  
 Դու առանց ինձ:

## Ի Մ Գ Յ Ո Ւ Ղ Ե

Արեւարի լանջին պեծին տվող մի լույս՝  
Հին-հին տառապանքից, նոր հոգսերից ծնված,  
Կանաչ երազներով հուլիրատող մի լույս՝  
Արդար քրտինքով ու դժվար հացով սնված:

Արեւարի լանջից սկիզբ առնող առու՝  
Չուլալ, սակայն խրտնած՝ հանկարծ չցամաքի՝,  
Խաղողենու մի վազ՝ երկար ու դալարուն,  
Արմատները հողում, շուրթը՝ արեգակին:

Արեւարի ուսին բախտը գտած հովիվ,  
Ուխտաձորի փեշին հացը գտած հողվոր,  
Անխոնջ մի գիտնական՝ միտքը դրած բովին,  
Մի թխահեր տղա՝ ապագայի լողորդ:

1980 թ., գ. Ակմաղբյուր

## Պ Ե Ղ Ո Ւ Մ

Մի ամառ ես դարձա հնագետ,  
Պեղեցի պապերիս տան տեղը:  
Դայրս նախ ինձ անգործ համարեց  
Ու ջղայն ոլորեց թուխ բեղը:  
Ի նշ աներ, հաշտվեց եւ օգնեց,  
Ինչպես միշտ, աշխույժ էր, չհոգնեց:

Եվ հայրս իր աչքին բարձրացավ,  
Երբ մեզ հետ խոսեցին դարերը,

**Ք Ա Ս Ա Խ Ա Բ 8**

Արեւի շողերից թարմացան  
Անտաշ ու սրբատաշ քարերը:

Յանեցինք մենք քարե մի կացին,  
Բրոնզե մի նիզակ, մի սինի,  
Արեւից գույն առած մի կարաս,  
Բայց ափսո՞ս, ցնդել էր թունդ գիճին:

Յանեցինք կեռաքիթ մի մանգաղ,  
Մի արոր՝ պապիս պես կորամեջք,  
Մեսրոպյան գրերով մագաղաթ  
Եվ մեկ էլ մի սուրբ խաչ քառաթեւ:

... Ոչ թե հին տունն էի ես պեղել,  
Այլ սիրտը հայրենի իմ գյուղի,  
Իմ գյուղի, որ այնպես ցնծում է  
Դաշնությանք արմատի եւ ճյուղի:

1980 թ. գ. Ակնաղբյուր

**Ս Խ Ա Լ Ը**

Դաշտերը կանաչել, նայում են սարերին,  
Սարերը լռել են, սառել,  
ճերմակն է շատանում նրանց սեզ գահերին,  
Զմեռը դաժան է դառել:

Դաշտերը արթնացել, կարոտով կանչում են,  
Գարունը համբույր է ուզում,

**Ք Ա Ս Ա Խ Ա Բ 8**

Սարերը չեն լսում, անտարբեր սառչում են՝  
Մշուշի ծովի մեջ սուզվում:

Ծարաված դաշտերի շուրթերը ճաքում են,  
Խաշվում են, կարոտ են ջրի,  
ճերմակած սարերի հույսերը խարվում են,  
Մաշվում են, կարոտ են հրի:

... Արեւը ելել է, արդար է արեւը,  
Ուր որ է, սխալն այդ կուղղի,  
Արեւի շիկնանքից իմ սիրտը դողում է  
Եվ ճոճվում իր հույսի ճյուղին:

1980 թ., Ստեփանակերտ

**ԵՐԿՐԻՍ**

Թե շառաչին գետերը ինձ չափ,  
Հիմա մաշել էին կանչերը իրենց,  
Թե չքննին սարերը ինձ չափ,  
Հիմա փշրել էին լանջերը իրենց:  
Թե ալիքվեին ծովերը ինձ չափ,  
Հիմա լճակ ու լիճ էին դարձել,  
Թե թեւածեին հովերը ինձ չափ,  
Հիմա վաղուց էին անհետացել:  
Սերս դեպի քեզ անհուն է այնքան,  
Որ նախանձում է բնությունն անզան:

1980 թ., Ստեփանակերտ

## ԿՅԱՆՔԻՍ ԳԵՏԸ

Չչորանա կյանքիս գետը,  
Վարարումով անցնի,  
Դալար պահի արահետս,  
Արարումով անցնի:  
Ծփանք դառնա, տաղ ու հողին  
Փարվի ալիքներով,  
Գգվանք դառնա, շաղ ու շողին,  
Վառվի գալիքներով:  
Անձրեւ դառնա, սրտիս իջնի,  
Ափերն իմ կանաչեն,  
Ուր էլ թեւի, նրա շնչից  
Մարդիկ ինձ ճանաչեն:

1980 թ., Ստեփանակերտ

## ԳԱՐՈՒՆԸ

Գարունը բացվում է,  
Վազերը լացում են,  
Իմ խինդի արցունքն են նրանք:  
Լանջերը ժպտում են,  
Յունդերը ծլում են,  
Իմ հոգու արբունքն են նրանք:  
Սարերը պրկվում են,  
Ծառերը պրկվում են,  
Իմ սիրտն է խոխոջում նրանց հետ:  
Ամպերը հալչում են,

Զրերը կանչում են,  
իմ սիրտն է խոխոջում նրանց հետ:  
... Հունդերը ցանել եմ,  
Ծառերը փայփայել,  
Վազերը շահել ու պահել,  
Նրանց հետ լցվում եմ,  
Նրանց հետ բացվում եմ,  
Նրանց հետ մնում եմ ջահել:

1980 թ., գ. Ակնաղբյուր

### ՍՐՏԻՍ

Թե հունդերի հետ չծլեիր  
Ու չբացվեիր վարդերի հետ,  
Թե աստղերից լույս չխլեիր  
Ու չծփայիր արտերի հետ,  
Թե սարերի հետ չհառնեիր,  
Ու չսանձեիր հողմերը չար,  
Թե կայծակներից հուր չառնեիր  
Ու չցրեիր մշուշ ու մառ,  
Թե մանկանց ճիշով չխնդայիր  
Ու չակոսվեիր հանդ ու դաշտով,  
Թե երկրին շունչը քո չտայիր  
Ու չմխայիր նրա բախտով,  
Թե մոմի նման չհալվեիր  
Ու թրթռայիր լոկ քեզ համար,  
Թե մարդկանց ճամփին չվառվեիր,  
Այսօր քո տեղը ո՞վ կիմանար:

1980 թ., Ստեփանակերտ

## ԿՐԾՔԻՍ ՏԱԿ

Ամպերը զարնվեցին երկնքում՝  
Իմ հոգում կայծակը շողաց,  
Շառաջներ հնչեցին ընդեղքում,  
Երկրի տեղ իմ սիրտը դողաց:

Գետերը դուրս եկան ափերից,  
Զրածածկ հույզերս եղան,  
Անտառներ խարվեցին ծափերից,  
Հողածածկ հույսերս եղան:

Աշխարհը կրծքիս տակ առել,  
Դարձել են եռացող տիեզերք...  
Ավյունս կարող է քնե՞լ,  
Արյունս չի քնում երբեք:

1979 թ., Ստեփանակերտ

## ՊԱՊԻԿ

Առաջին թոռնիկիս՝  
Ալեքսանդր Խանյանին

Այնքան վառ աստղեր կային իմ հոգում,  
Սակայն Արեւը թոռնիկս էր, ծնվեց,  
Եվ աշխարհ տեսած իմ սրտի խորքում  
Ներկաս գալիքին հար ծիածանվեց:

Ինաստ ստացան կյանքս, ձգտումս,  
Աշխարհի հանդեպ սերս ծովացավ,

**Ք Ա Ս Ա Խ Ա Տ Ա Ւ Ց**

Թե ո՞նց էր հսկում թռռների քունը՝  
Ալեհեր հորս ես նոր հասկացա:

Ես նոր հասկացա, թե ինչ է սերունդ,  
Ինչ են շառավիղ եւ հոգու կամուրջ,  
Պապիկ կոչվելու հպարտ անունը  
Դիմա երազ չէ եւ ոչ էլ անուրջ:

Անունն այդ՝ սրտի զարկ է ինձ համար,  
Որ հազար թելով կապում է կյանքին...  
Ովքեր ուզում են հասուն այր դառնալ,  
Թող որ շտապեն ու դառնան պապիկ:

1980 թ., Գրողնի

**ԵՍ ԻՆՔՍ ԻՆՉ ԴԱՍՏԱՏԵՑԻ**

Ես ինքս ինձ հաստատեցի՝  
Ունեցածս կյանքին տալով,  
Յոգուս շերտ-շերտ երազները  
Բաժանեցի ծաղիկներին,  
Իսկ բյուրեղյա մաքրությունը՝  
Ծաղիկներին...  
Բարդիներին նվիրեցի  
Իմ տենչերի սլացքը սուր,  
Օջախներին՝  
Սրտիս, հոգուս  
Կայծերը բյուր...  
Վեհությունս նվիրեցի

Սեզ սարերին,  
Եռլթունս՝  
Սերունդներին ու դարերին:  
Դեռ չեմ հատնել,  
Վառվում եմ դեռ  
Ճրայրքներով,  
Կրակներով:  
Բուռ-բուռ, սրտանց,  
Ինչ որ ունեմ  
Ինքնամոռաց ու ինքնակամ  
Նվիրում եմ ես աշխարհին՝  
Բարուն, լավին միշտ ժպտալով,  
Ունեցածս կյանքին տալով:

1979 թ., Ստեփանակերտ

\*\*\*

Սիրտս ծով է,  
Թախծել գիտեմ երաշտահար  
Եղած ծիլի բախտի համար,  
Եվ ցանաքող մի աղբյուրի կաթկրոցի:  
Թախծել գիտեմ ես ծերություն տեսած կաղնու  
Փշուր-փշուր երգի համար:

Սիրտս ծով է,  
Եռալ գիտեմ  
Կորած խղճի, բութ վեճի դեմ,  
Չարի, դավի, անբանի դեմ,  
Չար նախանձից ծնված ոխի,  
Ազնիվ մարդու ոսոխի դեմ:

Դեռ սերն իմ մեջ ծիլ է տալիս,  
 Դեռ անտառի երգն է կանչում,  
 Դեռ հոգուս մեջ կանչ է դառնում,  
 Չայնն իմ երկրի՝ ինձ սնողի,  
 Դեռ կարուս խուսուտ գալիս՝  
 Վերածվում է լույսի շողի,  
 Դեռ ապրում եմ երազներով,  
 Չարդարելով կուրծքը հողի,

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Չեմ տրտնջացել իմ բախտի համար,  
 Ինչ տրվել է ինձ,  
 Գոհ եմ մնացել,  
 Լսել եմ հոգուս ծայնը առնական,  
 Ծաղիկ ցանելով  
 ճամփաս գնացել:

Իմ ուղեցույցը միշտ լույսն է եղել,  
 Եղել եմ երգի,  
 Յերկի սիրահար,  
 Ավելորդ խոսքով վերքեր չեմ պեղել,  
 Թեւեր եմ տվել  
 Յույսերով իմ վառ:

Ու երբ դատարկված սրտեր եմ տեսել,  
 Վառել եմ նրանց  
 Հոգուս կրակով,

Իսկ եթե հանկարծ թափուր չմնամ,  
Հոգիս սմել եմ  
Երկրիս երակով:

Կշռադատել եմ ինքս ինձ անվերջ,  
Անցյալիս նայել,  
Ստուգել ներկաս,  
Եվ իմ երազած գալիքին ասել,  
- Գիտեմ, ցանկալի՞ս,  
Անպայման կգաս:

1980 թ., Ստեփանակերտ

### ԱՅՍ ՏԱՐԻՔՈՒՄ

Այս տարիքում  
Չեմ ընկալում գարունն այնպես,  
Ինչպես առաջ...  
Ծաղիկները բացվելուն պես  
Փնջում էի անհոգ, ուրախ  
Ու բաժանում աղջիկներին:  
Աշխարհն աչքիս սեր էր թվում,  
Ինձ սիրով էր կյանքը թովում,  
Կիսատ մուրազ, կիսատ ճամփա,  
Անուրախն մարդ, թոշնող համբավ,  
Ավերված տուն,  
Ազնիվ անքուն,  
Անմեղ տանջվող,  
Իր սիրածին անհույս կանչող,

**Ք Ա Ս Ա Գ Ն Ի Ց**

Յոր ու մորից կարոտ մանուկ  
Չի տեսնում...  
Ուրիշ եմ ես այս տարիքում,  
Երբ բացվում են ծաղիկները,  
Երամները իմ խոհերի  
Սիրտս են խուժում,  
Ամեն ծաղիկ իմ հոգու մեջ  
Ճարց է դառնում, դառնում է տենչ,  
Տեսնես ո՞վ է առանց սիրո,  
Ո՞վ կհասնի իր մուրազին,  
Ո՞վ կավարտի տունն իր կիսատ,  
Ո՞վ է խորհում մանկան մասին,  
Ո՞վ է տենչում դառնալ ծնող,  
Ո՞վ է հողի լեզուն կարդում,  
Դեպի առատ աշուն տանող  
Ուղին ո՞վ է տեսնես հարթում...  
Ամեն ծաղկի թերթիկներին  
Ես ժայտ եմ տեսնում հիմա  
Եվ խոր հառաչ...  
Այս տարիքում  
Չեմ ընկալում գարունն այնպես,  
Ինչպես առաջ...

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Եվ հաշտվում ենք մահվան հետ,  
Եվ կռվում ենք նրա դեմ,  
Քանզի ինչ որ անում ենք,  
Լոկ սկիզբ է մեզ թվում...

**Ք Ա Ս Ա Խ Ա Տ Ա Ւ Ց**

Մեկից կարոտ ենք առնում,  
Սյուսին մնում ենք ծարավ,  
Ու հաճախ էլ կարծում ենք՝  
Կյանքը նորից է տրվում...

Երազում ենք, դառնում հայր,  
Ճետո դառնում հասուն պապ,  
Ապա թոռան հարսանքին  
Ակսոսում ենք, որ ծեր ենք:  
Բոլոր, բոլոր տարիքում  
Կյանքը թվում է եղեմ,  
Եվ հաշտվում ենք մահվան հետ,  
Եվ կռվում ենք նրա դեմ:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Արեւն ահա մայր է մտնում,  
Ինքն իրենից գոհ է այնպես՝  
Փայփայել է հողագունդը  
Օջախ ու տուն պահող մոր պես:  
Իր շողերն է ցանել սիրով  
Մարդու ճամփին եւ աշխարհի...  
Երնեկ նրան՝ ով նրա պես  
Օրվա պարտքն իր կկատարի:

1980 թ., Ստեփանակերտ

## Ի Մ Կ Ա Ր Ո Տ Ն Ե Ր Ը

Իմ կարոտները անտուն են ու մերկ:  
Վ. Դովիաննիսյան

Իմ կարոտները անուններ ունեն,  
Յասցեներ ունեն իմ կարոտները,  
Մեր սարերի պես հառնում են նրանք,  
Կանաչում՝ ինչպես մեր արոտները:  
Իմ կարոտները մոր շունչ են, հոր ձեռք,  
Սիրո կրակ են իմ կարոտները,  
Քրոջ պես նրանք կարող են շոյել,  
Կարող են բուրել, ոնց նարոտները:  
Իմ կարոտները եղբոր ձայն ունեն,  
Ժայիտներ՝ ինչպես առավոտները,  
Իմ կարոտները հուշադրյուրներ են,  
Անուններ ունեն իմ կարոտները:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Այնքան արագ են թռչում օրերը,  
Որ թվում է, թե երազի մեջ ես,  
Դեռ հոգուդ խորքում մորդ օրորը՝  
Յասակ ես նետում լեռան կաղնու պես:

Դեռ չես հագենում սիրո ծարավից,  
Եղյամ է իջնում մազերիդ սեւսաթ,  
Կյանքդ աննկատ անցյալ է դառնում,  
Իսկ ողջ անցյալդ՝ մեն մի ակնթարթ:

Ք Ա Ս Ա Խ Ա Տ Ա Ւ Ց

Կյանքը երազ է... չես հասցնում լսել,  
Թե ինչ են երգում գարնան լորերը,  
Գարունդ հանկարծ աշուն է դաշնում,  
Այս ի՞նչ արազ են թռչում օրերը:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Մի եղեւնի տնկեցի  
Մեր փոքրիկ բակում,  
Ժամանակը անհանքեր  
Իմ սիրտն էր թակում՝  
Թե ե՞րբ հասակ կառնի նա  
Ու տրվի հովին,  
Ե՞րբ իր ջահել աչքերով  
Կժպտա ծովին:  
Սպասումս երգ դարձավ,  
Եղեւնուն փարվեց,  
Եղեւնին էլ բարձրացավ,  
Բակը զարդարեց:  
Սակայն նրան՝ թավ կանաչ,  
Ինձ՝ ճերմակ հասավ...  
Ինչո՞ւ այսպես ստացվեց,  
Ժամանակ, ասա՛:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Մեկի շրթին երգ եմ դաշնում  
Մեկի սրտին՝ վերք,  
Մեկի համար բերդ եմ դաշնում,  
Մեկին՝ մերժող ձեռք:

Իմ անունով մի տեղ երդվում,  
 Մի տեղ ասում են,  
 Մի տեղ չարին ինձնով հերքում,  
 Մի տեղ դատում են:  
 Մեկի համար աստղ-մարդ եմ,  
 Մեկի համար՝ մուժ,  
 Մեկի համար բուրող վարդ եմ,  
 մեկի համար՝ փուշ:  
 Չեմ զարմանում ես՝ բարության  
 Մարտիկ աներեր,  
 Չէ՞ որ չարը բարության դեմ  
 Պայքարում է դեռ:

1980 թ., Ստեփանակերտ

### ՈՐԴԻԱԿԱՆ

Երբեք չասացի, թե սիրտս քոնն է,  
 Ես իմ նրբությամբ եւ իմ կոպտությամբ  
 Պատկանում եմ քեզ:  
 Ե՛վ իմ երգերով, ե՛ւ թեւերով իմ,  
 Ե՛վ իմ տենչերով, ե՛ւ թեւելով իմ  
 Պատվանում եմ քեզ:

Իմ արմատները սրտիդ խորքում են,  
 Բայց ոչ կաղնու պես, կաղնին ի՞նչ է որ,  
 Ես որդին եմ քո:  
 Իմ թեւերը քեզ փայում են, շոյում,  
 Բայց ոչ ծյուլի պես, ծյուլը ի՞նչ է որ, -  
 Ես ոգին եմ քո:

**Ք Ա Ս Ա Խ Ա Ւ Թ Ա Ւ Ց**

Քո անհուն սիրով ծփում եմ անվերջ,  
Բայց ոչ ծովի պես, ծովը ի՞նչ է որ, -  
Կյանքիդ ալիքն եմ:  
Կարոտս բորբոք միշտ ժպտում է քեզ,  
Բայց ոչ աստղի պես, աստղն ի՞նչ է որ, -  
Ես քո գալիքն եմ:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ժայռը թեքվել առվի վրա  
Ու կարկաչն է լսում անվերջ,  
Առուն կարծես թռռն է նրա,  
Թոթովում է օրոցքի մեջ:

Ի՞նչ իրաշք է ծնված այստեղ՝  
Մայր բնության անտես ձեռքով...  
Տեսեք ո՞նց են փարվել իրար  
Պապն ու թռող՝ հողի երգով:

1980 թ., գ. Ուխտաձոր

\* \* \*

Ես ոչ Մասիս բարձրացա,  
Ոչ Արագած, ոչ Մոռվ,  
Սակայն սիրտս թեւածեց  
Նրանց վրա անխռով...  
Վեհությունս փոխ առա  
Նրանց բարձր հասակից,

Բուրումներս՝ լանջերի  
Հավերժական ծիլ-ծաղկից:  
Սովորեցի նրանցից  
Միշտ արելին մոտ լինել,  
Եվ արելի կրակում  
Հոգիս թրծել ու զինել:  
Երազներով միշտ մնալ  
Աստղերի պես շողշողուն,  
Հավերժի հետ զրուցել՝  
Արմատներս մայր հողում:

1979 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Օրորել ես ինձ քո հրով, -  
Իմ կրակով քեզ ջերմացնեմ:  
Քնքշությունդ ինձ ես տվել, -  
Իմ բույրերով քեզ թարմացնեմ:  
Քո կորցրած երազները  
Իմ երգերում վերածնեմ,  
Փայփայել ես ինձ քո սիրով,  
Քեզ իմ սիրով վեհացնեմ:

1980 թ., Ստեփանակերտ

## ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Չէ, չին կարող այս սեգ լեռները  
Աշխարհ չբերել Պարույր Սեւակին,  
Աստղերից կախված երգի զանգեր են  
Լեռներն այս՝ հասած փառքի ու պատվի:  
Չէ, չին կարող այս սեգ լեռները  
Սեւակյան լեզվով զիշ չղողանջել,  
Չփարվել բարուն, չատել չարերին,  
Աշխարհի բախտով չայրվել, չտանջվել:

Չէ, չին կարող այս սեգ լեռները  
Ճուրեր չարձակել սեւակյան սրտով,  
Սեւակյան սրտով աստղեր չգրկել,  
Երգեր չօրորել սեւակյան գրկով:  
Պետք չէ որոնել տունը Սեւակի  
Եվ ոչ էլ ննջող աճյունը բակում,  
Արեւին փարված այս սեգ լեռներից  
Սեւակին փնտրեք աստղերի շարքում:

1980 թ., գ. Զանգակատուն

\* \* \*

Մարդու կյանքը՝ վերձիգ ճամփա,  
Որ անցնում է սրտով դարի,  
Երնեկ նրան, ով անդադար  
Սերմանում է բերք ու բարիք,  
Ով իր կյանքով ու գործով իր  
Մի աղբյուր է դառնում վարար,  
Ով վառվում է որպես արեւ  
Ու ջերմացնում աշխարհն - արար:

1980 թ., Երեւան

\* \* \*

Որդու աչքին չի ծերանում  
Մայրը երբեք...  
Մայրը լեռան գետի պես է,  
Ծերանո՞ւմ է գետը արդյոք:  
Նա նման է լուսե աստղի,  
Աստղը միշտ էլ վառ է մնում...  
Անտառի է նման մայրը,  
Երգն անտառի հարատեւ է...  
Կյանք է մայրը ողջ եռթյամբ,  
Խինդի ակունք՝ որդու համար,  
Թռոան համար՝ գարնան ջերմ գիրկ:  
Որդին մորից ծնված սիրտ է,  
Որդու սիրտն է մոր կրծքի տակ  
Հավերժանում  
Որդու աչքին...  
Մայրը երբեք չի ծերանում...

1979 թ., Ստեփանակերտ

### ՀԱՅՐԱԿԱՆ ՕԶԱԽ

Թե լեռներ եմ տեսնում,  
քո լեռներն եմ հիշում,  
Թե աղբյուր եմ տեսնում՝  
աղբյուրները քո ջինջ,  
Առանց քո պատկերի,  
առանց քո լույս անվան  
Շքեղ այս աշխարհում  
ինձ չի գերում ոչինչ:

Իմ կարոտի տուտը  
քո փեշին է կարված,  
Անտառներդ են ծփում  
իմ հուշերում բոլոր,  
Քո խաղողի հյութը  
իմ արյունին խառնված,  
Ինձ հուշում է անվերջ  
կաթի համը իմ մոր:

Կածաններդ բոլոր  
երակներն են իմ բյուր,  
Քեզնից սերված սերս  
մի օվկիան է անհում,  
Դու՝ հայրական խրատ,  
դու՝ մայրական համբույր,  
Օջախ իմ հայրենի,  
իմ պատիվ ու անուն:  
Ես աշխարհներ տեսած,  
սիրող զավակն եմ քո,  
Առանց քեզ չեմ ապրի  
ես ոչ մի ակնթարթ,  
Թեկուզ փոքր ես այդպես,  
սակայն մեծ ես հոգով,  
Դրանով եմ հզոր,  
դրանով եմ հպարտ:

1980 թ., գ. Ակմաղբյուր

## ՍԵՎԱՆ

Ոմանց համար Սեւանը  
Զմայլանքի աղբյուր է,  
Երկնից պոկված մի կտոր,  
Աղջկա նուրբ համբույր է...

Ոմանց համար՝ աստղերը  
Իր գիրկն առած հայելի,  
Ոմանց համար փերի է՝  
Կապուտաչյա, նազելի:

Իսկ ինձ համար՝ մինուճար  
Չավակն է սեգ լեռների,  
Կյանք է, հույս է, մի աշխարհ,  
(Թող աշխարհը ինձ ների):

Ամեն անգամ տեսնելիս  
Պարուրում է ինձ մի տեսչ.  
- Թող ծովերը հար ծփան,  
Մեր Սեւանն էլ՝ նրանց մեջ:

1980 թ., Սեւան

## ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԳԸ

Թե թռչուն եմ, պետք է հնչեն  
Հայրենախոս իմ կանչերը,  
Թե սար եմ ես, պետք է ծաղկեն  
Ու կանաչեն իմ լանջերը:

Թե ծառ եմ ես, գարնան շնչից  
Բողբոջները պիտի պայթեն,  
Տարին բոլոր պտուղներս  
Տրվեն մարդկանց, որպես պարզեւ:

Թե գետ եմ ես, իմ խորքերում  
Լուսի աղբյուր պիտ ունենամ,  
Եվ ինչքան էլ հունս փոխեն՝  
Ոչ սպառվեմ, ոչ հնանամ:

Թե հող եմ ես, պետք է մարդու  
Սիրտ ունենամ մեծ, ջերմագին,  
Սիրտ ունեցող մարդու ձեռքով  
Թափիշ հազնեն, շունչ տան կյանքին:

Թե մարդ եմ ես, պետք է հողի  
Սիրտ ունենամ եւ հողի կաճք,  
Ու շեն պահեմ իմ ափերը,  
Իսկ այդպիսին եթե չեղա,  
Ել իգուր է իմ ապրելը...

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ոչ միայն քո հարազատի՝  
Ողջ աշխարհի ցավը տանես,  
Կամքով համառ հողմերի դեմ,  
Չարությունն ու դավը վանես,  
Դողաս ե՛ քո կյանքի համար,  
Եվ հարահոս հողագնդի,

**Ք Ա Ս Ա Խ Ա Բ Ա Տ Ա Ւ Ց**

Նա՝ բոլորիս միակ տունն է՝  
Մահվան գենքը կախված գլխին:  
Տիեզերքից աստղեր փնջես,  
Ոչ միայն քո սիրո համար,  
Այլև սիրտդ շողին խառնած՝  
Մարդկանց ճամփին վառվես անմար:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Երգը կարոտից քամված աղցունք է,  
Կարոտի թեւով սրտեր է շոյուն,  
Երգը երազից ծնված բարձունք է,  
Յազար ձեւերով գեղում է, թովում:  
Սիրո ծաղիկ է երգը, սիրո կանչ,  
Սիրող սրտերը միացնող կանուրջ,  
Երգը դարավոր իր ճանապարհին  
Մարդու եւ հողի սիրով է ծնվել...  
Ահա թե ինչու այս հին աշխարհում  
Երգի հետ ոչինչ չի կարող մրցել:

1980 թ., Ստեփանակերտ

**Ճ Ո Ւ Ծ Ա Ր Յ Յ Ո Ւ Ն Ե Ր**

Ծայրին ամեն գյուղի,  
ճանփաների եզրին,  
Բլուրների վրա  
Ու գետերի ափին  
Յառնած հուշաղբյուրներ,  
Մեր սրտերի միջով

Յոսող հուշադրյուրներ,  
Մեզ հետ կարոտալից  
Խոսող հուշադրյուրներ...

Ոչ, չենք դիտում մենք ձեզ  
Իբրև հուշ-հիշատակ,  
Դուք շնչում եք մեզ հետ,  
Ապրում մեր կրծքի տակ,  
Մեզ հետ շենք եք կերտում,  
Մեզ հետ երգ եք երգում,  
Արտ եք ցանում, հնձում,  
Վշտանում եք, ցնջում:

Գիտենք՝ ովքե՛ր եք դուք,  
Ե՛րք եք վերադարձել,  
Մեր հոգսերը կիսող  
Զինակիցներ դարձել...  
Բայց մենք՝ մահկանացու,  
Դուք՝ հավերժի փոխված,  
Սերունդների սրտով  
Յոսող հուշադրյուրներ,  
Յերսների լեզվով  
Խոսող հուշադրյուրներ:

1980 թ., Ստեփանակերտ

### ԱՌԱՎՈՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Յասած ու շիկնած  
Ծիրանի նման  
Դանդաղ պոկվում է

Այգը գիշերից,  
Ու ծիրանագույն  
Վարագույրը մեծ  
Ծալ-ծալ կախվում է  
Երկնի փեշերից:  
Գյուղը երազում  
Փնջած աստղերը  
Տեղավորում է  
Քնքշացած հոգում,  
ճանապարհներին՝  
Դաշտ ու հանդ տանող,  
Մի արեւաշունչ  
Երթ է բորբոքվում:  
Արեւի գունդը  
Դեռ նոր համբուրված  
Աղջկա նման,  
Շիկնանքով մի նուրբ  
Թառում է սարին,  
Տեսնելով երթը՝  
Զգված աջ ու ձախ,  
Արարման տենչով  
Ժպտում է բարի...  
Կոմքայնավարը  
Արտ է շտապում,  
Իսկ այգեզործը՝  
Այգիները ծով,  
Սկիզբ է առնում  
Գյուղում հայրենի՝  
Օրվա հեքիաթը  
Երազներով լի:

1980 թ., գ. Ակմաղբյուր

## ԵՐԱԶԻՍ ՄԵԶ

... Յիվանդ եմ ես, մայրիկ, - ասի, -  
Վիճակս բարդ է,  
Բժիշկն ասաց՝ կծու չուտես,  
Խոց ունես արդեն:

Մայրս նայեց, նայեց երկար,  
Ասաց՝ ցավդ տանեմ,  
Ախր կծուն շատ ես սիրում,  
Բա ես ի՞նչ անեմ:

Նա մոտեցավ, ձեռքը դրեց  
Իմ վերքի վրա,  
Ցավս կարծես թե դադարեց  
Շոյանքից նրա:

Վերքիս համար խոր հառաչեց,  
Արտասվեց երկար,  
Ես արթնացա, ցավս տեղն էր,  
Մայրիկս չկար...

1980 թ., գ. Ակմաղբյուր

## ԱՇՈՒՆԸ

Աշունը՝  
Վաստակաշատ ձեռքերի  
Շոյանքներից գույներ առած  
Դեքիաթային աշխարհ է:

Երազների մարմնացում է  
Աշունը,  
Որ ժպտում է մարդկանց՝  
Խնձորի, դեղձի, խաղողի տեսքով:

Ապրելը իմաստալից դարձնող,  
Կյանքի քաղցրությունը  
Բարիքների համով մատուցող  
Մշակ է աշունը:

Արժե՞ ապրելդ, թե՛ չարժե՞,  
Բո՞ն ես, թե՞ ժրածան մեղու,  
Թե՞ն ես, թե՞ արեւի զուգորդ, -  
Աշունը կարող է ասել:  
Մարդու էռլթյունը  
Լրիվ բացահայտող,  
Մարդուց՝ իր անցած օրերի համար  
Պատասխան պահանջող  
Նահապետ է աշունը:

1980 թ., Ստեփանակերտ

### Ի Մ Խ Ո Ր Ե Ր Ի Ե Ր Ա Մ

Արի, թեւիր իմ դեմ,  
Իմ խոհերի երամ,  
Նորից շոյիր հոգիս,  
Թող փոթորկվեմ, եռամ...  
Տար ինձ սարերն ի վեր,

ճամփաներով լույսի,  
Նորից սիրտս նետեմ  
Յործանութը հույզի:  
Օգնիր՝ շողեր փնջեմ,  
Փարվեմ միայն լավին,  
Առողջ հունդեր ցանեմ,  
Որ ալիքվի բարին:  
Իմ խոհերի երան,  
Մրրիկներով դարի,  
Արի, փարվիր հոգուս,  
Ինձ բարությանք վառիր:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Դու՝ մի անտառ, ես՝ մի ճամփա,  
Ծայրս քո մեջ, հունս քո մեջ,  
Չուլալ առուս, երազ հավքս,  
Արթուն խոհս, քունս քո մեջ:  
Գարուններս, ծաղիկներս  
Արձագանքն են քո կանչերի,  
Ծփանքներս, հառաչներս  
Երազներն են քո լանջերի:  
Անմարելի քո շունչն եմ ես,  
Եթե վառվեմ միայն քո մեջ,  
Սաղարթներիդ շշունջն եմ ես,  
Եթե հալվեմ՝ միայն քո մեջ:

1980 թ., Ստեփանակերտ

## ՄԵՐ ԻՄ

\* \* \*

Քո բորբոքում արեւի դեմ  
Ես արեւի ծաղիկ դարձա,  
Վարդ շուրթերիդ հավետ իջած  
Գարնանային շաղիկ դարձա:  
Սերդ՝ անծիր մի տիեզերք,  
Ես՝ մի աստղ նրա գրկում,  
Նվիրումիդ արարումով  
Ինձ մարելուց դու ես փրկում:  
Ես կանաչ եմ՝ հողիդ փարված,  
Սրտիդ միջով հոսող գետ եմ,  
Քո լուսայգն եմ՝ քեզնով վառված,  
Ինչ էլ լինի, ես քեզ հետ եմ:

\* \* \*

Ինձնով հարբե՞լդ երգեմ,  
Թե՞ խայթելդ սուր,  
Ինձնով ծափե՞լդ երգեմ,  
Թե՞ խարելդ զուր:  
Ինձ «բախտ» ասե՞լդ տեսնեմ,  
Թե՞ «ցավդ» հասցրած,  
Ինձ «թախտ» ասե՞լդ տեսնեմ,  
Թե՞ «դավդ» հասցրած:  
Մոլոր կանգնել եմ ես,  
Մեր ոլոր ճամփին,  
Դարձյալ քեզ եմ տեսնում

Սիրուս քարափին:  
Իմ հուշերի միջով  
Քաղցր ու դառնաղի,  
Ելի թեւում եմ ես՝  
Փարված ծիծաղիդ:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ինձ հետ անքուն մնացիր,  
Ինձ հետ սիրո տեր դարձար,  
Ինձ հետ անցար վիհերով  
Եվ ինձ հետ էլ բարձրացար:

Լույսի շողեր փնջեցինք...  
Քարափներից, ձորերից,  
Անզամ թեւեր առանք մենք  
Ծիծառներից, լորերից:

Մեր փայփայած ծառերից  
Արեգակներ կախվեցին,  
Մեր երազած սարերից  
Զյուն ու սառույց հալվեցին:

Բողբոջել է մեր սերը,  
Դարձել օջախ, դարձել տուն,  
Ճիմա էլ այդ օջախի  
Մերն է պահում մեզ արթուն:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Իմ հոգում արտե՞ղն են ծփում,  
Թե՞ դու ես ծփում ժպտալով,  
Բարդի՞ն է շշնջում սլացիկ,  
Թե՞ դու ես ինձ կանչում խնդալով:  
Լեռնային մեր գե՞տն է շառաչում,  
Թե՞ դու ես շառաչում իմ սրտով,  
Կյանքի հուր կրա՞կն է ինձ այրում,  
Թե՞ դու ես վառում քո հրով:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Յայացքս փունջ էր  
Ղեպի քեզ ձգված,  
Ղեպի քեզ ձգված  
Փունջ է եւ հիմա:  
Զայնս իմ շունչն էր  
Ղեպի քեզ թեւող.  
Ղեպի քեզ թեւող  
Շունչն է եւ հիմա:  
Երգս իմ սերն էր՝  
Անհատնում, վարար.  
Մինչեւ հիմա էլ  
Վարար է մնուն:  
Միրսս ծեռքիդ էր,  
Շոյանքիդ ծարավ.  
Մինչեւ հիմա էլ  
Ծարավ է մնուն:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Թեժ սիրեցի ես քեզ,  
 Բայց հեշտ չեղավ ուղիս,  
 Սիրո ուղին ե՞րբ է  
 Եղել հարթված:  
 Ղեղի հոգուդ խորքը  
 Կեռմաններով անցա,  
 Երբեք ծնկի չեկա  
 Խեղճ ու պարտված:  
 Խոստում չեղավ սերս,  
 Բառերի կույտ չեղավ,  
 Եղավ ինքնամոռաց  
 Մի նվիրում,  
 Քեզնով ճառագեցի,  
 Քեզնով տառապեցի...  
 Կարապների մոտ է  
 Այդպես լինում:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Քեզ թթենու նուրբ ստվերում  
 Հուզմունքով հասա,  
 Թուխս ու կրակ քո աչքերում  
 Պատկերս տեսա:  
 Բացվել էին քո նուրբ սրտի  
 Դռներն իմ առաջ.  
 Զգում էի հուզումներիդ  
 Ծփանքը կանաչ:  
 ճախրում էի երազներիդ

Բարձունքի վրա,  
Տիեզերքն էր բացել կարծես  
Գաղտնիքներն իրա:  
Դարձել էի քո օրիներգուն՝  
Ողջ հոգով տրված,  
Բախտիս էջը աստեղնազարդ  
Մրտումդ էր գրված:  
Աստղի լեզվով այն կարդացի՝  
Արթնի, անքուն,  
Արի տեսնեմ այդ աստղերից  
Քանի՞սն է աղթուն:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Մեր հանդիպման օրից  
Մերս բորբոք դարձավ,  
Ինձ ուղեկցեց...  
Եղավ՝ անտուն թողեց,  
Եղավ՝ անքուն թողեց,  
Առանց խղճի սակայն  
Ինձ չթողեց:  
Մերս մի ծառ եղավ,  
Խիղճս՝ նրան արմատ,  
Միրտս եղավ ծիծառ  
Նրա բնում,  
Գարուններ են անցել,  
Ծլվլում է նա դեռ,  
Երազում է նա դեռ  
Ու... չի քնում:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Սերս լեռան գետ էր,  
 Գիծ էր ու անափ էր,  
 Յրծվանք ու սարսափ էր,  
 Բայց՝ անարատ:  
 Խաղաղ նա չէր հոսում,  
 Փրփրում էր, սակայն  
 Խանդում էր ու խոսում,  
 Լույսերով առատ:  
 Երկինքն առած իր մեջ,  
 Աստղերի հետ ժպտում,  
 Քարափներն էր գրկում  
 Երազներով,  
 Ելի գետ է մնում,  
 Ելի խենթ է մնում,  
 Սակայն, հազար ափսոս,  
 Վռազելով...

*1980 թ., Ստեփանակերտ*

\* \* \*

Չգիտեմ՝ բախտն ինձ ժպտա՞ց,  
 Թե՞ տանուլ տվի,  
 Յավիտյան քեզ հետ եղա,  
 Չուլված արյունիդ:  
 Խարույկս՝ սերդ դարձավ,  
 Լեգենդս՝ սերդ,  
 Ավյունս եկավ մերվեց

Անծուխս այրումիդ:  
 Ճեքիաբն հմ հորինեցի  
 Քո մասին, քեզ հետ,  
 Դուռս միշտ դու ծեծեցիր  
 Իմ իսկ մատներով:  
 Չգիտեմ, բախտն ինձ ժպտա<sup>՞ց</sup>,  
 Թե՝ տանոլ տվի,  
 Որ այդպես հառնում եմ հար  
 Քո արմատներով:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Վարդի նման եղար, գարնան վարդի,  
 Ինձ խլեցիր լրին քո բույրերով,  
 Սոսափեցիր ինչպես նազուն բարդի,  
 Շափաղ տվիր միայն քո բույրերով:

Օրս լցվեց քեզնով, քեզնով ելա,  
 Սիրուդ փեշերն ընկա նման հովի,  
 Եղա երկրպագուդ, հեւքդ եղա,  
 Ու լողորդը եղա սիրուդ ծովի:

Ալիքներիդ հոսքով տարար դու ինձ,  
 Անցանք քանի՛ բարձունք եւ առապար,  
 Օրիներգում եմ սերը մեր ինքնածին,  
 Թեկուզ եղավ քաղցր մի տառապանք:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ինչ էլ լինի, ինչ էլ հասնի,  
 Նրամեշտի խոսք չեմ ասի  
 Չո կրակ սիրուն:  
 Տառապանքիս օվկիանի մեջ,  
 Կաթիլներին իմ բերկրանքի  
 Այդ դու ես տիրում:  
 Ես չեմ փարզի ամեն ամպի,  
 Ամեն արտի ես չեմ իջնի  
 Ու չեմ հալվի ես:  
 Ամեն ցավից չեմ տառապի,  
 Ամեն ձյունից չեմ ծերմակի  
 Ու չեմ ծալվի ես:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Յողի զարթոնքի մեջ,  
 Գարնան աչք-ունքի մեջ,  
 Ամռան արբունքի մեջ  
 Չեզ եմ տեսնում:  
 Տանու տվածիս մեջ,  
 Կորած-գտածիս մեջ,  
 Սիրտս մտածի մեջ  
 Չեզ եմ տեսնում:  
 Իմ խոր կարոտներում,  
 Թոշնած նարոտներում,  
 Իմ նոր ցավերի մեջ  
 Չեզ եմ տեսնում:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Սիրուս խարույկը դեռ շատ է բորբոք,  
 Արի տաքանանք,  
 Մեկնիր ձեռքերդ, ձեռքերս մեկնեմ,  
 Նորից շոյենք մեր հուշերն անքանակ:  
 Թե մեղք ենք արել՝  
 Քավենք միասին,  
 Թե պղտորվել ենք՝  
 Քամվենք միասին,  
 Նույն իրով վառվենք, քայլենք նույն իրունով,  
 Ու թե հարթել կա, հարթենք նույն գինով:  
 Սիրո դժվարին դշներով մտնենք,  
 Ու թե պատահի, մոլորվենք մի պահ,  
 Որոնենք ծարավ եւ իրար զտնենք,  
 Նորից մեր սիրո  
 Վառ գորգը հինենք  
 Եվ ամբողջ կյանքում միասին լինենք:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ես գարնան գրկում քեզ սիրեցի,  
 Բույրդ ըմպեցի գինու նման,  
 Ինչ որ ունեի՝ նվիրեցի,  
 Իմ սիրտը բաց էր սինու նման:

Արձագանք գտավ ձայնս քո մեջ,  
 Գարնան թովչանքով ինձ ժպտացիր,  
 Մինչեւ հիմա էլ արյանս մեջ  
 Քո թրթիռներն են գարնանածին:

Գոհ եմ աշխարհից ու բախտից գոհ,  
Գարունը դարձրին մեզ առագաստ,  
Արեւով լցոյին մեր սերը հորդ՝  
Նրա պես հուրսիրտ ու ոսկեվար:

Իմ ծփանքները գարնանային  
Շարունակվում են քո թեւերով,  
Քո հանդեա եղած սերն իմ անհուն  
ճանաչում են նուրբ քո թեւերով:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ես քեզ համար հող եմ,  
Դու ծիլ ես իմ մեջ,  
Իմ մեջ ինչքան լույս կա,  
Խլել ես ինձնից:  
Շորորում ես, բուրում,  
Կյանք ես դու արարում,  
Արմատներդ մեջս են,  
Ելել ես ինձնից:  
Իմն է բացվելը քո,  
Իմն է ժպտալը քո,  
Իմ հոգունն են:  
Ճեւքդ սրտիս մեջ է,  
Եռքդ սրտիս մեջ է,  
Եվ իմ սրտի նման  
Բորբոքուն են...

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Եվ դու եկա՞ր...  
 ճամփաներս թրթռացին,  
 Կանաչեցին երազներս,  
 Ծիծառներս ծլվլացին,  
 Հողոտվեցին երազներս:  
 Աղբյուրներս կարկաչեցին,  
 Ծիածանվեց խնձորենին,  
 Արեգակը եկավ փարվեց  
 Իմ մանկության խոր ձորերին:  
 Անձրեւները հյութեղ դարձան,  
 Հոգուս իջան քո քնքշանքով,  
 Սրտի լանջերն իմ արթնացան,  
 Սարսռացին փաղաքշանքով:  
 Աղբյուր բխեց իմ կիրճերում,  
 Քո մեջ կյանքիս ավիշը կար,  
 Ես ինձ գտա քո աչքերում,  
 Երբ դու եկար:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Արեւարի փեշերին  
 Պեծին տվիր ոնց երազ,  
 Անունդ իմ շոթերին  
 Ծորաց մեղրի պես՝  
 Հազար տեսակ գույներով  
 Բոցկլտացիր իմ առաջ,  
 Ուժ տվիր իմ ձեռքերին,  
 Տակն ու վրա եղա ես:

Ք Ա Ս Ա Խ Ա Ւ Ց Ո Ւ Ց

Արեւադի փեշերին  
Իմ լուս բախտը դու դարձար,  
Լեզենդի պես, հեքիաթի,  
Չո արյան մեջ արթնացա:  
Չքնեցի ես երբեք,  
Գտել էի աղբյուրս,  
Կյանքս թեւերն էր բացել՝  
Առաջ քաղցր համբույրս:  
Պեծին տվող երազս  
Մի խարույկ էր դարձել վառ,  
Ճարճատում էր նա իմ մեջ  
Հավերժախսու ու պայծառ:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Մեր առաջին հանդիպման  
Վայրը ժպտաց ինձ նորից,  
Օրս լցվեց խոհերով,  
Ինձ օրոր ասաց:  
Եվ թթենու ճյուղերից  
Բախտի աստղեր կախվեցին,  
Նա իր երգը այնպես նուրբ,  
Մեղմօրո՞ր ասաց:  
Բարդին լուսնի փունջն առավ,  
Սփոռեց կանաչ մեր այգում,  
Փշատենու թեւերին  
Երազ ու հուշ էր:  
Որոնեցի քեզ երկար,  
Կանչեցի, չեկար,  
Այգին մեղմիկ շշնջաց.  
- Տուն գնա, ուշ է...

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Շիկացել է երկինքը,  
Տոք է, ամառ է,  
Նա հուշում է իմ կյանքը.  
Սերս անմար է:  
Սակայն դեղին եմ տեսնում  
Ամռան այտերին,  
Ինչ-որ ցողեր են իջնում  
Հասուն արտերին:  
Աշնանաբույր մի թաց հով  
Խոհս ընպուն է,  
Չգիտեմ ինչ իմաստով...  
Սերս ժպտում է...

*1980 թ., Ստեփանակերտ*

\* \* \*

Ինչքան արեւներ  
Եվ աստղեր կային,  
Փնջեցի սիրով միայն քեզ համար:  
Ինչքան ինչյուններ  
Եվ գույներ կային,  
Յնձեցի սիրով միայն քեզ համար:  
Ինչքան աղբյուրներ  
Ու բույրեր կային,  
Յոգուս մեջ առա միայն քեզ համար:  
Ինչքան կակիծներ  
Ու վերքեր կային,  
Լուր ու մունջ տարա միայն քեզ համար:

*1980 թ., Ստեփանակերտ*

\* \* \*

Մենք փարվեցինք իրար,  
Թեւաբախեց այգին,  
Ցուրտ աղբյուրը քրտնեց  
Ուխտաձորում:  
Հովը այնպես խրտնեց,  
Բարդուց այնպես ընկավ,  
Ասես սեր չէր տեսել  
Նա իր օրում:

Արեւսարի լանջին  
Դեռ մի պատառ ծյուն կար,  
Ուշաթափվեց, ծլաց  
Կաթիլ-կաթիլ,  
Սիրուց մեր արթնացած,  
Առողջ ու թարմացած  
Աչքալուսանք տվին  
Ծիլերն անթիվ:

Կանաչ խութը ելավ,  
Մի ծիածան բերավ,  
Բերավ քնքույշ փունց  
Ուսերին մեր,  
Երբ ուզում էր գնալ,  
Ասաց արեւատես,  
- Այո, միայն այդպես  
Պիտի սիրել:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Իմ կարոտները ծփացին քո մեջ,  
Երգերս քո մեջ զիլ ղողանջեցին,  
Արթուր մնացի գիշեր ու ցերեկ,  
Սիրուս ափերը հար կանաչեցին:  
Աղամանութին, թե շամանդաղին,  
Ծիլերին իջան ցողերը սիրուդ,  
Ելեւէջները իջան ծիծաղիդ,  
Եվ քնքշանքներդ՝ թեթեւ ու նիրհում:  
Դասուն արտերս ծփում են հիմա,  
Դեռաստաններից հովեր են գալիս,  
Այն ի՞նչ մաղթանքի ձայներ են հնչում,  
Այն ո՞վ է սիրուն իրաժեշտ տալիս:  
Այն ի՞նչ ամպեր են՝ կարմիր ու ճերմակ,  
Այն ի՞նչ են բերել իրենց թեւերին...

Եթե կարող ես՝ դոները փակիր,  
Ամառն այս ոսկի թող երկար տեւի:

1980 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Դու բնություն եղար՝ մեր Արցախի նման,  
Մեր Արցախի գրկում սերս եղար անշեց,  
Բնությունը քեզնով հոգուս խորքում ծփաց,  
Մայր Արցախը եւ Դու հար ապրում եք իմ մեջ,  
Մայր Արցախը եւ Դու զարդարում եք ջանքս,  
Թող ձեզ ընծա լինի ձեզ նվիրված կյանքս:

1980 թ., Ստեփանակերտ

## ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՆՎԱԳՆԵՐ

### 1. ԱՌԱՎՈՏԸ

Առավոտը սկիզբ առնում Մօռվ սարից,  
 Ծալ-ծալ գալիս,  
 Ծավալվում է Քիրսի լանջին,  
 Քիրսը քնից արթնանում է  
 Յովվի ննան՝  
 Ուսին առած կանաչ-կարմիր իր յափնչին:  
 Արեւարից մինչեւ Շուշվա կիրճերը խոր  
 Երազների մի օվկիան է ալեկոծվում,  
 Լեռներն ասես լվացվում են ճերմակ կաթով,  
 Իսկ ձորերը՝ արեւային ոսկով օծվում:  
 Սարերն ի վեր, լանջերն ի վար  
 Փռվում է մի կանաչ ժպիտ,  
 Յամբուրվում են այգի եւ արտ,  
 Ծլնգում է հարբած հոգիդ:  
 Ուխտաձորից մինչեւ Թարթառ  
 Թրթռում է ծաղկահոտը...  
 Երանզների մի աշխա՝ րի է  
 Ղարաբաղի առավոտը:

## 2. ԹԹԵՆԻՆ

Նայիր, հսկա այս թթենին  
 Աչք է բացել գարնան հետ,  
 Բողբոջները այնքան նուրբ են,  
 Այնպես առողջ, հոտավետ:  
 Իր տիրոջը սիրում է ջերմ,  
 Չի պահանջում հատուցում,  
 Շռայլորեն իր քաղցրահան  
 Պտուղներն է մատուցում:  
 Ամեն տարի բերք է տալիս,  
 Փարթամանում շյուղերով,  
 Ցուրտն ու տապը ծնկի բերում  
 Բազմատարած ճյուղերով:  
 Չի պահանջում, նվիրում է  
 Ու գոհ ծփում արածով,  
 Միայն մայրն է ցնծում այդպես  
 Որդիներին տվածով:

## 3. ԱՄՊԸ

Ամպը ամապ չէ, ծերմակ հարս է՝  
 Զուր է տանում արտերին,  
 Սիրողների նուրբ սրտերից  
 Յուր է տանում վարդերին:  
 Ամպը ամապ չէ, գլխաշոր է,  
 Որ փարվում է սարերին,

ճերմակ-ճերմակ հյուսվածքն է նա  
Բազմախորհուրդ դարերի:  
Ամպը ամպ չէ, բաց համբույր է,  
Թաց համբույր է սիրողի,  
Ճերմակ թույր է, ճերմակ թույր է՝  
Բխած սրտից մայր հողի:

#### 4.ՅՈՎՎԻ ՏՈՒՆԸ

Սարի լույս է,  
Սարի ծաղիկ,  
Սարի բուրմունք, սարի հով,  
Լեռան հույզ է,  
Լեռան տաղիկ,  
Լեռան արբունք, լեռան զով:  
Սարի ջանք է,  
Սարի փառք է,  
Սարի կյանք է, սարի եռք,  
Լեռան իղձ է,  
Լեռան խիղճ է,  
Լեռան ոգի, լեռան հերք...  
Սարից ծնված մի ալիք է,  
Սարին փարված մի գալիք:

## 5. ԱՐՏԵՐԸ

Արտերը սարից կախված  
Փեշեր են կանաչ-կանաչ,  
Մի ծայրով՝ ձախ ձորավին,  
Մի ծայրով՝ աջ:

Մի փեշը ջուր է խնում,  
Մի փեշը մնում ծարավ,  
Կարծես թե իրար կից են  
Յյուսիս ու հարավ:

Բայց իրար չեն մոռանում,  
Ապրում են իրար բախտով,  
Ջուր ու տաք փոխ են տալիս  
Մտերիմ ափով:

Աղավնու ձայնով արբած  
Ծփում են արեւատես  
Արտե՛րը, մեր արտե՛րը,  
Մեր սրտերի պես:

## 6. ԱՄԱՌԸ

Չորը՝ կանաչ, լանջը՝ դեղին,  
Սարերը՝ ծլած,  
Արտի կեսը՝ արդեն հեղի,  
Կեսը՝ նոր չլած:  
Լուսաբացին՝ հասկը դեռ թաց,

Կեսօրին՝ հասուն,  
Յասկերի տաք սարսուռները  
Վազին են հասնում:  
Մի գիշերում ողկույզները  
Լցվում են հրով  
Եվ արեւի համբույրներից  
Յասունանում սիրով:  
Մառանները դժները բաց  
Ժպտում են, փայլում...  
Մի ողջ տարվա կյանքի հեւքով  
Ամառն է քայլում:

### 7. ՏԱՆԻՔ

Տանիքի տակ կժեր կային,  
Պուլիկների շարան,  
Գուցե ասե՞ք, անգի՞ն քույրեր,  
Դրանք որտե՞ղ տարան:

Վիզը կոտրած կուժն ո՞ւ գնաց,  
Միշտ ընկույզով լիքը,  
Ել ինչո՞ւ են արեւի դեմ  
Սարքել այս տանիքը:

Ինչի՞ մեջ են պահում չիրը,  
Թութը՝ ամռան վկան,  
Ի՞նչ է՝ հիմա մեր գյուղերում  
Ել տատիկներ չկա՞ն...

## 8. ԱՐԵՎԸ

Արեւը ելնում է Արաքսից,  
Լվացվում Թարթառի ջրերում,  
Մտրակ է հյուսում իր վարսից,  
Չափ գցում իր ձին սարերում:

Սարեր են, զիզզագ են ճամփեքը,  
Ճամփեքը՝ կախված երկնքից,  
Ամեն սար՝ մի նոր աստիճան,  
Սեկ մեկու հենակ ու դրկից:

Արեւը օրվա իր ուղին  
Անցնում է սարերին թիկնելով,  
Ամեն սար իր սիրտն է բացում՝  
Արեւի համբույրից շիկնելով:

Ամեն սար՝ հյուրընկալ մի բարձունք,  
Ուկե գահ՝ Արեւի համար,  
Սարերը՝ Արեւին թեւ-թիկունք,  
Արեւը՝ սարերին սիրող մայր:

Այդպես են մեզ մոտ սարերը՝  
Արեւի սիրով են ջրդեղված,  
Թե պատռեք սարերի սրտերը,  
Արեւներ կտեսնեք անթեղված:

## 9. ԱՍՏՂԵՐԸ

Աստղերը սարերի թագերն են՝  
Յյուսված հաղթական մարտերուն,  
Աստղերի շողերի ակունքը  
Եռում է սարերի սրտերում:

Պայման են կապել աստղերը՝  
Սարերին չքողնել մթնուն,  
Սարերը ուղիներն իրենց  
Աստղերի լույսով են գտնում:

Եվ երբ իջնում է խավարը,  
Կանչում են ահել ու ջահել.  
- Ինչո՞ւ են քնել աստղերը,  
Աստղերին ի՞նչ է պատահել:

## 10. ԱՌՈՒՆԵՐԸ

Զույգ ափերին գարունները՝  
Կարկաչում են  
Մեր լեռնային առուները:

Զուր տանելով արոտներին,  
Հար կանչում են  
Իրենց կորած կարոտներին:

Մերթ սաղմոս են երգում տխուր,  
Մերթ հորդացած  
Գահավիժում՝ շրթին փրփուր:

Բխած սարից, ձորից, լանջից՝  
Աղավնաթեւ  
Թրթռում են հողի կանչից:

Անց կենալով քար ու խիճով՝  
Առուները  
Յոսում են իմ... սրտի միջով:

### 11. ԿԱԼԵՐԸ

Յին դարն ապրած մեղալի պես,,  
Սոռացվել են  
Մեր կալերը,  
Տորենի գուռ,  
Ապրուստի դուռ  
Մեր կալերը:  
Մանուկների երազ գիրկը,  
Մեր պապերի մուրազ-գիրքը՝  
Մեր կալերը:  
Իրենց գործը պատվով արած,  
Իրենց փորձը փառքով տարած  
Մեր կալերը:  
Յազա՞ր ափսոս,  
Որ թանգարան չունեն նրանք՝  
Մեր պատմության հետքը վրան  
Մեր կալերը:  
Յանուն կյանքի  
Միշտ կլինեն վարն ու հերկը...  
Ինչքա՞ն լավ է,  
Որ մոռացված կալերի մոտ  
Յար ապրում է «Կալի երգը»:

## 12. ՊԱՏԿԵՐ

Արեւարի դոշին  
Մթան գույնը փախավ,  
Ուխտաձորը ուշին  
Կաթե շղարշ հագավ:  
Կանաչ խութը ելավ՝  
Կանաչ ճիպոտն ուսին,  
Որ Յուրա աղբյուրի հետ  
Նոր հորովել հյուսի:  
Քմախաչի ձորից  
Թեթեւ հովը սուլեց,  
Քիրսա սարում նորից  
Առավոտը ծլեց:

## 13. ՏԱՏԻԿԸ

*Նվիրում եմ դաշբուլաղի  
Մարուսյա Աղաբայանին*

Մեկ շաբթով քաղաք գնաց՝  
Թոռների սեր-կարոտով,  
Երեք օր հազիվ մնաց,  
Ետ եկավ մեծ տագնապով:  
Բաց արեց դուռը բակի  
Եվ ասաց. «Ո՞ւր եք, ախ, ո՞ւր,  
Մի տեսնեմ ժամանակին  
Տվե՞լ են ձեզ կեր ու ջուր»:  
Ու նրա  
Զայնի վրա

Սկսվեց մի խրախճանք.  
Յավերը կչկչացին,  
Աքլորը երկար կանչեց,  
Ճտերը ծլվլացին,  
Հորթուկը գիլ բառաչեց,  
Սագերը թափով ելան,  
Կռօացին միաբերան,  
Մլավեց թխլիկ կատուն,  
Որ տատը եկել է տուն:  
Իսկ որդին թթենու տակ  
Ժպտաց ու նոր հասկացավ,  
Թե մայրը ինչո՞ւ շտապ  
Քաղաքից վերադարձավ:

## 14. ԼՈՐԻԿԸ

Ուխտաձորի ծնակուն,  
Իմ Ուխտաձորի,  
Յանդիպեցի ես մի օր  
Մի փոքրիկ լորի:  
Մոլորվել էր լորիկը  
Եվ ընկել անտառ,  
Չկար մեկը, որ նրան  
ճանապարհ ցույց տար:  
Լորիկն առա ափիս մեջ,  
Անտառից ելա,  
Ասի՝ գնա, արտերուն  
Մեծացիր մի լավ:  
Արտի վրա գտնելով

Նա մի արտույտի,  
Ընկերացավ նրա հետ,  
Զուլվեց կապույտին:  
Ես տուն եկա, ողջ գիշեր  
Չտարավ քունս...  
Այդ լորի հետ թռել էր  
Եվ մանկությունս:

## 15. ՑՈՐԵՆԸ

Սուր մանգաղն էր ընկերս  
Եվ կաշվե գոտին,  
Շատ գիշերներ եմ քնել  
Հանդերում՝ խոտին:  
Խրձեր էի ես կապում  
Խորին հածույքով,  
Հետո մի տեղ հավաքում  
Առանձին շուքով:  
Թվում էր, թե աշխարհը  
Ժպտում էր ինձ հետ,  
Ամեն մի հասկ նշխար էր,  
Բերկրանք էր ու երգ:  
Չի տեսել ես ոսկի,  
Ոսկին որտեղի՞ց,  
Ոսկուց թանկ էր մեզ համար  
Ցորենը դեղին:  
Ցորնի բույրով եմ հարբել  
Մեր արտ ու դաշտում.  
Մանկությունից՝ ոսկու տեղ  
Ցորենն եմ պաշտում:

## 16. ԱՆՁՐԵՎԸ

Զորերից սկիզբ է առնում,  
Կարստով մաղում սարերին,  
Սարերից հորձանք է տալիս  
Եվ հասնում ծարաված արտերին:  
Բյուրենյա ուլունք է դառնում  
Եվ իջնում շրթերին հողի,  
Իսկ հողը համբույր է առնում  
Եվ խառնում իր սրտի դողին:  
Անձրեւը չի խաբում լեռներում,  
Չի թողնում հողին ծարաված,  
Նա հոգով մեզ շատ է նման,  
Սիրում է ազնիվ, վարարած:  
Մենք չունենք հորդահոս գետեր,  
Անձրեւն է մեր հողը սնում,  
Զորերից բարձրացող անձրեւը  
Մեր սրտի խորքից է ծնվում:

## 17. ԶՅՈՒՆԸ

Մռով սարի ծյունը ելել  
Ու հասել է սեզ քիրսին,  
Քիրսից դեպի դաշտ է քշում  
Զմեռը իր ճերմակ ձին:  
Չին քշում է փափուկ, թեթեւ,  
Կարծես լինի երազում,  
Քնքշանքներ է սիրում հողը,  
Զմեռը չի վռազում:

Փաթիլները իշխում են ցած,  
Ասես մաղից իմ տատի,  
Կուտակվում է ծյունը դանդաղ,  
Ոնց ալյուրը մեր տաշտին:  
Դացի բույր եմ զգում ծյունից,  
Տեսնում գինու կարմիր եռք,  
Մեր սարերում ծյունը ծյուն չէ,  
Տաքուկ գիրկ է, շոյող ձեռք:

## 18. ՍԱՐԵՐԸ

Սարերի սրտաբուխ տաղերից  
Վարդերը բացվում են,  
Սարերին կարուտած աստղերից  
Արտերը թացվում են:

Սարերին փարվող լույսերին  
Օրերը լծվում են,  
Ծարաված սրտերի հույսերով  
Չորերը լցվում են:

Դարերի համբույրը մտերիմ  
Սարերը առնում են,  
Մեր պայծառ տենչերով շաղախված  
Դարերը հառնում են:

Դարերի համբույրը մտերիմ  
Սարերը առնում են,  
Մեր պայծառ տենչերով շաղախված  
Դարերը հառնում են:

Սարերի քայլվածքը ուսելով  
Դարերը հոսում են,  
Դարերի հոսանքից հուզվելով  
Սարերը խոսում են:

### 19. ԽԱՐՈՒՅԿ

Արեւարի լանջերին  
Մի խարույկ է վառվում,  
Պատանեկան իղձերով  
Ես նրան եմ փարվում:

Նա խոհեր է ինձ բերում,  
Կարոտների երամ,  
Ո՞վ է երգում նրա մոտ,  
Ա՞խ, երանի նրան:

Այդ խարույկը ոսկեվարս՝  
Պոկված իմ սրտից,  
Հրաշք թռչուն է ասես,  
Թռել է իմ գրկից:

Շուրջն անտառն է հայրենի,  
Դալար ու աստղալից,  
Ոչ մի ճամփա չի կարող  
Պոկել ինձ նրանից:

Պատանության խարույկս  
Ես այստեղ եմ վառել,

Նրա ալվան փեշերը  
Երգիս մեջ եմ առել:

Նրանով եմ ջերմանում,  
Նա իմ սրտի մեջ է,  
Նա խարույկ չէ հասարակ,  
Հողի սեր ու տենչ է:

## 20. ՀԱՐՑ

Գյուղս թողած լեռներում,  
Թողած հանգիստ, խաղաղ քուն,  
Ուշքս ու միտքս նրա հետ,  
Ես ապրեցի քաղաքում:

Իմ օջախը ունեցա,  
Իմ աստղերը, իմ ուղին,  
Իմ երգերի մեջ սակայն  
Փարված էի միշտ գյուղին:

Մանկությունը իմ անդարձ  
Խոհերիս մեջ էր թեւում,  
Սերս ճախրում էր անվերջ  
Յոթը սարի ետեւում:

Անձրեւի հետ կարոտս  
Սեր սարերում էր մաղում,  
Շողերի հետ արեւի  
Սիրտս այնտեղ էր խաղում:


Յորս ծայմն իմ ականջում,  
Սորս կանչը հոգուս մեջ,  
Մեր գյուղն էի ես տենչում,  
Արթմնի, թե քնիս մեջ:

Պատուհանը իմ հոգու  
Միշտ դեպի գյուղ է բացվում,  
Իմ վարդագույն երազը  
Նրա ցողով է բացվում...

## 21. ԲԱՐԻ ԳԻՇԵՐ

Մեր մեծ բախտին լծված սարեր,  
Զեզ բարի գիշեր,  
Բարիությամբ լցված սարեր,  
Զեզ բարի գիշեր:  
Զուն եմ մտնում ձեր կարոտով,  
Զեր կարոտով ելնում,  
Հարբում եմ ձեր առավոտով,  
Զեր ուսերին հենվում:  
Իմ երազած բարձունք սարեր,  
Զեզ բարի գիշեր,  
Իմ երգերի ակունք սարեր,  
Զեզ բարի գիշեր:

1980 թ. հունիս, Ստեփանակերտ



Իմ մայր Արցախ, քո երկնի մեջ  
Աշխարհ սնող Արեւ տեսա,  
Չպահեցի ուշքս դրսում,  
Քո որդին եմ, ոչ տնիկեսադ:  
Տառապանքիդ պատկերն եմ ես,  
Գարուններիդ հյուսվածքը ջինջ,  
Դու առանց ինձ կապրես հավես,  
Ես առանց քեզ ի՞նչ եմ՝ ոչինչ:

## Ի Մ Ք Ն Ա Ր Ը

Կյանքի դժվար բավիղներում  
Չճանրացա հոգսերի մեջ,  
Միշտ լուսավոր շավիղներում  
Քնարըս ինձ տվեց նոր տենչ:

Չտրվեցի ես բախտին կույր,  
Լույս փնջեցի միայն ջանքով,  
Եվ քնարըս դարձավ ինձ քույր,  
Թեկուզ երկար տառապանքով:

Ու մարդամեջ տարավ նա ինձ,  
- քայլիր, - ասաց, - միշտ նրանց հետ,  
Եղիր համառ, եղիր անբիծ,  
Ու երբեք դու չնայես ետ:

Բանվորի հետ եղիր բանվոր,  
Յողվորի հետ՝ հողի մշակ,  
Եվ քո երգով, ով բանաստեղծ,  
Դու կդառնաս բարու գուշակ:

Յայացքդ միշտ բարձունքներին,  
Մեծ գալիքին խոսքդ ասա,  
Կարմիր կյանքի ակունքներին,  
Խղճիդ ձայնին միշտ էլ անսա:

Ամեն մի սիրտ մի մեծ բերդ է,  
Բացիր նրա դռներն ամուր,

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Կյանքն իմացիր, դժվար երթ է,  
Քեզ հեշտությամբ չի տա համբույր:

Պիտի վառվես կրակի պես,  
Չխնայես սիրտդ երթեք,  
Առանց սրտի չկա կյանքում  
Ինաստուն խոսք, թեւավոր երգ:

Երգդ թող կոչ դառնա կռվում,  
Խաղաղ պահին՝ բերկրանքի ձայն,  
Դառնա ճերմակ մի աղավնի  
Ու թեւածի աշխարհն անծայր:

Ու ներկայից դեպի գալիք  
Թոիր՝ մտքիդ թեւերը բաց,  
Ամեն երգդ դարձրու ալիք,  
Կյանքիդ համար մի այգաբաց:

Քայլիր այդպես դու անվարան,  
Միշտ իմ ձայնին հպատակվիր,  
Մի օդ կասի աշխարհն արար,  
Որ հասել ես նպատակիդ:

1980 թ., Ստեփանակերտ

### Ք Ո Գ Ր Կ ՈՒ Մ

Շրջեցի ես աշխարհն արար,  
Երազների օվկիանն ընկա,  
Դեռաստաններն ինձ գիրկն առան,  
Բայց քո գրկում ես ինձ գտա:

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Ամեն վայրկյան փոխվեցի ես,  
Սայթաքեցի եւ բարձրացա,  
Եռլըյունդ առած իմ մեջ,  
Երբեք քեզնից չհեռացա:

Իմ մայր Արցախ, քո երկնի մեջ  
Աշխարհ սնող Արեւ տեսա,  
Չպահեցի ուշքս դրսում,  
Քո որդին եմ, ոչ տնփեսադ:

Տառապանքիդ պատկերն եմ ես,  
Գարուններիդ հյուսվածքը ջինջ,  
Դու առանց ինձ կապրես հավետ,  
Ես առանց քեզ ի՞նչ եմ՝ ոչինչ:

1980 թ., Ստեփանակերտ

**Հ Ա Ց Ը**

Մի կտոր հաց է դրված սեղանիս,  
ճերմակ թոնրահաց,  
Բույրը ինձ մտքով տանում է հեռուն՝  
Մեր դաշտերն արձակ:  
Ես զրուցում եմ հողագործի հետ,  
Ճողի մեծ սիրով,  
Թվում է՝ կյանքը ծփում է իմ դեմ,  
Պայծառ լույսերով:  
Ինձ ակոսների լեզուն է գերում,  
Երգը հասկերի,

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Ասես այդ պահին էջերն եմ կարդուն  
Բոլոր Ասքերի:  
Յացը բուրում է սեղանիս վրա,  
Զանքի բույրն է նա,  
Զանքի բույրը դեռ քիչ է ասելը,  
Կյանքի հուրն է նա:  
Յացի բույրի մեջ ալիք է տալիս  
Շունչը հողվորի,  
Այդ ջերմությունն է, որ խնդություն է  
Բերում բոլորին:

1980 թ., Ստեփանակերտ

## Պ Ա Ր Տ Ք

Ծանր է անցել մանկությունս  
Յայրենի գյուղում,  
Սակայն նրա գրկի մեջ եմ  
Ես հասակ առել:  
Իմ ողջ կյանքում, ուր եղել եմ,  
Դիշել եմ նրան,  
Դեռու-հեռվից, կարոտներով  
Նրան եմ փարվել:  
Իմ մայրն է նա՝ անունս միշտ  
Շրթերի վրա,  
Բայց մի հոգս է սիրտս մաշում,  
Որ պարտք եմ նրան...

1980 թ., գ. Ակնաղբյուր

## ՀԻՇՈՒՄ ԵՍ

Բանաստեղծ ընկերոջս՝  
Վլադիմիր Աբրահամյանին

Այո, հիշում եմ ամե՞ն-ամե՞ն ինչ.  
Մեր հոգում վառած արեւները ջինջ,  
Միասին կերած մեր աղն ու հացը,  
Միասին կրած ծիծաղն ու լացը:

Ամե՞ն-ամե՞ն ինչ, այո, հիշում եմ,  
Ոտնահետքերս անգամ հուշում են,  
Մեկ-մեկու համար թեւեր դառնալը,  
Եվ սխալվելը, եւ դառնանալը:

Ամե՞ն-ամե՞ն ինչ, այո, հիշում եմ,  
Գրած երգերս մեղմիկ հուշում են,  
Թե ոնց ենք սիրել հայրենի հողը,  
Նրա ծփանքը, նուրբ շաղն ու շողը:

Ամե՞ն-ամե՞ն ինչ, այո, հիշում եմ,  
Ծաղիկը, ծառը, առուն, հուշում են,  
Որ կյանքում իրար երբեք չենք դավել,  
Որ մեր անունը բարձր ենք պահել,  
Որ տառապել ենք, բայց ապրել հպարտ,  
Որ ամեն պահի մնացել ենք Մարդ:

1980 թ., Ստեփանակերտ

## ՀԱԿՈԲ ՔԵՌԻՆ

Վաթսունամյա Յակոբ քեռուն  
Դեռ չեն տեսել պարապ նստի,  
Յոգու համար նրա եռուն  
Ժամանակը գանձ է, ոսկի:

Յոդի ուժը խլում է նա,  
Սերմերի հետ շրայլ ցանում,  
Ծիլերի հետ ծլում է նա,  
Յասկերի հետ հասունանում:

Շաղախսվում է հացի բույրին՝  
Իր անունով եւ մայր հոդի,  
Քաղցրությունը իր ողջ հոգու  
Ընծայում է նա խաղողին:

Գինու նման եռք է տալիս,  
Գինու նման թունդ է, բարի,  
Յարսանիքում, տղերանց հետ  
Դեռ պարում է նա Քոչարի:

Մեկ էլ տեսար՝ սարը զնաց,  
Յովիվների հրավերով,  
Սարից եկավ՝ վարի զնաց,  
Յորովելը հոլովելով:

Զմեռ չկա նրա համար,  
Գյուղի գործը մի՞թե քիչ է,

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Չմռան ցրտին մատ կտրելը  
Վազի համար ամոքիչ է:

Թոռների տեր Յակոբ քեռին  
Արեւներ է վառել հոգում,  
Նրանց սիրով ու նրանց հետ  
Խնամում է պարտեզ ու տուն:

Յակոբ քեռին չի էլ խորհում  
Աշխատանքից հեռանալու,  
Աշխատանքը շունչն է նրա,  
Նա միտք չունի ծերանալու:

1980 թ., գ. Ակնաղբյուր

**ԴԺՎԱՐ ՈՒՂԻ**

Տաս տարեկան հասակում  
Դեռ թամբում են փայտե ձին,  
Բայց տասնամյա մեր հոգում  
Խուլ ռումբեր պայթեցին:

Տաս տարեկան հասակում  
Դաս են սերտում ու խաղում,  
Այդ տարիքում մեր ձեռքին  
Սուր մանգաղն էր շափաղում:

Տաս տարեկան հասակում  
Մոր քնքանքն է քեզ վառում,

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Բայց տարիքն այդ մեր անցավ  
Զյուների մեջ՝ անտառում:

Տաս տարեկան հասակից  
Ասես հասուն դարձանք մենք...  
Իմ սերնդի անունը  
Պիտի հնչի որպես երգ:

1980 թ., Ստեփանակերտ

### Ի Ն Զ Կ Ա Ն Չ Ո Ւ Մ Ե Ն

Ինձ կանչում են անդադար  
Ոտնահետքերս,  
Արեւարի փեշերին,  
Թե Ուխտաձորի.  
Կարուտներիս թեւերով  
Թռչում են իմ երգերը՝  
Որպես շունչը հուշերիս  
Մանկութ օրերի:  
Թռչում են իմ երգերը  
Արեւարի լանջերով,  
Օծվում նրանց շողերով  
Ու բույրով ծաղկանց,  
Լցվում են իմ սրտի մեջ  
Մորս քաղցր կանչերով,  
Սիրո անմար շողերով,  
Տենչերով անանց:

1980 թ., գ. Ուխտաձոր

## ՀՈՂԻ ԵՐԱԶՅ

Քնած հողը ձյունի տակ  
Բարի երազ է տեսել  
Ու երազի ջերմ շնչով  
Զյունե վերմակն է կիսել:  
Կանգնել եմ ես արտի մոտ  
Ու նայում եմ ծիլերին,  
Նրանք արեւ են ըմպում՝  
Հողի երազն աչքերին:  
Նրանք արեւ են ըմպում՝  
Հողի, մարդու մեծ սիրով,  
Առատության հեքիաթն են  
Յյուսում գարնան թեւերով:  
Պատառ-պատառ ձյուները  
Ուլունքվում են լուսաշող,  
Երեւում է, որ իրար  
Հասկացել են ձյուն ու հող:  
Ես ծիլերն եմ փայփայում  
Հոգուս, սրտիս զույգ ափով,  
Երգս թեւեր է առնում  
Գալիք բերքի ծփանքով:

1980 թ., գ. Ակմաղբյուր

## ԹԹԵՆԻ

Թթենի, իմ քաղցր թթենի՝,  
Իմ հոգում դու բարձր թթենի՝,  
Դայացրով նրին, հնայող,  
Շվաքով դու թանձր, թթենի՝:

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Հենվում ես ժայռերի կողերին,  
Փարվում ես աստղերի շողերին,  
Թեւերիդ՝ արեւի ծնծղան,  
Փայլում ես մեր հանդ ու չոլերին:

Դիմացկում՝ ցրտին ու տապին,  
Սարերում, ձորերում, քարափին,  
Անսպառ, քաղցրանում քո պտղով,  
Ապրում ես, ոնց բարի մեր պապին:

Կոիվ եր... հաց էիր մեզ համար,  
Մայր էիր սրտաբաց մեզ համար,  
Ամառվա տոթակեզ օրերին  
Քույր էիր գրկաբաց մեզ համար:

Շրջում ես որպես երգ՝ մեր սիրով,  
Չենք լրի քեզ երբեք՝ մեր սիրով,  
Մեր կանաչ սարերի լանջերին  
Ծնվել ես դու մեզ հետ՝ մեր սիրով:

1980 թ., գ. Ակնաղբյուր

**ԿԱՂՆԻ**

*Սեր Քմախաչ սարի վրա  
հառնած կաղնին 500 տարեկան է*

Քմախաչի կանաչ կաղնի,  
Հզոր կաղնի Քմախաչի,  
Քեզ, իր ճամփին հանդիպողը,  
Իմ երգերից կճանաչի:

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Լույս աշխարհ ես հանել կարծես  
Դալար սիրտը քմախաչի,  
Շրջյունները քո լսողը  
Հոգով, սրտով կկանաչի:

Ոնց Նահապետ կանգնել ես դու  
Բարձր ուսին քմախաչի,  
Երմեկ նրան, ով քեզ նման  
Հողմերի դեմ կշառաչի:

Դայրենախոս քո երգերով,  
Որդիներին քո տուն կանչի՛ր,  
Քմախաչի կանաչ կաղնի,  
Դայոց կաղնի՝ քմախաչի:

1980 թ., գ. Ուխտաձոր

### ՉԻ ԳԱԼԻՍ ՔԱՂԱՔ

Տեսնես հայրս ի՞նչ է անում  
Մեր բակում խաղաղ,  
Գյուղը սրտից նա չի հանում,  
Չի գալիս քաղաք:

Չի հեռանում իր օջախից,  
Տնից իր կերտած,  
«Ծիծեռնակի» երգն է կրկնում՝  
Շատ վաղուց սերտած:

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Որդիներով ամեն անգամ  
Եղը գյուղ եմ գնում,  
Երջանիկ է զգում իրեն,  
Հանգիստ չի քնում:

Իսկ ճամփելիս՝ շշնջում է  
Խոր ափսոսանքով.  
- Այս բակին ո՞վ տեր կկանգնի,  
Այս օջախին՝ ո՞վ...

Տեսնես հայրս ի՞նչ է անում  
Մեր բակում խաղաղ,  
Գյուղը սրտից նա չի հանում,  
Չի գալիս քաղաք:

1980 թ., Ստեփանակերտ

### ԴԱՐԱԲԱՂԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ

Զգիտեմ, քեզ մա՞յր անվանեմ,  
Քո՞ւյր անվանեմ քնքշասիրտ,  
Ծիածանից ծնված աղջի՞կ,  
Թե՞ չխամրող սիրո գիրք:

Իմ մանկության քաղցր օրոր,  
Ղարաբաղի բնություն,  
Ինձ գրկեցիր մորս սիրով,  
Պարգևեցիր նրբություն:

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Քրոջս պես ինձ ժպտացիր,  
Փայփայեցիր ոնց սերու,  
Հորս նման խիստ, առնացի,  
Դու մարզեցիր թեւերս:

Գագաթներդ՝ աստղերի մոտ,  
Իսկ փեշերդ՝ ձորերում,  
Ժպտում ես ինձ սիրակարոտ,  
Զո երփներանգ շորերում:

Դու իմ սիրտն ես, իմ արյունը,  
Ես քեզանից եմ սերվել,  
Զո գույները բազմախորհուրդ,  
Իմ էությանն են մերվել:

Մեր պապերից մեզ ավանդված  
Հավերժ ջահել հնություն,  
Մեզ սեր ու քույր, մեզ հայր ու մայր,  
Ղարաբաղի բնություն:

1980 թ., Յաղրութ

**ԾՈՎԱՓԻՆ**

Արեւի ծնծղամ գուրգուրում է ինձ,  
Կապուտաչ ծովը ծփուր է իմ դեմ,-  
Այս պահին քեզ եմ հիշում ես նորից,  
Յայրենի իմ գյուղ, իմ միակ եղեմ:

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Ինչքա՞ն էլ լիճդ լինի ափաչափ,  
Իմ հուշերի մեջ նա է շառաչում,  
Նա է ինձ գրկում, շոյում մայրաբար  
Եվ մոր կարոտով իր ափը կանչում:

1980 թ., Մոչի

**Հ Ո Ղ Ի Կ Ա Ր Ո Տ Ո Վ**

Թեթեւացել են վազերը, ահա,  
Քայլում եմ նրանց շարքերի միջով,  
Հուշերս, նրբին թեւերը պարզած,  
Փարվում են սրտիս՝ քնքշությամբ, ճիշով:

Նորից կապվում եմ հայրենի հողին,  
Փխրուն եմ դառնում նրա պես նորից,  
Կարծես հարազատ ծայներ եմ լսում  
Իմ Արեւսարից, իմ Ուխտաձորից:

Հողի կարոտը, հուշերն իմ անթիվ,  
Մորս քնքշությամբ ինձ գիրկն են առնում,  
Ինչ որ կորցրել եմ, գտնում եմ կարծես,  
Բարձրամում անվերջ եւ իմաստնամում:

Հայրենի հողն ինձ ավուն է տալիս,  
Հուշերս՝ սրտիս ճախրելու թեւեր...  
Դու մի՛ հեռանա հայրենի հողից,  
Եթե ուզում ես անդադար թեւել:

1980 թ., գ. Ակնաղբյուր

## Ա Ծ Ո Ւ Ն

Աշնան թեւերը նորից թրթռում են,  
Նորից վառվում են գույները աշնան,  
Ժայռերը դարձյալ ամպից քրտնում են,  
Ու բարակում են գետերը վարար:

Ցուրտը եւ տաքը խաչվում են օդում,  
Շողն արեգական խուտուտ է տալիս,  
Մեկ-մեկ մշուշը սարերին չոքում,  
Սառած շրթերով համբույր է տալիս:

Ամռան եւ աշնան գրկախառնումից  
Երկինքը կապտում, հողը քրտնում է,  
Արարման քուն է դա հզոր, անբիծ,  
Զարթոնքի համար խելքը գնում է:

Գարունը կգա, կարթնանա հողը,  
Ծաղկունքը պարզած՝ ոնց վառվող ջահեր,  
Նախանձում եմ քեզ, քո հար ծփանքին,  
Ով մայր բնություն՝ հավիտյան ջահել՝

1980 թ., գ. Ակմաղբյուր

## Գ Յ Ո Ւ Ղ Ի Մ

Դու ինձ հավատա, հայրենի իմ գյուղ,  
Ոնց հավատում ես մշակիդ ճանաչ,  
Որ ինչ էլ լինի, նա չի հեռանա,  
Չի թողնի երբեք լանջերդ կանաչ...

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Դու ինձ հավատա,  
 Ոնց հավատում ես  
 Քեզանով արբած ծերերիդ քարի,  
 Որ սիրահարված քո հանդ ու քարին,  
 Չեն գնում քաղաք՝  
 Անգամ հոր համար  
 Շրթունքը ճաքած որդիների մոտ...  
 Ինչպես ինքդ քեզ,  
 Դու ինձ հավատա:

1980 թ., գ. Ակնաղբյուր

### ԴԱՐԱԲԱԴ

(Երգ)

Դու հայրական իմ սուրբ օջախ,  
 Հոգուս պայծառ նշխարն ես դու,  
 Լուսապարար այս աշխարհում  
 Երազներիս աշխարհն ես դու:

Միրգդ քաղցր, խաղողդ անուշ,  
 Հատնում չկա քո ծով բերքին,  
 Կյանքս կտամ, կտամ ուժս  
 Քո թռիչքին, քո վերելքին:

Հողի մշակ ես իմաստուն,  
 Բարի, հմուտ այգեպան ես,  
 Ինչ երգ ունենք ու սրբություն,  
 Նրանց ազնիվ պահապանն ես:

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Միրգդ քաղցր, խաղողդ անուշ,  
Հատնում չկա քո ծով բերքին,  
Կյանքս կտամ, կտամ ուժս,  
Քո թոշիչքին, քո վերելքին՝

Դարերդ ուսած՝ փարված նորին,  
Կյանք ես վարում անապական,  
Գեղեցկանում օրը օրին  
Ու կառուցում քո ապագան:

Միրգդ քաղցր, խաղողդ անուշ,  
Հատնում չկա քո ծով բերքին,  
Կյանքս կտամ, կտամ ուժս  
Աստղագնա քո վերելքին:

1980 թ., Ստեփանակերտ

**Ք Ր Ո Զ Հ Ա Մ Բ Ո Ւ Յ Ր Ո Յ**

Նվիրում եմ քրոջս՝ Գրետային

Օճորքի տակ Գուգարքի,  
Ղարաբաղյան սիրով սուրբ,  
Քույրս իր քույնն է հյուսել  
Ծիծեռնակի նման նուրբ:

Բալիկներն են ճռվողում,  
Տունը լցնում երգերով,  
Հրաշք հեքիաթ է հյուսվում  
Ին քույրիկի ձեռքերով:

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Այդ հեքիաթում գեղեցիկ  
Կյանքի ծաղիկն է բուրում,  
Մորս շունչն եմ զգում ես  
Քրոջս ջերմ համբույրում:

1980 թ., Վանաձոր

### Ք Ո Ա Ն Ո Ւ Ն Ց

Չո անունը իմ անունն է,  
Չո պատիվը՝ պատիվս թանկ,  
Կյանքը ուր էլ ինձ տանում է,  
Ձերմանում եմ քո շնչով տաք:

Ես քեզանով կանաչում եմ,  
Ինձ՝ քեզանով ճանաչում են,  
Այնպես ապրեմ՝ իմ պատճառով  
Երբեք չասես. «Ամաչում եմ»:

1980 թ., Ստեփանակերտ

### Չ Ե Մ Վ Ի Բ Ո Ւ Մ

Ես չեմ վիճում քեզ հետ, այո՞՝  
Բարձր է սարն այս, աստեղնամոտ,  
Բայց որ լանջին աղբյուր չկա,  
Ծաղկի ծփանք ու բույր չկա,  
Չկա առու, անտառ չկա,

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Ծլվլացող ծիծառ չկա,  
Չկա խորքում եւ ո՞չ մի հանք,  
Ո՞չ շոյանք է ուզում, ո՞չ ջանք,  
Որ հառնել է դատարկ ու սառ,  
Նրան ինչպէ՞ս անվանենք սար:

1980 թ., գ. Ազոյս

**ԿԱՐԱՍ ԱՂԲՅՈՒՐ**

Կարաս աղբյուր, ծնկի եկել քո առաջ՝  
Գովերգում եմ կարկաչները քո բարի,  
Հողի խորքից սառնությունը քո առաժ,  
Կյանք ես բերում մարդուն, ծաղկին ու ծառին:

Ես չգիտեմ, աստղերից ես դու քամվել,  
Թե նրբասիրտ մեր տատերի խոհերից,  
Գուցե մի օր դու ժայթքել ես ու հոսել  
Մեր պապերի խարույկների հրերից:

Քո քաղցրաշունչ, հավերժական երգի հետ  
Իմ հույզերը գալիքին ես դու տանում,  
Թե չլինես այս աշխարհում, իմ անգին,  
Չի ունենա երգս ո՞չ հուն, ո՞չ անուն:

1980 թ., գ. Ակմաղբյուր

## ԿԱՆՉԵՐՍ

Իմ երազները՝ լեռների ծնունդ,  
Լեռների սնունդ՝ իմ երազները  
Իմ մուրազները՝ լեռների հոգի,  
Լեռների ոգի՝ իմ մուրազները:

Իմ արմատները՝ լեռների գրկում,  
Լեռների սրտում՝ իմ արմատները,  
Իմ նուրբ մատները՝ մի-մի ճառագայթ,  
Լեռները շոյող իմ լույս մատները:

Իմ սիրո հետքն են, իմ սրտի կեսն են,  
Սեր սեգ լեռների կանաչ լանջերը,  
Լեռներից պոկված զիլ ղողանջներն են,  
Լեռներից թեւող երգիս կանչերը:

1980 թ., Ստեփանակերտ

## ՄԱՐԴՈՒ ՏԵՆՉԸ

Ամեն ինչը սահման ունի,  
Սահման չունի տենչը մարդու...  
Յողն ես սիրում դու հայրենի,  
Զարդարում ես պարտեզ ու տուն,-  
Քո վաստակած աղ ու հացով,  
Քո փայփայած լուսաբացով,  
Քո սերտածով,

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Քո կերտածով,  
Բարձրանում ես ճամփով ուզած,  
Միշտ կարոտով ու միշտ հուզված:  
Բարձրանում ես՝ գոհ ու անհոգ,  
Նոր հույս, նոր խոհ  
Սրտիդ խորքում,  
Միշտ երազկոտ, միշտ բորբքում:  
Երազներիդ լույս փեշերով  
Փայփայում ես աշխարհն արար,  
Զարդարվում ես վառ հուշերով,  
Սակայն էլի կյանքին ծարավ:  
Բարձրանում ես՝ ձգտումներիդ,  
Երազներիդ հավքը արթուն,  
Ամեն ինչը սահման ունի,  
Սահման չունի տենչը մարդու...

1980 թ., Ստեփանակերտ

## Տ Ա Ր Ի Ն Ե Ր Ի Լ Ո Ւ Յ Ս Ը

Անց են կենում գարուններդ  
Բուրումնավետ գիրկ ու ծոցով,  
Կարկաչահոս առուներըդ  
Իրար գտնում, հասնում են ծով:  
Երամները քո հուշերի  
Թեւին տալով, հասնում են քեզ,  
Մերթ շոյում են հոգնած սիրտդ,  
Մերթ՝ հարվածում փոթորկի պես...  
Ճիշում ես դու՝ ու՞ն ես սիրել,

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Ո՞վ է սիրուն քո խառնել թույն,  
Ում ես կարծել դու Մարդ-Աստված,  
Ո՞վ է բերել քեզ դառնություն,  
Ում ես սիրով բարձրացրել,  
Ո՞վ է հրել քեզ դեպի ցած,  
Ե՞րբ ես մի օր ուրախացել,  
Ե՞րբ ես խորհել դու դառնացած...  
Ի՞նչ էլ լինի, բարեկամնե՞ր,  
Լավությունը զուր չի գնում...  
Մուքն անցնում է տարիների,  
Տարիների լույսն է մնում:

1981 թ., Ստեփանակերտ

### ԳԱՂՏՆԻՔ

*Մի հուզումից հետո*

Ամեն օր փոխվում եմ մի քիչ,  
Դառնում եմ խորհող ու ներհուն,  
Կարծես թե կյանքը ին առջեւ  
Բացում է նոր ուղի, նոր հուն:  
Սարերը այլ կերպ են երեւում,  
Չորերը, կիրճերը՝ այլ կերպ,  
Արեւը փոխված է արեւում,  
Այսախսին չի եղել երբեք:  
Վեհություն անունը կարծես  
Ուզում է մի քիչ խաթարվել,  
Փոխվում են ծաղկունքը պես-պես,  
Ին հոգում այս ի՞նչ է կատարվել:

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Լճերում փրփուր եմ տեսնում,  
Գետերը պղտոր են իմ աչքին,  
ճամփեքի զիգզագն է շատացել,  
Աստղերն էլ չեն ժառացել:  
Եվ անգամ հունդերը իմ ցանած,  
Կարծես թե այլ կերպ են կանաչում...  
Նոր հո՞ւն է բացվում իմ առաջ,  
Թե կյանքը դեռ նո՞ր եմ ճանաչում:

1981 թ., Ստեփանակերտ

### ԵՍ ՉԵՄ ՈՒՇԱՑԵԼ

Ժամադրության անգին պահերին  
Ոչ մի ակնթարթ ես չեմ ուշացել,  
Սիրո մեջ լինի, թե ընկերության,  
Միշտ առաջինն եմ թեւերս բացել:  
Սար ենք շուռ տվել, հանել ենք աղբյուր,  
Տնկել ենք ծառեր, թփեր՝ ծաղկաբույր,  
Չեմ հանգստացել երբեք շվաքում,  
Գտել եմ տեղս առաջին շարքում:  
Թող կյանքի, երգի, սիրո մեջ հորդուն  
Քեզ ոչ ոք չասի. «Ուշացել ես դու»:

1981 թ., Ստեփանակերտ

### ԻՄ ԵՐԳԵՐԸ

Իմ երգերը առուների կարկաչներ են,  
Կակաչներ են իմ երգերը,  
Իմ երգերը ծով արտերի ծփանքներ են,  
Ծիծառներ են իմ երգերը:

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Իմ երգերը հավերժավառ կարոտներ են,  
Նարոտներ են իմ երգերը,  
Իմ երգերը սիրողների համբույրներ են,  
Աղբյուրներ են իմ երգերը:  
Իմ երգերը ծով արտերի ծփանքներ են,  
Գզվանքներ են իմ երգերը,  
Իմ երգերը մարդկանց հղած բարեւներ են,  
Արեւներ են իմ երգերը:  
Իմ երգերը սիրո նման սրտակեզ են,  
Սիրուս պես են իմ երգերը:

1981 թ., Ստեփանակերտ

## ԿԱԹԻԼ ՍԵՐԵ

Ես երգիչ եմ,  
Հարազատ են հոգուս համար  
Օվկիանները,  
Լճերը լուրթ,  
Հազարանուն ծաղիկները,  
Աղբյուրները զանգակաշուրթ,  
Թռչունների ծլվլոցը,  
Մայր բնության անուշ ծոցը,  
Արեւն անմար...  
Աստղերը վառ,  
Սակայն մարդու սրտից բխած  
Կաթիլ սերը՝ արժեն աշխարհ:

1981 թ., Ստեփանակերտ

## Խ Ո Յ

Ինչե՞ր ասես, որ քո ճամփին  
Չեն պատահում.  
Օրեր ամպոտ  
Եվ արեւոտ,  
Ուրախություն  
Եվ տիսրություն,  
Բարիություն՝ մեղմ ու քնքուշ,  
Չարության փուշ,  
Լուս ակնթարթ՝ առողջ մի հունդ,  
Անկումների վիհ ու անդունդ,  
Սիրո քնքշանք  
Եվ տառապանք...  
Այդպես նրանց ընտելացած  
Մերթ ելնում ես, մերթ իջնում ցած...  
Սակայն լավ է, որ քո հոգուն  
Երբեք մուժ ու ամա չեն չոքուն,  
Քայլում ես միշտ բարու հույսով  
Եվ քո շուրջը լցնում լույսով:

1981 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ապրել եմ ինքս ինձ ննան..-  
Իմ ուրույն աշխարհով, տենչով,  
Դարթել եմ սեփական ճամփաս,-  
Անցնելով հողմերի միջով:

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Տրվածով միշտ գոհ եմ մնացել,  
Միշտ դժգոհ՝ իմ կողմից տվածով,  
Երբ մեկն ինձ իր սիրտն է բացել,  
Բերկրանքս դարձել է անհուն ծով:

Ինքս ինձ զննել եմ հաճախ,  
Նկատել իմ ծուռն ու թերին,  
Իմ հանդեպ եղել եմ միշտ վստահ,  
Հավատիս շողերն իմ թեւերին:

Դարձել են արեւի ինձան  
Ին օրը, ամիսն ու տարին,  
Ահա թե ինչու սրտաբաց  
Ժպտում եմ ի՞նձ ու աշխարհին:

1980 թ., Ստեփանակերտ

### ՏԵՆՉ

Այնպես ապրեմ, ապրեմ այնպես,  
Որ ծածանվեմ իմ բույրերով,  
Բյուրեղանամ ցողերի պես,  
Ծիածանվեմ իմ թույրերով:  
Եթե վառվեմ՝ ասուպի պես,  
Եթե ծփամ՝ ինչպես արտը,  
Ուր էլ գնամ, տանուլ չտան  
Հաղթանակի ահեղ մարտը:  
Այնպես ապրեմ, ինչպես հողը՝  
Ինքս իմ մեջ թարմանալով,

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Յերոսներին միշտ սիրահար,  
Չար արարքից զարմանալով:  
Այնպես ապրեմ, ինչպես վազը,  
Որ հատուցման սահման չունի,  
Որ ժպտում է՝ ինքը կանաչ,  
Երազները հազար գույնի:  
Այնպես ապրեմ, որ չերկատվեմ,  
Բարին սիրեմ, չարը ատեմ,  
Որ Լուսաստղը այս աշխարհում  
Նաեւ ինձ հետ համեմատեն:

1980 թ., Ստեփանակերտ

### ԱՌԵԴՎԱԾ

Մի առեղծված է սիրտը մարդկային,  
Մեկին մի անգամ ժպտում ես բարի,  
Ուզում է սիրտը հանել ու տալ քեզ,  
Մեկի ուղին ես հարթում դժվարին,  
Բայց նա խայթում է դաժան օձի պես:

Հուսախարվում ես հաճախ քո ճամփին,  
Քեզ ատելության հուրն է բորբոքում,  
Ելի վառվում ես ոնց գարնան արփի,  
Ուրիշի վերքն է մխում քո հոգում:

Եթե արեւը քո սրտի մեջ է,  
Այն դանակով էլ չեն կարող քերել,  
Եթե ծնվել ես բարության համար,  
Չարությունը քեզ չի կարող գերել:

1981 թ., Ստեփանակերտ

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

**Ս Ի Ր Տ Ս**

Սիրտս՝ սիրո բորբոք կրակ,  
Շաղ ու շողոտ ծաղիկ ու վարդ,  
Լավի, բարու շունչ ու երակ,  
Ամենուրեք սեղանի զարդ:

Սիրտս՝ սարից բխող առու,  
Տիեզերքից պոկված արեւ,  
Աշնան ծփանք, կանաչ գարուն,  
Հողագնդին փարված բարեւ:

Սիրտս մթմուն վառվող խարույկ,  
Աստղեր շոյող դալար բարդի,  
Թթենու խոր արմատ ու ճյուղ,  
Սիրո կարոտ, սիրո արփի...

1981 թ., Ստեփանակերտ

**Ի Մ Բ Ե Ր Կ Ր Ա Ս Ք Ի Ժ Ա Մ Ե Ր**

Իմ բերկրանքի ժամե՛ր,  
Դուք իմ կյանքի իմաստ,  
Ես ձեզ հողից, քարից,  
Հացի հետ եմ քամել:  
Հատիկ-հատիկ, մեկ-մեկ  
Ընդերքներից հանել,  
Երազներիս խառնած  
Իմ ճամփին եմ ցանել:  
Թե գումարեմ, հազիվ

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Կյանքիս կեսը կազմեք,  
Չեր հետեւից համառ  
Վաստակով եմ վազել:  
Հավաքել եմ ես ձեզ  
Սարերը շուռ տալիս,  
Գետից քամած լույսով  
Գալիքին լուր տալիս,  
Հառնող պատերի մեջ  
Շարած իմ քարերից,  
Սրտերի հետ խոսող  
Քնքույշ իմ լարերից:  
Ես ձեր գինը գիտեմ,  
Իմ խղճից եք պոկված,  
Ուլունք-ուլունք հոսող  
Քրտինքից եք պոկված:  
Դեպի գալիք երգս  
Զեզնով պիտի տանեմ,  
Էռթյունս կազմող,  
Իմ բերկրանքի ժամե՞ր:

1981 թ., Ստեփանակերտ

**Ե Ր Բ Ե Ն Ք Հ Ա Ս Ն Ե Լ ՈՒ**

Շատ առեղջվածներ  
Դռնբաց եղան մեր մտքի առջեւ,  
Կյանքը արարող մայր բնությունը  
Կարդացինք անհազ:  
Լուսին ոտք դրինք,

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Ղեաի Մարս տանող  
Սանդուղքի բոլոր աստիճանները  
Հաշվեցինք մեկ-մեկ:  
Մտքով ու ոտքով  
Հասել ենք արդեն  
Հեքիաթում չեղած շատ բարձունքների,  
Բայց Ե՞րբ ենք, արդյոք,  
Լրիվ բացելու  
Մարդկային հոգու  
Դժները բոլոր,  
Նրա խորքերի ծալք ու հատակին  
Ե՞րբ ենք հասնելու:

1981 թ., Ստեփանակերտ

**Մ Ա Ր Դ Ը**

Միայն մարդուց վերջ ստացա,  
Էլի երգս՝ մարդը մնաց,  
Հերկս մարդը միշտ տրորեց,  
Էլի ձեռքս՝ մարդը մնաց:  
ճամփիս մարդը քարեր բարդեց,  
ճամփաս էլի հարթեց մարդը,  
Քունս մարդը միշտ խանգարեց,  
Մարդը խինդով լցրեց տունս:

1981 թ., գ. Ակնաղրյուր

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

### ԱՅՍԻՆՉԵՂԱՎ

Այս ի՞նչ եղավ... ո՞վ հեռացավ  
Երազներիս կանաչ ծորից,  
Իմ հավատի մաքուր դուռը  
Այս ո՞վ կոպիտ ծեծեց նորից:

Իմ աստղաթեւ քնքշանքներին  
Այն ո՞վ ժպտաց ջերմին ու սուրբ,  
Այն ո՞վ ջարդեց  
Իմ վառ սիրո բաժակը նուրբ:

Ես մոլորված կանգնել էի...  
Ո՞վ անտարբեր եկավ, անցավ,  
Իմ փոթորկված հոգու համար  
Ասեք, այն ո՞վ թեւեր դարձավ...

1981 թ., Ստեփանակերտ

### ԹԱՍՓԱՍ

Սպասում է դեռ ինձ ճամփաս,  
Պիտի քայլեմ, պիտի քայլեմ,  
Մութ ու մուժի ծալքերի մեջ  
Պիտի փայլեմ, պիտի փայլեմ:

Կաթիլ-կաթիլ իմ շողերով  
Ծիլ ու բողբոջ պիտի շնչեն,  
Զանգակածայն իմ տենչերը  
Մրտերի մեջ պիտի հնչեն:

1981 թ., Ստեփանակերտ

## Կ Յ Ա Ն Ք

Երբեք քեզ քեռ չդարձա  
Եվ չզգացի ինձ անհոգ,  
Քեզնով, քեզ հետ բարձրացա,  
Եռլյանդ միշտ կարուտ:

Քո աղբյուրից խմեցի,  
Միշտ մնալով քեզ ծարավ,  
Ղեաի առաջ անդադար  
Քո սլացքը ինձ տարավ:

Ժպիտներիդ փարվեցի,  
Ինձ վառեցիր նրանցով,  
Քո քաղցրությամբ տարվեցի,  
Ու բերկրանքս դարձավ ծով:

Դիմա հետ եմ նայում ես,  
Ի՞նչ եմ արել քեզ համար,  
Ես՝ քո որդին բանաստեղձ...  
Տեսած հիսուն ջերմ ամառ:

Ի՞նչ եմ արել քեզ համար,  
Թեւաբախնան ին օրից,  
Կրակները ին անմար  
Չէ՞ որ դու ես տվել ինձ:

Պարտք եմ զգում քեզ անվերջ,  
Ամեն բացվող առավոտ,  
Թեկուզ երբեք քո գրկում  
Չեմ զգացել ինձ անհոգ:

## ՈՂՋՈՒՅՆ ՔԵԶ, ԱՐԵՎ

Ողջույն քեզ, արեւ,  
Իմ հին բարեկամ...  
Դեռ մանկությունից  
Ես ջրդեղեցի հոգիս քո հրում,  
Քեզ նախանձեցի,  
Քո բարությունը դարձրի դրոշակ.  
Ու միշտ ձգտեցի  
Աշխարհին նայել քո ժպիտներով,  
Ցանեցի, ինչ որ եղավ իմ սրտում,  
Ու ցանում եմ դեռ,  
Եվ երջանիկ եմ,  
Որ ապրում եմ ես լույսով ծանրաբեռ,  
Որ քո գուգորդն եմ,  
Ոչ թե ստվերը,  
Որ իմ կրծքի տակ հավետ բորբոք է  
Քո վառած սերը,  
Որ կյանքին բեռ չեմ,  
Այլ լույսի մշակ,  
Բարին սերմանող,  
Գալիքի գուշակ...

1981 թ., Ակնաղբյուր

## ԼԱՎ ԵՐԳԸ

Զգիտեմ դուք՝ ինչպես,  
Ես սիրում եմ երգը,  
Մի լավ երգի համար  
Գնում է իմ խելքը:

Սիրո երգի կամչով  
Սիրահար եմ դառնում,  
Իսկ երգ-մարտակոչով  
Մի անձնութաց զինվոր:

Յորովելի թերով  
Ասես մաճ եմ առնում  
Եվ իմ պապի նման  
Դառնում եմ հողվոր:

Կյանքի ծայնն է երգը,  
Երգը հողի հելքն է,  
Մի լավ երգի համար  
Գնում է իմ խելքը...

1981 թ., Ստեփանակերտ

## ՍՐՏԻ ՄԵԶ

Ամեն ծաղկի մեջ մի երգ կարդացի,  
Զրերի անուշ կարկաչների մեջ  
Լսեցի մի եզ,  
Մայր հողի լեզուն հասկացա լրին,  
Փնջած հույզերս, երգերի փոխված,  
Դարձան տիեզերք,  
Ես մայր բնության  
Ծով ծիանքներում  
Լողացի սիրով,

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Հազար ու մի երգ  
Ծնվեց իմ հոգում...  
Բայց ամենալավ իմ երգը գտա  
Սրտի մեջ մարդու:

1981 թ., Ստեփանակերտ

**ԱՄԵՆ ԱՆԳԱՄ**

Ամեն անգամ երգ գրելիս  
Յոթը հազար գույն եմ դառնում,  
Յյուսվուն նրան,  
Իսկ գույներս առնուն եմ ես  
Մարդկանց սրտից,  
Նրանց հոգուց ու երազից,  
Նրանց թախծից ու մուրազից...  
Ահա այսպես, իմ երգերուն  
Դառնուն եմ ես  
Սիրողների տենչերի փունջ,  
Վառվող սրտերն իրար կապող  
Անտես կամուրջ,  
Իրար փարվող մոր ու որդու,  
Իրար բացվող հող ու մարդու  
Ժպիտ ու կանչ,  
Մանուկների ճիշից ծնված  
Երգ ու կարկաչ,  
Ես ինքս ինձ չեմ պատկանում,  
Դրանով եմ հպարտանում:

1981 թ., Ստեփանակերտ

## ԵՍ

Ես քաղցրահամ պտուղ էի, -  
 Ինձ կեղեւը մնաց,  
 Մի ծառ էի՝ մրգով առատ, -  
 Ինձ տերեւը մնաց:  
 Կյանքը ասաց, - Ո՞վ բանաստեղծ,  
 Երջանիկ ես դու,  
 Քեզնից հետո կասեմ՝ երգչի  
 Սեր-Արեւը մնաց:

1981 թ., Ստեփանակերտ

## ԱՆՈՒՆ

Անուն են դնում նորածին մանկան  
 Եվ կարծում են, թե անունը կապրի,  
 Անուն դմելը շատ հեշտ է կյանքուն,  
 Անուն պահելն է բարդ ու դժվարին:

Անուն կա մարտում ծնվում է մահից  
 Եվ ընկերանում զալիք դարերին,  
 Մատնացույց կանեն քաջն Վարդանին,  
 Թե հարցնես անզամ ժայռ ու քարերին:

Անուն կա դեպի հավերժն է թեւում  
 Թշնամու նետած գնդակից հետո,  
 Անուն կա՝ ազգին պատիվ է բերում  
 Ու սրտեր գերում քաղցր օրիներգով:

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Դարեղը կգան ու թեւին կտան,  
Գալիքը իր մեծ լեզենդը կասի,  
Ժամանակները կխոսեն անվերջ  
Անդրանիկի եւ Նժդեհի մասին:

Ոչինչ չի տալիս անունը կյանքում,  
Գործն է զարդարում անունը մարդու:

*1981 թ., Ստեփանակերտ*

### ԵՐԲ ՀԱՆԳՉՈՒՄ Է ԱՐԵՎԸ

Երբ հանգչում է արեւը,  
Սիրտս նրին է դառնում,  
Խոհերս թեւ են առնում,  
Երբ հանգչում է արեւը:  
Արթնանում է իմ հոգում,  
Սիրո անծիր մի աշխարհ,  
Ու տենչում եմ, որ կյանքը  
Մարդկանց դառնա սիրող մայր:  
Ուզում եմ, որ մութի մեջ  
Մարդիկ աստղեր դառնան ջինջ,  
Օջախներում ծավալվեն  
Խաղաղ երազ, խաղաղ նինջ:  
Հնչի գրկում գալիքի  
Մտերմության երգը տաք,  
Միայն սերը ալիքվի  
Բոլոր մարդկանց կրծքի տակ:

*1981 թ., Ստեփանակերտ*

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

\* \* \*

Սորս աչքերով նայեմ աշխարհին,  
Հորս վառ հույսով փայփայեմ նրան...  
Սորս աչքերում ծփում է բարին,  
Հորս հույսի մեջ՝ հույսերը արար:  
Սորս հավատով լավին հավատամ,  
Հորս խստությամբ հաստատեմ լույսը,  
Պայծառ հավատի ու լույսի մեջ է  
Հավիտյան շողում մարդկության հույսը:

1981 թ., գ. Ակնաղբյուր

**ԵՐԳԻ ԶԸ**

Մի բուռ բարություն  
Մայր հողից առավ,  
Մի բուռ էլ առավ  
Քնքշասիրտ մորից,  
Երկուսը մեկտեղ  
Մի օվկիան դառավ՝  
Իր սիրտը կյանքին  
Բացելու օրից:  
Ամեն ժպիտը  
Բարության ալիք,  
Սատներն արեւի  
Թրթռուն շողեր...  
Մորից ու հողից  
Սովորեց կյանքում  
Ամբողջ աշխարհը  
Սիրով ողողել:

1981 թ., գ. Ուխտաձոր

## ՑԱՎ

Աստղերը քնել են վաղուց,  
 Իմ քունը սակայն չի տանում,  
 Անգամ հոգնել են տաղից,  
 Միտքս խոհեր է մանում:  
 Երկինքը իշել է կարծես,  
 Ուզում է ցավս իմանալ,  
 - Խորն է,- ասում եմ, - սիրելիս,  
 Չես կարող նրան դիմանալ...  
 Իմ ցավը աշխարհն է արար,  
 Չէ՞ որ ես երգիչն եմ դարի,  
 Մարդկության հոգսով է լեցուն  
 Իմ հոգին, իմ սիրտը բարի:  
 Ատոմ են ճեղքում ամենուր,  
 Աշխարհի սիրտը դողում է,  
 Իմ սիրտն էլ աշխարհի սրտի  
 Տագնապի, հոգսի մեջ լողում է:  
 Բայց գիտեմ, ինչ էլ պատահի  
 Յաղթական բարձունքը մենք կառնենք,  
 Փոթորկի, կրակի միջից  
 Մեր ամբողջ հասակով կհառնենք:  
 Եվ հոգուս ու սրտիս ծալքերուն  
 Մի անանց կսկիծ է հոսում,  
 Նահատակ քսան միլիոն սիրտ  
 Մեր ցավի մասին է խոսում:  
 Իմ ցավը ըմբռստ բողոք է:  
 Կռվի դեմ, չարի դեմ ու դավի,  
 Իմ հոգսը աշխարհն է արար,  
 Չէ՞ որ ես երգիչն եմ դարի...

1981 թ., գ. Թաղասեռ

## ՆՈՐԻՑ ԽՈՍՔ ԵՆ ԲԱՑԵԼ

Նորից խոսք են բացել  
     պատերազմի մասին,  
 Նորից խենթացել են,  
     դաժանացել մարդիկ,  
 Մեր այս մոլորակի  
     բախտի համար նորից  
 Տրոփում է սիրտս  
     տագնապած ու արթուն:  
 Դեռ չեն սպիացել մեր  
     վերքերը բազում,  
 Դեռ միսում է ցավը  
     բաժանումի, զոհի,  
 Երբ նստում ենք մեկտեղ,  
     ուրախ սեղան բացում,  
 Դեռ մայրերի վիշտն է փարվում  
     մեր լույս խոհին:  
 Պապը՝ թռռնիկներին  
     նկարից է ժպտում -  
 Զահել պապը՝  
     զլխին կոմունարկան կանաչ,  
 Շեռուներում ննջած  
     իրենց սիրածներին  
 Սպասողներ կան դեռ,  
     կրծքերի տակ՝ հառաչ:  
 Խաղաղության շունչն է  
     թեւածում մեր հոգում,

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Պատերազմը խորթ է կյանքին  
ու սրտին մեր,  
Պատերազմում հայրն է  
հողին հանձնում որդուն,  
Խաղաղ պահին որդին՝  
ծնողներին իր ծեր:

1981թ., Հաղորդություն

**Հ Ա Վ Ա Տ**

Ես հավատում եմ մեր լուս երազին.  
Չի մնա սահման, չի լինի գինվոր,  
Մրրիկների մեջ ծնված ու կոփված  
Եղբայրությունը կիառթի մի օր:

Աշխատանքի մեջ, արեւների պես,  
Մարդիկ կժպտան մեկ-մեկու, կյանքին,  
Չեն ել իմանա ինչ է զենք, զրահ,  
Իրենց վաստակով կհասնեն փառքի:

Չեն լինի սահման ու սահմանագիծ,  
Միայն կլինեն սիրո ճամփաներ,  
Միայն կծփան սրտերը անբիծ  
Եվ ջանքով օծված բարի համբավներ:

Կարիք չի լինի իրար երդվելու,  
Վստահությունը կծիածանվի,  
Չեռքսեղմումներից ու ժայիտմներից  
Հավատարմության հուրը կցանվի:

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Սերունդներն իրար կողջունեն սիրով,  
Կթելի խաղաղ երգը հրածին,  
Չի մնա սահման, չի լինի զինվոր,-  
Ես հավատում եմ մեր լույս երազին:

1981 թ., Ստեփանակերտ

### Ի Ն Չ Պ Ե Ս Փ Ա Կ Ե Մ

Ասեք, ինչպե՞ս լոի սիրտս,  
Երբ աշխարհի հոգսը իմն է,  
Չարերի ռեմ ինչպե՞ս լոի,  
Երբ բարության խոսքը իմն է:  
Ինչպե՞ս մնամ ես անտարբեր,  
Այս հարածուն եռքի դիմաց,  
Սուրս ինչպե՞ս պատյան դնեմ  
Կյանքն ավերող ձեռքի դիմաց:  
Աշխարհ եկանք դժվար դարում,  
Դարի բեռը պիտի քաշենք,  
Կյանքը պիտի դարձնենք օարուն,  
Մեր իսկ կյանքը թեկուզ մաշենք,  
Սերունդները մեզնից հետո  
Պիտի աշխարհ մտնեն հանգիստ,  
Նրանց մեզնով պիտի ժպտա  
Հողագունդը արեւանիստ:  
Ինձ տրված է լոկ թեւելը, -  
Ողջ աշխարհի հոգսը իմն է,  
Պիտի մարզեմ իմ թեւերը,  
Հաղթանակի խոսքը իմն է:

1981 թ., Ստեփանակերտ

## ԵԼԵԼ ԵՆ ՆՈՐԻՑ

Աշխարհում այս բարեգութ,  
Այս իուսահատ աշխարհում,  
Նորից չարերը ելել  
Ու նոր դավեր են լարում:  
Նորից դաժան մի քամի  
Ստի բերանն է բացել,  
Չի հասկանում, որ արդեն  
Կյանքից հետ է մնացել,  
Ու երկիրն ին Արեւի  
Քույրն է դարձել զորավոր,  
Ու բյուր, ազնիվ սրտերից  
Լույս է փնջում ամեն օր,  
Որ աշխարհը կանաչի,  
Կորչի մութը դժնդակ,  
Որ կյանքը հար կարկաչի  
Խաղաղության թելի տակ:

1981 թ., Երեւան

## ՈՉԻՆՉ ԶԵՄ ՈՒԶՈՒՄ

Ոչինչ չեմ ուզում,  
Չեմ ուզում ոչինչ,  
Ուզում եմ գարնան թովչանք ու արեւ,  
Ոչինչ չեմ ուզում,  
Չեմ ուզում ոչինչ,  
Ուզում եմ սերը լինի հարատեւ:

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Ուզում եմ բոլորն ունենան օջախ,  
Մայրերը երեք չքաշեն խոր «ա՝խ»,  
Յայրերը կրիվ չտեսնեն երեք,  
Իրենց երջանիկ որդիների հետ:  
Ոչ ոք չմնա ծարավ ու անքուն,  
Աշխարհը դառնա խաղաղության տուն:

1981 թ., Երևան

### ԶՈՐՎԱԾՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԸ

Զոհվածների հիշատակը  
Արձան չէ լոկ,  
Զոհվածների հիշատակը  
Սիրտ է, կարոտ,  
Մոր արցունք է  
Ու քրոջ ճիչ,  
Եղբոր կանչ է,  
Չլոռող խիղճ,  
Սիրո թեւ է,  
Սիրո համբույր,  
Կյանքի ծարավ  
Ու կյանքի հուր,  
ճանապարհ է  
Վերելքների,  
Ու ծիածան  
Նոր բերքերի:  
Խաղաղության ջահ է անշեջ՝  
Գալիք բոլոր դարերի մեջ:

1981 թ., Մարտունի

## ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Տափաստաններով,  
Անապատներով,  
Բլուրներն ի վեր,  
Բլուրներն ի վար,  
Լուսնի շողի տակ, թե աստղալույսով,  
Մեծք-մեծքի տված սարերի ուսով,  
ճեղքելով դժվար առապարհները,  
Զգվել են անթիվ ճանապարհները:  
Որտեղ ջերմ սիրո ծարավ սրտեր կան,  
Զեռքեր կան՝ քնքուշ շոյանքի կարոտ,  
Թե ցուրտ օրերին, թե՝ արեւավառ,  
ճանապարհները կապում են իրար:  
Գիշեր ու ցերեկ անքուն, անհանգիստ,  
Բեռներ են բերում ու բեռներ տանում, -  
Երակների պես առողջ ու կապույտ,  
ճանապարհները չեն հանգստանում:

1981 թ., Ստեփանակերտ

## ԵՐԳԵՐԻ ՍԵԶ

Ինչ որ ունի ապրած դարձս՝  
Բերկրանք, տագնապ, թախիծ ու ցավ,  
Այդ բոլորը հոգուս ծուլվեց,  
Երգերիս մեջ երակ դարձավ:  
Թռիչքներով հարստացա  
Ու դիմացա կորուստներիս,

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Եղավ՝ խորունկ վերք ստացա,  
Բայց շունչ տվի երազներիս:  
Աչքերիս մեջ հուրն հավատի,  
Կյանքի ծանր բեռը տարա,  
Ոստիսի դեմ ելա մարտի,  
Դադթանակի համբույրն առա:  
Ու քայլում եմ, քայլում եմ ես,  
Թեւավորված կյանքի սիրով,  
Երգըս դարձրած շունչը դարիս,  
Դոգիս վառած նրա հրով:

1981 թ., գ. Ակնաղբյուր

### Ս Ե Ր Ո Ւ Ն Ե Ր Ը

Կգան, կգան սերունդները  
Ու կվառեն նոր արեւներ,  
Միշտ կորոնեն նոր ճամփաներ  
Ու կգտնեն լույսով իրենց:

Դետ կնայեն երախտիքով,  
Կզրուցեն մտքով մեզ հետ,  
Գոհ կմնան մեր արածից,  
Որ ապրել ենք հույսով իրենց:

Թռիչքները մեր կտեսնեն,  
Սպիացած մեր վերքերը,  
Ու կընդունեն ոնց կամուրջներ՝  
Իրենց մեկնած մեր ձեռքերը:

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Կիասկանան, որ աշխարհում  
Մենք ծնվել ենք ժամանակին,  
Որ գալիքի մեծ անունով  
Մեր սրտերն ենք տվել կյանքին:

Կիասկանան, որ ապրում ենք  
Նաեւ իրենց նոր հերկերուն,  
Ու պատկերը մեր կտեսնեն  
Մի օր իրենց նոր երգերում:

1981 թ., Երեւան

**Ե Թ Ե Կ Ր Կ Ն Վ Ե Ր**

Եթե կրկնվեր ջահելությունս,  
Կելնեի զագաթն իմ Արեւարի,  
Դրոշակ դարձրած իմ խենթությունը,  
Կասեի, - Մեր իմ, այստեղ եմ, արի:

Սարից կիջնեի դալար Ուխտաձոր,  
Ցուրտ աղբյուրի մոտ կնստեինք քիչ,  
Զրից ուժ առած եւ դարձած հզոր,  
Կթեւածեինք դեպ Արեւը ջինչ:

Աստղերի փունջը կրծքիս տակ առած,  
Այցի կգայի հայրենի գյուղիս,  
Մի անհուն սիրով սերմնացան դառած,  
Լույսով կօժեի նրա մեծ ուղին:

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Ես կդառնայի նորից մի հնձվոր,  
Աշնանը դաշտում կքռնեի մաճ,  
Իսկ երբ զարունը բացվեր մեղմօրոր,  
Քաղիան կանեի արտերում կանաչ:

Ընկերներիս հետ երգով, կատակով,  
Արբունք կտայի խաղողի վազին,  
Թեւեր կառնեի սիրո կրակով,  
Ուշքս ու միտքս սիրածիս նազին:

Փարված մեր կյանքի պայծառ լույսերին,  
Յողին կտայի ուժս, ավյունս,  
Որ զարթոնքների նրա շարանում  
Անվերջ կրկնվի ջահելությունս:

1981 թ., գ. Ակնաղբյուր

### ՀԵՆՄԱՆ ԿԵՏԸ

Հենման կետը  
Ո՞րն է կյանքում,  
Ի՞նչն է մարդուն թեւեր տալիս,  
Այն ի՞նչն է, որ քո իսկ կյանքը  
Քանի՛ գնում, քաղցրացնում է,  
Այն ի՞նչն է, որ հողի մարդուն  
Օրըստօրե բարձրացնում է:  
Այն ի՞նչն է, որ օջախները  
Շեն է պահում,  
Այն ի՞նչն է, որ չի հնանում

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

Այս աշխարհում...  
 ... Հարցն այս նորից  
 Տարածել էր իր թեւերը,  
 Ու կյանքն ասաց.  
 - Սե՞րն է, սե՞րը...

1981 թ., Ստեփանակերտ

**Ե Թ Ե Ս Ի Ր Ե Լ Չ Ի Մ Ա Ն Ա Ս**

Եթե սիրել չիմանաս,  
 Գարունը քեզ չի գերի,  
 Նրա շունչը կենսական  
 Քո սրտին հուր չի բերի:  
 Հույսն է տենչեր արարում  
 Ու պարուրում երազով,  
 Եթե սիրել չիմանաս,  
 Կապրես միայն եղածով,  
 Քեզ չի կանչի բարձունքը,  
 Կյանքը ծեռքով չի անի,  
 Կյանքի անվերջ արբունքը  
 Քեզ իր գիրկը չի տամի:  
 Քո փայփայած հույսն անգամ  
 Քեզ իր բույրը չի բերի,  
 Եթե սիրել չիմանաս,  
 Գարունը քեզ չի գերի:

1981 թ., Ստեփանակերտ

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

**ԱՓՍՈՍԱՆՔ**

Ելի, էլի առանց սիրո,  
Առանց նրա քաղցր հրի,  
Առանց նրա վարդի բույրի,  
Փշուր-փշուր անցավ օրս...  
Իրիկունս եկավ այցի,  
Նրա առաջ սիրտս բացի,  
Կորցրած օրվա համար լացի,  
Սիրո հանդեպ հանցավորըս...  
Թեւին տալով թռան-անցան,  
Սեր-օրերս՝ միշտ ցիրուցան,  
Այսպես սիրո տեր չդարձավ  
Սիրահարված անցավորըս...

1981 թ., Ստեփանակերտ

\* \* \*

Ո՞րմ է սերը, չհասկացա,  
Առաջին ջերմ համբույրների  
քաղցրությո՞ւնը,  
Թե՞ պարգեւած  
Դաշնությունը.  
Խռովե՞լը,  
Խորովվե՞լը,  
Սպասումի քաղցր պա՞հը,  
Թե՞ այլեւս չսիրելու թաքուն ահը...

1981 թ., Ստեփանակերտ

**Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք**

**Ի Ն Զ Մ Ի Ն Ա Յ Ի Ր**

Ինձ մի նայիր այդպես, սիրուն,  
Չո հայացքից  
Շիկանում է սիրտս, գիտե՞ս,  
Ինչպես շամփրած լորի սիրտը  
Պողի վրա...  
Ախր ինչպե՞ս խոստովանեմ,  
Որ ինձ երբեք չնախատես,  
Նա էլ է ինձ նայում քեզ պես,  
Նրա այտի փոսիկն էլ է  
Ուզում լցվել իմ ժայռով,  
Նա էլ է մեր բարդու նման  
Սպասում իմ շոյանքներին,  
Եվ վերջապես  
Քեզնից առաջ  
Սիրտս են դրել նրա ափուն...  
Ախր ինչպե՞ս նրա ափից  
Ետ վերցնեմ սիրտս, ասա՝,  
Ինչպե՞ս, ինչպե՞ս...

1981 թ., Ստեփանակերտ

**Չ Ե Ն Հ Ա Ր Ց Ն Ի**

Չեն հարցնի.  
- Սիրո՞ւն ես ինձ...  
Իսկ թե ասի.  
- Ո՞չ, չեմ սիրում:

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Այն ժամանակ  
ի՞նչ պատասխան դու պիտի տաս...  
Սիրո հուրը չեն որոնի խոսքերի մեջ,  
Սերը՝ կյանք է, երազ է, տենչ...  
Սերը՝ սրտով պիտի զգաս:

*1981թ., Ստեփանակերտ*

### Ա Յ Ց

Դետ նայեցի ես այսօր՝  
Իմ հուշերի ծառերին,  
Դրաշը մի հավք անց կացավ  
Սիրտս առած թեւերին:  
Զահելության իմ հավքն էր,  
Ծիածանի գույներով,  
Ինքը խրված սիրո մեջ,  
Իսկ հայացքը՝ արեւին:  
Նրա հետքից գնացի,  
Անցած ուղիս ողջունեց,  
Դպարտացա, որ ես էլ  
Չմնացի ամոթով,  
Վայրէջքներ ու վերելքներ՝  
Ինչ որ անցել էի ես,  
Ինձ ժպտացին սրտաբաց,  
Գուրգուրեցին հոգեթով:  
Իմ անցյալը կամարվեց  
Երանավետ ներկայիս,  
Զեռքով արեց զալիքս,  
Նա զոհ ինձ էր բարեւում,  
Զահելության զամբիկս

## Կ Ա Ն Ա Զ Ծ Փ Ա Ն Ք

Թեւեր առել ձորերում,  
Անմահության պատկերով  
Լողանում էր արեւում:  
Իմ սերնդի անունից  
Ճպարտ էի ես խոսում,  
Ամեն պահը իմ անցած  
Շափաղում էր ոսկու պես,  
Կյանքը գետ չէ մի խաղաղ,  
Ունի ափեր, ունի հուն,  
Պիտի տրվես դու նրան -  
Ինքնամոռաց, սիրակեզ:  
Զահելության Յրաշք ծին  
Իմ հուշերի երանում  
Սլանում էր ամեն տեղ  
Եվ հասնում էր ուզածին,  
Նայում էի ես նրան,  
Ինքնամոռաց ու պայծառ,  
Սիրտս կրկին դառնում էր  
Յրաբորբոք, հրածին...

1981 թ., Ստեփանակերտ

### ՀԱՅՐԵՆԻ ԻՄ ԳՅՈՒՂ

Քո վեհությունը իմ արյան մեջ է,  
Ամրությունը քո՝ իմ ոսկորներում,  
Յոգիս ծփանքիդ բյուր ծալքերում է,  
Երգիս ակունքը՝ քո սեզ լեռներում:  
Քեզնով ելում եմ, քեզնով ճանաչվում,  
Թռչում եմ քեզնով՝ քեզնից թեւ առած,  
Քեզնով լցվում եմ, քեզնով ճանաչվում,  
Ու միշտ էլ խոնարհ՝ քո փառքի առաջ:  
Գիտեմ, մի օր էլ կձուլվեմ հողիդ,  
Երազս խառնած արեւիդ շողին:

1981 թ., գ. Ակնաղբյուր

**«ԿԱՐԴԻՆԱԼ ԿՐԱՎԱՆԱՆ» - (1990)**



Նկարում (աջից) Ա. Խանյանի կինը՝  
Միքուհին, որդին՝ Դամլետը

Իմ կարուտները քեզնից են գալիս,  
Ու քեզ են շոյում իմ կարուտները,  
Երգ-նարուտներս քեզնից եմ առնում,  
Ու քեզ են տալիս երգ-նարուտներս:  
Երջանկությունս դու ես պարզեւում,  
Ու քեզ է փարվում երջանկությունս,  
Դանգիստս, քունս դու ես խանգարում,  
Քեզնով եմ առնում հանգիստս, քունս:

## Մ Ո Ր Լ Ա Ց Ը

Անուշ մայրիկի յոթ որդիները  
զնացին կրիվ, չվերադարձան

Յոթը կտրիծ աշխարհ բերի,  
Ամեն մեկը սրբած մի թուր,  
Յոթը օջախ ես վառեցի,  
Որ միշտ ցանեն ծաղիկ ու հուր:

Կռիվ եղավ, մի մեծ կռիվ,  
Յոթը կտրիծ ճամփու դրի,  
Յոթ հարսերս միանգամից  
Սպասեցին միայն գրի:

Յոթ լուր եկավ, յոթը սեւ թուղթ,  
Յոթը տեղից սիրտս դաղվեց,  
Յոթը անգամ, յոթ օջախում,  
Ես կենդանի, սիրտս թաղվեց:

Բայց ապրեցի,  
Որ հարսերիս վիշտը կիսեմ,  
Բայց ապրեցի,  
Որ թոռներիս ձայնը լսեմ,  
Որ կուրացող իմ աչքերով  
Տեսնեմ ո՞նց են կրկին վառվում  
Կրակները օջախներիս,  
Որ յոթ անգամ դաղված սրտով  
Ժպտամ իրենց հայրերի տեղ  
Իրար ժպտող թոռնիկներիս...

**Կ Ա Ր Ա Տ Ի Վ Ա Ն Ա Ր**

Երբ ես մեռնեմ  
Չվշտանաք ու չլացեք,  
Յոթը որդու կորուստ տեսած  
Մոր թաղմանը աչք չթացեք,  
Միայն, միայն յոթը բուռ հող,  
Որդիներիս անուններից,  
Լուս կցանեք իմ դագաղին,  
Խսկ մի օր անց, շամանդաղին,  
Յոթը անգամ որդիներիս անուններից  
Մայր կկանչեք...  
Որ վերքերս էլ չբացվեն,  
Գերեզմանին իմ չլացեք:

**ՔԱՂՑՐ ՏԱՌՍՊԱՆՔ**

\* \* \*

Յեքիաթներում որոնեցի  
Թուխս արեւներ,  
Թուխս ջրվեժներ  
Ու թուխս կրակ,  
Բայց չգտա...  
Սրտիս խորքից հնչեց մի ծայն.  
Չկա՛, չկա՛...  
Բայց դու եկար, ինչպես եկար,  
Աչքերիդ մեջ թուխս արեւներ,  
Ուսերդ ի վար՝ թուխս ջրվեժներ,  
Թուխսերիդ մեջ շունչը քո տաք՝  
Մի թուխս կրակ...

Կ Ա Ր Ա Տ Ի Վ Ա Ն Ա Ր

Այդ օրվանից արեգակի շողերի մեջ,  
Խարույկներում հրաբորքոք,  
Եվ աստղերում հազարաթեւ,  
Թուխտ եմ տեսնում,  
Իմ թուխ արեւ...

\* \* \*

Երգիս տողերը քեզնից են գալիս  
Ու դեպի քեզ են գալիս տողերս,  
Սիրուս շողերը քեզնից են գալիս,  
Ու դեպի քեզ են հետում շողերս:  
Իմ կարոտները քեզնից են գալիս,  
Ու քեզ են շոյում իմ կարոտները,  
Երգ-նարոտներս քեզնից են առնում,  
Ու քեզ են տալիս երգ-նարոտներս:  
Երջանկությունս դու ես պարգևելում,  
Ու քեզ է փարվում երջանկությունս,  
Հանգիստս, քունս դու ես խանգարում,  
Քեզնով են առնում հանգիստս, քունս:

\* \* \*

Աղաչում եմ, մի հեռանա,  
Մնա մոտս,  
Թող աչքերիդ թուխ շողերով  
Դիմավորեմ առավոտս:  
Թող վարսերիդ միջով իյուր գա  
Ամեն օրս,  
Կյանքում, երգում

Քո թուխս շնչով  
Թող ողողեմ իհնս, նորս:  
Առավոտից մինչ երեկո,  
Երեկոյից մինչ առավոտ,  
Լսեմ քո թուխս շշունջները՝  
Քո թխավարս անուրջներով  
Վերածնված անուրջներս...  
Քո տենչերի միջով թող զա  
Առավոտս,  
Աղաչում եմ, մի հեռանա,  
Մնա մոտս:

\* \* \*

Չմոռացա երբեք ես քեզ,  
Քեզ մոտ բերող ճամփան երբեք  
Չկորցրի,  
Չխաղացի քո սրտի հետ,  
Երբեք սրտիդ ճրագը վառ  
Չհանգցրի:  
Պարզ խոխոցով, ինչպես առու,  
Ես քո սիրո ծովը հասա  
Ու մնացի,  
Մերվեցի քո ալիքներին,  
Քո ներկային, գալիքներին,  
Ու քեզանից երբեք հեռու  
Չգնացի...

\* \* \*

Գարնան մի օր, երբ աշխարհը  
 Շողով թաց էր,  
 Անմեղությամբ փոշեթաքախ  
 Քեզ մոտ եկա, դուռդ թաց էր:  
 Դու ամոթխած մի դիցուհի,  
 Բազմած էիր սիրո գահին,  
 Քո հայացքն ինձ այնպես գրկեց,  
 Որ չինացա, գահի վրա  
 Ե՞ս էի, թե՞ դու այդ պահին:  
 Ես չինացա, ի՞նքդ իջար  
 Քո բարձունքից,  
 Թե՞ ես ելա բարձունքն ի վեր,  
 Մի ինքնաբուխ սիրո թրթիռ  
 Մեզ այնպես էր հրավառել:  
 Կյանքի վերձիգ ճանապարհը  
 Մի տես ո՞ւր է հասցրել մեզ,  
 Բայց իինա էլ չեմ հասկանում,  
 Սիրո գահին դո՞ւ ես, թե՞ ես:

\* \* \*

Իմ երգերի դողանջները  
 Որոնում եմ քո ձայնի մեջ,  
 Քուն, արթնի, իմ կանչերը  
 Որոնում եմ քո ձայնի մեջ:  
 Քո երազած ջինջ աստղերը  
 Ես հունցում եմ իմ սրտի մեջ,  
 Այս, սիելիս, իմ երգերը  
 Հոգուդ կրակներն են անշեց:

\* \* \*

Տարիների միջից նորից գալիս ես դու,  
 Թեթեւ փարվում ես դու  
 Իմ թեւերին,  
 Նորից վառվում եմ ես, նորից վառվում ես դու,  
 Նորից ձուլվում ես դու  
 Իմ երգերին:  
 Նորից սուզում եմ ես երազներիդ ծովում,  
 Երազներիդ հեւքով  
 Թռչում եթեր,  
 Նորից դու ինձ համար մանուշակ ես դառնում,  
 Սուսամբար ես դառնում,  
 Վարդի թերթեր:  
 Նորից սիրտդ ձեռքիս մի քնար է դառնում,  
 Ոսկե լար է դառնում  
 Ու քնքուշ երգ:  
 Նորից քո թեւերով, հրայրքներով քո ջերմ  
 Ինձ իր գիրկն է առնում  
 Մի տիեզերք:

\* \* \*

Դու աստղերից ասուպի պես  
 Մի օր իջար,  
 Երկնի կապույտ շերտերի մեջ  
 Զիալվեցիր,  
 Ոնց շանթարգել  
 Կանգնել էի ծերափին լեռան,  
 Մխրճվեցիր իմ սրտի մեջ  
 Ու քո տեղը գրավեցիր:

Կ Ա Ր Ա Տ Ի Վ Ա Ն Ա Ր

Երկնի բոլոր աստղերը ջինջ  
ճամաչեցի ես քեզանով,  
Այդ օրվանից աստղերի հետ  
խոսում եմ ես ծանոթ ձայնով:  
Եվ աստղերով լիքն են կարծես  
Հողագունդն ու տիեզերքը,  
Քանի դու կաս իմ կրծքի տակ,  
Կյանքն ինձ համար աստղոտ երգ է:

\* \* \*

Դու ինձ համար գարնան  
Մի ծաղկաստան եղար,  
Յարավի բույր եղար, հարավի տոք,  
Ես կռունկի նման  
Քո տաք գիրկը թռա,  
Եկա, որ երազս գտնեմ քեզ մոտ:  
Եվ օծեցիր սիրտս  
Ժպիտներիդ շողով,  
Կանչս արձագանքեց քո կրծքի տակ,  
Յավերժ քեզ կապվեցի,  
Սրտիս մաքուր դողով,  
Դու դարձար իմ միակ արեւը բարկ:  
Գարնան ինչքա՞ն հուզմունք,  
Ինչքա՞ն շիկնանք ամռան  
Մենք թողել ենք արդեն մեր ետեւում,  
Առաջվա պես կրկին,  
Սիրո իմ թեւերին  
Երազներս դեպի քեզ եմ բերում:

\* \* \*

Դու ինձ համար երազ եղար,  
 Ու ես հասա իմ երազին,  
 Այս, անգինս, այդ դու՝ բերիր  
 Իմաստ՝ սիրո իմ մուրազին:  
 Օրերի մեջ, տարիների,  
 Ալիքվեցինք մի՛ հովի պես,  
 Մենք մեր բախտի լույս թեւերին  
 Համբուրվեցինք մի՛ հովի պես:  
 Հեքիաթը՝ կյանք, կյանքը՝ հեքիաթ  
 Համարելով սիրեցինք մենք,  
 Դրանից է, որ մեր սերը  
 Դարձել է մի այրող լեգենդ:

\* \* \*

Առաջին սիրո թրթռուն բառս,  
 Սիրո ծիծառս,  
 Դու՝ եղար, դու՝  
 Ժամադրության սեր-ճանապարհս,  
 Ամոթխած պահս,  
 Դու՝ եղար, դու՝:  
 Զմառախուղվող հույսս, հավատս,  
 Եվ անարատս  
 Դու՝ եղար, դու՝,  
 Բոլոր պահերի եւ մթնշաղս,  
 Եվ շամանդաղս  
 Դու՝ եղար, դու՝:  
 Ծիլ ու բողբոջս, մայիսյան բույրս,

Կ Ա Ր Ա Տ Ի Վ Ա Ն Ա Ր

Ամռան համբույրս  
Դու՛ եղար, դու՛:  
Դեպի մեզ եկող աշնան անուրջս,  
Չմեռվա շունչս  
Դու՛ եղար, դու՛:

\* \* \*

Ես ծով դարձա, ալիքներով  
Ծեծեցի ափս,  
Դու մոտեցար ու լսեցիր  
Հառաչող ծափս:  
Ինձ լսեցիր ու հասկացար,  
Նետվեցիր գիրկս,  
Սիրուս անհուն խորքը հասար  
Ու դարձար գիրքս:  
Զո էջերում ինձ կարդացիր,  
Իմ ծփանքում՝ ես քեզ,  
Աստղերն անգամ վայր նայեցին,  
Նախանձեցին, ա՛խ, մեզ:  
Բայց ինչո՞ւ է սիրոս կրկին  
Կարոտով լեցուն:  
Ինչո՞ւ սիրոս ծովը անվերջ  
Ափերն է ծեծուն:

\* \* \*

Ես քեզ գտա միանգամից,  
Այն պահին, երբ  
Չէի կարող զանազանել  
Լավը վատից:

Կ Ա Ր Ա Տ Ի Վ Ա Ն Ա Ր

Եվ ինձ համար վատը չկար,  
Իմ աչքերին ծփում էիմ.  
Աշխարհը լավ,  
Աստղերը լավ,  
Երգը լավ,  
Երազը լավ,  
Ծիծաղը լավ,  
Երթը լավ:  
Լավի տենչով, լավի սիրով քեզ գտա,  
Լավին փարված կյանքի գիրկը ես մտա,  
Դրա համար, հավերժ փարված  
Քո սիրուն,  
Լավի գովքն է իմ երգերի  
Մեջ տիրում:

\* \* \*

Այնպես լիներ, լիներ այնպես,  
Որ ինքդ քեզ  
Տեսնեիր իմ երակներում,  
Որ ինքդ քեզ շոշափեիր  
Երազներիս  
Բոլոր, բոլոր երանգներում:  
Լիներ այնպես,  
Գեթ մի օրով  
Դու մտնեիր խողքը սրտիս,  
Հանդիպեիր  
Դու ինքդ քեզ,  
Զրուցեիր քո սրտի հետ...  
Քո իսկ սիրտը

Քեզ կտաներ  
Իմ խոհերի ծանապարհով,  
Կտեսնեիր,  
Թե աշխարհս  
Ո՞նց է լցվել քո աշխարհով:

### Ք Ո Հ Ե Ք Ի Ա Թ Ը

Քո հեքիաթը սիրո մասին  
Երազների աշխարհ է մի,  
Սերը - հեքիաթ, հեքիաթը - սեր,  
Աղաչում են, մեկն էլ պատմիր:  
Ամեն հեքիաթ՝ մի նոր երազ,  
Ամեն երազ՝ մի նոր աշխարհ,  
Գուցե սիրուդ հեքիաթն է դա,  
Որ դաշնում է հույս ու նշխար:  
Մի հեքիաթ էլ պատմիր, Սեր իմ,  
Սերը հեքիաթ դարձրու կրկին,  
Սիրտս, որ քո պատկերն ունի,  
Թող հեքիաթվի քո ջերմ գրկին:  
Իմ հեքիաթը դու ես, անգին,  
Ժայտներով օժիր խոսքդ,  
Սեր ու հեքիաթ, երբ մեկտեղ են,  
Կյանքը, իրոք, սիրո հոսք է:  
Մի հեքիաթ էլ պատմիր, Սեր իմ,  
Դու հեքիաթված սիրո Տեր իմ:

### Ս Ի Ր Ե Լ Ի Ս (Երգ)

Սիրելիս, քեզ հետ տարար իմ հոգին,  
Ոչ հանգիստ ունեմ հիմա, ոչ էլ հույս,  
Դեւացող սրտով, ժայտն աչքերիս,  
Ես էլ ո՞ւն պիտի ասեմ. «Բարի լույս»:

Կ Ա Ր Ա Տ Ի Վ Ա Ն Ա Ր

Կրակված սրտով սպասել եմ քեզ,  
Սպասել եմ քեզ անհուն կարոտով,  
Խռովել ես եւ ինձնից հեռացել,  
Ո՞ւմ պիտի ասեմ. «Բարի երեկո»:

Յեռացար ինձնից ու սրտիս խորքում  
Սիրո տեղ թողիր ուրացման փշեր,  
Ասա՛, սիրելիս, քնելուց առաջ  
Ո՞ւմ պիտի ասեմ ես. «Բարի գիշեր»:

\* \* \*

Ես չեմ երազել գանձերի մասին,  
Եվ չեմ իմացել, թե ինչ է փառքը,  
Սիայն ձգտել ենք լինել միասին  
Ու մեկտեղ անցնել մեր ամբողջ կյանքը:  
Սիրել ենք իրար, իրար հասկացել,  
Դժվարին պահին դարձել ուժ ու կանք,  
Սիասին չարից միշտ էլ հեռացել,  
Լավին դարձել ենք ընկեր, բարեկամ:  
Գանձերի գանձ է մեր սերը հիմա,  
Մեր երջանկության ակունքն է հավետ,  
Մեր բախտի աստղը կժպտա միշտ մեզ,  
Սիայն թե հավերժ լինենք իրար հետ:

\* \* \*

Տարիների հետ հասունանում է  
մեր սերը, անգին,  
Տարիների հետ դու քաղցրանում ես  
կրկնակի անգամ,

Կ Ա Ր Ա Տ Ի Վ Ա Ն Ա Ր

Տարիների հետ դու եւ անցյալն ես  
դաշնում իմ կյանքի,  
Եվ ծիածանում իմ բախտի ներկան  
ու իմ ապագան:  
Օրերը մեզնից շատ բան են տարել  
եւ պիտի տանեն,  
Անցած օրերում շատ բան ենք կորցրել,  
որ պիտի շտկենք,  
Մանուշակներ ենք ցանել մեր ճամփին  
եւ ցանելու ենք,  
Գալիքի դռնով ծաղկեփնջերով  
մենք պիտի մտնենք:  
Սիրո տաճարում մենք պիտի շրջենք  
հպարտ հայացքով,  
Սիրո դիցուհին պիտի համբուրի  
ճակատները մեր,  
Տուր ձեռքդ, անգին, թող շարունակենք  
մեր ուղին երգով,  
Թող սերունդները սովորեն մեզնից  
սիրել ու սիրվել:

\* \* \*

Արի, սեր իմ,  
Նուրբ մատներդ շողերի պես  
Թող մոլորվեն իմ մազերում,  
Թող մեր սերը անքուն մնա  
Ինձ համար թանկ քո նազերում:  
Երազներում օրորվելը  
Ու թեւելը սիրել եմ ես,

**Կ Ա Ր Ա Տ Ի Վ Ա Ն Ա Ր**

Արի՛, հիշենք այն օրերը  
Ու խենթանանք առաջվա պես...  
Արի՛, սեր իմ,  
Մեկ էլ հարբենք  
Սեր հուշ դարձած  
Զահելությանն արոտներով  
Ու ծերանանք  
Միշտ մեր սիրուն կարոտելով:

**Ք Ո Ա Ն Ո Ւ Ն Ը**

1

Որոնել եմ գեղեցկություն  
Եվ աչքերիդ մեջ գտել,  
Ու սիրտ վառող հայացքիդ տակ  
Սիրո ծովն եմ ես մտել:  
Այդ ծովի մեջ, բայց, անգինս,  
Երբեք ինձ չեմ օրորել,  
Նրա գրկում ջերմ սիրելը,  
Տառապելն եմ սովորել...

2

Օրինում եմ ես տառապանքն այդ,  
Որ ինձ բարձունք է հանել,  
Այդ բարձունքից բարիացած  
Սիրո սերմեր եմ ցանել:  
«Սիրո ծարավ, սիրո երգիչ,  
Սիրուց խենք» են ինձ ասում,  
Որտեղ սեր կա ու սիրո երգ,  
Այնտեղ ինձ են սպասում:

- Որտեղի՞ց է քո հոգու մեջ  
Այդքան ավյուն, այդքան հուր,-  
Թանկագինս, բարի մարդիկ  
Ինձ հարցնում են ամենուր:  
Եվ բոլորին ի պատասխան,  
Ես քո անունն եմ տալիս,  
Թեկուզ տված քո վերքերից  
Մեկ-մեկ նստում եմ, լալիս:

\* \* \*

Պապս մի գիրք է ունեցել միայն՝  
Սայաթ-Նովայի տաղերը սիրո,  
Երբ ծնվել եմ ես, իմ գլխատակին  
Այս գիրքն է դրել, որ երգեր սիրեմ:

Ու կյանքի հանդեպ, երբ աչք եմ բացել,  
Ինձ սերն է գերել ամենից առաջ,  
Սերը իմ կյանքի ջինջ լուսաբացն է,  
Կյանքս առանց սեր թախիծ է, հառաչ:

\* \* \*

Ես իմ սիրո ճանապարհին  
Չեմ կորցրել երազ ու հույս,  
Յավատով եմ նայել կյանքին  
Ու սիրո մեջ տեսել եմ լուս:

Կ Ա Ր Ա Տ Ի Վ Ա Ն Ա Ր

Դրա համար լույս է սիրտս,  
Նրա երկնում ամպեր չկան  
Կյանքն եմ սիրում իմ սիրո պես,  
Երդվում եմ ես. «Սերս վկա»:

\* \* \*

Ես չեմ ասի՝ դու իմն ես, - ինձ վաղուց են կողոպտել,  
Չեմ ցանկանա, որ դառնաս կողոպտվածի սիրելին,  
Աղաչում եմ, նազելիս, կարիք չկա ինձ կոպտել,  
Կարիք չկա նախատել սիրով վառված իմ սրտին:

Երազիս մեջ, արթմնի, քո անունն եմ շշնջում,  
Իմ մահվանից առաջ էլ քո անունը պիտի տամ,  
Այս վարդաշատ աշխարհում քեզանով եմ ես շնչում,  
Դանդիպելիս, խնդրում եմ, գոնե բարի ինձ ժպտա:

ԵՐԳԵԼ ԵՆ ՍԵՐԸ

Ի՞նչ անենք, թե մեզնից առաջ  
Երգել են սերը,  
Չէ՞ որ մենք ենք մեր երազի,  
Մեր սիրո տերը:

Կրկնություն չէ սերը երբեք,  
Սերը սիրու է, հոգի,  
Սիրո երգին հնությունը  
Չի կարող չոքել:

**Կ Ա Ր Ա Տ Ի Վ Ա Ն Ա Ր**

Աշխարհ մտնող ամեն մարդով  
Նորանում է սերը,  
Հնում մարդիկ իրենցն ասել,  
Մենք ասում ենք մերը:

\* \* \*

Չեմ աղմկել, չեմ աղմկում,  
Որ քո սիրուց հարբած եմ ես,  
Բայց քո ձայնը միշտ իմ սրտում  
Կարկաչել է աղբյուրի պես:

Նվիրվել եմ քեզ իմ ճամփին  
Այնպես քնքույշ, այնպես մեղմիկ,  
Դու իմ սիրո միակ արփի,  
Իմ երգերի միակ եղնիկ:

**ԱՌԱՋԻՆ ՍԵՐ**

Խոհերով տարված անցնում եմ դաշտով,  
Յիշում առաջին հանդիպումը մեր,  
Մի պահ քո մոտ եմ թռչում կարոտով,  
Նայում աչքերիդ, առաջին իմ սեր...  
Շրջում եմ մենակ ու թաց խոտերում  
Ոտնահետքերդ տեսնում եմ կարծես,  
Թվում է՝ գարնան այդ պահ ցողերուն  
Ես ջերմանում եմ քո սիրուց իրկեզ:  
Սրտիս մեջ պահած ե՛ւ սեր, ե՛ւ ծգտում.  
Վառ կակաչին եմ նայում ես տրտում,  
Այստեղ էլ նրա թերթերի միջից

Քո նուրբ շրթերով դու ես ինձ ժպտում:  
 Եվ մոտենում եմ կարկաչուն առվին,  
 Տարվում ափերով այնպես բուրավետ,  
 Սակայն այստեղ էլ առուն է մեղմիկ  
 Քո ամուշ ձայնով շշնջում ինձ հետ:  
 Խորհում եմ լրին եւ շուրջս նայում,  
 Նայում կարոտով ու չեմ հասկանում.  
 Բնությո՞ւնն է ինձ քեզնով հմայում,  
 Թե դո՞ւ ես նրանով այդքան քաղցրանում:

### ՈՒՐ ԷԼ ԼԻՆԵՄ

Ուր էլ լինեմ, ուր էլ գնամ,  
 Դու ինձ հետ ես, իմ հոգու մեջ,  
 Ես առանց քեզ ինչպե՞ս մնամ,  
 Դու իմ կարոտ, իմ սեր, իմ տենչ:

Աստղը հեռվից ժպտում է ինձ,  
 Քո մասին եմ ես մտածում,  
 Կարդն է շրջում բուրումնալից,  
 Քո մասին եմ ես մտածում:

Կարկաչում է զուլալ առուն,  
 Գարնանային ամպն է լացում,  
 Զյուն է իջնում մեր սարերուն,  
 Քո մասին եմ ես մտածում:

Կ Ա Ր Ա Տ Ի Վ Ա Ն Ա Ր

Եվ այն պահին, երբ ինձ հետ ես,  
Երբ քո առաջ սիրուս եմ բացում,  
Երբ զգում եմ քո շունչը տաք.  
Քո մասին եմ ես մտածում:

\* \* \*

Գարնան հովը խաղաց թեթեւ,  
Տարուբերվեց նուրբ ակացին,  
Ծառ ու ծաղիկ, վարդ ու թերթեր  
Մի թովչական համերգ բացին:  
Սիրող մի զույգ եկավ հելքով  
Ու կանգ առավ եղենու տակ,  
Եղենին էլ գարնան երգով  
Նրանց առավ իր թեւի տակ:  
Ու վարսերին աստղերի շող,  
Մեղմ օրորվեց բարակ սոսին,  
Թեքվեց դիմացն իր՝ սոսափող  
Արմավենու փարթամ ուսին  
Եվ շշնջաց հովի լեզվով  
Այդ երջանիկ սիրո մասին:

\* \* \*

Արեւսարը քուն մտավ,  
Սերդ այցի եկավ ինձ,  
Յովի պարը տուն մտավ,  
Սերդ այցի եկավ ինձ,  
Բարդին գլուխն օրորեց,  
Սերդ այցի եկավ ինձ,

Առուն երգն իր ոլորեց,  
Սերդ այցի եկավ ինձ:  
Բնությունը կանաչեց,  
Սերդ այցի եկավ ինձ,  
Սիրտս խորքից հառաչեց,  
Սերդ այցի եկավ ինձ:

### ԿԱՐՈՍԻ ԿՐԱԿ

*Կմոջս՝ Մոբուհու սուլբ հիշատակին*


Օրը քանի՞-քանի՞ անգամ ,  
Սիշտ կարոտած ու ինքնակամ,  
Շրթիս անունդ արեւահամ,  
Այցելեցի ձեր տուն:  
Սերթ աղբյուրի ճանփին տեսա,  
Սերթ գետակի ափին տեսա,  
Սերթ անտառի փեշին տեսա,  
Ու մերթ էլ՝ այգում:

Այդպես ահա գիշեր ու տիվ,  
Անձրեւի պես կաթիլ-կաթիլ,  
Զյունի նման փաթիլ-փաթիլ,  
Իմ սրտի մեջ մտար:  
Սիշտ ղողանջեց լարս քեզնով,  
Թեւավորվեց բառս քեզնով,  
Ասես լցվեց դարս քեզնով,  
Իմ մեջ ես քեզ գտա:

Մեր կյանքն անցավ թերին տալով,  
Մերթ տխրամած, մերթ ժպտալով,  
Մերթ էլ ծովի պես ծփալով՝  
Մեր սրտերը առած:  
Արդ, առանց քեզ քայլում եմ ես,  
Մոմի նման հալվում եմ ես,  
Կամաց-կամաց ծալվում եմ ես՝  
Սիրուդ հուշին փարված:



Նկարում (աջից) **Սոլքատ Եւ Սրբուհի Խանյանները** իրենց  
երեխաների հետ: Նստած է Համլետը, կանգնած են՝  
**Կարինեն, Սոլքենը, Կարենը**



Ես քո երգերի թրթիռը դարձա  
Ու բառը քո սուրբ,  
Քո մեծ երթերի հրթիռը դարձա  
Ու ծաղիկը նուրբ:  
Ինքս ինձ հասա քո երակներով,  
Իմ մեջ տեսա քեզ,  
Քո հունդից ծլած, աճած քո սիրով,  
Քո պատկերն եմ ես:

**Ա Ր Ց Ա Խ Ց Ա Ն Շ Ո Շ Ա Ն Ճ Ա Ն**

**Ի Ս Մ Ա Յ Ր Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր Դ**

1988 թ. դեկտեմբերի 7-ի ահավոր  
Երկրաշարժի առթիվ

Իմ մայր ժողովուրդ,  
Արցախի ըմբոստ սարերից եկա,  
Որ քո հոգու մեջ ցավերս կարդամ,  
Որ զգամ շոյող ձեռքբերիդ ուժը,  
Լսեմ ծփանքը իմաստուն խոսքիդ,  
Մտնեմ խորքերը քո խորհուրդների,  
Լույսդ հույսերիս ճամփեքին ցանեմ  
Եվ երախստապարտ որդու ջերմությամբ.  
Ժպտալով ասեմ. «Քո ցավը տանեմ»:

Բայց, ավաղ, հիմա  
Արցունքի ծովն է  
Իմ սիրտը խեղդում,  
Եվ երազներիս գույները անթիվ  
Խառնվել են իրար  
Իմ հոգում, երգում:  
Այս ի՞նչ աղետ էր, որ հումկու պայթեց

Քո ճանապարհին,  
Այս ի՞նչ անարդար խաղ էր,  
Որ երկնեց  
Բնությունն ահեղ,  
Մի՞թե քիչ էին արհավիրքներդ  
Դարերի խորքում,  
Մի՞թե քիչ էին զոհյալները քո  
Գոյության հզոր գոտեմարտերուն...  
Ինչպես սփոփեմ քո վիշտը այս խոր,  
Քո բազմահազար անմեղ զոհերին  
Պատարագի ի՞նչ բառերով հիշեն,  
Ինձ թիկունք դարձած իմ եղբայրներին,

**Ա Ր Ց Ա Խ Ց Ա Ն Շ Ն Շ Ա Ն Ջ Ն Ա Խ**

Քույրերին իմ նուրբ,  
Ո՞ր փլատակի  
ճեղքերից հանեմ,  
Քիրսի, Մօռվի վշտահար սրտով  
Որտե՞ղ ծնկի գամ  
Եվ ցավով ասեմ. «Զեր ցավը տանեմ»:

Իմ մայր ժողովուրդ,  
Հիշենք զոհերին մեր Ավարայրի,  
Տասնեւինգի եղեռնը հիշենք,  
Երկինք համբարձված  
Մեր անմեղների հոգին վկայենք,  
Վկայենք կրկին  
Նահատակներին Սարդարապատի,  
Ֆաշիստների դեմ, հեռու ափերում,  
Ժողովուրդներին ազատ շունչ բերած  
Մեր հերոսներին հիշենք քաջարի,  
Եվ սումգայիթյան զոհերին հիշենք...  
Տառապանքներում կոփված քո կամքով,  
Արցունքի միջից սգանք զոհերին,  
Բայց չմոռանանք,  
Որ քո անունը պիտի արելի,  
Պիտի արելի  
Վշտահար ապրող սրտերի խորքում,  
Փլատակներից կենդանի փրկված  
Քո զավակների մշուշված հոգում,  
Մեր նանուկների անմեղ խաղերում,  
Մեր նորից հառնած  
Շեն քաղաքների լույս փողոցներում,  
Մեր ավաններում,  
Գյուղերում մեր բյուր,

**Ա Ր Ց Ա Խ Ց Ա Ն Շ Ո Շ Ա Ն Ջ Ն Ա Դ**

Կարոտից ծնված մեր երգերի մեջ,  
Մեր ապագայի շրթերի վրա:  
Իմ մայր ժողովուրդ,  
Ազնիվ երազի, հույսի առաքյալ,  
Իմ սուրբ տառապյալ,  
Արցախ աշխարհի քո զավակների  
Անունից ահա  
Ծնկի եմ գալիս քո վշտի առաջ,  
Թող սիրտդ խրված սեւ փուշը հանեմ,  
Քո ցավը տանեմ:  
Դին Ամարասի եւ Գանձասարի  
Աղոթքով հիշենք զոհերին մեր նոր,  
Թարթառի խոռվ սաղմոսը բերենք  
Նրանց աճյունին,  
Քիրսի, Մռովի ծաղկունքից եփված  
Մեռոնով օժենք շիրիմները սուրբ:  
Մեր արցունքախառն աղոթքի միջից  
Ողբանք մեր վիշտը  
Եվ զոհվածներին ասենք.  
«Կհառնեն քաղաքները մեր»,  
Ասենք. «Զեր սիրած Արցախը կգա,  
Կգա կարոտով,  
Մեր երազների ճառագած փնջով...»:  
Իմ մայր ժողովուրդ,  
Քո կամքի ուժով ապրել ես դարեր,  
Կապրես եւ հիմա:  
Քո թախծոտ սրտի հույսի շողերը  
Նորից փունջ արած Արցախ կտանեմ,  
Քո ցավը տանեմ:

7.12.1988 թ., Սպիտակ-Երեւան

**Ա Ր Ց Ա Խ Ց Ա Ն Շ Ո Շ Ա Ն Ջ Ն Ա Խ**

**ԶՐՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՏ**

1

Զրերիդ նման անվերջ հոսեցի  
քո սրտի միջով,  
Երազներիդ հետ մեղմիկ խոսեցի.  
Օծված քո խղճով:  
Հասկի փոխվեցի, խոնարհվեցի լուռ  
Թխադեմ հողիդ,  
Ասքի փոխվեցի, անցա շրթից-շուրթ,  
Հոգուս մեջ հոգիդ:  
Ես քո երգերի թրթիռը դարձա  
Ու բառը քո սուրբ,  
Քո մեծ երթերի հրթիռը դարձա  
Ու ծաղիկը նուրբ:  
Ինքս ինձ հասա քո երակներով,  
Իմ մեջ տեսա քեզ,  
Քո հունդից ծլած, աճած քո սիրով,  
Քո պատկերն եմ ես:

2

Տարիքս ինչքան բարձրանում է,  
Բարձրանում ես դու,  
Տարիքս ինչքան բարձրանում է,  
Բարձրանում ես դու:  
Օրերս ինչքան անց են կենում,  
Քո գիրկն եմ գալիս,  
Իմ մեջ ինչքան գանձ է մնում,

**Ա Ր Ց Ա Խ Ց Ա Ն Ռ Ո Շ Ա Ն Ջ Ա Ն Ե Ր**

Ես քեզ եմ տալիս:  
Թեկուզ փառքն եմ հրաշքներիդ,  
Արեւիդ զարդն եմ:  
Քուն չի հջնում իմ աչքերին,  
Դարերիդ պարտք եմ:

3

Ես քո լինելով եղա աշխարհում,  
Երկինքը եղավ աստղոտ տանիքս,  
Քո ավիշով եմ ապրում, արարում,  
Քո մեջ եմ տեսնում ներկաս-գալիքս:  
Խոսքս ջրերիդ հոսքից ինձ հասավ,  
Քայլս՝ լեռներիդ խոյանքից արի,  
Կապույտ երազդ արյունիս անցավ  
Եվ հոգուս միջով բացվեց աշխարհին:  
Առանց քեզ անջուր մի լանջ կդառնամ,  
Կդառնամ լեռան ցամաքած աղբյուր,  
Քո թռիչքով եմ այսպես հաղթական,  
Ին հայրական ծեռք, մայրական համբույր:

4

Ես ապրեցի քո վառ երազներով տարված,  
Ուր էլ գնում էի, ինձ հետ էիր դու միշտ,  
Բարձունքներին հասա բարձունքներիդ փարված,  
Քեզնից էի առնում անրջանք ու ավիշ:  
Քո անունը լուսե իմ արեւն է անմար,  
Կրակներս քոնն են, քոնն եմ ամբողջապես,  
Անծիր այս աշխարհում դու ես հոգեհմա

**Ա Ր Ց Ա Խ Ց Ա Ն Շ Ն Շ Ա Ն Ջ Ն Ա Խ**

Սիրտս լցմում լրպսով որորուն սիրող մոր այս:  
 Իմ տենչերից հիմա նոր աստղեր են ծնվում,  
 Սերմնացանի նման ցանում եմ քո ճամփին,  
 Չեմ սպառվի երբեք, քո սիրով եմ սնվում,  
 Որ մի շողը դառնամ արեւային փառքիդ:

5

Աչքերիդ մեջ աստղեր տեսա,  
 Նրանց լույսը եկավ փունջ-փունջ  
 Ու շաղախսվեց իմ արյանը,  
 Քո իսկ լույսով հոգուդ հասա  
 Ու փարվեցի քեզ լուռ ու մունջ,  
 Զուլվելով քո էռթյանը:  
 Տերեւներիդ շրջյունները  
 Ծփանք տվին իմ կրծքի տակ,  
 Ծածանվեցին ոսկեծրար,  
 Առուներիդ հնչյունները  
 Ալիքվեցին կուտակ-կուտակ,  
 Ինձ բացելով աշխարհն արար:  
 Դարի ըմբռստ սիրտը մտա,  
 Գույններ բազում, բազում սերեր,  
 Ճազար տեղից ինձ կանչեցին,  
 Բայց աշխարհը քեզնով գտա,  
 Ճրթիռվեցի դարերդ ի վեր,  
 Սարերդ ի վար կարկաչեցի:

6

Երամ-երամ իմ խոհերը  
 Ծնվում են քո շող ու շաղից,  
 Տխուր-ուրախ իմ օրերը՝  
 Քո արցունքից ու ծիծաղից:  
 Իմ մեջ ինչ կա, քոնն է լրիվ՝  
 Սերս, խիղճս, շունչս, բառս,  
 Խարույկներս հրակարմիր,  
 Բողբոջախիտ երգիս ծառը:  
 Որդին եմ քո, քոնն եմ անվերջ,  
 Ապրում են քեզ սիրահարված,  
 Քեզնից սերված իմ սրտի մեջ  
 Քո անունն է միայն գրված:

7

Քո այգիները արմատ են նետել  
 Իմ սրտի վրա,  
 Նրանց քնքանքով հավերժ քեզ հետ եմ,  
 Քո կրծքի վրա:  
 Ես բողբոջ դարձած նրանց ճյուղերից  
 Միշտ քեզ եմ նայում,  
 Իմ շրջյունները ծնվում են քեզնից,  
 Քեզնով հմայվում:  
 Աստղերի լեզուն անգիր եմ արել,  
 Քո լեզվին մոտ են,  
 Քո արեւը ես իմ մեջ եմ վառել,  
 Քո առավիտն եմ:

**Ա Ր Ց Ա Խ Ց Ա Ն Շ Ո Ւ Շ Ա Ն Ջ Ա Ն Ա Խ**

Իմ արշալույսն ու իմ մայրամուտը  
Լուսիդ գումարն են,  
Յավերժ բորբոքուն իմ խարույկները  
Հուսիդ գումարն են:

8

Քո զարթոնքի հետ ծնվեցի եւ ես,  
Քո ծիլերի հետ ծլարձակեցի,  
Ու թե վառվեցի քո արեւի պես,  
Արտերիդ շնչով միշտ կանաչեցի:  
Բողբոջներիդ մեջ ժպիտս ծփաց,  
Ծիածանվեցի երազներիդ հետ,  
Թռիչքիդ մեջ էր իմ ճակատը բաց,  
Քո ճանապարհը ուղիս էր անթեք:  
Անցյալդ, ներկադ, գալիքդ լուսե,  
Առանց երդումի ինձ նվիրեցիր,  
Լուսի եմ փոխվում ճանապարհիդ մեծ  
Եվ հպարտ եմ, որ այդպես սիրեցի:

9

Թող ճանապարհիդ սկիզբը դառնամ,  
Միայն գնալով ուղիդ երկարի,  
Թող քո անունով ես նահատակվեմ,  
Միայն մի աստղ էլ քո ճամփին վառվի:  
Թող մի աննշան ալիք դառնամ ես,  
Միայն թե ծփա լուսի ծովը քո,  
Երկնիդ ամպերը իմ կյանքով ցրեմ,  
Միայն ջինջ լինի երկնի մովը քո:

**Ա Ր Ց Ա Խ Ց Ա Ն Շ Ո Շ Ա Ն Ջ Ն Ա Խ**

Քո արարումին ծուլվեն իմքնական,  
Իմ սիրտը բերեմ քո հաղթանակին,  
Պատիվ է անբիծ, փառք է անթառամ,  
Լինել զինվորը քո նոր բանակի:

10

Քո բարձրաբերձ սարերից  
Ծաղիկներ եմ հավաքում,  
Կարծես քո բյուր դարերից  
Տաղիկներ եմ հավաքում:  
Կարծես աստղեր են թափվում  
Կապուտաչյա քո երկնից,  
Կարծես քո սեգ սարերը  
Մոր պես օրորում են ինձ:  
Քո կանչերն եմ հավաքում,  
Երազները ծաղկանց հետ,  
Ու դաշնում ես իմ հոգում  
Մի անսահման տիեզերք:

11

Ես կանգնում եմ քո դեմ դիմաց,  
Ու խոհերդ անցնում են ինձ,  
Երգ եմ դաշնում կամաց-կամաց,  
Եվ օրերդ անցնում են ինձ:  
Երազներդ աստղեր դարձած  
Լույս են դաշնում իմ կրծքի տակ,  
Մուրազներդ ասքեր դարձած  
Ղույս են դաշնում իմ կրծքի տակ:

**Ա Ր Ց Ա Խ Ց Ա Ն Շ Ո Շ Ա Ն Ջ Ն Ա Խ**

Ալիքվում են արտերդ ծով,  
Ծաղք են կանգնում լեռներդ սեզ,  
Ցած է իջնում երկինքը մով  
Ու համբուրվում կարոտիս հետ:  
Խենթանում եմ ասես մի պահ,  
Շիկանում են քառերդ իմ մեջ,  
Կանաչում են քար ու ապար,  
Ծիլ են տալիս դարերդ իմ մեջ:

12

Առավոտդ ժպտաց,  
Խուտուտ եկավ սիրտս,  
Յողդ շնչեց քրտնած,  
Ծաղկավորվեց գիրկս:  
Ինչ որ կորցրել էի  
Իմ մանկության օրից,  
Քո զարթոնքի ծովում  
Ասես գտա նորից:

13

Կոպերիս տակ ես պահեցի  
Վեհությունը քո լեռների,  
Յոգուս խորքում՝ քնքշությունը  
Յաղթաբազուկ քո ձեռքերի:  
Ես չեմ ասում ուղիս հեշտ էր,  
Ճերմակեցի մաքառման մեջ,  
Սակայն գոհ եմ նրա՝ համար,  
Որ ձուլվեցի լույսիդ անշեց:

**Ա Ր Ց Ա Խ Ց Ա Ն Շ Ո Շ Ա Ն Ջ Ն Ա Խ**

Մթության մեջ քո սերն անմար  
Զահի պես ինձ ափ էր համում,  
Քո երկինքը ոսկեկամար  
Ինձ աստղերի գիրկն էր տանում:  
Կաթիլ-կաթիլ, երան-երան,  
Երազներով քեզ փարվեցի,  
Կրակներով իմ անմարում  
Փառքիդ համար միշտ վառվեցի:

14

Դու ինձ աշխարհ ես բերել մայրաբար,  
Ես քեզ հյուսել եմ իմ երազներից,  
Ե՞ս եմ քո հոգում, թե՞ դու՝ կրծքիս տակ,  
Պատասխանիր ինձ, պատասխանիր ինձ:  
Ժայռեղեն կրծքիդ ծաղիկ եմ բուսած,  
Բառերս ճերմակ կանչերն են հոգուդ,  
Դարերի բազում խորհուրդներն ուսած,  
Թեւավորում ես բանաստեղծ որդուդ:  
Իմ արյան մեջ ես, ես էլ՝ քո արյան,  
Մեր միջեւ չկա փակված դուռ-դարպաս,  
Ես իմ անունն ու երգը կունենամ,  
Քանի աշխարհում ծփում ես ու կաս:

15

Քո լեռները, սեգ լեռները,  
Մխրճվել են իմ սրտի մեջ,  
Շառաչում եմ նրանց սիրով:  
Քո գետերը, խենթ գետերը,

**Ա Ր Ց Ա Խ Ց Ա Ն Շ Ո Շ Ա Ն Ճ Ա Ն**

Կարկաչում են իմ սրտի մեջ,  
Կամաչում եմ նրանց սիրով:  
Քո արտերը, ծով արտերը,  
Խոսք են բացում իմ սրտի հետ,  
Ես խոսում եմ նրանց սիրով:  
Քո դարերը, բյուր դարերը,  
Բերում են ինձ երազ ու հեւք,  
Ես խոսում եմ նրանց սիրով:

16

Ինչի մասին խորհում են ես,  
Քո պատկերն է դեմս հառնում,  
Երազներիս ամենավառ  
Երազանքը դու ես դառնում:  
Քո անունով շնչում են ես,  
Թեւավորվում քո անունով,  
Արեւային բարձունքներին  
Հասնում են ես լույսիդ հունով:  
Ես սկիզբ եմ առնում քեզնից,  
Կարկաչում քո սար ու հանդում,  
Իմ Հայաստան, իմ սեր անբիծ,  
Քեզ հետ եմ ես, ինձ հետ ես դու:

17

Շափաղումներդ ինձ հարբեցրին,  
Թե կյանք սիրեցի, սիրեցի քեզնով,  
Քեզնով բացեցի կյանքի դրմեր,  
Առեղծվածներին տիրեցի քեզնով:

ճամփաս ընթացավ քո շնչառությամբ,  
Քեզնից ծնվեցին երազանքներս,  
Հասակ նետեցի քո հասունությամբ,  
Միշտ քեզ կարկառած հոգիս, ձեռքերս:  
Սիրեցի ծառի հավատարմությամբ,  
(Առանց արմատի ո՞վ է տեսել ծառ),  
Արմատս եղար ավիշով մաքուր,  
